ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Դ

ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Դ

ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Թարգմ. գրաբարից՝
Մարթա Արաբյանի

ՍՈՒՐԲ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ
Ս – 970 Աստվածաբանական երկեր: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 264 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN 978-99930-75-49-3 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

Ս. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ
(415-475)

Սուրբ Եղիշե վարդապետը Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի կրտսերագույն աշակերտներից է: Նրանց հիմնած դպրոցներում հայերենից բացի սովորել է հունարեն, ասորերեն և պարսկերեն լեզուները:

Մովսես Խորենացու և այլ աշակերտների հետ մեկնել է Ալեքսանդրիա՝ ուսանելու: Վերադարձել է հայրենիք և դարձել Վարդան Մամիկոնյանի դպրապետը, մասնակցել Ավարայրի ճակատամարտին: Հերոսամարտից հետո անցել է ճգնակեցության: Որպես պատմիչ՝ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոս, գրել է «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկը, մեկնել «Արարածոց», «Հեսուի» և «Դատավորաց» գրքերը: Գրել է «Քրիստոսի մկրտության տոնի առթիվ», «Այլակերպության տոնի առթիվ», «Վարդավառի մեծ օրվա առթիվ», «Խրատի խոսք միայնակյացների մասին», «Հայր մեր» աղոթքի մասին», «Վարդապետություն Տիրոջ չարչարանքների մասին», «Դատաստանի և երկրորդ գալստյան մասին», «Մեռյալների հիշատակության մասին» երկերը և կանոններ:

Գրերի գյուտից հետո հայ եկեղեցու հայրերը, շատ կարճ ժամանակում յուրացնելով և թարգմանելով ընդհանրական եկեղեցու հայրերի գրությունները, ստեղծեցին նաև ինքնուրույն գրականություն՝ նպաստելով հայ իմաստասիրական և աստվածաբանական մտքի հետագա զարգացմանը: Ինքնուրույն քրիստոնեական գրականություն ստեղծելու ճանապարհին յուրահատուկ դրսևորում ցուցաբերեց Եղիշեն իր փայլուն ստեղծագործություններով:

Քաջածանոթ լինելով իրեն նախորդող հայ և ընդհանրական եկեղեցու հայրերի գաղափարներին, հետևելով և մա-

սամբ զարգացնելով նրանց գաղափարները՝ Եղիշեն միևնույն ժամանակ հանդես եկավ ուրույն մտածելակերպով: Իր գրությունների մեջ դրսևորեց խորաթափանց միտք, կուռ տրամաբանություն, Աստվածաշնչի և հայրերի գրություններին փայլուն իմացություն: Եղիշեի աստվածաբանական, փիլիսոփայական հայացքները լավագույնն են դրսևորվում նրա մեկնողական, խրատական, կանոնական և քարոզչական երկերում: Սուրբ Երրորդության վարդապետությունը Եղիշեի մոտ զարգացած վիճակում է: Երեք անձերի գործողությունների սահմանները ճշտված են: Հստակ ձևով են ներկայացված նրանց փոխհարաբերությունները:

Եղիշեի մոտ Աստված, կատարյալ կյանք և կատարյալ սեր լինելով, ծավալում է իր փրկչական գործունեությունը: Աստծո հարաբերությունը աշխարհի հետ իրականանում է Հոր, Որդու և Ս. Հոգու հայտնությամբ, կամ՝ Ս. Երրորդությամբ: Ըստ նրա՝ մենք աստվածային կյանք ու սեր ենք վայելում Ս. Երրորդության շնորհների ներքո, այդ կյանքը մենք ստանում ենք Հայր Աստծուց, որ մեր Արարիչն է, Որդի Աստծուց, որ մեր Փրկիչն է, Ս. Հոգի Աստծուց, որ մեր քավիչն ու որդեգրողն է: Հայր, Որդի և Ս. Հոգի յուրաքանչյուր անձ, որ կատարյալ է, Աստծու ամբողջ էության հայտնությունն է և իր մեջ ունի աստվածային բոլոր կատարելությունները:

Ս. Երրորդության դավանանքն իսկապես Աստծու էության ճանաչողությունն է, որ մենք պետք է ունենանք: Ըստ Եղիշեի՝ Հայրը արարչական զորությունն է, որ թագավորական զորության նշանակն է, Որդին՝ բնական զորությունը, որով երևում է դատողական զորությունը, Հոգին՝ հաշտարար զորությունը, որով հայտնի է դառնում կենարար զորությունը, ինչը և կոչվում է միասնական Աստվածություն:

Եղիշեն իր գրվածքներում շեշտում է հոգու և նյութի, աստվածայինի և երկրայինի հակադրությունը: Տվյալ դրույթը ելակետային նշանակություն ունի մեծ հոգևորականի մարդաբանության և բարոյագիտության համար: Մարմնական բանտից հոգին ազատագրելու համար նախանշում է կրքերի սանձահարում, իսկ ձգտումը զգայականից դեպի երկնայինը՝ աստվածայինին մերձեցում և միաձուլում Նրա հետ: Հոգու մերձեցումը Աստծուն, մարմնականից հրաժարվելը և հոգևոր երանության հասնելը քրիստոնյայի իդեալն է:

Եղիշեն իր աստվածաբանական հայացքներով չի տարբերվում իր ուսուցիչներից՝ Մաշտոցից, Եզնիկից, սակայն նա ավելի է ընդլայնում քրիստոնեական մտքի շրջանակները: Քանի որ մարդկությունը անկարող էր վերստին վերադառնալ իր սկզբնական վիճակին, պարզ է, որ Աստծո կողմից պետք է լիներ անհրաժեշտ օգնություն: Աստծո Միածին Որդին իջավ մարդկության մեջ աստվածային փրկագործական տնօրինությունը կատարելու համար: Ըստ Եղիշեի՝ էությունն Աստված-մարդու կերպարանք ստացավ և ծնվեց սուրբ Կույսից: Քրիստոս է աստվածային կատարյալ հավատքի ճանապարհը դեպի Աստվածություն և մարդ-Աստված հաղորդակցության բարձրագույն իրականացումը, որ մարդը, հավատալով Աստծուն, միանում է նրա հետ: Մարդու կոչումը Աստծուն հաղորդակից լինելն է:

Քրիստոսի մեջ է ճշմարիտ մարդու իրագործումը, նրա մեջ է իսկական կամքը, իսկական բնությունը և բնական ներգործությունը, որով պետք է Աստծու որդիներ լինենք: Ս. Հոգին աստվածային կատարյալ անձնավորություն է. եթե Քրիստոս սրբագործում է մարդկությունը, ապա Ս. Հոգին մարդկանց բազմությունը միաբանում է Քրիստոսի փրկչական միության մեջ: Ս. Հոգին է մեզ կատարելագործում՝ նմանեցնելով Քրիստոսին:

Եկեղեցին, ըստ Եղիշեի, միակ փրկարար հաստատությունն է, որով Քրիստոս տանում է մարդկանց դեպի հավիտենական կյանք, որպես հավիտենական և աննվազելի կառույց, մինչև աշխարհի վերջը: Աստծո արքայությունը, փրկագործելով մարդկանց, պետք է ստանա իր լրումը, որից հետո տեղի կունենա մեռելների հարությունը:

Եղիշեի ստեղծագործություններում ուշագրավ են խորհրդանշաններին տրված բնութագրումները, որոնք հնարավորություն են տալիս վեր հանել միջնադարյան խորհրդանշանների աստվածաբանության առանձնահատկությունները:

Նրա աստվածաբանական հայացքների մեջ ի հայտ են գալիս հստակ սահմանումներ, կառուցվածքային իմաստով՝ վերջնական ու կատարյալ:

Եղիշեն հարազատ է մնացել արևելյան աստվածաբանության ավանդույթներին:

Համաշխարհային քրիստոնեական գրականության մեջ նա առաջիններից էր, որ մշակել է երկնային իշխանության մասին ուսմունքը:

Որպես Եզնիկյան ավանդույթների շարունակող, Եղիշեն նույնպես բարձր արժեք է տալիս մարդուն:

Բանի շնորհիվ ստեղծված մարդը Արարչի մշտական մտահոգության և գուրգուրանքի կենտրոնն է, նրա ողջ փառքի և մեծության ժառանգորդը:

Ուստի մարդիկ ևս, իրենց հերթին, պարտավոր են կատարել Հոր կամքը:

Որպես քրիստոնեության ջատագով, Եղիշեն մեծ կարևորություն է տալիս հավատքին մարդու կյանքում:

Հավատքը պետք է օգնի մարդուն, հուսադրի նրան:

Հավատքով է, որ սպասում ենք Քրիստոսի երկրորդ գալուստին:

Եղիշեի աստվածաբանական երկերը, բացառությամբ վերոհիշյալ մեկնությունների, ամբողջական տեսքով առաջին անգամ են հրատարակվում արևելահայերեն:

Ասողիկ Եպիսկոպոս

ՔՐԻՍՏՈՍԻ ՍԿՐՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հասանք հրաշափառ ու պայծառ, մեծ ու լուսավոր օրվան. մարգարեական այս երգն առնելով՝ սուրբ սրտով և կատարյալ հավատով աղաղակե՛նք. «Մեր Տեր Աստված երևաց մեզ» (Սաղմ., ՃԺԷ 27): Առաքելական քարոզությունը նույնպես ձայնում է՝ ասելով. «Ահա հիմա՛ է ընդունելի ժամանակը, ահա հիմա՛ է փրկության օրը» (Բ Կորնթ., Զ 2): Քրիստոսի՝ մարմնով երկրորդ և վերստին ծնունդն է առաջին անպատմելի, անհաս և անքննելի ծնունդից հետո:

Հորից ծնունդը անքննելի է մարդկային մտքի համար, այն ոչ էլ հասու եղավ անմարմին ու երկնավոր զորություններին, այլ միայն՝ Հորը, որ ծնեց Նրան, ծնված Միածնին և Սուրբ Հոգուն, «որ քննում է Աստծու խորությունները» (տե՛ս Ա Կորնթ., Բ 10): Երկրորդ ծնունդը եղավ ժամանակի մեջ. մարմնով առաջ եկավ Կույսից, հայտնվելով երկնավորներին ու երկրավորներիս մասամբ և ոչ ամբողջությամբ: Իսկ այս ծնունդը գերագույն խորհրդի զորություն է. երեսուն տարեկանում եկավ մկրտվելու կատարյալ Աստվածությամբ և կատարյալ մարդկությամբ: Երեք տասնյակը կատարյալ է դարձնում մարդուն. երեսնամյա էր արարվել նաև առաջին Ադամը, որ օձից խաբվելով՝ դուրս եկավ փափուկ դրախտից, նույն կատարյալ [տարիքում] տնօրինելով՝ երկրորդ Ադամը ջախջախեց վիշապի գլուխը Հորդանանի հոսանքների մեջ:

Արդ, սկզբում Սուրբ Հոգին անկերպարանք շրջում էր ջրերի վրա՝ հորինելու արարածների տարրերը, որոնք ոտնակոխ արեց նախանձ թշնամին: Այստեղ աղավնակերպ

Հոգին վերստին հրաշագործեց ապականված արարածներին. Հոր ձայնը սիրելի Միածին Որդու վրա ճանաչեցրեց ծածկված հավիտենական խորհուրդը՝ հայտնելով Երրորդության Անձնավորությունը: Առաջինում երկիրն ապականվեց՝ կործանվելով ջրհեղեղով, իսկ այստեղ ջրհեղեղի [նույն ջրով] մկրտությամբ կենդանացավ երկիրը՝ ոչ թե ընկղմելով արարածներին բնությամբ, այլ ընկղմելով մեղավոր գործերը: Այնտեղ մարդկային ազգի՝ ջրի մեջ թաղումը ավերածություն գործեց, այստեղ ջրի մեջ թաղումը նորոգեց և հաղորդակից դարձրեց կյանքին: Այնտեղ շյուղաբեր աղավնին բարկության հանդարտվելու ավետիսն ավետարանեց, այստեղ աղավնու նմանությամբ [Սուրբ Հոգին] կյանքի առհավատչյան և Աստվածության հետ մշտնջենավոր հարատևությունն ավետարանեց Հոր ձայնով, որ հայտնեց սիրելի Որդու մասին: Այսօր ձեռնադրություն ընդունեց Կուսածինը ամլորդուց, ճշմարիտ Աստված՝ քահանայապետի որդուց, Ամենասուրբը մեղքերից՝ իր մոր որովայնում Սուրբ Հոգով լցվածից: Մարիամն ու Եղիսաբեթը ազգակիցներ էին, բայց ոչ տոհմերով, որովհետև ինչպես ցույց է տալիս օրենսդիրը, Հուդայի ցեղը չխառնվեց Ղևիի ցեղապետների հետ:

Արդ, Քրիստոս և Հովհաննես շարժվեցին մի ճանապարհով. Քրիստոս՝ իբրև Տեր, Աստված և մարդասեր, իսկ Հովհաննեսը՝ իբրև ծառա, մարգարե և բարեկամ. երկուսով ունեցան մի կարապետ՝ Գաբրիել հրեշտակապետին: Բայց Զաքարիան չի համեմատվում Մարիամի հետ. քահանայապետի մոտ ահով և իշխանությամբ առաքվելով՝ [հրեշտակապետն] հայտնեց ամուլ արգանդի պտղաբերության մասին, և երբ ծերը չհավատաց, կապեց նրա լեզուն (տե՛ս Ղուկ., Ա 11-22): Իսկ երբ Մարիամին Բանի գալստյան ավետիսը տվեց, և Կույսը չհավատաց, ասաց Սուրբ Հոգու՝

նրա վրա գալստյան և այն խոստումը կատարելու կարող լինելու մասին՝ հիշեցնելով մարգարեական խոսքը: Ուստի և [Մարիամը] գնաց Հրեաստանի լեռնակողմը՝ տեսնելու հրեշտակապետի ասածը՝ Եղիսաբեթի հղիությունը: Մարիամի՝ Եղիսաբեթի հետ ազգակցությունը միմյանց հետ համեմատվելն էր նշանակում, այսինքն՝ [համեմատվում էին] կուսական արգանդի հղությունը և ամուլի՝ ժամանակը անցածի պտղաբերությունը:

Արդ, Մարիամը մտավ Զաքարիայի տուն՝ իր մեջ ունենալով կենդանի Տապանակին՝ կենդանի Բանին: Իսկ Եղիսաբեթը, իր մեջ ունենալով Տապանակի՝ կենդանի Բանի ձայնին՝ ողջույն տվեց Մարիամին. խայտաց ձայնը Բանի գալստյամբ: Արգանդից արգանդ նոր սքանչելիք եղավ. Եղիսաբեթի մանուկը իր մոր արգանդից Կույսի որովայնում Բնակվողին երկրպագության պարտքն էր հատուցում: Զարմա՛նք այս հրաշքին. ժամանակի մի վայրկյանում որովայնում բնակվողները բացահայտում են ճշմարտությունը. մեկը ծառայաբար մատուցում է, Մյուսը տիրապես ընդունում է խոնարհի խայտանքը: Սրանից հետո հասավ Եղիսաբեթի ծնելու օրը, և [մանկան] անունը դնելուց հետո լուծվեցին նրա հոր և քահանայապետի լեզվի կապանքները, քանզի արժան չէր, որ ձայնի գալուց հետո լռեր նրա հայրը: Հասավ նաև Կույսի ծննդյան օրը, և հավիտենական Քահանայապետի գալստյամբ, որն անվանվեց Հիսուս, խզվեցին նախահոր կապանքները:

Դարձյալ՝ Հովհաննեսը երեսուն տարի մնաց անապատում և ժամանակը լրանալուց հետո ուղարկվեց մկրտելու: Ճիշտ այդպես [մինչև] երեսուն տարեկան դառնալը լուռ մնաց նաև Հիսուս, ապա եկավ մկրտվելու. մեղքերից զերծ Մնացածը իր մոր որովայնից Սուրբ Հոգով լցվածի մոտ, Հոր կողմից տիրապես Առաքվածը Սուրբ Հոգու կողմից ա-

նապատից ծառայապես առաքվածի մոտ, մարգարեների ու առաքյալների Տերը առաքյալի ու մարգարեի մոտ, բոլոր արարածների Սկիզբն ու Անդրանիկը մարգարեների և օրենքի վերջինի ու առաջին առաքյալի մոտ, նրա մոտ, «ում օրերից սկսած՝ բռնադատվում է երկնքի արքայությունը» (Մատթ., ԺԱ 12): [Հովհաննես] կարապետը ավարտն է Մովսեսի Հին Օրենքի, իսկ Քրիստոս սկիզբն է Նոր Օրենքի: Տեսնո՞ւմ ես ճշմարտությունը՝ միմյանց հետևողությամբ, ոչ թե համեմատությամբ, քանզի ո՛չ հեռանալով բաժանվում են նմանությամբ և ո՛չ էլ միանում են՝ միմյանց հարելով: Քանզի թեև երկուսն էլ ծնունդ են ասվում, բայց Մեկը՝ կույսից, մյուսը՝ ամուլից, Մեկը՝ հղացած Սուրբ Հոգուց, մյուսը՝ Զաքարիայի սերմից սաղմնավորված: Եղիսաբեթը բազում նախօրինակներ ունի, իսկ Կույսի ծնելը և մոր՝ Կույս մնալը անբնական է. արարածների մեջ չի եղել և չի էլ կարող այդպիսի բան լինել, բացի միայն Մեկից՝ Միածնից, որի՝ Էմմանուելի ծնվելու մասին մարգարեացել էր Եսայի մարգարեն (տե՛ս Ես. Է, 14): Տեսնո՞ւմ ես Քրիստոսի և Հովհաննեսի միջև անջրպետը՝ մոտիկ և շատ հեռու:

Արդ, երկու խոսքով քեզ ասեմ նաև Հիսուսի և մկրտչի անունների զանազանության մասին՝ պես-պես և զանազան կերպերով մերձեցնելով ու հեռացնելով: Հիսուս ասվում է Տեր, Հովհաննեսը նույնպես տեր է ասվում. բայց Նա բնությամբ ու արարչությամբ է Տեր, իսկ Հովհաննեսը այնպես, ինչպես բոլորն են իրար անվանում: Դարձյալ՝ Հիսուս նաև մարդ է ասվում, սակայն ոչ իբրև մարդկանցից մեկը, որովհետև չունի մարմնավոր հայր, ինչպես որ առաջին ծննդյամբ չունի մայր: Իսկ Հովհաննեսը, ունենալով հայր և մայր, ապականացու սերմից մարդ եղավ: Քրիստոս կոչվում է ծառա ըստ մարմնի, [համաձայն այն խոսքի, որ ասում է]. «Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու» (Մարկ., Ժ 45), ոչ բնությամբ, այլ կամավոր աղքատությամբ: Իսկ Հովհաննեսն ըստ բնության է ծառա, ծառայական կերպի մեջ հավասար մեզ: Դարձյալ՝ Քրիստոս անվանվում է արդարության արեգակ, իսկ Հովհաննեսը՝ ճրագ. [երկուսն էլ] լուսատուների անուններ են, բայց խիստ տարբեր. քանզի Մեկն աշխարհը լուսավորում է անվախճան լույսով, իսկ մյուսն աղոտ կերպով փոքր-ինչ տեսնելու [հնարավորություն] է տալիս աչքին: Քրիստոս ասվում է ճանապարհ, իսկ Հովհաննեսը՝ Տիրոջ ճանապարհը պատրաստող: Քրիստոս աշխարհին քարոզում է ապաշխարել, «որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը» (Մատթ., Դ 17), քարոզում է նաև Հովհաննեսը. բայց Հիսուս [քարոզում է] ամբողջ աշխարհին, Հովհաննեսը՝ հատկապես և միայն հրեաների ազգին: Քրիստոս աշխարհի մեղքերը վերացնող Գառ է խաչի համար, գառ է նաև Հովհաննեսը՝ մորթված Հերովդիայի մոլեգնության պատճառով: Նա՝ փրկության համար՝ մտնելու հավիտենական սրբարան, իսկ սա՝ օրենքի հանդիմանության համար: Քրիստոս տիեզերքի Կարապետ է կոչվում, երկնային Կարապետի կարապետ է ասվում նաև Հովհաննեսը: Քրիստոս մկրտում է Հոգով և հրով կատարյալ մկրտությամբ, մկրտում է և Հովհաննեսը, բայց միայն ապաշխարության [մկրտությամբ]: Քրիստոս դարձյալ մկրտվեց արյամբ, արյամբ մկրտվեց նաև Հովհաննեսը՝ Հերովդիայից: Քրիստոս քարոզեց դժոխքում մահվան իշխանության տակ եղողներին, Հովհաննեսը նույն դժոխքում արդար Արեգակի գալուստը քարոզեց: Աստվածային Կտակարանը բազմիցս և զանազան կերպերով խոսում է անունների զանազանության մասին, բայց մենք բավականանք [այսքանով]: Սակայն մեծն ու առավելագույնը չեմ թողնի. արժանի եմ համարում ա-

սել անզուգականի ու արարչականի մասին. Քրիստոս Աստված է, Հովհաննեսին նույնպես աստվածացրեց, Քրիստոս [Աստված է] բնությամբ, Հովհաննեսը՝ Նրանով: Ինչպես որ Աստծու Որդին է Աստծու բնությամբ, իսկ Հովհաննեսը և բոլոր նրանք, ովքեր Նրանով են, հավատի որդիներ են շնորհով: Թող քեզ չզարմացնի այն խոսքը, որ եթե Նա աստվածացրեց Հովհաննեսին, ուրեմն նաև ինձ կաստվածացնի, ըստ այն խոսքի, թե՝ Աստված կերևա աստվածացածների ու թագավորների մեջ, քանի որ մարգարեն ասում է. «Ես ասացի, թե աստվածներ եք կամ Բարձրյալի որդիներ» (Սաղմ., ՁԱ 6), իսկ Մովսեսին ասում է. «Ահա ես քեզ փարավոնի համար մի աստված դարձրի» (Ելք, Է 1): Այս օրինակով, այլ ոչ թե անզուգական արարչությամբ են սուրբերն աստված ասվում:

Վերստին կրկնենք կարապետի՝ շարադրված անուններ-ը, առընթեր նաև՝ Փրկչական անունը, որպեսզի այս մեծ օրը խոսքերիս պտուղն ընծայեմ այս լուսավոր հայտնությանը: Առաքյալ և Հոր կողմից առաքված Բանի մարգարե. մարգարե, որ տեսավ Նրան, ում մասին մարգարեացել էին, արդարության Արեգակի կարապետ, մեծ Լույսի ճրագ, թափանցիկ ու անհասանելի Լույսի արուսյակ, կենաց Ճանապարհը պատրաստող, Փեսայի բարեկամ, Խոսքի ձայն, Ճշմարտության քարոզ, ձեռնադրող Նրան, ով Իր ձեռքերով արարեց ամեն բան, վկա՝ Հոր Բանի մասին վկայող, մկրտիչ, որ մկրտում է հրով և Հոգով: Բոլոր արարածներից ամենամե՛ծդ կանանց ծնունդների մեջ, ավետարանի՛չդ Սիոնի, քարոզի՛չդ Երուսաղեմի, աղաղակում էիր՝ ասելով. «Ահա՛ Աստծու Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ., Ա 29), ահա՛ Աստծու գառը, որ պատարագվում է խաչի վրա և նորոգում է արարածներիս ապականությունը ջրով, Հոգով և արյամբ: Մեծ խորհուրդի Հրեշտակի հրեշտա՛կ, որ երեք կատարյալ մկրտությամբ Երեք կատարյալ Անձի դավանությունն ամբողջացրիր. ջրով մաքրեցիր ապականվածներիս, ինչպես համաշխարհային բարկության ժամանակ, որը, սակայն, բարկության ու կորստյան [մատնող] լվացում էր, իսկ սա՝ լվացում կենդանության [համար] և հոգու մաքրում ընդդիմակաց զորության՝ հարձակվող սատանայական հոգու ազդեցությունից: Իսկ հրով, որպեսզի փորձի, ինչպես ընտիր ոսկին է փորձվում, որպեսզի խոտանն այրվի և առանձնացվի պատվական նյութերից, որպեսզի զտված և ընտիր դարձնի մեր մարդկային բնությունը, [որ] ստեղծագործելով վերստին արարչագործեց: Մեծ մկրտության զորությունը, լուսավորության պայծառությունն այս է, որով Հայրը հայտնվում է, Որդին ճանաչվում է, և Սուրբ Հոգին քարոզվում է, հռչակվում է մկրտչի պատիվը, մկրտչի առավելության մասին քարոզում է Մկրտվողը՝ ասելով. «Կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել. բայց երկնքի արքայության մեջ ամենից հետինը նրանից մեծ է» (Մատթ., ԺԱ 11): Նրան փառք հավիտյանս. ամեն:

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Օրհնյա՛լ ես, ամենակալ Տեր Աստված՝ Որդի և Բան Աստված, էակից և արարչակից Հոր, գոյակից և համաբնակից Սուրբ Հոգուդ, անբաժան էական բնությունից:

Անայլայլելի, անփոփոխելի, անսահմանելի, անպարագրելի, անհասանելի, անըմբռնելի, անսկիզբ, անժամանակ, անմեկնելի ծնունդ և ծոցածին Որդի, Հոր պատկեր և խոսք և Սուրբ Հոգուդ փառակից:

Իմաստություն և զորություն, ճառագայթ և կերպարանք, էությամբդ հավասար և [համա]գործակից Հորը և Սուրբ Հոգուն: Եռյակ կատարյալ անձերից մեկն ես. բնությամբ մեկն ես ճանաչվում Սուրբ Երրորդությունից և ճանաչվում ու երկրպագվում ես հրեշտեների ու հոգեշտեների կողմից: Աստված և Տեր ես ճանաչված ողջերի ու մեռյալների կողմից, աստվածների Աստված և տերերի Տեր, անմատույց լույսերի մեջ Բնակվողդ միակն ես, որ անմահություն ունես:

Որ Քո խոսքով ոչնչից լինելության կոչեցիր բոլոր արարածներին. Հոր հաճությամբ և Սուրբ Հոգուդ գործակցությամբ արարեցիր երկինքը և երկնավորներին, երկիրն ու այն ամենը, ինչ որ նրանում կա:

Լույսը և խավարը Ստեղծո՛ղ, բոլոր երևելիներն ու աներևույթները Բովանդակո՛ղ, երկինքն ստեղծեցիր անճառելի կերպով՝ ամպաձև ջրային տեսակով՝ առագաստի պես տարածելով օդում՝ որպես հովանի այն ամենին, ինչ որ երկրի վրա կա, և ջուրը, որ երկինքներից վեր է, տարածվեց ամենագետ Ստեղծողիդ կողմից և կոչվում է տարածություն, որի վրա է հանգչում Ամենասուրբ Երրորդությունդ: Եվ ըստ նրա մեջ բաժանվածների՝ կան անթիվ բազմահույլ զվարթուններ, որոնք լցնում են երկինքը. իբրև ամենասուրբ Երրորդության փառաբանիչներ են ստեղծված նրանք:

Եվ լուսատուներին առաջին լույսի մի [փոքրիկ] մասից գոյացրեցիր, թաղանթապատեցիր, իբրև ամանի մեջ դրեցիր և կառուցեցիր երկնքի շրջանակի մեջ[1], որ անդադար երկրին ընծայեն Արարչիդ խնամակալությունները:

Եղանակների շրջանը և ժամանակների փոփոխությունները, որ արեգակից, լուսնից ու աստղերից են իմացվում, նաև երկիրն իր գեղեցկությամբ և վայելչությամբ հրաշալի ստեղծեցիր, լեռներով ու բլուրներով, զանազան դաշտերով և ինքնաբույս բույսերով ու բարիքներով լցրեցիր՝ բնակության վայր լինելու համար գազաններին ու անասուններին, սողուններին ու թռչուններին, որ անխափան կերպով հողից վայելեն իրենց մատակարարվածը, Կերակրո՛ղդ բոլորին Քո քաղցրությամբ:

Եվ Քո հրամանով տարբեր տեղերում բաժանված ծովերն ունայն ու թափուր չթողեցիր, այլ նաև դրանք լցրեցիր բազմազան կենդանիներով, որ երևաս ամեն բանի Տեր և Արարիչ, դատավոր և դարմանող բոլոր եղանակների:

Եվ սրանց վրա տեր և թագավոր ստեղծեցիր մարդուն. վերցնելով հողը՝ արարեցիր կենդանի, փառազարդ ու լուսազգեստ գեղեցկությամբ, երևելի օրինակով, պայծառ տեսակով և իշխանական պատկերով, պարգևեցիր նրան շնորհ, երկրածիններին իշխան ու իշխող դարձրիր նրան և դրեցիր անթառամելի ու անապական փափուկ դրախտում, որ տնկվեց Քո հրամանով և նրան վայելելու տրվեց: Եվ նա, անմահություն հագած, միշտ մնալու էր իբրև անմահ տունկ, միայն թե պահեր չարի ու բարու գիտության ծառից չուտելու պատվիրանը:

Եվ որովհետև հրեշտակներին առավել զարմանալի ու պանծալի ցույց տվեցիր մարդու պատիվը, քան իրենցը, ուստի բանսարկու սատանան, նախանձելով մարդու պատվին, որ իրենից առավել գերազանց ունակությամբ փառքի և լույսերի մեջ էր, մտավ այն իմաստուն գազանի մեջ և նրա միջով խոսեց նախաստեղծ կույսի հետ, որը չէր ճանաչում նրա բարքը, որպեսզի նրա միջոցով հեշտությամբ խաբի նրա զուգակցին՝ Ադամին:

Եվ նրանց՝ պտղի ճաշակումը (որից հրաման ունեին չուտել) հեշտությամբ մերկացրեց նրանց աստվածահրաշ զարդարանքներից: Ստախոսությամբ խաբելով՝ «աստվածներ կլինեք» (տե՛ս Ծնն., Գ 5) ասաց՝ բարու և չարի ճանաչողությամբ: Աստվածությանը չհասա՛ն, այլ բարին ու չարը ճանաչեցին ողորմելիները:

Ուստի փառքերից մերկացան և անմահությունից հեռացան, ողորմելի և խղճալի կերպով պատառոտուն տերևներով ծածկեցին իրենց մերկությունը, ամենագետ Աստծուցդ թաքնվել կամեցան տերևախիտ ծառերի հետևում, մեղքի պատճառը փնտրեցին [ուրիշի մեջ], զրկվեցին անմահ դրախտից, տաժանելի ու տառապալի կյանքով բնակվեցին դրսում և Քեզնից՝ Բարերարիցդ, հրաման ստացան տրտմությամբ ծնել որդիներ, երեսի քրտինքով ուտել իրենց հացը և այնտեղից դառնալ հողին, որից ստեղծվեցին: Այդ պատճառով էլ մահը թագավորեց մեր մարդկային բնության վրա: Ծառայելով մահացու մեղքերին և հետևելով բանսարկուի կամքին՝ չարի կամքով մարդիկ ընկղմվեցին պեսպես [մեղքերի և] կռապաշտության մեջ, մինչև իսկ Քո արարչական սուրբ անունը դրեցին քարերի, փայտի ու մեռելոտի ոսկորների վրա:

Եվ որովհետև Քո նախախնամությունը մեծ կսկիծով բաժանվել էր մեր բնությունից, մարդկանց որդիները, գրավվելով դժոխքի մեջ, մահվան ստվերների մեջ էին նստում:

Ապա արարչական գթությամբդ գթացիր. Քո անարատ ձեռքով ստեղծվածին չանտեսեցիր՝ նրան մեղքերի շղթաների մեջ տեսնելով, այլ այցելեցիր նախախնամական սիրովդ՝ երևալով դարերի ու ժամանակի մեջ:

Տվեցիր օրենքներ և առաքեցիր մարգարեներին, որոնք կանխավ ավետարանեցին Քո՝ մեր բնությամբ [երկնքից երկիր] խոնարհվելու մասին:

Եվ քանի որ շատ խիստ էինք խոցոտված բանսարկուի կողմից, ո՛չ օրենքը և ո՛չ մարգարեները չկարողացան փրկել մեր մարդկային բնությունը մահվան զորությունից, և Քո մարդանալու և մեռնելու կարիքն ունեցանք:

Եվ որովհետև շատ ողորմած ես ու մարդասեր, ներողամիտ ու քաղցր, մեր բնությունն իսպառ չթողեցիր ապականության մեջ, ո՛չ ըստ մեր մեղքերի արեցիր և ո՛չ ըստ մեր անօրինության հատուցեցիր մեզ: Այլ խոնարհեցնելով երկինքը՝ իջար ամենօրհնյալ կույս Մարիամի արգանդը Հոր առաքմամբ և Սուրբ Հոգուդ հաճությամբ և անխառնելի Աստվածությունդ նոր խառնմամբ խառնեցիր մեր բնությանը[2]. անշոշափելի էությունդ մարմնի մեջ թանձրացրեցիր[3], Աստծու Որդիդ Կույսի Որդի եղար, անժամանակդ մեզ համար ինն ամիս բովանդակվեցիր Կույսի որովայնում անհաս տնօրինությամբ: Եվ դրանից հետո անճառապես ծնվեցիր ամենօրհնյալ Աստվածածնից:

Սուրբ և անա՛խտ ծնունդ, որ իմանալի է [միայն] Քո Աստվածությանը և հասանելի չէ մարդկանց, տղայական կերպարանքով ամենասուրբ Կույսի գրկում բազմեցիր և սնվեցիր կուսական կաթով:

Ծնվեցիր որպես մանուկ, մինչև արբունքի հասակը շրջեցիր մարդկանց մեջ՝ որպես նրանցից մեկը, երեսուն տարե-

կանում կատարյալ հասակով, ադամական մարմնով եկար Հորդանան, Գա՛ռդ Աստծու, որ վերցնես աշխարհի մեղքերը, որ Ադամի նեխած վերքերը լվանաս: Մկրտվեցիր Հորդանանում Հովհաննես ամլորդու կողմից և Քո համագոյակից Հոր կողմից վկայվեցիր սիրելի Որդի և կատարյալ Աստված: Ուստիև Սուրբ Հոգու, որ անբաժանելի է Քեզնից, Քեզ վրա աղավնակերպ իջմամբ տեսնողներին ցույց տվեցիր Քեզ կատարյալ Աստված՝ եկած փնտրելու մարդկային կորած ազգը: Որովհետև մեզ նույնպես կենդանի ջրից (որտեղ մկրտությամբ թաղվեց Քո աստվածախառն մարմինը)[4] վերստին ծնվելու ժամանակ նույն կատարյալ շնորհների Հոգին ես անարևութաբար առաքում, որ մենք լինենք Աստծու որդիներ և Քո Աստվածության ժառանգակիցներ: Եվ ապա այնուհետև սկսեցիր գործել և ուսուցանել մեր փրկության ավետարանը, մեզ սովորեցրիր հակառակ լինել հնարներին չար դևի, որ մարտնչում է մեզ հետ մկրտությունից հետո: Քանզի նա, ով Ադամի հետ մարտնչեց այն ժամանակ, Աստծուդ կողմից կործանվեց և դարձյալ կկործանվի նրանց կողմից, որոնց վրա կարդացվում է Քո սուրբ անունը, քանզի Դու, որ փորձությանը հաղթեցիր, կարո՛ղ ես օգնել փորձության մեջ եղողներին:

Եվ շրջեցիր երկրի վրա մարդու կերպարանքով, ճշմարտապես մարմին առնելով՝ Քեզ վրա կրեցիր մարդկային բոլոր կարիքները, բացի մեղքից: Աստվածահրաշ զորությունդ հայտնի դարձրիր բոլորին՝ բժշկելով մարդկանց պես-պես ցավերն ու ախտերը, և իշխանական վարդապետությամբ շատերին Քեզ աշակերտ դարձրիր: Ապա եկար տեսանելի կերպով հայտնելու Քո Աստվածությունը, որ հրեշտակները տենչում էին գոնե աղոտ կերպով տեսնել. այսօր այն Քո մարմնով ցույց տվեցիր Քո աշակերտներին Թաբոր լեռան վրա:

Քեզ հետ վերցնելով աշակերտներից երեքին՝ Պետրոս վեմին, որին արքայության բանալիները խոստացար, և երկու եղբայրներին՝ Հակոբոսին և Քո սիրելի աշակերտ Հովհաննեսին, ովքեր խոստացան Քեզ հետ ըմպել մահվան բաժակը, առանձնացրիր նրանց մարդկանց բազմությունից, Քեզ հետ տարար Թաբոր լեռը, որ նրանք, ում խոստացել էիր ցույց տալ Քո արքայությունը, Քո մարմնի մեջ տեսնեն Ադամի առաջին փառքերի պայծառությունը, որից զրկեց նրան բանսարկուն՝ մերկացնելով [լուսեղեն] զգեստից, և Քո մարմնի մեջ ցույց տվեցիր այն նրանց: Եվ երկյուղը, որ մահվանից ունեին, այսօր փարատելով՝ հանեցիր նրանց մտքից՝ վկա բերելով մարգարեներին՝ Մովսեսին ու Եղիային, որոնք Քեզ հետ երևացին Քո փառքի մեջ, և խոսեցիր չարչարանքներիդ մասին, որոնք տեղի պիտի ունենային Երուսաղեմում: Եվ ողջերի ու մեռյալների Տերդ ամոթ չհամարեցիր Քո կամավոր մահը խաչի վրա:

Առաքյալները, զարհուրած Քո կայծակնափայլ ճառագայթներից, սարսափած գետին ընկան, որովհետև տեսան Քեզ ոչ այնպիսին, ինչպիսին երեկ և նախորդ օրն էին տեսնում, այլ ահագնակերպ ճառագայթատեսիլ լույսերով, պայծառակերպված և արեգակի ճառագայթները նսեմացրած: Նրանք չէին ճանաչում մարգարեներից գլխավորներին. տեսան նրանց, որոնք եկել էին Քո փառքի սպասարկման համար և զարմանալի տեսքով խոսում էին Քեզ հետ: Եվ մինչ մտահոգ և կիսաբաց աստվածային փայլից տարակուսած՝ լռում էին, հանկարծակի լուսավոր ամպ եկավ և հովանի եղավ նրանց: Եվ հայրական ձայնը, ինչպես այն ժամանակ Հորդանանում, Քո մասին վկայեց. «Դա է իմ սիրելի Որդին» (Մատթ., ԺԷ 5, Մարկ., Թ 6, Ղուկ., Թ 35): Դողացին Հոր ձայնից և վախից կմեռնեին, եթե Քո ամենակալ զորությունը չպահեր նրանց, որպեսզի չմոռանան աստվա-

ծահրաշ տեսիլքը: Ավելի մեռած, քան ողջ էին: Եվ Պետրոսը Սուրբ Երրորդությանդ խորհուրդի [առջև] զարհուրանքից տաղավար չինելու մասին էր բարբառում՝ Քեզ հետ թվակցելով մագարեներին, որ նույն Եռյակ Անձնավորությունն է ցույց տալիս: Նաև Թաբոր լեռան վրա Քեզ հետ գտնվող աշակերտներիդ եռյակ թիվն էր Երրորդությանդ նշանակը, որ այսօր այս երեքի գաղափարով հաստատվում է Սուրբ Երրորդությանդ անբաժանելի Անձնավորությունը:

Արդ, օրհնյա՛լ է Քո փառքը, Տե՛ր Աստված մեր, Քո սուրբ վայրում, որ եկար լրացնելու Օրենքն ու մարգարեներին Քո՝ բարձր լեռան վրա ելնելով, Աւետարանի՛չդ Սիոնի (Եսայի խ 9): Քոնն են երկինքները, Քոնն են բարձունքները, աշխարհն իր ամեն բանով Դու արարեցիր, ծովն ու ցամաքը Դու ստեղծեցիր, Թաբորն ու Հերմոնը Քո անունով պիտի ցնծան: Քանզի այսօր ցնծում է Թաբոր լեռը՝ իր վրա կատարված [տեսնելով] երգողի մարգարեությունը: Այսօր Թաբոր լեռը պարծենում է առավել, քան Սինեական լեռը, որովհետև նրա վրա ամպ էր ու մշուշ, խավար ու մառախուղ, ծուխ ու հուր, և անարժաններին արգելված էր նրա վրա բարձրանալ: Իսկ սա մարմնացած Բան Աստծուդ է լույսերի մեջ ցույց տալիս աշակերտներին և լուսավոր ամպով Հոր ավետիսի խոսքն է հնչեցնում բոլոր որդիացածներին, թե արդարների համար ինչ է պատրաստված ապագայում, և որ ճանապարհներ ու վերելքներ կան բոլոր մեղավորների համար, ովքեր գալիս են Քո հետևից: Քանզի ովքեր այսօր ջերմեռանդ սիրով մոտենում են Քո սուրբ լեռանը, դյուրությամբ երկրավոր ցածությունից ուղևորվում են դեպի երկնավոր բարձրությունը:

Եվ արդ, բարերար և քա՛ղցր Տեր, անոխակալ ու բազումողո՛րմ, Քո պատրաստ բնակավայրից հաշտ և բաց աչքով նայիր Քո սուրբ լեռանը և գթա՛ այս ժողովրդին, որ

հետևում է Քո շավիղներին՝ հանդիպելու Քեզ Քո սուրբ լեռան վրա և երկրպագելու այն տեղին, ուր կանգնած են եղել Քո ոտքերը: Թողությո՛ւն տուր նրանց մեղքերին՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ գործված: Տո՛ւր նրանց սուրբ սիրտ, անզբաղ խորհուրդ և զգաստ միտք: Հանի՛ր նրանց միջից քարեղեն սիրտը և մարմնեղեն սիրտ տուր նրանց, Քո Սուրբ Հոգին տուր նրանց՝ հեռացնելով ամեն մի չարից, և մոտեցրո՛ւ բոլոր բարի գործերին՝ գնալու զորությունից զորություն և փառքից փառք, աստվածային տոներից հասնելու դեպի մշտջենավոր [ուրախությունները]: Ցողի՛ր, Տե՛ր, Սիոն լեռան հերմոնական ցողը՝ տալով նրանց մեղքերին թողություն: Թեպետ մենք օրըստօրե բազմացրինք մեր մեղքերը, բայց դու, Տե՛ր, ըստ մեր մեղքերի մի՛ վարվիր մեզ հետ և ըստ մեր անօրինությունների մի՛ հատուցիր մեզ. մենք կավ ենք, Դու՝ մեզ Ստեղծողը, և ամենքը Քո ձեռքերի գործերն են: Մեղքեր գործեցինք, անօրինացանք, խստացրինք մեր սրտերը՝ չերկնչելու Քեզնից: Դարձի՛ր, լսի՛ր, Տե՛ր, Քո մեծ փառքի համար. գուցե երբեք չժառանգենք Քո սուրբ լեռը: Որովհետև ոչ մի ապավեն չունենք, բացի Արդարիցդ և Անարատիցդ: Իսպառ մի՛ բարկանա և մի՛ թողնիր Քո ձեռքից Քո բանական հոտը՝ Քո սուրբ արյան գինը, որին սեփական ժողովուրդդ դարձրիր: Որովհետև մենք մեր գործերով բարկացրինք Քո սուրբ անվանը, արագորեն մեզ վրա հասան տեսակ-տեսակ հարվածներ՝ սով, սուր, գերություն, նեղություն, դիվական հարվածներ, հիվանդություններ և պես-պես ցավեր, տաժանելի ախտեր, վշտեր երկնքից, վշտեր երկրից, տարաժամ մահեր, անպետք ամպեր և խռովարար քամիներ, որոնք կա՛մ բարկությամբ փակում, կա՛մ սաստկությամբ բացում են. նաև զանազան պատահարներ մարդկանց և անասունների մեջ, մեր անդաստաններում, և ոտ-

նակոխ եղանք նրանց կողմից, ովքեր չէին կանչում Քո սուրբ անունը:

Դու անոխակալ և մարդասեր Տեր ես, թեպետև մենք մեղանչեցինք, սակայն Ավազանի արգանդից դեպի Քեզ դարձանք, և մեզ համար չկան օտար աստվածներ: Դու ես մեր Հայրը, Տեսուչն ու Հովիվը, դարձի՛ր դեպի մեզ, մեր Փրկի՛չ Աստված, և մեզնից ե՛տ դարձրու Քո պատուհասի ցասումը, որովհետև եթե ըստ մեր գործերի հատուցես մեզ, մենք մեր չար գործերով հանապազ ապականեցինք մեր ճանապարհները: Եվ որովհետև Դու մեղքերին թողություն տվող ես և ի զորու ես մեր միջից հեռացնել ախտերը, հիվանդությունները, հարվածները և մեղքերի ցավերը, Քեզ ենք դիմում հանապազ. մեղանչեցինք երկնքի դեմ և Քո առջև, Աստվա՛ծ, քավի՛ր մեզ՝ մեղավորներիս: Բա՛ց մեր առջև, Տե՛ր, Քո ողորմության դուռը այսօրվա շնորհով, որ ամոթով ետ չդառնանք, այլ իջնենք արդարացած, ինչպես այն մաքսավորն ու մեղավոր կինը (տե՛ս Ղուկ., ԺԸ 14, Է 47): Եվ տո՛ւր մեզ բարի մասը Քո սուրբերի հետ, որոնք սկզբից իսկ հաճելի եղան Քեզ՝ մեր Փրկիչ Աստծուդ, որ արժանի լինենք նրանց հետ փառավորելու Քո ահավոր և քաղցր անունը, Քրիստո՛ս Աստված մեր, Հոր և Ամենասուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՄԵԾ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մինչ նրանք՝ [Հիսուս և Իր աշակերտները] ճանապարհ էին գնում, մեր Տերն Իր տասներկու [աշակերտներին] ասաց. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ կամ ո՞րտեղից եմ»: Հայտնեցին Նրան, որ դրսինները Նրա մասին տարբեր կարծիքներ են [հայտնում]: «Իսկ դո՞ւք իմ մասին ինչ եք ասում»: Պետրոսն առաջ եկավ ու ասաց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ Կենդանի Աստծո Որդին» (Մատթ., ԺԶ 16): Մեր Տերը գովեց նրա գեղեցիկ վկայությունը և ասաց, որ այդ հայտնությունը Պետրոսին Հայրն է շնորհել (Մատթ., ԺԶ 13-17, Մարկ., Ը 27-30, Ղուկ., Թ 18-20):

Ապա Պետրոսն այս ու այն կողմ էր դեգերում՝ կարծելով, թէ Քրիստոս չի մեռնելու՝ լավ չիմանալով, որ Նրա մահով է մահը մեռնելու, և աշխարհը՝ կենդանանալու: Մեր Տերն էլ, տեսնելով, որ Սիմոնը երկնային երանությունները մոռացել է, մորմոքալից խոսքեր հնչեցրեց նրա լսելիքին, որից էլ նա ահռելի երկյուղով ամբողջովին սարսռաց, երբ Տիրոջից հետևյալը լսեց. «Մարդու Որդին պետք է շատ չարչարանքներ հանձն առնի, մեռնի ու երրորդ օրը հարություն առնի» (Մատթ., ԺԶ 21, Մարկ., Ը 31, Ղուկ., Թ 22): [Տերը], մահը հիշատակելով, հույժ տրտմեցրեց, սակայն հարության ավետիսով առավել մեծ չափով մխիթարեց:

Իսկ Պետրոսը Նրա մահվան լուրի պատճառած մեծ տագնապից հարության ավետիսը մոռացավ: Նույնն ենք տեսնում նաև մեր բնության մեջ: Մեր մեղքերի բնության հին ախտերը թույլ չեն տալիս, որ մեր արագահաս նոր կյանքը ներս գա: Ճիշտ այդպես ժողովրդի որդիներն էլ իրենց հին կուրությամբ նախանձում էին մեր այս նոր կյանքի հայտն-

վելուն՝ Նրան Եղիա կամ Երեմիա, կամ նախկին մարգարեներից մեկը կոչելով, որպես չար մխիթարություն իրենց մահկանացու անձերին:

Մահկանացու էին կարծում՝ ժողովրդի մտքի մեջ տարակուսանքներ գցելով Նրա մասին, Ով եկել էր մարգարեների խոսքերն իրականացնելու:

Պետրոսն էլ էր նույն ախտով տառապում: Նա մի գեղեցիկ վկայություն մատուցեց, սակայն դրա խորհուրդը չարով նսեմացրեց: Անզգայի պես սաստկությամբ ընդդեմ ելավ՝ ասելով. «Քա՛վ լիցի Քեզ, Տե՛ր, այդ Քեզ չի լինի» (Մատթ., ԺԶ 22): [Եվ սրանով] իր բոլոր նախկին մտածումները դուրս թափեց և ջնջեց մինչ այդ արած իր գեղեցիկ վկայությունը: Հայրը նրան Որդու ամբողջ Աստվածությունն էր հայտնել, քանզի Իր Աստվածությամբ և մարդեղությամբ չարչարվելու էր, նույնպես էլ հարություն էր առնելու: Այս ավետիսից բոլորը պիտի ուրախանային և ոչ թե ձգտեին զրկել Նրան երկուսից էլ՝ [մահվանից ու հարությունից]:

— Տեսա՞ր. որտեղ որ [Պետրոսն] Աստծունը խոսեց, այնտեղ [Տերը] նրան երանի տվեց, իսկ որտեղ որ հին մարդու պես խորհեց, այնտեղ նրան հայտնապես ասաց. «Դե՛ն գնա, սատանա՛, որովհետև դու Աստծունը չես խորհում, այլ՝ մարդկանցը» (տե՛ս Մարկ., Ը 33):

Մարդու խորհուրդները ծխի պես անպիտան են[5]. արդ [Տերը] սաստեց այդ ծուխը և նոր մարդու միջից այն անհետ կորցրեց, որպեսզի ինքնածագ Լույսն առանց ապականացու խորհրդի լինի: Սաստեց անգամ նրանց, ովքեր արքայության որդիներ էին կոչվելու, ու Իրենից վանեց, որպեսզի Իր Հոր կամքն առանց գայթակղության առիթ տալու կատարի: Սովորեցրեց նրանց իրենց անձերում չարչարանքներ կրել և այնտեղ իսկ հարության հույսով նրանց

հաստատեց. ոչ միայն նրանով, ինչ հետո էր լինելու, այլ նաև որպեսզի նույն այդ ժամանակ Իր երկրորդ գալստյան օրինակը փոքրիշատե ցույց տա: Ինչպես որ անսուտ վկայությամբ ասել է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե նրանցից, որ այստեղ են, կան ոմանք, որոնք մահ չպիտի ճաշակեն, մինչև որ տեսնեն Աստծու արքայությունը՝ զորությամբ եկած» (Մարկ., Ը 39):

Այս տեղում՝ ավետարանագիրների խոսքերը ոմանց մի փոքր հակասական են թվում: Մատթեոսը «վեց օրից» հետո է ասում, իսկ Ղուկասն ու Մարկոսը՝ «ութ օրից»: Բայց մենք բավական ենք համարում ոմանց ասածը, ըստ որի՝ Մատթեոսը չի հաշվել առաջին և վերջին օրերը և միայն միջանկյալ օրերն է հաշվել, իսկ մյուս երկուսը հաշվել են նաև խոստումը տալու և երևալու օրերը: Եվ բոլորին հաճելի թվաց սա ընդունել, և մենք էլ, սրան համաձայնելով, միաբանեցինք նրանց:

Ինչպես որ Մարկոս ավետարանագիրն է նշում՝ «Եվ այս խոսքերից մոտ ութ օր[6] հետո Հիսուս Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լեռան վրա և նրանց առաջ պայծառակերպվեց: Եվ Նրա զգեստները փայլուն, խիստ սպիտակ դարձան, այնպես, որ երկրի վրա ոչ մի լվացք անող չի կարող այդքան սպիտակեցնել: Եվ նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, ու նրանք խոսում էին Հիսուսի հետ Նրա վախճանի մասին, որ տեղի պիտի ունենար Երուսաղեմում» (Մատթ., ԺԷ 1-4, Մարկ., Թ 1-3, Ղուկ., Թ 28-31):

Մինչ այս տեղը սուրբ ավետարանագիրը կրկնում է [Մատթեոսին՝ պատմելով] երկնային հայտնության մասին:

Աստվածաշունչ Մատյանի ամեն մի խոսք հույժ զարմանալի է մեր հողեղեն բնության համար: Իսկ այդպիսի երկնավոր երևման ժամանակ ոչ միայն մենք ենք

տկարանում, այլև՝ երկնքի անմարմին զորությունները:

Ամբողջ ժամանակը, որ մեր Տերն աշխարհում շրջել է, առավելապես ըստ մարդկային խոնարհության է անցկացրել, իսկ այդ լեռան վրա Իր ահավորությամբ հրեշտակներին էլ գերազանցեց: Ոչ միայն որովհետև լուսեղեն փառքով երևաց, այլ նաև որ խորտակեց մահվան դռներն ու իրականացրեց առաքյալներին տված Իր խոստումները: Ասված է, որ Աստված այսպես է սահմանել, որպեսզի առանց մեզ ոչինչ չկատարվի: Դավիթն էլ աղաղակում է և ասում. «Արդարները պիտի սպասեն, մինչև որ հատուցման արժանացնես ինձ»: (Սաղմ., ՃԽԱ 8): Նաև երկրորդ անգամ մեծերից մինչև փոքրերին [ազդարարում է], որ վերջում ոչ ոքի զղջումն ընդունելի չի լինելու: Ինչպես որ մի շաբաթում հաստատեց բոլոր արարածներին, [այնպես էլ] մի օրում երկինքն ու երկիրը կանցնեն, և ամեն մարդ կստանա՝ ըստ իր կատարածի:

Արդ Մովսեսին ու Եղիային էլ Իր հետ վկայության համար բերեց, որպեսզի Մովսեսով մեռելների հարությունը ցույց տա, իսկ Եղիայի միջոցով՝ Իր Աստվածության սիրելիի մահը: Դրան Եղիան քաջատեղյակ էր ու տենչում էր, թե երբ պիտի տեսներ:

Այնտեղ ճշմարիտ արքայություն էր, քանի որ այնտեղ միասնական Երրորդությունը լիալիր էր: Աստված ինչ–որ վայրում չի լինում, [այսինքն՝ տարածական չէ], սակայն երևաց մարմնավորներին որպես տարածական: Ու այն տեղը, ուր Աստված հայտնվեց, առանց վարանելու [կարելի է] արքայություն կոչել, քանի որ արքայությունը հենց այն է, ուր Աստվածությունն է երևում:

Իսկ դու, ո՛վ իմ տեր Պետրոս, ինչու՞ ես այդ մահվանից զարհուրել, որից բոլոր բարիքներն են աշխարհին զեղվում: Նույնը հենց հիմա ուրիշներից էլ ես լսելու, որովհետև ավետարանագիրն ասում է. «Մովսեսն ու Եղիան Նրա վախճանի մասին էին խոսում, որ տեղի պիտի ունենար Երուսաղեմում» (Ղուկ., Թ 31):

Արդ, երբ Պետրոսը տեսավ, որ մեռածներն ու կենդանիները նույն բաներն են քարոզում, և Տերն Ինքն Իր կամքով է եկել Հոր միաբանությամբ, առավել ևս նեղվեց նախկին երկյուղի մեջ, քանզի հաստատ իմացավ, որ մեր Տերը մահվանից չի խուսափելու, և անհնար է, որ իրենք Նրան թողնեն ու փախչեն: Նաև այն էր քաջ գիտակցում, որ երբ Քրիստոս այս լեռից իջնի, ուղիղ Երուսաղեմ կգնա, ուր իրենց համար իսկ մահվան վտանգ կար: Իր այս խղճմտանքի պատճառով սկսեց Տիրոջն ասել, որ հրամայի Նրանցից յուրաքանչյուրի համար տաղավարներ պատրաստել և Մովսեսին ու Եղիային այնտեղից չուղարկի: Որպես թե մեկը Նրանց մտքում ասի, թե այդ լեռան վրա մահը իշխանություն չունի, և որ մահն այդ լեռը վախենում էր բարձրանալ: Հրեաներն իսկ չեն հանդգնի այստեղ [ելնել]:

Եթե անգամ Երուսաղեմ գնանք, երբ Մովսեսն ու Եղիան մեզ հետ լինեն, քահանաները չեն կարողանա մեզ նեղել, որովհետև Նրանց սաստիկ ահին չափազանց տեղյակ են: Սա այն Մովսեսն է, որ անապատում Նրանցից բազում հազարների է կոտորել. նրա հրամանով է գետինը բացվել ու Նրանց բանակները կուլ տվել: Եղիայի մասին էլ անտեղյակ չեն. եթե նրա դեմ դույզն–ինչ խոժոռվեն, նա երկինքը կկապի ու Նրանցից անձրևը կկտրի: Իսկ եթե է՛լ ավելի հանդգնեն, երկնքից հուր կիջեցնի ու ճշմարտության թշնամիներին կայրի:

Շատ տեղերից սրա զորության ահը գիտեն, [գիտեն] ոչ միայն հիշյալ քահանաները, այլև հայտնապես Նրանց ուրացողները: Իրենց ութ հարյուր քրմերի սատակումը չեն մոռացել, որոնց ինքն իր ձեռքով Կիշոնի հեղեղատում կո-

տորել էր (տե՛ս Դատ. Դ 13, Ե 21)[7]: Եվ եթե Աքաաբ թագավորն էր նրանից երկնչում, որքա՞ն առավել՝ Աննան ու Կայիափան, ովքեր Աքաաբից շատ ավելի տկար էին:

Նրանց այս բոլոր կասկածների պատճառով, որ մարդկորեն երկնչում էին, Հայրը, նրանց հույժ ողորմելով, վերևից ասում է. «Դա է իմ սիրելի Որդին, դրա՛ն լսեցեք» (Մարկ., Թ 6):

[Այս խոսքերից] իրենց Տիրոջ երկրային պահապան ծառաները, երկյուղի ախտով բռնված, [երեսի վրա] ընկան: Երկնային Տերությունը ոչ մեկի կողմից չի պահպանվում, այլ Նա է Իր զորությամբ բոլորին պահում: Եվ դուք տաղավարներ չինելու նեղություն մի՛ քաշեք. եթե շատ եք շոգել, ահա ձեզ ամպ է հովանի տրվել, դրա ներքո զովացեք (Մարկ., Թ 6, Ղուկ., Թ 34):

Երբ այս ձայնը երկնքից նրանց ականջին հասավ, նայեցին ու միայն Հիսուսին տեսան: Ապա նոր կարողացան իմանալ, որ իրենք այն ահից թմրել էին ու չգիտեին՝ ի՛նչ էին խոսում:

Իսկ եթե Գիրքը նրանց «թմրած» է անվանում, ապա ինչպե՞ս է, որ Մովսեսին ու Եղիային ճանաչեցին: Պարզ է, որ անմտությունից էին նրանք թմրած և ոչ թե իրենց լսածներից և իմացածներից: Ինչ որ աչքերով էին տեսել՝ ճշմարիտ էր, և ինչ որ ականջներով էին լսել՝ սուտ չէր: Բայց քանի որ ժամը սաստիկ ահարկու էր, մարդկային բնությունը չկարողացավ երկնավոր բնությունն ըմբռնել: Որովհետև այստեղ-այնտեղ սայթաքում էին, ու ոչ ոք չէր կարող [նրանց] մեղադրել: Քանի որ [անգամ] մեծն Աբրահամը վերին զորություններն ամբողջովին իբրև մարդացածներ էր տեսնում, հոգիներին բախվելով՝ չէր կարողանում ճշմարտապես ըմբռնել: Մտքերն այս ու այն կողմ էր տարուբերում. երեք [հոգի] էր տեսնում ու մեկ կարծում և

մեկ կարծելով՝ երեքի հետ խոսում. մարդ էին երևում, իսկ նա Աստված էր կարծում:

Եվ հողեղեն բնություն ունեցողներից ո՞վ է, որ կարող է ճշմարտապես իմանալ և ճանաչել այդ անբավ մեծությունը. ոչ միայն մարմնավոր մարդիկ [չէին կարող], այլև երկնային ոչ պարզ էությունները: Գիրքը նրանց իրավամբ է «թմրած» անվանում:

Նա, ում զորությունից լեռները հալվում են ու անդունդները ցամաքում, և մեր այս թանձրահող երկիրը հիմքից դղրդալով սասանվում է,- Իր ողորմությամբ խնայում է մեզ, որովհետև Իր ձեռքի գործն ենք, ինչպես ամեն օր ամենքիս, այնպես էլ նրանց, ովքեր այն օրը լեռան վրա երկնչեցին:

Գիտենք, որ Աստվածաշունչ Մատյանը վայրիվերո չի խոսում, այլ ամեն բան ճշմարտապես է պատմում: Բայց կան խոսքեր, որ ինչպես ասվում են, այնպես էլ հասկացվում են, սակայն անհրաժեշտ է խոսքի ծածուկ միտքը բացահայտել, որպեսզի [լսողները] հավատքով ընդունեն՝ իրենց անձերի փրկության համար:

Ասում է, որ պետրոսյանք Մովսեսին ու Եղիային ճանաչեցին: Եթե ասենք՝ այո՛, ճանաչեցին, ապա [հարց է], թե ինչպե՞ս ճանաչեցին մի բան, որ չգիտեին:

Խոսքի զորությունը քա՛ջ իմացիր և տեր Պետրոսի պես մոռացկոտ մի՛ լինիր: Այս ճառի սկի՛զբը կարդա. [ուր Տիրոջ պայծառակերպության վայրն] «արքայություն» կոչվեց: Այնտեղ [արքայությունում] մարդկային մոռացություն չկա, այլ անմոռաց հիշողություն: Որովհետև մեզ համար այն տեղն արքայություն էր լոկ նմանությամբ, իսկ Աստվածության համար՝ բովանդակ լրումով:

Տերը մեզ ոչ թե բնական գիտություններ սովորեցրեց, այլ իմացական գիտություն: Այրերը կարծես երկրից եր-

կինք փոխադրվեցին, դրա համար էլ իրենց այստեղի իմացությունը «թմրություն» անվանեցին: Անտեսանելին ճանաչելով՝ «արքայության մանուկներ» կոչվեցին, ինչպես նաև՝ «մարգարեության մանուկներ»: [Տերը] կրթեց նրանց գիտությամբ, որպեսզի [մենք] այլևս չկարոտենք երկնային ժառանգությանը և անծանոթ մնանք առաջիններին, միջիններին ու վերջիններին:

Երբ արժանավոր մարդիկ արքայության զավակներ դառնան, այնժամ աստվածատուր շնորհով [նրանց] իմացություն կբաշխվի: Ինչ որ այժմ մտքով ենք իմանում, «հայելու օրինակ» է անվանվում (տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 12): Իսկ երբ մեզանից մարմնական քողը վերցվի, Աստվածությունը դեմ-հանդիման կտեսնենք, այնպես, ինչպես որ կա: Կտեսնենք հրեշտակների ամբողջ բնությունը, և անծանոթներին, ինչպես ինքներս մեզ [կճանաչենք], դրսից՝ արտաքին երեսը, իսկ մտովի՝ արտաքինն ու ներքինը:

Եվ քանի որ պետրոսյանք դեռևս մարմնավոր էին, նրանց հոգիների մեջ իմացության շնորհի նշույլ կաթեցրեց. որով և Մովսեսին ու Եղիային լիովին ճանաչեցին: Իսկ այն, որ այնտեղ վայրիվերո խոսեցին, արտաքին զգացողությունից էր:

Եվ մի այլ կողմով ևս Աստված նրանց ողորմեց. այն է, որ Մովսեսին ու Եղիային հաստատապես ճանաչեցին: Եվ որպեսզի նրանց մտքում [կասկածի] մի բիծ էլ չմնար, նրանց խոսքերով ևս քաջ ծանոթություն հաստատեցին: Նրանք Տիրոջ հետ հայտնապես էին խոսում, իսկ սրանք նրանց ամեն մի խոսքը ուշադրությամբ լսում էին: Եվ ինչ որ լսեցին՝ նույնը մտապահեցին, որովհետև եթե մոռացած լինեին, ապա ավետարանիչներն էլ չէին գրի:

Բայց առջևում այս հարցը դեռևս կա. ի՞նչ էր արդյոք Մովսեսը Տիրոջ հետ խոսում, և կամ Եղիան ի՞նչ էր Նրա առաջ հաստատում: Ավետարանիչը պատմում է, որ Նրա վախճանի մասին էին խոսում, որ Երուսաղեմում էր տեղի ունենալու: Նրա վախճանը Նրա մահն է, և Նրա մահվամբ են եղել երկնային բոլոր բարիքները:

[Կհարցնես, թե] Մովսեսն Աստծո Որդու մահվան մասին որտե՞ղ է գրել:

Այդպես մի՛ հարցնի, թե որտեղ է գրել. բոլոր օրենքներն ու մարգարեությունները Աստծո Խոսքի մարդանալու մասին են մեզ պատմում՝ [Նրա] չարչարվելու, մեռնելու և հարություն առնելու մասին:

Ծննդոց [գրքում ասվում է]. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստված ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի» (Բ Օր., ԺԸ 15)՝ Նոր Կտակարանի օրենսդրության համար: «Ինձ նման» և «Նրան կլսեք» ասելով՝ իր օրենքը լուսեցրեց և հրամայեց Տիրոջ օրենքն առաջ մղել, մկրտությունը՝ ծովով, ամպով և հրե սյունով, նաև կողի խոցմամբ և վտակաբուխ վեմով:

Եթե իմ ասածը չես ընդունում, ապա առաքյալներինն անշուշտ կընդունես: Ասում է, թե վեմը, որ ժողովրդի հետ էր գնում, Ինքը Քրիստոսն էր (Ա Կորնթ., Ժ 4), որ կար խաչափայտին, հրաշքներ գործող գավազանի հետ, անաբատի մահվամբ, Եգիպտոսում գառների արյան թափվելով ու մահվան զորությամբ նրանց գերությունից փրկելով: Իսկ հարության ավետիսը Հովսեփի սուրբ ոսկորներն էին նրանց տալիս: Մեռածները կենդանիներին մահվանից փրկեցին: Նրա համբառնալու մասին մեծն Դավիթը գրել է. «Աստված բարձրացավ օրհնությամբ, և մեր Տերը՝ շեփորի ձայնով» (Սաղմ., ԽԶ 6):

Այս բոլորը Եղիան էլ գիտեր, որովհետև նույն Հոգին էր ամենքի մեջ խոսում. բոլորն էլ մեկ օրինակ գիտեին: Մեկը քիչ խոսքերով էր այս ասում, մյուսը բազմապիսի ապա-

ցույցներ էր բերում: Սակայն զորությամբ նույնն էին հաստատում: Մովսեսն ու Եղիան այս ամենը Տիրոջ հետ խոսում էին, որպեսզի առաքյալները նրանց անսուտ խոսքերի վկաները լինեին, թե՝ արդեն նրանց վրա հասել է մահվան դատավճիռը: Ու թող ոչ ոք չհամարձակվի Նրա խոսքերին դեմ կանգնել: Եվ, ինչպես դրանից հետո հայտնի դարձավ, ոչ ոք Տիրոջ առջև այլևս չհամարձակվեց նույն խոսքերը կրկնել:

Բայց դու, որ լսում ես մովսեսյանց գալստյան և Տիրոջ հետ նրանց խոսելու մասին, առանց ծանր ու թեթև անելու անփութորեն մի՛ նայիր դրան ու փոքր բան չիմանաս, և դատարկ շաղակրատության վայր էլ չհամարես: Լա՛վ մտածիր ու տե՛ս պատվական այրերին: Խորհի՛ր ու [կհասկանաս, որ] այն տեղը երկրային բոլոր արքունիքներին գերազանցում էր: Եվ կամ ո՞ւմ առաջ էին կանգնած: Կամ ովքեր որ կանգնած էին, եթե երկնային մեծություն չունենային, չէին կարողանա երկնավոր Տիրոջ առաջ կանգնել ու Նրա հետ խոսել: Բայց [Տերն] Իր սիրով նրանց բերեց, Իր ողորմությամբ Իրեն մոտեցրեց և ներելով ունկնդրեց նրանց, դրա համար էլ կարողացան երկար խոսել:

Ինձ թվում է, թե իրենց ազգատոհմի համար չափազանց շատ էին ողբում, միգուցե քաղցր արմատի[8] սիրույն՝ գավառների հանդեպ գութ ունեին: Ու թեև նրանցից առաջ բազում արդարներ են եղել, սակայն տեսնում էին, որ այդ ժամանակներում բոլորն էլ չար են: Հաստատեցին, որ ժամանակը հասել էր, և օրը մոտեցել, երբ իրենց առկայծ ճրագը մարելու էր, և ջախջախված եղեգը արմատախիլ էր արվելու (տե՛ս Մատթ., ԺԲ 20): Մտքում ծածուկ իրենց ազգի համար էին ողբում: Տեսան, որ իրենց ամեն ինչը հեթանոսներին է անցնելու, և իրենք պետք է լոկ իբրև անշունչ մարմիններ մնան: Տեսան նաև Աստծո բարերարությունը, որ ոչ մեկի կորուստը չի կամենում, և համարձակվեցին Տիրոջը հարցնել: Ով նրանց սրտի գաղտնիքները գիտեր: Ասացին՝ արդյոք հնարավո՞ր է, որ այլ կերպ լինի, որ Դու չմեռնես, ազգը չկորչի, և հեթանոսներն էլ փրկվեն: Իսկ մեր Տերն Իր ծառաներին չտրտմեցրեց, այլ այդ հարցի պատասխանն Իր Հոր կամքին թողեց:

Գուցե ինձ ասեք. «Այդ որտեղի՞ց համարձակվեցիր չգրված բաների մասին խոսել»:

Ես իսկ տեսա Տիրոջը, որ լալիս էր Երուսաղեմի վրա և սաստիկ ողբում Իր ընտրյալ ազգի համար: Այսօրվա [լացը] նույնպես մեծ էր, քանզի երեսնիվայր ընկել էր Աստծո առջև ու աղոթում էր: Հասարակ մարդ չէր, սակայն ողջ գիշեր, Իր ամբողջ զորությամբ [աղոթում էր] մեծ տաժանակրություններով, այնքան որ բավականին քրտինք հոսեց Նրանից: Իսկ աղոթքի վերջում Մովսեսյանց հարցումը կրկնեց՝ ասելով. «Հա՛յր, եթե կարելի է, թող այս բաժակն Ինձնից հեռու անցնի» (տե՛ս Մատթ., ԻԶ 39): Եվ տեղնուտեղը իրերի խնդիրն Իր Հոր կամքին էր հանձնում:

Դարձյալ աղոթքի կանգնեց ու նույն խոսքերը կրկնեց: Եվ այս է մեզ համար առավել կարևոր, որ սովորենք. ինչպես որ Նա չկամեցավ Հոր կամքից դուրս գալ, մենք էլ Նրա կամքից դուրս չգանք: Դրա համար էլ, ինչպես Եղիայենք չկարողացան Տիրոջը մեղադրել, նույնպես և Պետրոսյանք, ովքեր ականատես էին եղել: Եվ ոչ միայն մեղադրողներ չեղան, այլև շնորհակալ եղան Նրան ամբողջ տիեզերքով մեկ:

Սա էր Տիրոջ հետ այրերի երկար խոսելու պատճառը, և ոչ միայն Նրա հետ շատ խոսելու, այլև Նրանից բոլորովին չհեռանալու, նաև հարկ եղած դեպքում Նրա հետ մեռնելու: Եվ եթե Մովսեսը չէր կարող կրկին մեռնել, [ապա] Եղիայի համար, եթե Տերը կամենար, հնարավորություն կար:

Երբ նրանց առաջին հարցումը գլուխ չեկավ, երկրորդին

է՛լ ավելի սաստիկ տենչացին: Սիրելի զորականներից ո՞ր մեկը պատերազմից հեռու կմնա, երբ ինքը թագավորը թշնամու վրա գնա:

Եվ եթե երկրայիններն այդպես են անում, ովքեր ավելի հաղթվելու, քան թե հաղթելու երկվություն ունեն, ապա երկնավորներից քանի՜ քանիսը հոժարությամբ Նրան նահատակակից կլինեն, մանավանդ որ առջևում ոչ թե մահվան կասկած կա, այլ՝ անմահ կյանքի հաղթանակ: Այս պատերազմից ոչ ոքի վայել չէ հեռու մնալ՝ ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց, ո՛չ արդարներին, ո՛չ մեղավորներին, թե հնար լինի՝ գուցե նաև երկնավորներին:

Բայց ահա, Եղիայի համար թեև շատ անձկալի էր Նրան խաչակից լինելը, սակայն Տերը Նրան արգելեց, որպեսզի արդարներից ոչ ոք Իր հետ չխաչվի: Որովհետև արդարների համար խաչվելու չէր եկել, այլ բարո՛ւ [հաղթանակի], որի համար էլ համարձակվեց մեռնել, որպեսզի Իր մահով բոլորի մահը խափանի: Եղիային մահից ետ պահեց, որպեսզի տրված պատիվը Նրանից չկորզի: Ոչ միայն արգելում է Եղիային Իրեն մահակից լինել, այլև չի կամենում, որ արդարներից մե՛կն իսկ Իր հետ մեռնի. այլ միայն մեղավորներից, այն էլ ոչ թե Իր խոսքով, այլ ում որ քահանայապետերը կամենան: Այնժամ թերևս Նրա բարերարությունը երևա, որի մասին ավելի առաջ էլ ասվել է, թե մեզ համար «անօրենների» շարքն է դասվել (տե՛ս Եսայի, ԾԳ 12, Մարկ., ԺԵ 28): Իր սիրուց էր, որ Եղիային խնայեց, որպեսզի անմահության պարգևի մեջ մնա և լինի մունետիկն Իր երկրորդ գալստյան:

Աստված գիտե՛, թե ի՛նչ է անում. և միայն Ինքն է բարին կատարում: Քեզ համար այն էլ բավարար կլինի, եթե Նրա հույսը վայելել իմանաս, ու երբ քո առջև դուռը բաց անի, եթե կամենաս, դու էլ Նրա պես կկարողանաս գործել, ինչպես որ առաքյալների հետ եղավ, և Քրիստոսով մինչև օրս լինում է:

Գիտեմ, որ շատերն են իմ դեմ գայրացած ասում. «Մեր Տերն այնտեղ՝ լեռան վրա, արքայությունը ցույց տվեց, իսկ դու եկել մահվան ճառ ես մեզ ասում»: Ճառին լա՛վ նայիր ու կհամաձայնես, որ Նրանց լեռ բարձրանալը մահվան պատճառի սկիզբը եղավ: Մովսեսյանք էլ նույնը Տիրոջ առաջ կրկնեցին: Եվ [բացի դրանից]՝ մենք էլ այս ճառի մեջ արքայությունը տեսանք:

Զգեստը սաստիկ սպիտակ էր և իր պայծառությամբ գերազանցում էր արեգակի ճառագայթներին: Տեղին արժանի զգեստին էլ վայելչություն է պետք: Բայց Նրանով էր արքայությունը կատարյալ, որ այնտեղ Հայրն ու Որդին են մարդկանց հայտնվել: Պետք է հաստատ իմանալ, որ անանց ու հավիտյան այդպես է լինելու:

Սակայն զգեստի սպիտակությունն Անմահի մահվան մասին մի փոքրիկ ակնարկ է միայն: Բոլոր արարածներն անմխիթար սգի մեջ էին, որովհետև Անմահ Աստծո անմահ պատկերը՝ մարդը, մահվամբ ընկել էր անփարատ խավարի մեջ: Բոլոր արդարներն ու մեղավորները սգում էին՝ կրելով սգո ծանր հանդերձներ, որ խավարի նմանությունն ուներ: Եվ այս արարածներից ոչ ոք չէր կարող աշխարհից սգի ծանրությունը վերացնել. դա միայն Նրա՛ միջոցով էր հնարավոր, Ում միջոցով որ ամեն ինչ եղավ:

Արդ, Իր մահվան համար զարդարվեց ոչ թե երկրային պատվական հանդերձներով, այլ Իր՝ ի բնե ինքնածագ լույսով, որպեսզի աշխարհից խավարի իշխանությունը հալածի ու մարդկանց թախծալի տրտմությունը մխիթարի և հին տրտմության բիծն Իր անապական լույսով սպիտակեցնի: Եվ մարդիկ, որ իրենց սիրելիների մահվան համար տխրում և մթնում են ու կենդանության օրոք գրեթե մահն են ճա-

շակում, - թող նայեն Աստծո Որդու մահվան զվարթութ-յանն ու պայծառությանը, ու թող նրանցից վերանա ան-հույս տրտմության սուգը, և հարության հույսով լցվեն ու այլևս մահվանից չսարսափեն, որ արդարներին ու մեղա-վորներին դողի մեջ է գցել: Նրա համար ենք այստեղ մահ-վան ճառն ասում, որ սրանով ենք տեսնում երկնքի արքա-յությունը, որն Իր զորությամբ մեծ համարձակությամբ ե-կել հասել է: Մահն արհամարհում ենք, որովհետև մեր ան-ձերն արքայության հույսով են համակվել: Սիրեցինք լե-ռան այն տեղը, ուր մեզ համար կրկնակի հայտնություն ե-ղավ, և դեռ ավելին՝ եռակի:

– Մովսեսին մեռած էինք կարծում, բայց կենդանի տե-սանք. նա բերեց հարության ավետիսը բոլոր մարմինների համար:

– Կիսահավատ հրեա ազգը Եղիայի հոգին հափշտակ-ված, իսկ մարմինը՝ իբրև մի անպիտան գոյացություն դեն գցված էր դավանում: Նա էլ եկավ ու երևաց ամբողջական՝ հոգով ու մարմնով, որպեսզի նրանց խղճմտանքը թե-թևացնի, և եթե կամենան՝ ընդունեն:

– Կարծում էինք, թե մահվան թագավորությունը չի անցնի, [սակայն] այնտեղ՝ լեռան վրա, մահը՝ մեռած, իսկ կյանքը թագավորելիս տեսանք:

Եթե ուզում եք, նորից լեռան ճառին կանդրադառնանք, մանավանդ որ այն լեռից չենք էլ իջել, ու քանի դեռ այն-տեղ ենք, հենց այնտեղի մասին էլ կխոսենք և այնտեղի խոսքերով էլ հանդես կգանք, իսկ եթե այն լեռից, այլ խոս-քերի կարիքից դրդված, իջնենք, դարձյալ նույն լեռը կբարձրանանք. երկու անգամ լինի թե երեք, նույնը պիտի անենք, մինչև որ մեր ճառն ավարտվի. և այն լեռան շուրջն էլ կեզրափակվենք:

Բայց առայժմ այնտեղ՝ վերևում, տեր Պետրոսին պետք է հարցնենք. «Այդ լեռն ինչո՞ւ այնպես սիրեցիր, որ ուզում ես այնտեղ քեզ ու ընկերներիդ համար բնակություն հաս-տատել: Եթե դու գոնե փոքր-ինչ պատշաճ պատրվակ ու-նենաս թե՛ քո, թե՛ Տիրոջ և թե՛ Մովսեսի համար, [հիմնա-վորի՛ր] այնպես, որ դա ինձ տեղին թվա»:

Եթե ասես՝ մեռելներից հարություն առավ, դրա համար եմ կամենում, որ այստեղ մնան: Հարություն առածը եթե տաղավարի կարիք ունի, ապա դա հարություն չպետք է անվանել, այլ երազ ու աչքի պատրանք: Ուրեմն տակավին հարություն առածի մասին չտեղեկացած՝ հարության մի փոքրիկ ճաշակ քեզ ցույց տվեց, և դու, այն տեսնելով, թմրեցիր: Եթե քեզ համար նրանք այնքան փառավոր էին, որ դու նրանց աներկբայորեն ընդունեցիր, ապա դու ար-դարև առավել ևս էիր նեղվում: Սակայն չեմ կարող քեզ մեղադրել, որովհետև դեռևս հրեախառն ես, օրենքներում գրվածները կարդում ես, բայց արժանին ըմբռնել տակա-վին չես կարողացել:

Մովսեսի դեմքը լեռան վրա շքեղացավ, և ձեր հայրերը չկարողացան նրա բաց երեսին նայել. դու էլ հոգիդ մարմ-նական այդ վարագույրով ես ծածկել: Մովսեսը, դեմքը ծածկելով, նրանց իրեն մոտեցրեց[9], և Տերն այդ քողն է ձեր սրտերից վերցնում: Նա հենց սկզբից ձեր ազգի հանդեպ մարդասեր էր, որ Իր ծառային «աստվածանուն» կոչելով մեծարեց և Իր փառքով զարդարեց նրան[10]: Ժողովուրդն ատելությունից [քշված] փախչում էր Նրանից, իսկ Նա նշաններով ու հնարքներով նրանց ետ էր բերում, որպեսզի Իր մարդասիրությունից ելնելով՝ կարողանան բաց դեմքով Աստվածությունը տեսնել: Սա հենց Նա է, Ով ձեզ շատ բա-ներով կրթեց, որպեսզի այսօր արժանի լինեք Աստվածութ-յան լույսի ճաճանչը տեսնելու: Սակայն դու քեզ այսօր նրանից ավելի լավ դրսևորեցիր. թեև զարհուրեցիր, բայց

փախուստի չդիմեցիր: [Ահա] այդպես երևաց, որ Աստծո սերը քո մեջ ավելի մեծ չափով է բնակվել, քան նախնի ժողովրդի մեջ:

Իսկ հիմա շուրջդ լա՛վ նայիր. ո՞ւմ հետ ես շրջում, ո՞ւմ հետ նստում, ո՞ւմ ուղեկիցն ես և կամ ո՞ւմ համախոհը: Դու չէի՞ր, որ գեղեցիկ վկայությունը տվեցիր ու Քրիստոսին Աստծո Որդի դավանեցիր, ո՛վ քաջ: Աստված ես դավանում, բայց տաղավարներո՞ւմ ես բնակեցնում: Դա ոչ միայն Քրիստոս հանձն չի առնի, այլև ոչ իսկ քո ընկերակից Եղիան, ում բարձրանալը դու տեսել ես, և ում մեծության պատիվը քեզ երևացել է: Եթե դա ճշմարտապես հասկանայիր, ապա այսպես անարժանապես չէիր խոսի:

Ինձ ասա՛, հյուղակներդ ի՞նչ նյութերից ես սարքելու: Մի՞թե փայտից ու խոտից, տասներկու [աշակերտներից] ո՛վ մեծդ: Լա՛վ ուշք դիր, հրեղեն կառք ունի, բոցեղեն երիվարներ: Հուրն ու խոտը միասին չեն բնակվում: Բայց եթե անգամ դա էլ մի կողմ թողնենք, ապա ինքն արդեն իսկ նույն պատվով զարդարված է: Եթե այդպես չլիներ, բոցի առաջ ինչպե՞ս հանգիստ կկանգներ:

Այսօր քեզ մի փոքր սպիտակություն է երևացել, արդեն չգիտես՝ ինչ ես խոսում: Ուր Եղիան է բնակվում, է՛լ ավելի պայծառ է, քանի որ քեզ երևաց: Եվ դու այդպիսի մարդուն տաղավա՞ր ես հրավիրում ու նրա շքեղ պատվից չե՞ս պատկառում:

Եվ դարձյալ՝ աշխարհների Տիրոջն էլ կարոտյալ ես դարձնում և տեղաբնակ ես կարծում: Ինքը գիտե բոլորի տեղը և կարող է բոլորի կարիքները հոգալ: Տեղի չնորհիվ չէ, որ Նա պատվական է երևացել, այլ Նրանով է տեղը շքեղացել: Մի փոքր սպիտակ զգեստից զարհուրել ես, ապա եթե Նրան ամբողջական Իր Հոր փառքի մեջ տեսնես, այնժամ երկրային պատվական տեղերից և ոչ մեկը Նրան

արժանի չես համարի: Այն խոսքը, որ վերևից է եկել, ա՛յն համարիր Նրա տեղը, փառքն ու անպատում վայելչությունը: Նրա՛ն նայիր, Նրա ձայնի հետ կաթոգին եղիր: Այժմ քո մարմնի աչքերը լույսով լցվեցին. իսկ հետո դո՛ւ ամբողջությամբ լույսով կլցվես, այնպես որ ինքդ քեզ հազիվ կկարողանաս հասու լինել:

Սակայն արքայության Տերը տաղավարի կարոտ չէ: Արժեր, որ դա իմանայիր ամպի օրինակով, որ անպատում ժողովրդի անբավ բազմության համար էր կապել իբրև ծածկ: [Ցերեկն] ամպը բավարար հովանի էր, իսկ ամբողջ գիշեր կրակի լույսն էր առաջնորդում: Ու եթե չարերին էր այդպես գթում, որքա՛ն առավել ձեզ՝ տառապածներիդ, որ ամեն ինչ թողել ու Նրա հետ եք շրջում, ինչ որ ձեզ ասում է՝ լսում եք, և ձեր բոլոր բարի ցանկությունները Նա կատարում է:

Հենց այդ տեղում Նրա փառքի տապից մի փոքր աղեխարշվեցիք, և ամպը ձեզ վրա արագ-արագ թանձրացրեց: Եթե փոքր-ինչ ուշանար, դուք էլ, այդ տեղն էլ բոցակեզ կլինեիք: Ի բնե տաք են այս տեղերը, ուր ամառային հրդեհներ են բորբոքվում: Եվ եթե չափավոր լույսն է այդպիսի տապով հարվածում, ապա ի՞նչ ես կարծում. եթե ինքնածագ Լույսը թույլ տար ցամաք ու ծով բռնել, առհասարակ չէ՞ր այրի: Այդ լույսից Պողոսին մի փոքր ճաճանչ երևաց ու թեև նրա մարմինը չայրեց, բայց նրա աչքի լույսը կիզեց. թեև նրան էլի չնորհվեց, բայց նախկինը կորցրեց (տե՛ս Գործք, Թ):

Ինքն իրեն ծածկել է Իր ողորմածությամբ: Գրված է, որ [ոչ ոք] ի վիճակի չէ Նրա Աստվածությունը տեսնելու (տե՛ս Ա Հովհ., Դ 12): Տեսա՞ր. Աստված ուր որ արարածների հետ խոնարհությամբ է խոսում՝ Իր մարդասիրությունն է ի հայտ բերում: Իսկ եթե Ինքն Իրեն այնպես հայտ-

ներ, ինչպես որ կա, ապա արարածներս Նրա առջև կապա-
կանվեինք:

Արդ, տե՛ր Պետրոս, թող քեզ բարի գործ չթվա Նրա հա-
մար տաղավարներ սարքելը, որովհետև այդպիսի գործի
ժամանակը չէ, ոչ էլ դու չինարար ես. հյուսնությունից
տեղյակ չես, ոչ էլ քարերից պատ շարել գիտես: [Նա]
Վարդապետ կոչվեց, և Իր արվեստը քեզանից չթաքցրեց:
Եթե, իհարկե, չես մոռացել: Միշտ էլ քո աչքի առջև գոր-
ծեց ու գործում է և շատ է ցանկանում, որ սովորեք թե՛
խոսքով, թե՛ գործով: Ինչպես որ ինքն է առանց հոգնելու,
անդադար Իր արվեստն առաջ տանում, նույն սխրանքին էլ
ձեզ է վարժեցնում:

Քնատ մի՛ խոսիր և երազակոծ եղած ճշմարտությունը
վայրիվերո մի՛ պատմիր: Երկնային մանրագործի հոտն ես
առել՝ դրա բուրմունքի հետ վերաբերվել սովորիր: Շտա-
պիր ստվերաշուք տարրերից վեր բարձրանալ, քան թե
դրանց տակ նստել: Մի՛ աղաչիր, որ այդպիսի չքնաղ, ա-
նապական լույսն այս ծմակ տեղերում բնակվի: Եթե
[Նրան] ջրային [կենդանիները] տեսնեին, դեպի ցամաք
կդիմեին: Եթե սանդարամետականների վրա ծագեր, բոլո-
րին էլ վեր կքաշեր, կտաներ: Եթե հրեշտակներն իշխա-
նություն ունենային, երկնքի լույսը թողած՝ դեպի այդ
լույսը կիջնեին: [Երբ] այդ լույսը երկնքից երկիր է երևում,
երկրավորներին երկինք է տանում: Իսկ երբ երկրից վեր է
ծագում, վերիններին ցած է իջեցնում:

Այդ լույսով էր, որ Հակոբը Տիրոջը լուսեղեն սան-
դուղքի վրա տեսավ (տե՛ս Ծննդ. ԻԸ 12-17): Լուսեղեն
տեղերում էր Եղիան բնակվում. այն լույսը թողած՝ դեպի
այս լույսն իջավ: Այդ լույսին էր Մովսեսը հանձնվել,
Նաբավ լեռան վրա ազդվելով դրանից՝ շտապեց, եկավ
դեպի այդ անձկալին (տե՛ս Բ Օր., ԼԴ 1):

Տեսնո՞ւմ ես, թե ինչպե՛ս են երկուսն էլ լույսին փար-
վում: Այն բազում խոսքերից, որ Նրա հետ խոսում են,
չէին հագենում: Այդ լույսի ծագելով արեգակը խավարեց,
ինչպես աստղերը՝ արևից. դրա պատճառով արփին չե-
րևաց: Ու քեզ երանի եմ տալիս, որ դա տեսար, դեպի այն
կանչվեցիր: Ամեն աշակերտ շտապում է իր ուսուցչի ար-
վեստը ուսանել: Քո այն տաղավարներից չհանե՞ց Նա
քեզ: Ինչ-որ հյուղակներ էիք ծովեզերքին սարքել. հանուն
այդ Լույսի ձեզ դրանք թողնել տվեց, որպեսզի այստեղ
թևակոխեք, Նրա հետ ելնեք, այստեղ գաք, Նրա մասին խո-
կաք և Նրանով զգեստավորվելու արժանի լինեք:

Թռչունների ցեղը չե՞ք տեսել. երբ ճագերի թևերը թա-
վանում-աճում են, բներում չեն մնում, այլ հայրենի ար-
վեստով են շարժվում. ինչ որ տեսնում են, այն էլ սովորում
են: Քանի դեռ թևերը մատղաշ են, տեղում են թափահա-
րում, իսկ երբ բոլորովին խոշորանում են, աճում ու մեծա-
նում, արդեն վեր են վազում՝ ոստերի վրա խաղալով, ընկ-
նելուց չերկյուղելով, ապա օդ բարձրանալով՝ օդից վեր՝
լեռների շուրջն են ճախրում, թռչելով ամպերն են քերում,
առանց վարանելու երկրի վրա սողացող վնասատուների
վրա են գնում:

Նման օրինակներով էլ Տերն է ձեզ ուսուցանում, հրա-
շագործություններով ու մեծամեծ հրաշքներով կրթում, որ-
պեսզի ամեն ինչի համար հոգ տանելով՝ ձեզ իրեն միաց-
նի, և որպեսզի դուք էլ ուրիշներին մահից դեպի կյանք որ-
սաք: Ձեզ կիրթ, հմուտ ու ավելի իրազեկ դարձրեց, որպես-
զի ամբողջ աշխարհի համար կյանքի պատճառ լինեք:

Բայց դու, որ այդ լեռան վրա չէիր, թող քո միտքը
«լույս» բառը լսելիս այս լույսը չիմանա: Այս լույսը մենք
միշտ ենք տեսնում, ո՛չ թմրում, ո՛չ հիմարանում ենք, ո՛չ
էլ ամենևին մեր սիրտն է ինչ-որ երկյուղ ընկնում: Այլ ինչ

որ գիշերն ենք, նույնն էլ՝ ցերեկը: Որովհետև նյութեղեն արարած է ու մեզ սպասավորելու կոչված: Պղտոր, մթին, փոշեխառն և խտացած ես այն տեսել, որը վերին երկինքը չի կարող տեսանելի դարձնել: Այնքա՜ն տարբեր է այն Լույսից, ինչպես նկարվածը՝ իրականից:

Ինչպես և Ինքը՝ Աստվածությունը, մարգարեներին բազում մասերով երևաց, սակայն նրանցից և ոչ մե՛կն էլ Աստծուն չկարողացավ տեսնել, այլ ինչ նմանողությամբ որ տեսան, բավարար համարեցին: Իրենց կամքի համաձայն հանդչեցին, և նրանց [մարգարեների] խոսքերը գործերով կատարվեցին:

Ինչպես որ այսօր լեռան վրա երևաց Նա, Ում ամեն օր տեսնում էին, սակայն այսօր սովորականի նման չտեսան և ո՛չ էլ ուրիշ մեկին շփոթելով՝ իբրև Քրիստոս տեսան: Ինչպես որ էր, այնպես տեսան, ոչ առաջվա պես հասարակ: Նախկինից մի փոքր ավելի վեր տեսան ու այն սքանչելիքներից թմրեցին: Եվ եթե ձեր կարծածներից ավելին էլ կարծեիք, [միևնույն է], ձեր միտքը դրանից ավելին չէր տեսնի:

Բոլոր արարածներն էլ Աստծո հրաշագործության [արդյունքն] են: Աշխարհն ուրիշ որևէ մեկի հրաշագործությամբ չի արարվել, որովհետև աշխարհից առաջ չի էլ եղել ուրիշ մեկը: Եվ Աստված է միայն բնությամբ բարի և ինչոր կամենում է, կարող է անել, ոչ թե Իր անկարոտ բնության կարիքների համար, այլ որպեսզի արարածներիս առանց պակասության լիացնի: Աստված մարդուն բոլոր արարածներից ավելի շատ է սիրում և ուզում է, որ նշանների միջոցով Իր անեղ բնությունը ճանաչեն, ու այդ ճանաչողությամբ սիրո բարեկամություն լինի, և [մարդուն] է՛լ ավելի վեր հանելով՝ Իրեն գահակից անի:

Այսօր էլ ձեզ նույն սիրո զորությունը ցույց տվեց: Ոչ թե

երկրային նշաններով, այլ հատկապես երկնային: Մինչև այսօր մարմնավոր էիք, և Նրան որպես մարդ էիք տեսնում, «վարդապետ» կանչում, և մարդ կարծելն էր ձեր զարմանքների պատճառը: Դրա համար նրանց միջից մարմնավոր տգիտությունը փարատեց, որպեսզի երկնավոր հայտնությամբ կրթի, որ ամբողջովին մարմնավորապես չընթանա:

Այդպես էլ Գիրքն է ասում. «Նրանց առաջ այլակերպվեց»: «Այլակերպվելն» այլ բան չպետք է հասկանալ, քան նրանց առաջ աստվածակերպ երևալը: Որովհետև իր ժամանակին նրանց ևս նույն կերպարանքին փոխեց:

Նրանց աչքերը վարժվեցին Տիրոջ մարմնավորությանը նայելու, բայց նրանց մտքերը չկարողացան երկինք բարձրանալ: Նրանց աչքերը Նրա փառքի լույսին դիպան, [սակայն] չկարողացան Նրա արժանի էությունը ճանաչել:

Նրանք Տիրոջ հետ բազում բարձր տեղեր էին ելել, բայց ոչ մտքով: Այն օրն իմանալի Լույսը այդպիսի տեսիլ ցույց տվեց նրանց, որպեսզի նրանց առավել ևս կրթի: Մարմնապես լեռը բարձրացան, իսկ մտքով՝ նրանց բոլոր աշխարհիկ ցանկություններից վեր հանեց: Լեռը քաղաքներից ավելի բարձր է, սակայն նրանց բոլոր աշխարհներից էլ վեր բարձրացրեց:

Մի ժամանակ Գալիլիայում Տիրոջ հետ լեռը բարձրացան, ուր նրանց երանություններն ավետարանեց: Երկնային խոսքեր լսեցին, բայց նրանց միտքը երկրայինից վեր չբարձրացավ: Իսկ այստեղ խոսքերով ոչինչ չխոսեց նրանց հետ, այլ լեռը լույսով երկնքի վերածեց և լռությամբ նրանց երկնավորներ դարձրեց:

Մեր բնությանը հատուկ է. երբ բազմամբոխ քաղաքում ենք շրջում, քաղաքային կարգերն ենք սիրում ճանաչել: Ավելի հաճախ ենք աչքներս հառում երկրային փառքին, որից մեր մտքերը խոնարհվում են դեպի երկրային ապակա-

նացու բաները: Եվ եթե մեծ պատրաստությամբ ինքդ քո հանդեպ զգուշություն հանդես չբերես, հազիվ թե կարողանաս այս աշխարհի սին զվարճություններից ազատվել:

Դրա համար Մովսեսն էլ, ժողովրդին Եգիպտոսից հանելով, քառասուն տարիներ անապատում շրջեց և ապա միայն կարողացավ օրենսդիր լինել նրանց համար: Իսկ երբ բազմամարդ քաղաքներում բնակություն հաստատեցին, գրված օրենքներն այլևս չկարողացան պահել: Եվ ճշմարիտ է, որ ով երկրին է աչքերը հառում, երկինքը չի կարող տեսնել:

Արդ մեր Տերն էլ, որպես թե Եգիպտոսից աշակերտներին դուրս բերելով[11]՝ նրանց այն լեռը հանեց և երկնքի չգրված օրենքները սովորեցրեց, որովհետև մեր առաջվա տեղը նույնպես գրված չէր[12]:

Գիրը մարմնականներ մասին է խոսում, իսկ չգրվածն անմարմին էություն է ցույց տալիս[13]:

Գիրը Մովսեսի մահն է պատմում, իսկ չգրվածը՝ աշակերտներին Տիրոջ հայտնությունը:

Գիրն անցողիկ է և այս անցավոր աշխարհի մասին է պատմում: Իսկ չգրվածը խոսում է անցավորի մասին, որպեսզի անանց դարձնի:

Գիրը Եղիայի վեր ելնելը նյութական պատվով է պատմում, իսկ չգրվածը՝ Տիրոջ ու Եղիայենց երևումը. ոչ թե ուրիշների պես ինչ-որ բան նստած եկավ, այլ Ինքն Իրենով երկնքից ավելի բարձր երևաց: Ոչ որպես այրող բնություն՝ մարմնավորներիս ահաբեկելով, այլ իբրև փափուկ և արարող լույս, ինչպես որ արքայության ժառանգորդներն են՝ անմարմինների նման [դրանով] զգեստավորվելու:

Տերն այդպիսին երևաց և ըստ Իր էական բնության՝ [Իր] ծառաներին նույն փառավորությունը շնորհեց: Որովհետև եթե այդպիսին չլիներ, ոչ էլ կկարողանային անկեղ հրին մոտենալ: Պետրոսյանք էլ, որ Աստվածային փառքի ականատեսներն էին, այս ծանր մարմնականներից վեր էին հափշտակվել ու հասել մինչև իմանալի հրեշտակների բնակավայրերը:

Ինչպես այն երեքը, այնպես էլ այս երեքը մահվանից շատ էին վեր անցել: Եվ ոչ միայն չէին երկնչում մահվանից, այլև մահը շատ տեղերում մարդկանցից հալածական էին դարձնում, որովհետև նրանց աղքատությունը հույժ մեծացել էր:

[Լեռը] ելան իբրև երկչոտներ, սակայն երկյուղից ավելի վեր գտնվեցին:

Մարդու Որդու հետ ելան, սակայն Նրան այնտեղ Աստծո Որդի տեսան:

Որպես առավել քան տգետներ ելան և այնտեղ կատարյալ գիտություն սովորեցին:

Ելան նրա հետ, Ում կույսից ծնված գիտեին, և այնտեղ իմացան, որ Նա այս աշխարհից էլ առաջ Հորից է ծնված:

Ելան Նրա հետ, Ով Հովհաննեսի ձեռքով էր մկրտվել, և այնտեղ տեսան Նրան, Ով բնակվում է Իր փառքի անմատույց լույսի ճառագայթների մեջ:

Ելան Նրա հետ, Ով հոգնում էր՝ հետիոտն գնալով, և այնտեղ իմացան, որ Նա քերովբեական կառքն է նստում:

Ելան Նրա հետ, Ում հրեաները մահով էին սպառնում, և իմացան, որ Նա մահվան ու կյանքի Տերն է:

Ելան Նրա հետ, Ում աղաչում էին, որ Ինքն Իրեն մահվան չմատնի, և իմացան, որ եթե Նա մեռյալների մոտ չգնա, ապա աբրահամյանք չեն կարող մովսեսյանց մոտ գնալ: Եվ նրանք, ովքեր [Նրան] մահվանից ետ էին պահում, [այժմ] ժամանակից առաջ շտապում էին Նրա մահը տեսնելու:

Արքայության պատճառով նրանց այն լեռը բարձրացրեց ու հասկացրեց, որ առանց Միածնի մահվան ոչ ոք չի կարող արքայությունը ժառանգել:

Եվ եթե այս երկու համեմատությունները՝ երկնայինն ու երկրայինը, բարի են, ապա մեր Տերն արդյոք ինչո՞ւ էր իր աշակերտներին պատվիրում և ասում, որ ամենևին ոչ մեկին չպատմեն այն հայտնության մասին, որ իրենց երևաց (տե՛ս Մարկ., Թ 8):

Սա հատուկ է Քրիստոսի վարդապետությանը: Երբ ախտացյալներին բժշկելով՝ իր մարդասիրությունն էր ի հայտ բերում, նրանցից շատերին նույն բանն էր պատվիրում՝ «Ոչ ոքի, գյուղերում թե քաղաքներում, զուր տեղը չպատմեք» (հմմտ. Մարկ., Ա 44): Որպեսզի դու էլ նույնը սովորես, քո ողորմություններն աշխարհով մեկ չհայտարարես: Իսկ եթե պետք էլ լինի ցույց տալ, թող խոսքերի փոխարեն գործերը վկայեն:

Աստված այս ամբողջ աշխարհը ստեղծեց ու մեզ տվեց և դա մեզ համար երախտիք չհամարեց, այլ միայն [պատվիրեց], որ Նրան ճանաչենք ու Իր կամքով ընթանանք: Աշակերտներին պատվիրեց աստվածանման լինել, որովհետև նրանց Իրեն ժառանգներ հաստատեց և նրանցով էլ՝ ամբողջ աշխարհը: Եվ երբ Աստծով կատարեն իրենց վարդապետի բոլոր մեծամեծ գործերը, ապա դրանց [գաղտնի] խորհուրդները թողնեն միայն Ծածկագետին:

Դարձյալ՝ նրանց սաստիկ խնայեց. միգուցե մարմնականից [մղված] պարծենան այն սքանչելիքների համար, որ այնտեղ կատարվեցին ու տեսան: Որովհետև թշնամիների մեջ էին շրջում, ոչ թե բարեկամների, և ավելի շատ կեղծավորների առջև էին լինում, ովքեր ճանճերի պես վերքասերներ էին և ուր թարախ էին տեսնում, վերքն է՛լ ավելի էին բորբոքում: Իսկ նենգավոր մարդկանց խոսքերը սրանից էլ ավելի չար են լինում, ինչպես որ հենց նրանք էլ շատերի մահվան պատճառն են եղել և ոչ միայն հողածին մարմնի, այլև անմահ հոգիների սպանողներ:

Նոր նորոգվածներին, ովքեր ճաշակել էին նոր գինուց, պատվիրեց, որ գինու զորությունը հին տիկերի մեջ չլցնեն, որովհետև [դրանք] չեն կարող դիմանալ նրա ուժին: Դրանով նրան մեծ կորստից ետ պահեց, որովհետև գիտեր, որ տիկերը կպատռվեն, ու գինին կթափվի և նրանց վնաս կպատճառի, ինչպես որ Կայիափայի հետ էր եղել: [Որովհետև երբ լսեց]՝ «Այսուհետև Մարդու Որդուն կտեսնեք ամենազոր Աստծո աջ կողմում նստած» (Մատթ., ԻԶ 64), հին տիկի պես պատռեց իր պատմուճանը և ինքն ամբողջովին դուրս թափվեց և ընկավ Աստվածային աստիճանից: Եվ եթե Տիրոջ այս խոսքերից այնպես խփվեցին և ծեծված ընկան, ապա ի՞նչ ես կարծում, եթե աշակերտներից լսեին երկնային սքանչելիքների մասին, արդյոք կրակի պես նրանց դեմ չէի՞ն բորբոքվի ու այրի իրենց և նրանց առհասարակ:

Որովհետև երբ նրանցից լսեին, իսկույն կհարցնեին, թե վերին տեսիլքի գերազանցությունը ո՞րն էր: Ու եթե նրանց Մովսեսի ու Եղիայի մասին պատմեին, ապա սուտ կհամարեին, որովհետև չէին կարողանա հայտնապես ցույց տալ: Եթե ասեին՝ եկան երևացին ու գնացին, դա ճշմարիտ չէին համարի, որովհետև հավատքի գիտությունը չունեին այն ժամանակ և ինչ որ իրենց աչքերով տեսնում էին Տիրոջից, չէին հավատում:

Դարձյալ՝ եթե սպիտակ զգեստների մասին ասեին, ապա կորստյան արժանիներին կրկնակի կորուստ կպատճառեին, կամ էլ նրանց խոսքերը չէին լսի ու միայն սպիտակ զգեստների [պատմությունը] կհիշեին, որովհետև սոսկ երկրային բաների մասին էին մտածում ու անհավատ էին լսելիքով և իմանալի հայտնությունը չէին կարող տեսնել:

Նրանք այնտեղ՝ լեռան վրա, մարմնավոր հայտնություն չտեսան, այլ երկնային իմանալի զորությունը ճանաչեցին,

այն, ինչի հայտնությունը միայն Նա՛ գիտե և ում որ կամենում է, Ինքն է մաս առ մաս հայտնում: Իսկ այն միայն մտքում կարելի է ժողովել, ոչ թե խոսքերով պատմել ու մեկի լսելիքներին հայտնել: Որովհետև այն, որ խոսքով է նկարագրվում, կորցնում է իր իրական պատկերը՝ մարմնավոր ձև ստանալու պատճառով:

Իսկ երկնային փառքը սրանից՝ թե՛ մարդկանցից, թե՛ հրեշտակներից ավելի վեր է կանգնած: Պողոս առաքյալի՛ն լսիր, որ ոչ միայն լեռը բարձրացավ, այլև Երրորդ Երկինքն ու դրախտը, և սրբերի պատրաստությունը տեսավ (Բ Կորնթ., ԺԲ 12): Պարգևատուի խոսքը լսեց, բայց դեմ-հանդիման չկարողացավ [Նրան] հանդիպել, և այն խոսքերի զորությունը, որ վերևից իրեն մաս առ մաս հասավ, ոչ մեկը չկարողացավ կրկնել: Նույնն է նաև երկնային պարգևների [պարագան], որոնք պատրաստ պահվում են, և որոնց համար ասել է, որ այս երկրավոր պատվական պարգևներից որևէ մեկի հետ համեմատել հնարավոր չէ: Եվ մենք սրանց վրա ենք մեր հույսը դնում, որպես ճշմարիտ ապագայի, որ Պողոսը տեսել է ու պատմել չի կարողացել: Քրիստոսին հավատացողներս լիովին իմանում ենք և իմացածն էլ տեսնում և հույսով այնպես ենք սպասում, ինչպես երանելի Պողոսը:

Արդ, այս ամենի մասին, ինչն առաքյալները լեռան վրա Սուրբ Հոգով տեսան, թերահավատ ժողովրդի լսելիքներին թույլ չտրվեց պատմել: Նախ՝ որովհետև նրանք չէին կարող պատմողներ լինել, և մյուսը, որ նրանք, ում պատմելու էին, լսելու արժանի չէին:

Ինչպես և Ինքը Տերը նախապես սովորեցրեց առաքյալներին. «Մի՛ տաք սրբությունը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք» (Մատթ., Է 6):

Շան համար մաքուր կամ պիղծ կերակուրը մեկ է, իսկ

խոզին պատվական մարգարիտից ավելի լավ է թվում գարշելի տիղմը, որի մեջ թավալվում է: Այս տեսնելը պարգևներ Տվողին չար է երևում, իսկ դրսի տեսնողներին՝ առավել ևս չար: Դրա համար էլ մեր Տերը լուսավոր խորհուրդը լույսի մանուկներին է հայտնել, որպեսզի վկաները լինեն ճշմարիտ լույսի, որ նրանց այնտեղ՝ լեռան վրա երևաց: Նույն լույսով էլ լվացված պետք է մնան, որպես անստվեր ճառագայթներ: Եվ նրանք են լինելու Նրա լուսավորության քարոզիչները, որպիսիք եղան ու կատարեցին:

Բոլոր արարածները, որ խավարի մեջ ու մահվան ստվերներում էին նստում (տե՛ս Եսայի ԽԵ 7, Մատթ., Դ 16), այն անանց լույսին դիմեցին և նույն լույսով լուսավորվեցին [շարունակաբար] ու լուսավորում են՝ մինչև նույն Լույսի երկրորդ հայտնությունը:

Եվ նույն Տերը գալու է լուսավոր ամպով ու ամբողջ երկնային լուսավոր զորքով: Եվ այս լույսով մեռյալներն ու կենդանի եղողներից արժանավորները՝ անփոփոխ, անվախճան ու հավիտյան պիտի լուսավորվեն:

Իմ մտքում սաստիկ կասկած առաջացավ, երբ ճառիս ավարտին մոտեցա: Անդրադարձա, որ սրա մեջ չքննված բաներ մնացին, որովհետև փոքրիշատե ավելի լավ տեղյակ ենք մտախույզներին, որ ի շահ իրենց և ի փառս սուրբ Եկեղեցու՝ անմեղորեն քննում են խոսքի զորությունը: Այստեղ էլ հենց՝ մեր աշխարհում տեսնում ենք, որ շատերն են ընթանում առաքինությամբ ու հաստատուն հավատով, ըստ առաքելական կանոնի, և դրանց համար հրճվում ու ցնծում է ժողովուրդների սուրբ Եկեղեցին: Մեծ Հայքի ուխտավոր զավակները, այս հավատով տոգորված, ուսումնասիրությունների մեջ էին խորամուխ լինում, իրենց անձերը հեռու պահելով վաճառաշահ օգուտներից՝ մեծ հարստության հետամուտ չեն լինում, այլ այդպիսիների մշտական

գործն են պահքն ու աղոթքները, և իրենց անձերը հոգեսպան բոլոր չարիքներից հեռու պահելը:

Գիտեմ, որ նրանք, ովքեր կարդում են Սուրբ Կտակարանների ծածկված խոսքերը, հարցեր ու խնդիրներ ունեն այս ճառի վերաբերյալ՝ իրար ու ինձ հարցնելու: Ասում են՝ «Մովսեսը մեռելներից մարմնով հարություն առավ ու Նաբավ լեռից մեր Տիրոջ մոտ եկավ: Ահա Եղիային էլ ոչինչ չէր խանգարում, որ ինչպես արագ բարձրացել էր, ավելի արագ էլ դար [Տիրոջ մոտ]»: Մովսեսի համար չենք զարմանում, որ Եղիայի արագությամբ եկավ, այլ՝ որ մարմնո՞վ հարություն առավ, թե՞ հոգով նրանց առաջ կերպարանավորվեց: Եթե մարմնով հարություն առավ, ապա դա իր համար ճշմարիտ վիշտ պիտի լիներ: Նա, ով Աստծուն աղաչում էր [նույնիսկ] մի անգան չմեռնել, արդյո՞ք կրկնակի մահը ճաշակեց: Մանավանդ, որ Եղիային անմահության մեջ էր տեսել, իսկ Տիրոջը՝ Իր Հոր փառքով, արքայության մեջ: Ինքն այստեղ հողից էր եկել և կրկին արագ-արագ դեպի [հողը] պիտի դառնար:

Ճառի այդ տեղը, ասում են, չափազանց դժվարին է: Այդ հարցումն ինձ ծանր չի թվում: Բան կա, որ դարձյալ Գրքից վերցնելով եմ պատասխանելու, և բան կա, որ չգրված էությունից՝ Աստվածային զորությանը նայելով: Եվ դրանք հակասական չեն. գիրը լսելիքներին է հայտնում աստվածային պատվիրանները, իսկ չգրվածը՝ մտքի աներևույթ տախտակին: Երկուսն էլ աստվածատուր շնորհներ են: [Գրվածքը] աչքերը տեսնում են, շրթունքները՝ կարդում և ականջները՝ լսում: Իսկ չգրվածը մեկնությունն է հայտնում:

Արդ, մեծ է քաջաբար սերտողների [մտքի] որովայնը և անձանձրույթ, ինչպես ծովը, ու բեռների բազմության տակ չի ծանրանում: Որքան էլ որ ընկղմվում է բեռի ծանրության տակ, չատությունից չի հագենում: Աստծուն աղաչելով ու երկուսն ստանալով՝ երրորդին էլ է հասու լինում: Դա կարելի է տեսնել նրանց մեջ, ովքեր առանց գրի խորամուխ են եղել Աստծո Որդու սիրո մեջ՝ գրվածներն էլ են ճշմարտությամբ ըմբռնել: Աստծո չգրված օրենքներից ոչ մեկը նրանից ծածուկ չի մնացել, ինչպես որ առաքյալն է ասում՝ «Նույնպես և Հոգին օգնության է հասնում մեր տկարությունների. որովհետև մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել. բայց Հոգին Ինքը մեզ անմռունչ հառաչանքներով բարեխոս է լինում» (Հռոմ., Ը 26):

Սրբերն առանց խոսքերի խոսում են Աստծո հետ և առանց ձայն արձակելու վերևից լսում են Նրա կամքը: Եվ ինչ որ ասում կամ լսում են, գրի առնել չեն կարողանում, այլ Աստծո չգրված օրենքներն իրենց առաքինի գործերով են հայտնում: Ու երբ նման զորությամբ մեր հոգիներն ենք պրպտում, կարողանում ենք Աստծո խոսքի գաղտնիքները ծածկապես էլ իմանալ: Իսկ եթե տվչությամբ [խոսքի] պարգև է շնորհվում, հայտնում ենք և այլոց, որպեսզի երկնային հնչյունները նրանց լսելիքի վրա նույնպես ազդեն:

Եղիան՝ մի, իսկ Եղիսեն՝ երկու մեռելների հարություն տվեց: Սակայն սրանց ոչ ոքի կրկնամահ չի ասում, այլ մի կյանք ու մի մահ [ունեցող]: Մեր Տերն էլ մեռելներին հարություն տվեց. նույնն էլ սրանց համար է ասվում: Մովսեսի համար էլ նույնքան է ասվում, որովհետև իր առաջին մահվան ժամանակ չհիվանդացավ: Տերն Ինքը նրան դեպի լեռը կանչեց ու Ինքը, որպես Տեր, նրան առանց չարչարանքների գերեզմանին հանձնեց: Սրան չարժե անգամ մահ ասել, այլ փոփոխություն: Դավիթը սա նույնիսկ քուն է անվանել. «Ես ննջենցի և քուն մտա. զարթնեցի, և Տերն իմ ապավենն է» (Սաղմ., Գ 6):

Հենց դու, որ հարց ես տալիս, ամեն օր քուն չե՞ս

մտնում, առավոտյան վեր կենում կանգնում. արթնանալուդ համար չես տրտմում, որովհետև գիտես, որ նորից ընկողմանելու ես:

Իսկ եթե փորձես ասել, որ սա ավելի հեշտ է, իսկ դա՝ ավելի դժվար, – մի՛ ասա՝ սխալ ես կարծում: Մովսեսի համար մահը հազար անգամ ավելի հեշտ էր, քան քո քնելը: Եթե քաղցած կամ ծարավ քուն մտնես, անընդհատ կուտես ու չես կշտանա, աղբյուրից-աղբյուր կշրջես ու չես հագենա: Եթե չափից ավելի անքուն [մնալու] բռնադատվես, առավո՛տը տեսնել կուզես: Եթե պատահի, որ ուտելիքների կամ մարմնիդ առողջության բերումով աղտեղություն գործես կամ մղձավանջների մեջ ընկնես,– դրանից միտքդ այս ու այն կողմ կմղվի, և ցերեկը քեզ չար կթվա:

Մեր շարժումներում ամենևին խաղաղություն չկա: Իսկ մեր Տերը Մովսեսին դրանից պարկեշտագույնս զերծ է պահել: Ծերությունը նրա գեղեցկությունը չի թառամեցրել, և հիվանդությունը նրա մարմինը չի ապականել. ո՛չ առաջին անգամ հեծությամբ դժոխք իջավ, ո՛չ էլ Տիրոջից վերջին հրաժեշտի ժամանակ դանդաղեց թերևս: Դրա համար Աստված Ինքը ամփոփեց այնտեղ նրան մահով և Իր ձեռքով փոխադրեց նրան ու ծածկեց: Աստծո ձայնը նրան կանչեց և ամպը նրանց վրա հովանի արեց: Հենց ինքն էլ Իր սիրելի Մովսեսին շտապ մոտ բերեց: Ինչպես որ մեր Տերն Ինքն էլ ասում է՝ «Որովհետև, ինչպես որ Հայրը հարություն է տալիս մեռելներին և կենդանացնում է, նույնպես և Որդին կենդանացնում է՝ ում կամենա» (Հովհ., Ե 21): Որդին, Հորը դիմելով, Ղազարոսին հարություն տվեց: Հայրը, Որդու հետ մեկտեղ Մովսեսին հարություն տվեց, որովհետև հենց Նրա կողքին երևացին:

Ըստ այսմ՝ իմացիր Սուրբ Երրորդության անքակտելի միությունը՝ ինչպես արարչագործության ու փրկության,

այնպես էլ հրաշագործության ու հարությամբ նորոգման ժամանակ: Մովսեսի՝ մարմնով հարության խնդրում թող ոչ ոք չերկմտի: Իմ այս ճառախոսությունը մեծահարուստի՝ դժոխքում լինելու օրինակ–առակը չէ, կամ էլ՝ Աբրահամի և Ղազարոսի՝ արքայության մեջ լինելու (տե՛ս Ղուկ., ԺԶ 19-31): Այն ապագայի մասին է հայտնում: Տեսնում ես, որ [այս ամենին] աշակերտներից ոչ մեկը վկա չէ, որովհետև գաղտնիքները միայն Աստծուն են հայտնի: Իսկ որ ճշմարտապես երևացել են՝ դա մարդիկ էլ Աստծո հետ կարողացան տեսնել:

Բայց ես ամենքին էլ խիստ աղաչում եմ, [որ իմանան]. ինչ որ երկրից է ու այստեղ, դրանց մեծամասնությունը քննվում է իմաստունների կողմից, իսկ փոքրամասնությունը մեզնից ծածուկ է մնում: Իսկ ինչ վերաբերում է Աստվածությանը, ապա ակնթարթի չափ քիչ է մեր իմացածը:

Որ վեմը ջուր է տվել՝ բոլորս էլ գիտենք, բայց թե ինչպե՛ս է տվել՝ դա մեզնից ծածկված է: Ինչպե՛ս էր [վեմը] նրանց հետ գնում՝ դա մեզ Պողոսն է մեկնում, բայց թե ինչպե՛ս էր առանց ոտքերի գնում՝ դա Պողոսն էլ չգիտեր (տե՛ս Ա Կորնթ., Ժ 1-4): Հենց Պողոսին եթե հարցնես իր երկինք բարձրանալիս ճանապարհին պատահածի մասին՝ չի կարող պատմել (Բ Կորնթ., ԺԲ 2): Որ Մովսեսը մարմնով եկել է մեռելների միջից՝ իսկապես հավատում ենք, սակայն ինչպե՛ս է եկել, ինքն էլ չգիտե:

Հավատում ենք, որ անմարմիններն Աբրահամի ճաշը կերան (տե՛ս Ծննդ., ԺԸ 8): Հավատում ենք նույնպես, որ Մովսեսն ու Եղիան մեր Տիրոջ մոտ՝ Թաբոր եկան: Եվ եթե մեկն այս պատճառով երկմտանքի մեջ ընկնի, ապա երեք այուները մեզ համար որպես վկա ունենք: Իսկ եթե մեկ ուրիշն անհանճար մտքով ասի, թե սոսկ կերպարանքով են երևացել, դա հնարավոր չէ, մի՛ հավատա: Հայելու մեջ է, որ

իրեն սովերներ են երևում. Աստվածաշունչ Մատյանը չի ստում: Այնտեղ առակով է ասվում. և մարդկանցից վկաներ չեն փնտրում, այլ խոսքի մեկնությունները մտքին են հասկացնում: Իսկ ուր որ ճշմարտությունն է, այնտեղ էլ պարզաբանությունն է հստակ երևում:

Եսային ասել է. «Տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին» (Եսայի, Զ 1): Տեսիլքը ճշմարիտ էր, բայց նա չէր կարող մեզ տեսիլքի ինչպիսին լինելը ցույց տալ:

Աստված երբ կամենում է, Իր ծառաների՝ մարգարեների հետ առակներով է խոսում, իսկ ուր որ խոնարհությամբ է խոսում՝ Ինքն Իրեն զգալի է դարձնում այնքանով, որքանով որ մեր բնությունն ի վիճակի է տեսնելու: Եվ հրաշակերտ վկաներ է բերում թե՛ հրեշտակների, թե՛ արդար մարդկանց միջից, երբեմն կենդանի եղողներից, երբեմն մեռածներից:

Նույնպես և այստեղ՝ Աստված Մովսեսի ձեռքով բազում հրաշքներ գործեց, նրան բոլոր մարգարեներից առավել մեծարեց, մեռելներից հարություն տվեց. նրա՛ն տեսանք Քրիստոսի հետ կանգնած խոսելիս: Ինչպես որ տեսանք, այնպես էլ վկայում ենք: Սակայն նրա հարության ինչպիսին լինելը Տիրոջն է միայն հայտնի: Որ Մովսեսն ու Եղիան եկան և Քրիստոսի հետ խոսեցին, ու երեք առաքյալները տեսան. սրանց խոսքերի ճշմարիտ լինելը վկայում ենք: Իսկ այն, ինչ մեր աչքին անհնար է, Աստծու համար ամե՛ն ինչ հնարավոր է:

Իսկ այդ լեռան գեղեցկության ու վայրերի վայելչության մասին եթե կամենում եք հաճույքով ունկնդիր լինել, ապա ձեզ համար մի փոքր կնկարագրեմ այդ ցանկալի տեղի պատկերը: Ավետարանից լսած լինելով՝ բոլորդ էլ տեղը գիտեք, բայց մենք անձամբ ենք այնտեղ եղել ու մեր աչքերով տեսել, ոչ թե միայնակ, այլ բազում ընկերակիցների հետ, որոնցից ոմանք կամեցան լեռան վրա մնալ, ոչ թե մարմնական ախորժելի բաղձանքից [մղված], այլ Քրիստոսի գթոտ սիրուց:

Որովհետև այնտեղ բազում սքանչելի եղբայրներ են բնակություն հաստատել, ովքեր առավելապես հոգով են ընթանում, քան թե մարմնով: Եթե մեկն այն տեղին մարմնասեր մտքից մղված նայի, այն բազմաթիվ լեռներից ավելի վայելուչ կգտնի:

Նախ՝ որովհետև այն գալիլիացիների երկրում մի մեծ դաշտի մեջ է նստած, և նրան բոլորովին մոտ ուրիշ լեռ չկա, որով և ավելի հեռվից երևում է: Ինքն էլ բարձր ու բոլորանիստ է, շուրջը՝ ինքնաբուխ ջրհորներ, բազմաթիվ խիտ ու թավ անտառներ կան, որոնք անձրևաբուխ ամպերի շնորհիվ պտղաբերում են: Այնտեղ տեսակ-տեսակ քաղցրահամ մրգեր են լինում և բազում քաղցր, անուշահամ պտուղներ, ինչպես նաև թագավորների ըմպելուն արժանի գինի պարգևող որթատունկեր:

Լեռան դիմաց փարթամ ձիթենիներ ու եղջերենիներ [կան], որոնց վրա չորս կողմերից քամիներ [են փչում], և որոնց մեջ ամենից շատ հյուսիսայինն է գորավոր լինում: Շավիղը, որով Տերն է բարձրացել, շիփ-շիտակ է, և այս ու այն կողմում ճանապարհ է հյուսված: Ով ցանկանա ելնել ու այնտեղ աղոթքի կանգնել, հեշտությամբ վեր կբարձրանա:

Երբ մեկը լեռան բուն գագաթը ելնի, առհասարակ ամբողջ դաշտը պարզ կտեսնի՝ արևելքից մինչև Հորդանան գետը, արևմուտքից մինչև Ծայդանացվոց աշխարհի մեծ ծովը, հյուսիսից մինչև Տիբերական ծովը, հարավից մինչև Նաբովթ Եզրայելացու այգին: Շուրջբոլորը բնակավայրեր են տարածված, գյուղ առ գյուղ, այգի առ այգի, ու դրանց մեջ՝ բազմաթիվ քաղաքներ: Լեռան կատարը հովտաձև

գոգավորություն ունի: Նրա վրա հազվագյուտ ծառեր են աճում, ու պարարտ հող ունի:

Եվ այն տեղում՝ հովիտների արևելյան կողմում, ուր Իր լուսավոր պայծառությամբ Տերը նրանց երևաց, ըստ Պետրոսի խոսքերի, միմյանցից հեռու երեք եկեղեցիներ են շինված, որոնք բազմաթիվ ծառայողներ ունեն՝ գերծ ու զատված բոլոր մարմնական ցանկություններից: Թեև մարմնով են ապրում, բայց մարմնական հաճույքով չեն առաջնորդվում: Այնպես առաքինի են, որ նրանց մասին կարելի է կարծել, թե մարմնականի կարոտություն բոլորովին չեն քաշում:

Երբեք ոչ ոքից ոսկի, արծաթ կամ հանդերձ չեն ընդունել և ոչ մի իր, որ մարմնի համար անհրաժեշտ է: Այլ, ինչպես բոլոր միաբաններին էլ հաճելի թվաց, յուրաքանչյուր մարդ երկմատանի փայտատ (փոքրիկ գութան) է սարքել և դրանով հովիտների պարարտ հողն է վարում, այնտեղ ցորեն ու գարի սերմանում և ուրիշ հունդեր էլ՝ ապրուստի համար:

Եվ երբ հասկերը հասունանում են, ծայրերը խուզելով՝ հնձում են, ապա ոտնափշուր տալով՝ կալսում, քամուն տալիս, բերքը շեղջերի մեջ թափում, շտեմարանները լցնում և այն դարձյալ իրենք երկանքով աղում:

[Այսպես] մեծ տանջանքով օրըստօրե անհրաժեշտ ուտելիքն են պատրաստում: Լոկ հացով ու ջրով են կերակրվում՝ աղով համեմելով, որը և «խորտիկ» են անվանում: Ուրիշ անուշ կերակուրներ էլ են սարքում. ձմեռ ժամանակ լեռից նյու (լեռնային բանջար) են քաղում, աղաջրով ու զոպայով թթու դնում: Սա, ինչպես իրենք են ասում, տոթ օրերին խիստ օգտակար է:

Զորքոտանիները երբեք լեռն ի վեր չեն ելնում: Այնպես մաքուր են պահում վերելքի ճանապարհը, կարծես հրեշտակների և ոչ թե մարդկանց հավաքատեղի լինի: Որովհետև արդարև անմարմինների նման են:

[Իրենց] ամաններում կերակուրների համար յուղ չունեն, այլ միայն անշեջ կանթեղների համար, որ երեք եկեղեցիներում մշտապես վառվում են: [Իրենց] սափորներում գինի չունեն, այլ միայն ի սպաս տերունական սկիհի:

Հիվանդների համար ավելորդ դարման չունեն, ոչ էլ օտարների համար՝ պատրաստություններ, այլ նրանց միաբանության մեջ ամեն ինչ ընդհանուր է օտարների և յուրայինների համար:

Իրենք ոչ թե մարդատյացներ են, այլ մարտի բռնված՝ կռվում են ապստամբ մարմնի դեմ. չլինի թե ասպարեզն ուղիղ չպահելով՝ հեծյալը քարավեժ լինի: Դրա համար էլ չեն ուզում ամեն օր ուտել:

Մեկ այլ սովորություն էլ ունեն. ամռանը բնական օթևաններում են ապրում, իսկ ձմռանը շաբաթվա օրերին հավաքվում: Իսկ նրանց մեջ ովքեր որ ավելի ուժեղ են, ամբողջ շաբաթ մենակ են մնում:

Ապա եթե մեկը հեռու տեղից ի սեր սուրբ ժողովի [նրանց մոտ] է գնում, կամ այնպես է լինում, որ բոլորն իրենց սովորական ծոմը լուծում են, հոգևոր սննդի մասին են ավելի հոգ տանում, որպեսզի երբեք չդադարեն այն ճաշակելուց. թեև մշտապես անհագորեն [հոգևոր սնունդով] կերակրվում են, բայց ավելի ու ավելի շատ են քաղցում և ծարավում:

Ոչ միայն հարյուր հիսուն սաղմոսներն են եղանակով ասում, այլև Եկեղեցու բոլոր սուրբ Կտակարանները, որոնցով փառավորապես շքեղացնում են լեռան վրա եղող սուրբ եկեղեցիները: Մերթ ուղղակի ընթերցում են, մերթ զանազան եղանակներով պաշտամունք կատարում: Երբեք հագեցած դադար չեն առնում:

Գունդ-գունդ աբեղաներ միմյանց են փոխարինում երեք եկեղեցիներում, հավասարապես բաժանվելով՝ ցերեկային ու գիշերային պաշտամունքի կարգն են անվերջ կատարում: Իսկ երեկոյան ու առավոտյան ժամերգությունները ոչ թե հաջորդում են միմյանց, այլ իրար են միահյուսվում, և ավելի հաճախ վեցերորդ ժամին, քան այլ ժամերի, պատարագ է մատուցվում:

Երեք եկեղեցիների մեջ մեկն ավելի մեծ է, քան [մյուս] երկուսը: Այն Տերունական են անվանում: Երկուսում դրված են այն առաքյալների սուրբ մասունքները, ովքեր և հիմնադրեցին այդ [եկեղեցիներն] այն օրը, երբ երեք տաղավարների անունները տվեցին: Դրանք «Սուրբ Վկայարաններ» էին կոչվում և Մովսեսի ու Եղիայի անունով են հիշվում: [Տերունականում] են կատարվում կիրակի օրվա բոլոր աղոթքները: [Մյուս] երկուսը ևս գնում են ու այնտեղ Աստծուն փառաբանում:

Բոլորն էլ մաշկազգյացներ (մորթի հագնող) են և ձեռքի արհեստներ էլ գիտեն: Մեկը զամբյուղ է սարքում, մյուսները նույն նյութից կողովներ են հյուսում: Եթե ուրիշ բան է պետք լինում, մշակում են՝ լեռից ցած իջնելով: Եվ այն ամենը, ինչ արհեստով մշակում են, այլ կարիքների համար չի օգտագործվում, քան մշտապես վառվող կանթեղների ձեթի կամ ոչխարի մորթիների վրա ծախսելու, որոնցից մաշկեղեն հանդերձներ են ձևում: Դրանով են նաև իրենց բահ ու բրիչը հայթայթում: Իրար սիրով են սպասարկում: Քանի որ նրանց մեջ օտարներ էլ կան, ուստի յուրաքանչյուր վաստակից նրանց համար էլ են մաս հանում:

Նրանց մեջ կան նաև մեծահասակներ, որ հարկադրված չեն իրենց կարիքների համեմատ աշխատել: [Եղբայրներն] այդպիսիներին ավելի շատ են հոգ տանում, քան իրենք իրենց, որովհետև հրեշտականման են և միայն արտաքին կարիքները հոգալու համար չեն միմյանց սիրում, այլև յուրաքանչյուրն իր գաղտնիքն ընկերոջից չի թաքցնում: Եթե հանկարծ մեկի միտքը ծռվում է՝ տենչալի կերակուրները հիշելով, իր ցավը մյուսին է հայտնում, նրան, ով իրենից ավելի լավն է:

Միաբանված աղոթում են և խսկույն անցավ առողջություն ստանում: Որովհետև հիվանդացածն ինքն էլ չարի եկամուտ խորհուրդների դեմ կռվել գիտե, մանավանդ որ նախկինում էլ փորձով տեսել է, որ բոլոր մեղքերը մարդու բնության մեջ կերակուրների միջոցով են մուտք գործում: Եթե մեկը մեղքերի այդ դուռը փակում է, բազում չարիքներ նրանից հեռու են փախչում:

Ոմանք որովայնի պարարտացումը «բազմագլուխ գազան» են կոչել[14]: Տես որ, նրանք նախ դա են սպանել և դրա մյուս վնասարար գլուխներից էլ այնտեղ՝ լեռան վրա, աներկյուղ ձերբազատվել են, որպեսզի երկրային բարձունքներից դեպի երկնային բարձունքներ՝ իրենց Տիրոջ մոտ կարողանան վեր ելնել, ինչպես որ Մովսեսն ու Եղիան էին նույն լեռան վրա Տիրոջը փառքով երևացել:

Իսկ ես՝ ամեն մարդուց ավելի տառապածս, որ Տիրոջ շավղով հետիոտն դեպի այն լեռն ընթացա և սքանչելի եղբայրների բազմությունն աչքերովս տեսա, ընթերցողներիդ և ունկնդրողներիդ աղաչում եմ՝ ինձ համար և առհասարակ ձեզ բոլորիդ համար աղոթեցե՛ք: Նրանց հետ Աստծու ահեղ դատաստանից փրկվենք և երկնքի արքայությանն արժանի լինենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով. Ում փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

ԽՐԱՏԻ ԽՈՍՔ ՍԻԱՅՆԱԿՅԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդիկ, որ մարմնի մեջ են և իրենց անձերը կամովին հանձնել են աստվածպաշտության, սկզբից իսկ՝ իրենց երիտասարդությունից, խոկում, վարժվում են ճգնակեցության, հեռանում են հայրենի բնակավայրից և շարժվում են դեպի անապատ՝ դեպի անշեն երկիր. փախչում են ոչ թե նախանձոտ ու չարամիտ աղքատների ամբոխի պես, այլ որովհետև աշխարհը լի են տեսնում ամեն տեսակի չարիքով, հեռանում են դեպի անապատների խորշերն ու ստորոտները:

Հարավային կողմերում հաճախ ենք տեսնում տղամարդկանց բազմություններ՝ առանց կանանց միաբանության, տարբեր ազգերից ու լեզուներից [եկած] մի վայր հասած, հավաքված՝ իբրև հայրենի գավառում, բնակվում են երկու-երկու, կամ երեք-երեք և կամ ավելի մեծ բազմությամբ: Եվ չինում են խցեր՝ միմյանցից զատված, հասարակ, թեթև պատեր՝ ցրտից պաշտպանվելու համար, նույնպիսի առաստաղ՝ արեգակից պաշտպանվելու համար, անպաճույճ հատակ, և բավականանում են խոտեղեն անկողիններով: Եվ որովհետև մեր բնությունը ծածկվող է՝ սիրում է ծածկել իր մերկությունը, նրանք անպաճույճ և խիստ նվաստ հանդերձներ են պատրաստում՝ անթև վերարկու՝ ամառվա և երկարաթև վերարկու՝ ձմեռվա համար, կրում են նաև միատեսակ պարզ փիլոն:

Մանավանդ անընդհատ անդադար պաշտամունքով զվարթ հոգով հոգևոր երգեր են մատուցում բոլորի Հորը: Իրար դիմաց կանգնում են՝ աչքերը վայր խոնարհած՝ նայելով իրենց ոտքերի մատների ծայրերին, բոլորի հայացքը մի կետի է ուղղված՝ աջ ձեռքը դրած ծնոտին, իսկ ձախը՝ կրծքին, ինչպես կարծում եմ՝ սովորելով խորագետ այրերից:

Մարմնի մեջ երկուսն են ամենապատվական բաները՝ կենդանության [շունչը] և խոհականը, երկուսով սպասավորում էին երկուսին. կենդանականին հակառակ է զայրույթը, իսկ խոհականին՝ արտաբերվող խոսքը: Արդ, ձախի երասանակը ձեռքն առնելով՝ սանձում է զայրույթը, և աջ ձեռքը ծնոտին դնելով՝ խոհականին է սպասավորում՝ հսկելով խոսքի արտաբերման դուռը, որպեսզի ուղիղ փառաբանությանը այլ բան չխառնվի: Եվ այս երկու մասերով նվաճվում են բոլոր զգայարանները. աչքերը՝ դեպի ուղիղ տեսություն, ականջները՝ դեպի զգաստ լսողություն, միտքը՝ դեպի սուրբ իմաստություն, մյուսները՝ ըստ իրենց մասերի:

Եվ այսպես կարգված ու կարգավորված՝ բոլորը վեցթևյան սերովբեների նման խմբվելով՝ անդադար աղոթք են հնչեցնում դեպի վեր և եռաչափ օրհնություն են հյուսում՝ ի խորհուրդ իրենց Արարչի հետ միաբանության: Ամբողջ ցերեկն անցկացնում են քաղցր երգելով, հագենալով ու զմայլվելով երկնային կերակուրներով, և լցվելով՝ հասնում են երեկոյան ժամին: Եվ որովհետև մեզ նման մարմին ունեն, ուտում են, որպեսզի չքաղցեն, և խմում են, որպեսզի չծարավեն:

Արդ, դու, երբ լսում ես, որ ուտում են, մի՛ կարծիր, թե մեզ նման, որովհետև պարզ հաց ու վայրի բանջար է նրանց [կերակուրը], որ համեմում են աղով, և հստակ ջուր, որ անձրևի ժամանակ հավաքում են գբի մեջ: Սակայն նաև այս երբեք ցերեկով չեն մատուցում իբրև դարման մարմնի կարիքներին, այլ միասին պահելով ամբողջ ցերե-

կը՝ սպասում են արեգակի մայր մտնելուն, ձգում անցկացնում են իրիկունը, մինչև աստղերը պայծառանում են իրենց կայաններում, ապա գոհանում են՝ ասես մի բերանով ասելով. «Այս խավարային ժամին այս խավարային կերակուրը տանք այս խավարային մարմնին»:

Ես այս ասելով՝ բարձր ձայնով փառավորում են Սուրբ Երրորդությանը, խնդալից ուրախությամբ հավաքվում են յուրաքանչյուրն իր տեղում: Եվ ինչպես ասացինք, ուտում են հաց և գոպա[15] և խմում են պաղ ջուր: Եվ որովհետև նրանց մեջ կան տկար ծերեր, մատուցում են գոլ ջուր, որին բարեխառն են անվանում: Գինի և կամ այլ՝ [ջրից] տարբերվող բան չի գտնվում նրանց սուրբ միայնանոցներում:

Եվ վեր կենալով անպաճույճ ընթրիքից՝ միաբանությամբ ասում են. «Փա՛ռք Քեզ, Տե՛ր, փա՛ռք Քեզ, Թագավո՛ր մեր, որ տվեցիր մեզ ուրախության կերակուր: Լցրո՛ւ մեզ Սուրբ Հոգով, որպեսզի Քո առջև հաճելի լինենք և չամաչենք, քանզի Դու հատուցում ես յուրաքանչյուրին ըստ իր գործերի»: Եվ այսպես խաչակնքելով իրենց՝ իրենց անձերը տալիս են թեթև քնի, որպեսզի անմարս կերակուրներից մարմնի գեղեցիկ շինվածքը չփոթվելով չխանգարվի: Նաև եթե [փոքր-ինչ] երկար են մնում քնի մեջ, հոգևոր երազ են տեսնում և այդժամ մեկնում են անուրջները, իբրև սուրբ մարգարեների խոսքեր:

Եվ զարթնելով միապես խմբվում են շրջանի մեջ առանց հակառակվելու և առանց ընդդիմանալու, քաղցր հավանությամբ և հեզ հանդարտությամբ: Դասերի առաջնորդները շարականներ են երգում՝ փոփոխելով հոգևոր երգերի քաղցր մեղեդիները, իսկ մյուսները՝ ավելի կրտսերները, ուշադրությամբ լսելով՝ նրանց են խառնում իրենց ձայները՝ հարմարեցնելով և միաբան հնչեցնելով, որպեսզի բազմաթիվ ձայներն հնչեն իբրև մեկ բերանից: Եվ այսպես երկարաձգելով երգով պաշտամունքը՝ ծնրադրում են բոլորը, աղոթում լռությամբ, ապա աղոթքի առաջնորդի ակնարկով բոլորը ոտքի կանգնելով՝ փառատրություն են կատարում:

Ավարտելով ցերեկային պաշտամունքը՝ նրանք լավ են համարում դիշերը վաղ արթնանալն ու մինչև առավոտ աղոթելը. և ընթերցում են Սուրբ Գրքերը, իսկ նրանք, ովքեր վարդապետելու շնորհ ունեն, մեկնում են դրանք՝ լսողների մխիթարության համար: Պատմում են աշխարհի լինելության մասին, որ եղավ ոչնչից, և մեկ առ մեկ ժողովրդին ասում բարի խրատներ Սուրբ Գրքերի վկայությամբ: Եվ այսպես ուսուցանում են, մինչև որ լսողները մոռանում են աշխարհիկ ամեն մի բան և չեն հիշում [անգամ] հարկավոր ուտելիքն ու ըմպելիքը:

Եվ այդպես ուրախանալով Աստծու սիրով՝ մինչևիսկ իրենց չեն համարում մարմնի մեջ, այլ երկնքում, և հեշտությամբ են անցկացնում երկար դիշերը մինչև առավոտ: Նրանք մերկացել են երկրից և հագել են երկինքը: Մահը ամաչում է նրանց դռների մոտ, իսկ դժոխքը դառնանում է, որովհետև զորություն չունի նրանց վրա: Նրանց կենդանությունը դուռն է աշխարհի աղոթքի, իսկ նրանց ոսկորները գանձ են բոլոր ապավինողներին: Նրանց [մասին] լսելը խրատ է բոլոր ծուլացողներին, նրանց գործերը ուսուցանում են բոլոր կամեցողներին. նրանք հրեշտակների դասակիցներ են և Սուրբ Երրորդության օթևաններ:

Արդ, իմանալով այս ամենը՝ եղբայրնե՛ր, հարկ է, որ ջանանք և նույն սրբության նախանձախնդրությունը մեր անձի մեջ ունենալով՝ նմանվող լինենք աշխարհից միայնացածների այնպիսի բազում գնդերին, որոնք դիմում են դեպի վերին մայրաքաղաք, որ ազատ է երկրավոր ախտերից: Քանի որ [նրանք էլ] մեր բնությունն ունեն և զորաց-

նում են տկարներիս: Միայն կամեցի՛ր, հավատով բռնի՛ր, հուսա՛, սիրի՛ր և կարող ես տեսնել այնպիսի նահատակությունը: Քանզի ժամանակավոր չարչարանքները որևէ կերպ համեմատելի չեն այն կյանքի հետ, որ պատրաստված է այնպես ճգնողների համար:

Խիստ վախենում եմ մեր ծուլությունից. գրեթե բոլորին եմ տեսնում թավալված երկրավոր ստացվածների մեջ: Իսկ արդ, մի՞թե իմ բնությունն էլ չի կշտամբում ու հանդիմանում ինձ, թե ստեղծվեցի մերկ, մերկ դրվեցի դրախտում, այնտեղից մերկ ելա, մերկ ծնվեցի և դեպի երկիր մերկ եմ գնալու: Արդ, եթե այստեղից [ոչինչ] տանել չենք կարող, ինչո՞ւ ենք զուր ժամանակ անցկացնում այստեղ: Դե՛ն նետիր, թոթափի՛ր քեզնից ավելորդը, ո՛վ միայնակյացդ, մի՛ լինիր թանձր ամրոց՝ նենգավոր թշնամուն ընդունող. գուցե մոտիկ տեղում դարան մտած՝ [կամենում է] արշավել քեզ վրա՝ կողոպտելու, քեզնից հափշտակելու երկնավոր գանձերը: Քեզ համար բավակա՛ն համարիր տերունական կանոնը, [որ ասում է]. «Երկրավորներից ոչ ոք երկու տիրոջ ծառայել չի կարող» (տե՛ս Ղուկ., ԺԶ 13), որ առանց միջնորդի ու մեկնության հայտնի կերպով ցույց է տալիս՝ ասելով. «Դուք չեք կարող Աստծուն հաճելի լինել և մամոնային» (տե՛ս Ղուկ., ԺԶ 13):

Եվ արդ, ես մեր աշխարհում այդպիսի աղետից զերծ չեմ տեսնում ոչ ոքի: Հակառակ ընթերցեցինք գեղեցիկ գրվածքը. ուխտավորության պատրվակով հեռացանք սուրբ ծնողներից և մեզ համար բազում օտար հայրեր ստեղծեցինք, ում արժան էր պատվել, անարգեցինք, և ինչում իշխանություն չունեինք, մեծարանքներ գնեցինք, մեր աղետների ախտը լավ մսխեցինք: Ազատվեցինք արքունի ծառայություններից, որ առանց մեղքի էր, և մտանք ստացվածքների ենթակայության տակ, որ լի է անառակ ագահությամբ: Զելանք սուրբ հարսանիքի անկողիններ և մեզ համար աշխարհից առավել բարձր գահույքներ պատրաստեցինք: Փափկանում ենք հարմարավետ անկողիններում, և մեր մտքերը ամբողջ գիշեր թափառում են աղտեղի խորհուրդների մեջ:

Մեր ոտքերի կոշիկներն հանդիմանում են մեզ, թե սուրբ չեն մեր ճանապարհները: Մեր հագուստներն աղաղակում են մեր գործերի մասին, թե մերկ ենք երկնավոր զգեստներից: Մեր երիվարները մեզ ցույց են տալիս, որ օդի վրայով մեր Տիրոջն ընդառաջ չենք հափշտակվելու: Մեր ապարանքներն ու շինությունները հայտնի են դարձնում, որ երկնքում չունենք անձեռակերտ տաճար, ուր մտնելու են երկրավոր ախտերից հեռացածների բոլոր դասերը: Մեր անդաստաններն ու կալվածքները կշտամբում են մեզ, որ երկնավոր ժառանգության մեջ մենք բաժին չունենք:

Կերակուրներից չհագեցող անարգներ եղանք և առանց չափի խմեցինք գինի, որ պղտորում է խորհուրդներն ու մտքերը: Բոլորս խորը քնի մեջ ենք, և ճշմարտությունը մեզ երազ է թվում: Մեր մտքի աչքերը փակ են իմանալի խորհուրդների առջև և անհագ ու պագչոտ՝ աշխարհիկ կյանքին նայելիս: Մեր ականջները փակելով սուրբ ընթերցվածքները լսելու դեմ՝ ունկնդիր ենք մեր խաչների բառաչին: Մեզ չհասավ Սուրբ Հոգու անուշաբույրը, քանի որ այս աշխարհի՝ ախտերով լցված յուղը սիրեցինք: Մեր հոգու քիմքը չճաշակեց երկնային կերակուրը, որովհետև մեր անձերը պարարտացրինք զանազան խորտիկներով: Մութ է մեր դեմքի գույնը, քանի որ մեր երեսները չզվարթացան սուրբ խորհուրդներից: Մեր մարմնի անդամները լի են ցավերով, որովհետև մարմնից առաջ հիվանդացրինք մեր հոգին: Մեր անձերը նմանվեցին ծեփված գերեզմանների, որովհետև ունայն ենք Սուրբ Հոգու շնորհներից:

Այդ պատճառով էլ բոլոր չարիքները եկան հասան մեր օրերին. մեր կենդանության օրով տեսանք մեր անձերի դիակները: Մեր քաջ նահատակներն ընկան պատերազմում, մեր սուրբ քահանաները սրախողխող եղան անօրենների ձեռքով, գեղեցիկ երիտասարդները մորթվեցին ու սպանվեցին, բազում կույսեր գերեվարվեցին, փափկասուն կանայք այրիության տառապանքների մեջ ընկան, և բազում որբեր ճչում են դառնապես: Ազատ Եկեղեցին ընկավ հեթանոսների ծառայության տակ, և նրա սուրբ քահանաները ծեծկվում ու չարչարվում են անօրեն հարկահաններից կողմից: Վերացել է ողորմությունը երկրից, և հեռացել է գութը բոլոր մտքերից: Երկինքը բարկացել է ի վերուստ, և երկիրը ներքուստ երերում է ու տատանվում:

Մեր շինությունները մեր դիակների գերեզմանները եղան, և մեր ձեռքերի վաստակները տապալվեցին մեզ վրա: Պայթեց ու պատռվեց երկրի թանձրությունը, և բազում մարդիկ ցած հոսեցին: Որդին չսպասեց հորը, և ոչ էլ քույրը եղբորը սպասեց, կանայք լաց չեղան իրենց որդիների վրա, որովհետև սովը թուլացրել էր նրանց բերանները: Հզորները հանկարծակի խորտակվեցին, ինչպես Լիբանանի բարձր մայրիները, բոլորը եղան բարկության հնձան ու ողկույզների պես ճմլվեցին ոտքերի տակ, գինու փոխարեն անմեղների արյունը ցայտեց մեր հանդերձներին: Մեր քիմքում կերակուրը լեղիից ավելի դառը դարձավ, իսկ մեր սուրբ ըմպելիքը դարձավ քացախ: Բոլորս հոգով ու մարմնով ծեծվեցինք ծեծվողների հետ և մեռելների հետ մահը ճաշակեցինք: Մի՞թե մեր ծուլության պատճառով այս չարչարանքները չեղան մեր աշխարհում:

Ուրեմն հեռո՛ւ մնա աշխարհից դու, որ վաղ ելար հեռացար սրա աղետներից, թոթափի՛ր, դե՛ն նետիր այս ախտալից աշխարհի քոսերը: Մերկացի՛ր ըմբշամարտիկի նման, օծվի՛ր Քրիստոսի յուղով, որպեսզի քեզ չկպչեն հակառակորդի ձեռքերը:

Արդ, եթե տեսական իմաստությունն ըմբռնած հեթանոսները հրաժարվեցին ոչ միայն իրենց ստացվածքներից, այլ նաև պատշաճ կերակուրներից, բավականացան քիչ ու պարզ ըմպելիքով և առաքինի մահվամբ վախճանվեցին իրենց կյանքի ավարտին, ապա որքա՛ն ավելի մենք պետք է նմանվող լինենք Քրիստոսին սիրողներին, որոնք հրեշտակակրոն դարձրին իրենց անձերը՝ իրենց վերին գնդերին խառնելով:

Եկե՛ք և մենք, ո՛վ միայնացածներ, մեր ստացվածքների մեջ մտնենք թշնամիների օրենքով, ինչպես օտար երկիր, արմատախիլ անենք, կոտորենք թշնամու տնկած ծառերը, իբրև գերի առած՝ աղքատներին տանք մեր ինչքերը, ոչ թե որովհետև ատում ենք մեր ազգականներին, այլ որովհետև սիրում ենք աղքատներին, որոնք Քրիստոսի զինվորներն են և [մեր] ճշմարիտ բարեխոսները: Իսկ եթե հիմա կապվես ունեցվածքիդ, ինքդ քեզ անդարձ գերության կտանես, ուր չկա փրկագին: Փութա՛, փութա՛, շտապի՛ր, եղբա՛յր, փրկվել այնպիսի անողորմ գեհենից, որպեսզի կարողանաս հասնել այն ամուր քաղաքը, ուր կասկած ու վախ չկա տեղափոխվելու ու գերեվարվելու:

Եվ եթե դաս հայրերի գեղեցիկ վարդապետության հետևից, որը նկարագրեցի քեզ վերևում սուրբ մենակյացների վարքի [մասին պատմելիս], այնժամ առանց չարչարանքների ախտերի կկարողանաս բարձրացնել մտքիդ աչքերը, [կկարողանաս] նայել ու տեսնել քեզ բոլոր երկինքներից բարձր: Երանի կտաս անձիդ՝ քաջապես ճողոպրելով այս աշխարհի՝ վշտերով լցված կյանքից, և կխառնվես միայնակյացների երամներին, սուրբ արդարների գնդերին, առաքյալների վիճակին, մարգարեների խմբերին, մարտի-

բոսների բազմությանը, հրեշտակների բանակներին, անդրանիկների ժողովներին, երկնային մեծ քաղաքում Աբրահամի հետ բազմածներին՝ անկարոտ երկնային կերակուրի և ըմպելիքի: Այդուհետև դու ես մարգարեն, որ չմեծարվեցիր մարմնավոր աշխարհում, այլ թևածելով թռար դեպի անմարմին աշխարհը և հանգիստ ու դադար առար անապական ուրախությունների մեջ: Որը մեր սուրբ ուխտի միաբանների հետ միասին թող վայելենք և մենք՝ վերջիններս գրչությամբ աշխատողների մեջ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով, Որին փառք հավիտյանս. ամեն:

«ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Բնությամբ պարզ է, բայց առավել է մտքերի բարձրությամբ. դեպի վեր է նայել տալիս և սովորեցնում է, որ Աստված է բոլորի Հայրը: Որդիները դիմում են Հորը. գութի կարոտն է ստիպում նրանց, և կարոտի կամքը Հորը բերում է դեպի ողորմությունն ու գութը: Հարկ է, որ որդիները լինեն ըստ Հոր կամքի, ապա Հայրը, ըստ որդիների կամքի, նրանց պետքերը կհոգա և իր ամբողջ հարստության ժառանգորդ կդարձնի նրանց: Հայր անունը մեկ է հոգևորների ու մարմնավորների համար. պետքերը, մասերի բաժանվելով, զանազանվում են միմյանցից: Երկրավոր հայրերին մարմնի ցանկության ախտերը շարժեցին դեպի որդեծնություն՝ ախտավոր հղությամբ ախտավոր որդիներ ծնելու: Փոփոխական է հայրությունը. երբեմնի որդին դառնում է հայր. նա հեռանում է այս աշխարհի կյանքից, հայրությունը վերցվում է նրանից, նրա տեղը գալիս է որդին, դառնում է հայր և գնում նույն ճանապարհով: Այսպիսի փոխանորդությամբ էլ պիտի ավարտվի այս աշխարհը:

Մեկն է ճշմարիտ Հայրը և Արարիչը ամբողջ աշխարհի. առանց ախտերի հղացավ և առանց ցավերի ծնեց երևացող ու աներևույթ ամեն բան: Նա, ով ծնեց, եկավ և ուսուցանեց որդիներին՝ դիմել երկնավոր Հորը, որպեսզի այս աշխարհը մշտապես չմնա խանձարուրի ու օրորոցի մեջ, կաթնակեր, ուրիշների ձեռքով կերակրվող մանուկ, թաթախված ու թաղված գարշելի աղտերի մեջ, որից ձանձրացան մայրերն ու ստնտուները, և դայակներն ու սնուցողները երես դարձրեցին: Դրանք օրենքն ու մարգարեներն են. ծովի

մեջ լվացին և չկարողացան սրբել, գետն անցկացրին և չթրջեցին, շատացրին օճառը, լվացին բորակով, և չսրբեցին, իրենց մոտ բերելով՝ բարձրացրեցին, գցեցին ու հեռացան: Երկնավոր Հայրը գթաց, երկնքից երկիր խոնարհվեց ու բոլորին գտավ հոսող արյան, կուռքերի պաշտամունքի, մեռելոտի զոհերի մեջ: Առավ, լվաց, սրբեց, երկնավոր զգեստ հագցրեց և մոտեցրեց նույն որդեգրությանը: Սովորեցրեց հայրենի վարդապետությունը, որպեսզի դիմեն սիրելի երկնավոր Հորը: Ասում է. «Աղոթք անելիս տղայաբար շատախոս մի՛ եղեք. Աստված սրտի խորհուրդներն է լսում և բարի գործերի փոխարեն բարին է հատուցում: Բերանով վկայելու համար բավական է այսքանն ասելը. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ է Քո անունը» (տե՛ս Մատթ., Զ 7-9):

Աստծու՝ մարդկանց Հայր լինելու այս պարգևը ավելի մեծ է, քան մարդկանց [տրված] բոլոր պարգևները: Հրեշտակներն իշխանություն չունեն այս ասելու. նրանք, թեև հզոր են ու հոգևոր, բայց սպասավորներ են, որդիներ չեն: Զգուշացի՛ր, ո՛վ մարդ. ինչպիսի՞ պատվով մեծարվեցիր, մինչև իսկ համարձակվեցիր Աստծուն քեզ Հայր անվանել. մտածի՛ր, Հոր պատվի համեմատ կերպավորի՛ր քեզ, որպեսզի երկնավորներն ու երկրավորներն իմանան, որ իսկապես Աստծու որդի ես: Աստված խոսքով ծնեց մարդուն. թեև խոսքով չես կարող, մարմնիդ կամքով մի՛ թաթախվիր հողի մեջ, կտրի՛ր, հեռացրո՛ւ քեզնից ավելորդ ցանկությունները: Քեզ շատ ու բավական համարիր անհրաժեշտ կերակուրները, չափը մի՛ անցնիր և մի՛ շվայտանա: Գիրությունից ճարպոտում է մարդը, իսկ ճարպի առատությունից ծնվում են անօրինություններ. ինչպես որ արբեցությունից [ծնվում է] պիղծ անառակությունը. այդպիսին Աստծուն Հայր անվանել չի կարող: Մի՞թե ինքդ չես վկայում՝ ասելով. «Սուրբ է Քո անունը». ո՞վ կարող է Աստ-

ծուն անուն դնել. սուրբ՝ այս է Աստծու ճշմարիտ անունը: Սուտ աստվածների անունները սուրբ չեն. մեկը գող է, մեկը՝ մարդասպան, մեկը՝ շուն, և բոլորը [լի են] չարչարանքների ախտերով. մանավանդ որ գոյություն էլ չունեն և ոչ էլ լինելու են: Մարդիկ, որ աստված են անվանում դրանց, Աստծու ճշմարիտ որդիներ չեն. ում որ ուսուցանում է դիմել Աստծուն և ում որ հրամայում է աղոթքով կանգնել Աստծու առջև, նրանցով բոլորի համար բացում է դուռը, որպեսզի բոլորը դիմեն՝ մտնելու այն դռնով, սովորեն նույն աղոթքը՝ աղաչել Աստծուն և ասել. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ է Քո անունը»: Երբ աղոթքով սովորեն ճշմարտախոս լինել, աշխարհում ճշմարտագործ կերևան. այնժամ կարող են լքել սուտ աստվածներին ու հեռանալ նրանցից:

Հեռացան քարից ու փայտից, որոնց հայր ու մայր էին անվանում, և հրաժարվեցին իրենց անառակ գործերից, նրանց մտքերը սրբվեցին իմաստության գիտությամբ, և նրանց բերանները բացվեցին՝ համարձակորեն խոսելու և ասելու. «Թող գա Քո արքայությունը, թող լինի Քո կամքը երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է» (Մատթ., Զ 10):

Աստված թագավոր է ամեն բանի վրա, Նրա արքայությունն Իր կամքը կատարողների վրա է: Ասում է՝ միայն թող գա Քո արքայությունը: Այս, ինչպես այն [խոսքը], որ ասում է. «Ծագելու է Հակոբի աստղը, և մի մարդ է բարձրանալու իսրայելացիներից, պիտի հասնի ու կորստյան մատնի ամաղեկացիների զորությունը» (տե՛ս Թվեր, ԻԴ 17): Աստղը ծագեց, և Մարդը բարձրացավ, հարվածեց սպանեց սատանային՝ այսինքն՝ հեթանոսների զորությունը: Ի սկզբանե Աստծու կամքն էր այս, և կատարվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյամբ: Հարկ է, որ սովորենք այս աղոթքը և հավատով հուսանք Նրա երկրորդ գալստ-

յանը, երբ մեր աղոթքների համեմատ էլ մեր գործերը ստուգությամբ կերևան:

«Թող գա Քո արքայությունը»: Ինքը՝ Արքայությունը, սովորեցնում է խոսել Իր մասին. «Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը նրանով եղավ, սակայն աշխարհը նրան չճանաչեց» (Հովհ., Ժ 10): Սովորեցնում է ասել Հայր, որպեսզի միայն Նրան իմանաս աշխարհի Արարիչ. իբրև Արարիչ՝ [Հայրն է] բոլորի, բայց [Նրա] որդեգիրը մարդն է միայն: Ով արարեց, Նույնը և արքա է, ով եկավ, Նույնինն է և արքայությունը, ով բնությամբ մեր Աստվածն է, Նույնը մեր Հայրն է Իր Աստվածության շնորհներով: Երբ Աստված բոլորի Հայրն է, ապա և Քրիստոս եղբայրն է բոլորի, ովքեր կատարում են Նրա կամքը: Արքա էր և քո Եղբայրը եղավ: Այս պարգևները մեծ են առաջին արարչության [պարգևներից]. այն ժամանակ ասվեց, թե մարդն Աստծու պատկերով ստեղծվեց՝ Օրինակի նման. [իսկ հիմա] Հոգեղենը կամեցավ մեր հողեղեն պատկերով լինել, որպեսզի սա Իրենով սովորի առաքինի դառնալ: Որովհետև [սա] չկարողացավ միաբանել Իրեն, Ինքը առավ նրա կերպարանքը, ինչպես որ Ինքը գիտի, Ինքը անքակտելի ու անխախտելի, անհասանելի և անասելի, միայն հավատալի և հուսալի որպիսությունը կերպարանեց և միայն նրան սիրելու արժանացրեց: Մերով խոսում է մեզ հետ և ուսուցանում. խոսում է նմանով և երևացողներիս ուսուցանում աներևույթ Աստվածությունը, որպեսզի երևացողների միջոցով ճանաչենք աներևույթ արքայությունը: Ով եկավ, Նույն Ինքը երկրորդ անգամ պիտի գա: Այժմ վարդապետությունը աշակերտներին որդիներ է ասում, ծառաներին տերեր է դարձնում և մահկանացուներիս անմահության է հրավիրում՝ ասելով. «Թող գա արքայությունը», որպեսզի զգուշությամբ պատրաստվենք, ապա և [Իր] իշխանությամբ հատուցի [մեզ]: Որքան կարող ես, քեզ ժառանգակից դարձրու, արքայության մասերին բարձրացրու: Ըղձալի է աղոթքը և մեր բնությունից վեր պարգևներ է խոստանում:

«Թող լինի, ասում է, քո կամքը»: Աստծու կամքը մարդու սրբությունն է: Քանի որ բաժնեկից դարձրեց Իր արքայությանը. ոչ թե որովհետև չենք կարող հասնել այն բաժնին, այլ որպեսզի դյուրությամբ ստանանք համբերությունը մեր հույսի համար, ինչպես նրանք, ում սովորեցրեց աղոթքը: Եթե նրանք կատարյալ դարձան աղոթքով, ապա նաև մենք կարող ենք: Միայն հավատա՛, հուսա՛, սիրի՛ր, և նույն պահին կատարյալ կդառնաս ուրախությամբ: Եվ եթե տրտմությամբ չարչարակից լինես Քրիստոսին, Ինքը՝ Աստված քեզ կզորացնի՝ համբերելու. եթե անհնարին լիներ այդ, Աստված մեզ այդպիսի աղոթք չէր սովորեցնի: Առաջիններին նայեցեք ու քաջալերվեցե՛ք. հավատի համար բավական չհամարեցին միայն իրենց չարչարանքը, այլ նաև մեռնելն ապրելուց լավ համարեցին, Նահատակաղրին նայեցին ու նահատակվեցին: Խոսքով նրանց գովողներ լինենք, իսկ գործով՝ նույն սխրանքով նահատակվողներ: Աստված բոլորի Հայրն է, բոլորս պետք է որդիներ լինենք, քանզի մեկն է ժառանգությունը, որ բաշխեց բոլորին:

«Թող Քո կամքը երկրի վրա լինի այնպես, ինչպես երկնքում է»: Որովհետև Աստված կարող է բոլոր մարդկանց երկնավոր դարձնել, աղոթքը թողնում է մեր կամքին, քանի որ մենք՝ երկրավորներս, ինքներս կարող ենք երկնավոր լինել: Վերին զորքերը սիրով սպասավորում են Նրա կամքին, միաբան փառավորում են Աստծուն և Նրա ահագին փառքից ծածկում են իրենց ոտքերն ու երեսները, որպեսզի իրենց մեջ սիրեն Աստծուն, աչքով տեսնելու փոխարեն բավական են համարում իրենց մեջ սիրելը, և նրանց սիրո համար Աստված Իր կամքը սիրով կատարում է նրանց մեջ:

Մի՛ փութացեք մարմնավոր աչքերով տեսնել Աստծուն, որպեսզի անժամանակ չհատնեք: Մեր սերը թող պատգամավոր լինի Նրա մոտ, և Նրա սիրո համար թող մեր մեջ կատարվի Նրա կամքը: Շտապե՛նք ընթանալ այն ամենով, ինչ որ մարգարեները մեզ սովորեցրին, քանզի նրանք խոսքերով ասացին և գործերով կատարեցին, և նրանց Վարդապետն այլ մեկը չէր, քան Նա, ով այս աղոթքը սովորեցրեց քեզ: Դու նույնպես սովորի՛ր աղոթքը խոսքով և գործով շտապի՛ր կատարել: Հեռու չես հրեշտակներից. նրանց հետ ես աղոթում, նրանց հետ ես փառավորում Աստծուն: Եվ ինչպես որ դու ես միաբանվում նրանց հետ, այնպես էլ նրանք են քեզ երգակից լինում աղոթելիս և օրհնելիս: Համարձակորեն բացում ես բերանդ ու ասում. «Թող Քո կամքը լինի երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է»: Այս իշխանությունն ավելի մեծ է, քան առաջին օրհնությունները. այն ժամանակ միայն երկրի վրա [պետք է] տիրեիր իշխանությամբ, այժմ, ասում է՝ երկնքում և երկրի վրա:

«Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր»: Երկրաբույս հացը Աստված չնորհում է բոլորին [ըստ այն խոսքի, որ ասում է]. «Մարդկանց ու անասուններին դու ես ապրեցնում, Տե՛ր» (Սաղմ., ԼԵ 7): Ինչպե՞ս կարող է [այս հացի մասին] ասել, եթե սա հանապազօրյա չէ. մանկությունն անհնար է դարձնում [այն ուտել], հիվանդությունը կրճատում է [ուտելու ցանկությունը], աղքատությունը հնարավորություն չի տալիս [այն ունենալ], մահը՝ քակտում է և հեռացնում [նրանից]: «Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան: Այս է երկնքից իջած հացը: Եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի» (Հովհ., Զ 49, 52). այս խոսքերը լսում էին Նրանից, և անմիջապես հասկանալ չէին կարողանում: Կրկնում է, նույն խոսքն ասում է երեք անգամ, որպեսզի հեշտությամբ լսեն և խոսքի

զորությունը հավատով ընկալեն. «Ես եմ, ասում է, կենդանի հացը, որ երկնքից է իջել. եթե մեկն այս հացից ուտի, մահ չի ճաշակի» (տե՛ս Հովհ., Զ 51): Աղոթքի մեջ ուսուցանում է ա՛յս հացը հանապազորդ խնդրել Աստծուց: Եթե լավ միտ դնես, ով այս հացը սրբությամբ է ուտում և Նրան արժանի կերպով է պատրաստում իր անձը, նա կարիք չի ունենա երկրավոր արքայության. անմահ հացը դրվում է մահկանացու ձեռքի մեջ, ձեռքն անմիջապես անմահանում է, և այն ուտելով՝ մարդն ամբողջովին՝ շնչով, մարմնով ու հոգով հոգիանում ու բաժնեկից է դառնում Քրիստոսին. միայն [թե] սկզբի զորությունը անարատ պահի մինչև վերջ: Չկա երկրավոր չարչարանք, որ հաղթի նրան, նրա առջև արհամարհելի է արծաթը, և ոսկին ատելի է նրա աչքում, աշխարհի մեծությունը ցավ է համարում, որովհետև նրա խորհուրդները սրբվել են երկնավոր ազատության մեջ՝ ամբողջովին լցվելով անմահ հացով: Նույնը հարմար է բոլորին. եթե մանուկ է, կատարյալ հասակի է երևում, եթե տկարացած է ցավերից, Աստծու զորությունը բնակվում է նրա մեջ, եթե հեռանում է այս աշխարհի կյանքից, իր հետ Աստծու մոտ է տանում անմահ կյանքը: Մեր Տերը աղոթքի մեջ ա՛յս է ուսուցանում՝ աղաչել Իրեն՝ տո՛ւր մեզ մեր հանապազօրյա հացը, ո՛չ թե [հացը] երկրից, այլ Տիրոջից, պարզ է, որ ոչ թե երկնքից, այլ բոլորի Տիրոջից: Ասում է. «Այս է իմ մարմինը, և այս է իմ արյունը» (տե՛ս Մատթ., ԻԶ 26, Մարկ., ԺԴ 22, Ղուկ., ԻԲ 19): Թեև անփչրելի էր, բայց քո սիրո համար փշրվեց, և քեզ, որ փշրվեցիր քո կամքով, անփչրելի Աստվածությամբ Իրեն միացրեց. «Դժոխքում չես թողնի ինձ և քո սուրբին ապականություն տեսնել չես տա» (Սաղմ., ԺԵ 10): Ուրբաթ օրը խաչվեց՝ մահը փշրելու համար, իսկ կիրակի օրը Ադամի փշրված ոսկորները հավաքեց, հարություն տվեց՝ անմա-

*հության համար, և շատերին ցույց տվեց իսկապես և ոչ ա-
ռաչոք: Մի օր հացացավ վերնատանը և հանապազ հացա-
նում է Եկեղեցիներում՝ սուրբ սեղանի վրա: Նախ Ինքը ճա-
շակեց Իրենից, ապա մեզ բոլորիս ճաշակից դարձրեց նույն
չարչարանքներին: Այլևս չարչարանքների մեջ չէ, այլ հայ-
րական փառքի մեջ փառավորվում է հրեշտակների ու
մարդկանց կողմից: Նա մեր բոլորի չարչարանքները բարձ-
րացրեց դեպի Իր անչարչարելի Աստվածությունը: Մեր
այս հավատի հույսը իբրև հաստատուն խարիսխ պահենք
մեր հոգում ու մարմնում: Ինչպես որ շինության սյունն է
հաստատուն պահում շինությունը, [այդպես էլ] մարդու
հավատն է անքակտելի [միության մեջ պահում] Աստծու
հետ, որով համարձակությամբ կարող ենք բարբառել և ա-
սել. «Ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք
ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ»:*

*Սա ճշմարիտ աղոթք է՝ բանական և գործնական. երբ
դու քո ընկերոջից չես պահանջում քո պարտքը, այնժամ
Աստված էլ ներում է քեզ քո բոլոր հանցանքները և ան-
մեղ դարձնում: Լսի՛ր Պետրոսին, որ [հարցնում էր Տիրոջը,
թե քանի անգամ պետք է ների եղբորը, երբ նա իր դեմ մե-
ղանչի, մինչև յո՞թ անգամ], և թե ինչպես սովորեց մեր Տի-
րոջից, որ նրան ասաց, թե՝ «[Քեզ չեմ ասում, թե յոթ ան-
գամ], այլ յոթ անգամ յոթանասուն» (տե՛ս Մատթ., ԺԸ 21-
22): Պետրոսն իբրև մարդ սահման դրեց, մեր Տերը չսահ-
մանափակեց Իր Աստվածության բարերարությունն ու
մարդասիրությունը: Մենք մեր խոսքով ու գործով անընդ-
հատ մեղանչում ենք, Աստված տեսնում է և զանց է առ-
նում, որպեսզի Իր երկայնամտությամբ մեզ ապաշխարութ-
յան դարձնի: Չմեղանչելը մարդու համար կատարյալ ար-
դարություն է, իսկ եթե իբրև մարդ մեղանչում է, թող
շտապի զղջալ և ապաշխարել: Բաց են Նրա ողորմության*

*դռները, Նա դրանք չի փակում ապաշխարողների առջև:
Մանավանդ նրանք, ովքեր հավատով խնդրել գիտեն, կա-
րող են նաև առաքինությամբ ճգնել՝ հոգևոր վաստակների
համար. նրանք ոչ միայն ներում են իրենց ընկերների՝ ի-
րենց դեմ գործած մեղքերը, այլ նաև իրենց ունեցվածքն են
բաշխում աղքատներին: Աստծու զորությունն է, որ նրանց
դեպի առաքինություն է ձգում, [և անում են], ինչպես որ
առաջիններն էին անում. «Ովքեր գյուղերի, ագարակների
ու ինչքերի տեր էին, վաճառում էին դրանք և վաճառվա-
ծի գումարը բերում դնում էին առաքյալների ոտքերի ա-
ռաջ» (տե՛ս Գործք, Դ 34-35): Մեր Տերը նրանց ուղարկեց՝
խոսքը քարոզելու, և նրանք քարոզում էին խոսքը և մա-
տակարարում էին [յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքի]:
Խոսքի ձայնը հասնում է ականջին, բայց Երկնայինի սերը
առանց խոսքի էր ուսուցանում առատաձեռն լինել. [տա-
լիս էին] ոչ թե որովհետև կամենում էին աղքատանալ, այլ
որովհետև [կամենում էին] հասնել այլ երկնավոր մեծութ-
յան: Եվ դու, երբ թողնում ես քո ընկերոջ պարտքերը, ոչ
թե ատելով ատում ես քո ունեցվածքը, այլ որ քո արած
սակավ ողորմությամբ Աստված կթողնի քեզ քո բազում
պարտքերը, որ ունեիր: Հետևի՛ր այս խոսքերին. երբ քո ըն-
կերոջը ներես, դու նույնպես արժանի կլինես ներման:*

*Համարձակությամբ բացում ես բերանդ և ասում. «Մի՛
տանիր ինձ դեպի փորձություն, այլ փրկի՛ր չարից»: Աստ-
ված չի կամենում մարդուն փորձության տանել, այլ կամե-
նում է ազատել փորձությունից և փրկել մահվանից: Քան-
զի Նա, ով Իր Որդուն չխնայեց և մեր բոլորի համար մահ-
վան մատնեց Նրան, Նրանով ամենայն բարիք է շնորհում
բոլորին, ովքեր խնդրում են Իրենից: Թեև մենք չենք կա-
րող փոխարենը հատուցել Աստծուն, որքան կարող ենք,
չծուլանա՛նք. մեր սակավապետությունը պահք է համար-*

վում, չափավոր խմելը՝ գինուց հրաժարում, միջին հանդերձանքը անշքություն է համարվում, միայն անհրաժեշտն ունենալը՝ աղքատություն, երանության [հասնելու] համար հեզ և հանդարտ լինենք խոսելիս, ընկերոջը ուսուցանենք հեզություն: Եթե չքնել չենք կարող, ապա գոնե ամբողջ գիշերը չտրամադրե՛նք քնին, որպեսզի բնավ չմոռանանք սաղմոսներն ու օրհնությունները: Եթե աղքատների կարիքները չենք կարող լրացնել, մի պատառ [հացի] և մի բաժակ [ջրի] կարոտ չթողնե՛նք նրանց: Մեր ունեցվածքի մեջ թող չլինի՛ որբերից ու այրիներից հափշտակված բան, և մեր ունեցած ամեն ինչը թող Աստծուն նվիրված լինի, այնժամ նաև մեր անձերը կլինեն Նրան հաճելի ու ընդունելի պատարագներ: Տղամարդի՛կ ու կանա՛յք, ծառանե՛ր ու ազատնե՛ր, բոլորս շտապե՛նք կատարել Աստծու պատվիրանները, քանզի մեր Տերը եկավ բոլորիս թողության համար:

Նրա մարդասիրությանը վայել են փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ [ՏԻՐՈՋ] ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ Ա

Հույժ զարմանում եմ մեր հանդգնության վրա, թե ո՞ր բարձրությանը ձգտեց հասնել. և զարմացավ, ոչ թե որովհետև հասավ, այլ որ կամեցավ հասնել և չհասավ. ինչպե՞ս ունենք մենք՝ մեղավորներս, վերին բարձրությանը մոտենալ, երբ գործում ենք ամեն տեսակի վատթար բան՝ սողալով երկրի վրա: Բազում են վատթար մասի ծնունդները, և անպիտան են պտուղները, որ խորհուրդները ճաշակում են նրանցից: Քանզի ինքը վերևում է, իսկ գործերը՝ գետնախանձ. աղտեղի հաճույքներ, անառակ ցանկություններ, լկտիության սեր, անհագ տենչանքներ, հարստությամբ զբաղմունք և ժամանակավոր հանգիստ: Ամենևին չի կարողանում դեպի վեր նայել և տեսնել իմանալի մեծությունը հոգով ու մարմնով: Բայց եթե փոքր-ինչ մոտենաս և դիպչես այդ մեծությանը, կծաղրես արեգակի տակ գտնվող ամեն բան, այնուհետև կհեռանաս ախտալի տեսակներից ու դեռևս մարմնի մեջ՝ քեզ վեր կբարձրացնես, կդնես երևացող բոլոր բաներից վեր: Ինչպես որ այս մեծը՝ Հովհաննես ավետարանագիրն է սկսում. ո՛չ ծովից, ո՛չ ցամաքից, ո՛չ արդար մարդկանցից, ո՛չ այն տեղից, որտեղից կենդանության ծագումը երևաց, նաև ո՛չ երկնքի կամ երկրի լինելությունից: Իսկ որտեղի՞ց պետք է սկսել: Անսկզբից: Ժամերից, ժամանակներից, դարերից և հավիտ-

յաններից դուրս ելնելով՝ հասնել Անիմանալիին ու Անըմբռնելիին՝ Միագո Զորությանը, որից է ամեն մի սքանչելի գոյություն:

«Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Աստված էր Բանը»[16]: Բոլորի պատճառը սա է: Արդ, այս ճշմարտությունը լսելով՝ հանցավոր չմնանք այս կյանքում և ժամանակավորի մեջ, այլ նույն առաքյալի հետ թռչենք անմարմին վայրը, այնտեղ տեսնենք մարմնացած Բան Աստծուն և աղաչենք ամենագութ Տիրոջը, որ Իր շնորհի լույսը ծագեցնի մեր հոգիներում ու մարմիններում, և լուսավորվեն մեր մտքի աչքերը, որպեսզի արժանի լինենք Նրա փառքին վայել կերպով պատմելու Նրա սուրբ չարչարանքների և լուսավոր հարության մասին: Դրանից հույժ մեծացել է Եկեղեցին և ունի բազում հոգեկիր հայրեր՝ առաքյալներ, մարգարեներ, ճշմարիտ հովիվներ՝ երկնավոր գանձի ժառանգորդներ: Որքան շատ են հոգևոր հայրերը, որքան շատ առաքինի գավակներ ունեն նրանք, և որքան շատ է ժառանգությունը, դրանից առավել են եկողներն ու ժառանգորդները: Իսկ եթե առաջիններն իրենց դարում կատարյալ եղան իրենց չարչարանքով, արթնությամբ տքնելով, հաստատուն հավատով և մեծ ճգնությամբ հեռվից նայելով՝ իրենց մոտ տեսան ամենայնի Տիրոջը, որ եկավ բոլորի փրկության համար, ու չվրիպեցին Նրա կենարար ավետիսից, ընդունեցին ու հավատացին և հաստատուն են մինչև այսօր: Ուստի [մենք]՝ որդիներս, նույնպես պետք է հայրերի նույն ճանապարհով գնանք, նույն հավատն ունենանք, նույն ճգնությունը կրենք, նույն համբերությունն ունենանք, Նրա երկրորդ գալստյանը հուսանք, նույն ավետիսին սպասենք: Եվ երբ խոկանք և իմանանք այս ամենը՝ մեր հոգևոր հայրերի ճգնությունները, ու երևանք իբրև նրանց հոգևոր որդիներ, Սուրբ Հոգու օգնականությամբ կկարողանանք գտնել նաև սուրբ հայրերի ժառանգությունը, որ ավանդեցին մեզ: Քանզի ահա առաջինները սերմանեցին և աճեցրին, միջինները հնձեցին և վաստակեցին, իսկ մենք եկանք մտանք առաջինների վաստակի մեջ:

Արդ, մենք՝ վերջիններս, հեղգությամբ չծուլանանք, որ չլինի թե վրիպենք սկսվելուց, աճելուց և իբրև վատ ժառանգորդներ անպտուղ գնալով՝ սովամահ անենք մեզ:

Ահա գիտենք, որ Եկեղեցին ունի մեծ հարստություն և երկնավոր գանձ, որին ոչ ոք չի կարող հասու լինել կամ հաշվել այն: Բայց ես պիտի ասեմ շատից քիչը, երկնավոր պտուղների ծայրից, որ տեսա, բազումից՝ մասը, քանի որ մի մասի մեջ երևում է ամբողջը: Թեպետև բոլորդ հույժ թուլացած եք աստվածային մեծությունից, ես շատ իմանալու պատճառով առաջ անցնելով չէ, որ ինչ-որ բան կմատուցեմ ձեզ՝ նոր հավատ գլխավորելով կամ նոր, օտարոտի բան ասելով. քա՛վ լիցի. չլինի՛ թե սուրբ Եկեղեցում ասվի կամ լսվի նման բան:

Բայց բոլորի Տիրոջ գթառատ սիրո և խանդաղատանքի համար մեր առաջին հայրերի, որոնք իրենց հավատով հաղթող Եկեղեցու հաստատուն սյուներ եղան, մենք ևս մեր փոքր գիտությամբ կամենում ենք մեր անձը գիշեր-ցերեկ չարչարանքի տալ, անդադար ընթերցել երկնավոր Կտակարանները և խորհել իմանալիի մասին, որպեսզի նաև մեր մեջ կաթի Սուրբ Հոգու նշույլը, որ ուղղվենք անվրեպ շավիղներում, որոնք նուրբ ճանապարհով տանում են՝ մտնելու երկնավոր մեծ մայրաքաղաքի նեղ դռնով:

Արդ, ահա հասանք միջնակետին, որ սկիզբն է վերջի և ավարտն առաջինի: «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարվա առաջին ամիսը լինի»[17]: Արդարև Սուրբ Հոգու նոր, չքնաղ զորությունը Մովսեսի

միջոցով օրենք է սահմանում, որ սկսում է ամսից և ամսի արտաքին երևույթով տանում հանում է դեպի արարչություն: «Այս առաջին ամիսը, – ասում է, – թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի»: Արեգ ամիսն է. լինելության սկզբում սա ամիս չէ, այլ օր և սկիզբ: Եվ դարձյալ՝ նոր ծնված օր, նախաղաս ամիս և գարնանային ժամանակ: Երբ ջրերը քաշվեցին երկրի երեսից, և երևաց ցամաքը, վերևից ձայն լսվեց, որ ասաց. «Թող երկիրն իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս և պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»[18]: Եվ երկիրը, հրամանը լսելով իբրև միտք և բանականություն ունեցող, կատարեց այն:

Եվ միանգամից երևաց խոտերի ու ծառերի բոլոր տեսակների կատարելությունը. ոչ միայն նրանք էին կատարյալ իրենց տեսակներով ու նմանությամբ, այլև յուրաքանչյուրի պտուղն էր հասուն ու կատարյալ:

Այս ամսին ջրհեղեղի պատճառով բովանդակ տարին տապանի ներսում արգելափակված արդարին և նրա հետ եղողներին վերևից կաթած ողորմությունն հրամայեց դուրս գալ տապանից, և այն եղավ սկիզբը տարվա ամիսների: Եվ կրկին երկիրը պտղաբեր եղավ և սնուցեց իր վրա գտնվող բոլոր կենդանիներին, որպեսզի արարածներն աճեն ու բազմանան, ինչպես առաջին լինելության ժամանակ:

Արդ, Մովսեսը, որ արժանի եղավ Սուրբ Հոգով պատմելու արարածների արարման պատմությունը, այս ամիսը դնում է աշխարհի լինելության սկզբում: Ջրհեղեղից հետո այս ամիսն է դառնում սկիզբ: Երբ Մովսեսը եգիպտական ծառայությունից փրկեց ժողովրդին, եբրայեցիների համար օրենք սահմանեց մեծ տոն կատարել՝ ասելով. «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարվա առաջին ամիսը լինի»[19]: Ոչ միայն չար ծառայությունից

փրկելու, այլ նաև հեթանոսական տոներից զատելու համար հրամայեց այդ ամսվա տասնչորսերորդ օրը գառ մորթել, բոլոր ընտանիքներում տոն կատարել գիշերը, երբ տեղի պիտի ունենար Քրիստոսի հարության լուսավոր խորհուրդը:

Արդ, այս ամիսը եղավ արարչության սկիզբը, հաստատուն հիմքը արարածների աճման և թվականը այս աշխարհի ժամերի, ժամանակների և դարերի լրման, հաշտության Պատարագն այս ամսին մատուցվեց, և ինչպես վերևում ասացինք, արդարի օրերի և Աբրահամի զավակների՝ խիստ ծառայությունից ազատության սկիզբը [այս ամսին եղավ]:

Արդ, որովհետև փրկվում ենք երկրավոր ծառայությունից դեպի ազատություն, այստեղ, եղբայրնե՛ր, հոժարությամբ չարչարվենք, առաքինի մշակների նման խորը հերկենք և կակղեցնենք այս հողի կարծրությունը, որպեսզի խորը փորելով՝ քաղհանենք խոսքերի շուրջը գտնվող վնասակար սեզը, որ ցորենի գեղեցիկ սերմանվող հատերն ուրախացնեն արտի տիրոջը: Քանզի եթե նա, ով արհամարհի նշանախեց հովտը (որ ամենափոքր տառն է և ամենամեծերի տեղն ունի), հետինը կլինի իր գործում[20], ապա որքա՜ն ավելի մենք պետք է երկնչենք զանց առնելուց Սուրբ Հոգու մեծամեծ պարգևները, որի սկիզբը, միջնամասը և ավարտը լի են երկնավոր հարստությամբ: Քանզի եթե սկսեմ միակից, անցնեմ հարյուրյակին, հասնեմ հազարին և հանդգնեմ բյուր բազումներին [անցնել], այնտեղ կմնա բազում անգամ ավելին:

Ահա՛ քեզ կատարյալ օրինակ, որով միտքդ կհոժարի գալ ճշմարիտ հավանության: Երբ դու (քեզ հետ նաև շատերը) ծարավելով գնաս աղբյուր և բյուր անգամ խմես, քո խմելով ո՛չ կարող ես աղբյուրը ցամաքեցնել և ո՛չ էլ սկզբում խմածդ ջուրը կխմես: Եվ եթե նստես աղբյուրի

մոտ, ո՛չ նույն ջրին կրկին կհանդիպես, ո՛չ նրա մեջ խառնված օտարոտի բան կտեսնես և ո՛չ էլ երեկվա տեսածդ այսօր կրկին քեզ կերևա: Արդ, եթե ջրի բնությունն իր անընդմեջ հոսքով այսպիսի մեծամեծ խոհեր է առաջացնում մարդու մեջ, ապա որքա՜ն առավել աստվածային խոսքերը. եթե ծարաված հոգով ըմպես դրանք, երբեք չես լցվի ծանրությամբ, այլ թեթևացած՝ նորից կփափագես նույնը: Թեև նույնն են համն ու բնույթը, բայց իմաստասերների մտքում խոհականության տեսակները տարբեր են, և բոլորը դեպի մի ճշմարտություն են նայել տալիս:

Այժմ [այն մասին], թե [Աստված] ինչո՞ւ է հրամայում գառն առնել և արգելափակել ամսվա տասներորդ օրը[21]. կենդանին՝ կենդանիների և ձայնավորը՝ բանականների մեջ: Ահա հայտնի խորհուրդ, որին եթե մեկը կամենա, կարող է հասու լինել: Որովհետև տասնյակը բովանդակում է բոլոր թվերը, իսկ թիվը՝ այս աշխարհի նյութական գոյությունը: Որպեսզի նյութականով կատարյալ վարդապետության մարմնական ուսումն առնի: Եվ լիալուսնի ժամանակ՝ երեկոյան է մորթում զոհը, որ հայտնապես ցույց է տալիս օրինադրված տոնի կիսատ լինելը: Բայց որովհետև այն [զոհը] մեծ խորհուրդն ունի Աստծու ճշմարիտ Գառի, որ պիտի գար և պիտի փրկեր Իսրայելը ոչ միայն Եգիպտոսից, այլ նաև սատանայի ծառայությունից, յուրաքանչյուր սեմի վրա գառան արյունով նշան անել է [հրամայում] և պահպանում բոլորի տները հարվածներից, որ կրեցին եգիպտացիները՝ մեծամեծներից մինչև փոքրերը: Եվ ինչպես որ երկրագործներն են ուրախանում, երբ մինչև պտուղների հասնելը տեսնում են ծաղկած ծառերը, այդպես էլ մենք, մինչև Աստծու Գառի մորթվելը՝ մինչև հրեաների ու հեթանոսների փրկության տոնը, ուրախանանք այս տոնի խորհրդով: Արդ, քանի որ իսրայելացիները չունեին բնակության երկիր և Աստծու անունով տաճար, որպեսզի բոլորը հավաքվեին, եւ Ղևիի ցեղն էլ դեռ չէր սահմանվել քահանայության համար, բավական համարվեց Աստծու շնորհը, որ յուրաքանչյուրին Աստծու տաճար և բնակարան դարձրեց, և բոլոր տներում քահանայագործեցին:

Բայց մենք այս բոլորով հանդերձ փութով անցնենք դեպի Մովսեսի կատարյալ հրամանը, որ գործով Իսրայելի որդիների համար օրենք էր սահմանում Աստծու գառը, իսկ զորությամբ հեռվից ակնարկում էր Աստծու որդիներին: «Հում չուտեք, ասում է, (դա գազանային գիշակերություն է), և ոչ էլ խաշած (որ տարածված է աշխարհում և գեխություն է), և չլինի, թե չուտեք (որ ուրացություն է), այլ կուտեք խորոված, որ անպաճույճ հատնումն է երկնավոր հրի: Արագ կուտեք և ոչ դանդաղ՝ ասես մարմնի մի մասով ուտելով, այլ զորությամբ, հրի պես, գոյացության բոլոր մասերով: Կուտեք նաև գլուխը ոտքերի ու փորոտիքի հետ միասին, ասում է (տե՛ս Ելք, ԺԲ 9)[22]: Նախաստեղծ գլուխն ու մարմնի ստորադիր ոտքերը սնուցող փորոտիքի հետ միասին առավել վայելչաբար ուտել է հրամայում՝ անցկացնելով չարչարանքների միջով, որպեսզի երեքից էլ քաջապես ազատվել կարողանաս: Իսկ այդ երեքից մնացած ավելորդը, որ մեղքն ու անօրինությունն է, հրամայում է այրել: Դարձյալ՝ ասելով. «Թող ձեր գոտիները ձեր մեջքին լինեն, ձեր կոշիկները՝ ձեր ոտքերին, ձեր ցուպերը՝ ձեր ձեռքերին, ձեր ճրագները՝ վառված»[23]: Այս ամենը նշանակն են արի և պինդ լինելու. այժմ շտապել գաղթի ելնելու, իսկ հետո՝ գաղթական լինելու այս աշխարհի կյանքում: Քանզի գոտիներն ուսուցանում են արիի պատերազմը, ցուպը՝ թագավորականն ու խրատականը, իսկ կոշիկները՝ ճանապարհին անվախ լինելը, անվնաս գնալը թունավոր սողունների վրայով: Վառված անշեջ ճրագները

լուսավորության [նշանակն են] մարդու մտքի, որ խորհուրդի Տիրոջը տեսնում է հեռվից այնքան մոտ և հայտնապես, երբ ասում է. «Նրա ոսկորները մի՛ կոտրեք և մինչև առավոտ մի՛ հանեք»[24]: Ինչպես որ եղավ իսկ, որ կտեսնենք առաջիկա խոսքիս մեջ:

Արդ, եթե Մովսեսը նախապես կրթում էր ժողովրդին այսպիսի հայտնագույն խորհուրդով, որի մեջ ծածկվածները ապագայում Աստուծով հայտնի պիտի դառնային, ապա մարգարեները նույն Հոգով նույնը քարոզում էին, արդարները հավատում էին, իսկ ամբողջ ժողովուրդը սպասում էր Տիրոջ գալուն, ինչպես այն սամարացի կինը, որն ասում էր. «Երբ Մեսիան գա, մեզ ամեն ինչ կպատմի» (Հովհ., Դ 25): Արդ, նույն Տերը, որ այս ակնարկությունն արեց ժողովրդին, Նազարեթում հրեշտակի միջոցով ավետվեց սուրբ Կույսին սույն արեգ ամսին, որպեսզի այդ ամիսը նոր փրկության սկիզբ դարձնի: Եվ Աստծու Գառը մտավ արգելափակվեց Կույսի որովայնում՝ ինն ամիս մնալով այնտեղ, որպեսզի, հիշեցնելով Եգիպտոսում մորթված գառները, բանա կուրացածների աչքերը, որ աճելով և կատարյալ գիտության հասնելով՝ թերևս չխոտորվեն Աստծու Գառից, որ պիտի փրկեր իրենց հին մեղքերի չքակտված կապանքներից: Որպեսզի նաև Ինքը՝ Աստծու Գառը, երեսուն և ավելի տարիներ մնալով և հապաղելով [Իր] ժողովրդի որդիների մոտ, ծննդյամբ ծագելով և մկրտությամբ [իբրև Աստված] հայտնվելով Հրեաստանում՝ կատարեր Իր բոլոր հրաշագործությունները, նրանց որդիներից առաքյալներ ընտրեր և ուսուցաներ օրենքներն ու մարգարեները՝ [ասելով]. «Իմ գալստյան մասին խոսեցին բոլորը» (հմմտ. Ղուկ., ԻԴ 27), և Իսրայելին ասելով, թե՝ «Այլ տեղ չեմ ուղարկված, եթե ոչ Իսրայելի տան կորած ոչխարների մոտ» (Մատթ., ԺԵ 24), հաստատեր հայրերի՝ թլփատությամբ [տրված] ավետիսը, հանձն առներ բոլորի միջից Իրեն ծանոթներ ու բարեկամներ դարձնել, Իրեն մոտենալու դուռ բացեր մաքսավորների ու մեղավորների համար, ընտրյալ ազգի սահմաններից հալածեր դևերին, բժշկեր ախտերն ու հիվանդությունները՝ թոթափելով դրանք բոլոր նրանցից, ովքեր հավատով մոտենում էին Իրեն: Նաև ամեն բանից մեծագույնն աներ՝ բազում վայրերում բազում անգամ կապեր մահը և այն դներ Իր հաղթող զորության ներքո, անօրեն բռնակալից կենդանի պահանջեր մեռածներին և բոլոր աչքերից կտրեր արտասուքները: Սուգն ու տրտմությունը փախչում էին Նրա երեսից, ատելությունն հալածվում էր, ագահությունը՝ հանդիմանվում, խավարը փախչում էր, և լույսն էր թագավորում:

Երբ այս ամենն արեց, քահանաներն ու քահանայապետները, բորբոքվելով նախանձի ախտից, փակեցին իրենց աչքերը ճշմարիտ Լույսի դեմ, խցեցին իրենց ականջները՝ չկամենալով լսել Օրենքն ու Մարգարեներին և ոչ էլ ընդունել քարոզությունը, որ իրականացումն էր մարգարեների ավետիսի: Ավելին՝ հակառակվելով և ընդդիմանալով այս բոլոր բարի գործերին՝ արգելում էին ժողովրդին՝ լսելու կենարար վարդապետությունը:

Արդ, եկավ հասավ նույն այս ամիսը, որ ի սկզբանե Կենարարի խորհուրդն էր նշում: Բոլորի Տերը Աստծու որդիների նկատմամբ նույն գթառատ սիրով կամենում էր ուրախությամբ նրանց հետ զատիկը կատարել, որպեսզի թերևս նրանց խորհուրդներից փարատվի նախանձի խավարը, և բացվեն նրանց մտքի աչքերը, որ իրենց կամքով էին կուրացրել, և ճանաչեն տոնի Տիրոջը, որ եկավ՝ փրկելու բոլոր արարածներին, որոնք մեռած էին իրենց մեղքերի մեջ:

Իսկ այժմ լսի՛ր մեծամեծ չարիքների մասին: Ասում է՝ «Երբ մոտեցավ Բաղարջակերաց տոնը, որ կոչվում էր Զա-

տիկ, իմացան, որ Հիսուս գալիս է ժողովրդի բազմությամբ՝ նրանց ուսուցանելու, վախեցան և երկյուղում էին, որ եթե կույրերին լուսավորի, անդամալույծներին բժշկի, դիվահարներին մաքրի, մանավանդ եթե որևէ մեռածի հարություն տա, ամբողջ ժողովուրդը կհավատա Նրան: Այս երկյուղի պատճառով խորհուրդ արեցին քահանայապետներն ու դպիրները, պատմեցին իշխաններին և սովորեցրին ժողովրդի բազմությանը, որ ուր որ տեսնեն Նրան, հայտնեն [իրենց]: Եվ իրենք էլ զինվեցին, որ ուր որ գտնեն Նրան, սպանեն»:

Եվ երբ այդ չհաջողվեց, գտնվեց նրանց օգնական. նա, ով սկզբից իսկ բնակվում էր նրանց սրտերում: Եվ մի միջնորդի միջոցով, որ անվամբ էր միայն աշակերտ և չարակամ քահանաների գործակիցն էր, ինչպես Ավետարանն էլ շատ պարզորեն ցույց է տալիս. «Սատանան արդեն իսկ Սիմոնի որդի Իսկարիովտացի Հուդայի սրտի մեջ դրել էր, որ Նրան մատնի նրանց ձեռքը»[25] (տեսնո՞ւմ ես՝ գործակից եղան ո՛չ թե քահանայությանը, այլ սատանայական գործին): Գնաց նրանց մոտ և ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, եթե մատնեմ Վարդապետին»: Նրան տվեցին նախապես կշռված երեսուն արծաթը:

Ո՛վ խելացնորներ և ոչ քահանաներ. թեև չարաչար մատնում էր նա, բայց խոստովանում էր գեղեցիկ անունը. վարդապետ ասաց և ոչ գող, մարդասպան կամ այս աշխարհի չարագործի մեկ այլ անուն: Եթե արծաթ եք խոստանում, ապա ինչո՞ւ չեք հարցնում Նրա գործերի մասին, թե՝ ո՞ր չարիքի համար ես մատնում Նրան մեր ձեռքը: Թերևս վախեցաք հարցնել՝ ո՞ր չարիքի պատճառով մատնեցիր Նրան: Լա՛վ արեցիք, քանի որ շատ լավ գիտեիք և հասու էիք այն բանին, որ «նա անօրենություն չգործեց, և նենգությունը տեղ չգտավ նրա բերանում»[26], որի պատճառով էլ «մարդկանցից ոչ ոք չի կարող հանդիմանել Նրան»[27]:

Բայց լավ, հարցնում եմ ձեզ՝ ինչո՞ւ եք տալիս այդ արծաթը, որտեղի՞ց եք տալիս և ինչո՞ւ երեսուն լիտր: Եթե, ինչպես ասում եք, մահապարտ է, զուր մի՛ կորցրեք արծաթը. ոչ մի մարդ արծաթով մահապարտ չի գնում և սպանում. թույլ [մի՛] տվեք դրան, նրա մեղքերն ամբաստանում են նրան, նրա գործերին նայեք. նրա չարիքները մահվան են մատնում նրան: Գիտեմ, որ ճշմարիտ եք, մանավանդ որ իմաստուն եք, քահանայապետ և գիտությամբ բոլորից առավել. գիտեք, որ մատնիչը Նրա աշակերտներից է, հարցրեք և գրեք նրա Վարդապետի գործերի մասին: Սկսեք այնտեղից, որտեղ Նա գործել սկսեց: Այդտեղ իսկ կգտնեք տոնին եկած բազում գալիլիացիների: Կգտնեք նաև նրանցից, ովքեր ներկա էին հարսանիքին, որտեղ ջուրը գինի դարձրեց, նաև Կափառնայումում հինգ նկանակով հագեցած հինգ հազար հոգուց [ոմանց կգտնեք], ուր տասներկու լիքը սակառ էլ ավելացավ: Իսկ եթե Նայինում հարցնեք, կտեսնեք այն այրու՝ մեռելներից հարություն առած միամորիկ որդուն: Եթե մտնեք քահանայապետի տուն, կտեսնեք նույնը: Եթե Գերգեսացիների երկիր մտնեք, ոչ միայն կտեսնեք բժշկված բազմադև պատանուն, այլ նաև ծովում խեղդված դևերին: Եթե Պեննադա քաղաքը մտնեք, ոչ միայն կտեսնեք առողջացած կնոջը, այլ նաև կանգնեցված տերունական արձանը, ուր բժշկվածը բռնել է Տիրոջ քղանցքից, և այդ արձանի տակ բուսած արմատը կտեսնեք, որ բժշկում է հիվանդներին[28]: Բայց ես գիտեմ, որ չեք կարող հեռու գնալ. չեք էլ ուզում: Մոտեցե՛ք Բեթանիային և հարցրեք Ղազարոսին, թե ո՞ւր գնաց և կամ որտեղի՞ց եկավ: Եթե չեք ուզում հարցնել նրան, որպեսզի սարսափելի բաներ չպատմի ձեզ այն տեղի մասին, որ պատրաստված

է ձեզ համար, հարցրեք Երիքովի կույրին, որին հեռվից խոսքով բժշկեց:

Իսկ եթե նրանց սուտ եք համարում, այդտեղ՝ ձեր իսկ քաղաքում՝ Բեթհեզդայում, տեսեք երեսունութ տարվա հիվանդին. ձեր անգթության մասին մահիճները կաղաղակեն: Սելոամում հարցնելով՝ կույր ծնվածին լուսավորված կտեսնեք, և տեղյակ լինելով իսկ՝ գիտի պատասխան տալ:

Արդ, ո՞ր գործի պատճառով է Վարդապետը մատնվում ձեր ձեռքը: Եթե գիտեք, և չար են գործերը, ահա արդեն լսեցիք, գրեք և տվեք ձեր դատավորին, որպեսզի Իր գործերի համար մատնված լինի: Բայց եթե բարի են գործերը (և այդպես էլ կա), ոչ միայն դուք կամաչեք՝ պարտվելով, այլ ձեզ հետ՝ նաև ձեր մերձավորները: Իսկ նա, ով այնպիսի շնորհներն ուրանալու պատճառով մատնեց, արժանի է ոչ միայն ամոթի, այլ նաև բազում հարվածների:

Իսկ եթե ճշմարտասեր լինեիք, դուք ինքներդ վրեժ կառնեիք Նրանից. Նրան նայողը բարու փոխարեն չար չէր հատուցի: Արդ, որովհետև այդ չարեցիք, արծաթ եք տալիս նրան, այն էլ՝ ոչ թե ձեր տնից, այլ տաճարի սուրբ նվիրատվություններից. մի՞թե չեք հանդիմանվի, չեք կշտամբվի, որ ոչ թե մարդու, այլ Աստծու ավանդն եք հատում և կողոպտում ամենասուրբ տաճարը, այն էլ ոչ թե գերիներ փրկելու կամ աղքատներին տալու, այլ իբրև Արդարի արյան գին, ոչ թե մի ոմն արդար մարդու, այլ Աստծու Որդու:

Ապա ուրեմն, նախապես իմանալով ձեր չարությունը (որ մեծ վարձ էիք տալիս ձեր սուտ մարգարեներին, որովհետև ձեր չար անձերի ուզածն էին խոսում և գովում էին ձեր չար ընթացքը), արդարացի է Զաքարիա մարգարեն, ճշմարիտ է ասում մարգարեն. «Եթե ձեր աչքին հաճելի է թվում այդպիսի մեծ ծախս անել, ապա տվե՛ք և ինձ իմ վարձը, իսկ եթե ոչ, ասացե՛ք, որ ես էլ իմանամ: Եվ նրանք

արագ կշռեցին ու նրա ձեռքը տվեցին երեսուն արծաթը»[29]: Մարգարեի համար անհուն դառնություն էր սա՝ տեսնել ամենամեծ ու սաստիկ չարիքը, որ պիտի գործեր ժողովուրդը: Չէր կարողանում հանդարտվել կատարվելիքի ծանրությունից, «առնելով դնում էր այն Տիրոջ տանը՝ հնոցի մեջ»[30], որ թերևս ամաչեն վայրենի գործից, որ գերազանցում էր դիվային ամբարշտությանը: Այժմ չեն ավելացնում և չեն պակասեցնում կատարյալ չարիքից. պահպանում են երեսուն թիվը և բերում տալիս են մատնիչին՝ գնելու համար աստվածային արյունը՝ ո՛չ պատահաբար և ո՛չ էլ անակնկալ, այլ հնացած խորհրդով, որ չարությամբ գործադրում էին ամեն բան Նորոգողի վրա:

Արդ, եթե երեսուն արծաթը ոսկով փոխանակես, կբաժանվի երեք հիսներորդի, իսկ եթե [բաժանես] նույն արծաթի թվին, կկազմվի երեք տասնյակ: Առաջին տասնյակով անարգեցին տասը պատվիրանները, երկրորդ տասնյակով ուրացան Մովսեսի փրկությունը, երրորդ տասնյակով չհավատացին պարգևված երկրին: Դարձյալ՝ այս երեք թվականով անապատում Հորը փոխանակեցին [ոսկե] հորթով, մարգարեներին քարկոծելով՝ դառնացրին Սուրբ Հոգուն, նույն թվականի մնացորդով գնեցին սուրբ արյունը, [որ] իրենց և իրենց որդիների վրա է մինչև հավիտյան:

Եվ որովհետև նախանձից բարկացել էին անապատի գազանների պես, արհամարհելով պատվական տոնը՝ հավաքվեցին քահանաներն ու քահանայապետները, ծերերը, փարիսեցիներն ու տաճարի իշխանը զինված բազմության հետ միասին՝ առաջնորդ ունենալով նրան, ում տաճարում տվել էին արծաթը, նաև նրան, ով զորավիգ էր լինում իրենց՝ անմարմին ու իմանալի սատանային. իբրև օգնական ունեին նաև գիշերային ժամանակը, որպեսզի խավարային ժամին էլ ընկնեն կորստյան խորխորատը:

«Ում հետ ես համբուրվեմ, Նա՛ է, բռնեցե՛ք Նրան և տարեք զգուշությամբ»[31]: Ձախողակ ողջույնի հետ ընդունում է հատուցումը. «Ում համար կթաթախեմ այս պատառը և կտամ, նա է, որ մատնելու է ինձ»[32]. կթաթախեմ, այսինքն՝ կլվանամ օրհնությունները[33]:

Ում սիրտը դառնում է նենգավոր թշնամու բնակարան, աստվածային շնորհը չի դադարում այնտեղ, իսկ այն տեղը, ուր չի բնակվում աստվածային շնորհը, ոտնակոխ է լինում ճանապարհով անցնողների կողմից:

Պետրոսը, որ լցված էր բարեսեր նախանձախնդրությամբ, մանավանդ երբ նրանց հետ տեսավ իր աշակերտակցին, չկարողացավ համբերել սատանայական զորությանը. չէ՞ որ ամենագետ Տիրոջից լսել էր. «Ով որ սուր ունի, թող վերցնի այն, իսկ ով որ չունի, թող գնի և բերի»[34]: Ի՞նչ է այս խոսքի պատգամը. այն հայտնի է իմաստուններին. սրի նմանեցրեց ճշմարտությունը. նա, ով ունի աստվածպաշտություն, թող պինդ մնա, նա, ով փոքր-ինչ թուլացել է, թող գնի ոչ թե սուսեր մի ոմն մարդուց, այլ ճշմարտությունը մարդու Որդուց, ոչ թե արծաթով, այլ իր իսկ արյամբ, քանզի. «Եկավ սուր դնելու ոչ միայն մարմնավոր հարազատների, այլ նաև ամեն մի հոգու և մարմնի միջև»[35]: Այս է սուրը՝ բնական և ստացական: Պետրոսն ուներ երկուսն էլ. վարդապետի նկատմամբ բնական սերը, որ ուներ Սուրբ Հոգով, և ստացական [սերը], որով կտրեց ծառայի ականջը: Ծառայի ականջը և ո՛չ ազատի, մեղքի և ո՛չ արդարության, ապստամբ ականջը և ո՛չ թե գլուխը՝ մեծարված անդամը, և ո՛չ ամբողջը, քանի որ ոչինչ այնպես նման չէ ծառայի, որքան մտքի զգայությունը: Քանզի բախվելով աչքին՝ միտքը բախվում է իմանալիի հետ, ականջը պատրաստվում է լսելու, աչքը՝ տեսնելու, խոհականությունն այնտեղից է պատասխանն արտաբերում, իսկ

ռունգերի հոտառությունն արթնացնում է ճաշակելիքի ընտրությունը: Այս զգայությունների միջոցով բոլոր զգալիներն առան պահպանության զգուշություն: Ամենադժվարը ականջը պահպանելն է ձայնից. այն կոխկռտվում է բազում անարժան ձայներից և ոչ միայն ծառա է մնում, այլ նաև ծառայում է ծառա զգայություններին: Արդ, կտրելով ու դեն գցելով ծառայի ականջը՝ ցույց տվեց մարդկանց՝ սկզբից իսկ չլսելն ու չհնազանդվելը: Բայց որովհետև երկնքի ու երկրի բարերար Տերը եկավ բժշկելու մեր բոլոր արատները, լրացնելու մեր մտքի թերությունը և [մեզ] կատարյալ դարձնելու, Նրա մարդասիրությունը զանց չառավ նաև ծառայի ականջը, այլ առավ և կրկին տեղը դրեց այն՝ տեղն անվերք և անսպի ցույց տալով, որ նշանակն է մեղավորների՝ ապաշխարության դառնալու:

Եվ բոլորի հետ խոսում է աղերսալի խոսքերով և քաղցր ձայնով: Բայց որովհետև անպարտելի զորությունն էր, թեպետև հույժ խոնարհությամբ խոսեց, «ես եմ», «ես եմ» ասելով՝ մարդացած Աստված երկու անգամ [Իր] բնությունն ակնբախ դարձրեց նրանց, և չիմացան: Այնուհետև ողորմելով անարժաններին՝ Բարերարն այնտեղ երեք բան է անում. Պետրոսին հրամայում է սուրն իր տեղը դնել, աշակերտների փոխարեն Ինքն է Իրեն մատնում բռնողների ձեռքը և կատարում է Հոր հրամանը՝ խմելով մահվան բաժակը: Եվ որովհետև անսուտ Աստված էր, եղավ ճշմարիտ մարդ, անկասկածելի Աստվածությամբ առանց երկյուղելու բռնողների ձեռքը մատնեց [Իրեն], իսկ մարդկային բնությամբ երկյուղալի թախանձանքով աղոթեց Նրան, ով կարող էր փրկել մահից, աղաչեց ոչ քիչ և մտահաճ, [և ոչ էլ] այլ բան էր երազով տեսնում, այլ կենդանի, բանական գառների նախապես հոգացող և նախախնամող Հովիվը կանխավ տեսնում էր կատարվելիքը:

Այնուհետև առնելով աշակերտներին՝ գալիս հասնում է այն վայրը, որ նախապես նկարագրել էին մարգարեները. «Կհավաքեմ երկրի բոլոր ազգերին, կիջեցնեմ նրանց Հովսափատի ձորը և այնտեղ կնստեմ՝ դատելու բոլոր ազգերին»[36]: Այժմ ոչ թե մարգարեության մեջ կանխավ ասվածն էր ակամա կատարվում, այլ նույն Ինքը՝ Հոգի Աստված մարգարեների բերանով խոսում էր, ինչ որ պիտի լիներ. ոչ թե այդ օրը, այլ ի սկզբանե հեղումը՝ առաջին մարդու կամքի ազատությունից առաջ: Եվ որովհետև անհրաժեշտություն չէր կատարվելիքը, այլ թշնամու խրատով և վատթար ոգու հոժարությամբ, բարեբեր եղավ անարգաբույն պտուղներով: Եվ որովհետև բոլորի Տերը «չէր եկել դատապարտելու, այլ փրկելու [մեղքի] ծառայությունից և նորոգելով՝ ազատելու»[37], աղոթքներով խնդրում էր Նրանից, ով առաքեց Իրեն՝ դուրս կորզելու աշխարհը մոլորությունից և հասցնելու դեպի Հոր արքայությունը:

Արդ, այստեղ տեսավ, որ եկել հասել են բոլոր արարածները՝ ականատես լինելու Աստծու Որդու մահվանը, աշակերտներին թողեց խոնարհագույն տեղում, իսկ ինքը փոքր-ինչ վերև բարձրացավ, ընկավ իր երեսի վրա, խոնարհվելով՝ համբուրեց երկրի երեսը, թափեց սուրբ արտասուքները երկրի սուրբ հատվածի վրա և վերացրեց առաջին անեծքը: Դարձյալ կանգնեց, նայեց դեպի վեր, խոսեց Հոր հետ աղոթքով՝ ասելով. «Հա՛յր, եթե կարելի է, այս բաժակը հեռացրո՛ւ ինձնից»[38]: Կարելիի ու անկարելիի Տերը, Հոր հետ խոսելով, ցույց էր տալիս միասնական Երրորդությունը, միաժամանակ նաև մարդկության բնությունը, որ բարձրացավ այնքան վեր՝ դեպի Աստվածություն: Աղոթում էր ո՛չ մի ազգի կամ [երկրի] մի մասի, այլ ամբողջ մարդկության և տիեզերքի, ո՛չ միայն մարդկանց, այլ նաև ցամաքային, ջրային և օդային, երկնավոր և երկրավոր բոլոր արարածների համար: Թեև Որդի էր Աստվածությամբ, սակայն մարմին առնելով՝ մահվան չարչարանքներով սովորեց մահվան ապականության ենթակայության տակ գտնվող բոլոր կենդանիների նեղությունը, որ երբ ամեն բան կատարվի, ապականության ենթակա բոլոր մահկանացուներիս կարողանա օգնական լինել անչարչարությամբ. նաև այն, ինչ կատարվելու էր առաջիկայում, փոքր ու չնչին չէր, այլ շատ մեծ:

Եթե ամբողջ Իսրայելն իր բոլոր ցեղերով (ոչ թե մեկ կամ երկու ցեղը) սգում էր Ամոնի որդու՝ Հոսիայի հանիրավի մահը, որը մեծապես ողբում էր մարգարեն՝ ասելով. «Այն օրը սաստիկ կոծ կանես, ինչպես կոծում են սիրելի էակի վրա. Դավթի ազգատոհմը՝ առանձին, և նրանց կանայք՝ առանձին, Շմավոնի ազգատոհմն՝ առանձին, և նրանց կանայք՝ առանձին»[39], ապա որքա՜ն ավելի [պիտի սգար] Աստծու Որդու մահը. երկինքը խոնարհվեց, երկիրը դղրդաց, և բոլոր իմանալի զորությունները զարհուրեցին:

Իսկ ամեն բանի Տերն այստեղ ոչ միայն մեկ, այլ երկու և երեք անգամ վայր ընկավ (ինչպես երկինքը՝ երկիր), և կրկին կանգնեց (որպես թե երկիրը կանգնեցներ Իր հետ՝ վերևում հաստատելով, միավորելով երկնավորն ու երկրավորը): Փոքր չէր բեռի ծանրությունը՝ երկինքը [Իր վրա] բարձած և երկիրը Իրենից կախած: Տեսնո՞ւմ ես, որ աստվածային մարմնից քրտինքն էլ քիչ չէր բխում. ուժեղ քրտինք և արյուն. արյուն՝ ոչ թե մարմնի մի մասից, այլ բազմահոսանք վտակներ, որով սրբում էր երկիրը և լվանում հողը, նաև մաքրում էր օդը ապականության զոհերի այրված մսի նախկին ծխից:

Այս բոլոր սքանչելագործությունների ժամանակ աշակերտները քնած էին խորը քնով: Եվ սակայն մարդասեր Տերը, հեզ հանդարտությամբ մոտենալով, արթնացրեց

նրանց, կարծես աշխարհը՝ քնից՝ աղերսական խոսքով ասելով. «Ո՛վ Պետրոս, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ»[40]: Վեց օրում արարեցի երկինքը, երկիրը և այն ամենը, ինչ նրանցում կա, և այժմ ահա վեց հազար տարի է՝ ընկել խաթարվել են մահվան իշխանության տակ: Ես եկել եմ փրկելու և նորոգելու: Արդ, զարթնի՛ր և փոքր-ինչ ժամանակ արթո՛ւն մնա, թոթափի՛ր քեզնից քնի ծանրությունը և տե՛ս, թե ազգատոհմդ ինչե՛ր պիտի անի ինձ հետ իմ՝ մինչև այժմ նրան արած բարեգործությունների փոխարեն: Տե՛ս, թե ինչպե՛ս են կամենում հատուցել ինձ՝ հավաքված ինչպես մի մահապարտի վրա, և [կամենում են] ոչ թե աշխարհի սովորական մահով սպանել, այլ՝ մեծամեծ անարգանքներով: Եվ ես հույժ խռովված եմ և դառնապես ողբում եմ, որովհետև գիտեմ, թե ինչ է լինելու իմ մահվան ժամանակ. ընտրյալ տաճարս ավերվելու է, քահանայությունը լռելու է, պաշտամունքը դադարելու է, Սուրբ Կտակարանների ընթերցումները, որ աղաղակում էին իմ մասին, սգալու են, հանգչելու է միշտ վառվող հուրը, պատարագները խափանվելու են, մեղքերի համար արվող ողջակեզները դադարելու են, հեռուներից ուխտավորներ չեն գալու, անձկալի Երուսաղեմն՝ ավերվելու, և ամբողջ Իսրայելը ցրվելու է: Դուք՝ տասներկուսդ, որ ինձ հետ եք, նույնպես գայթակղվելու եք այս գիշեր, որովհետև գրված է, և պետք է կատարվի. «Պիտի հարվածեմ հովվին, և ոչխարները պիտի ցրվեն» (Մատթ., ԻԶ 31, Մարկ., ԺԴ 27): Իսկ առանց հովվի ոչխարները կմատնվեն գիշատիչ գազանների ձեռքը. մանավանդ որ, այսօր սատանան կամենում է ցորենի պես մաղել ձեզ: Բայց ես կաղաչեմ Հորը, որ չպակասի քո հավատը (Ղուկ., ԻԲ 31, 32):

Լավ ասաց, թե՝ չպակասի: Որովհետև Աստված չի կամենում տեսնել մարդկանց չարությունը, այլ այն, որ մարդը առաքինի լինի և մտնի Հոր արքայության և ուրախության մեջ: Ասաց՝ չպակասի, ոչ թե՝ չուրանաս: Ուրանալն ու չուրանալը նրա ձեռքին էր, իսկ ընդունելը՝ Մարդասերի գործը: Եվ ինչպես որ ամբողջ Իսրայելի համար ողբալից աղաչանքներով աղաղակում էր Հորը, որպեսզի կորստյան չմատնվի ընտրյալ ազգը, այդպես էլ այս տասներկուսին էր հանձնում Սուրբ Հոգուն, որպեսզի հաստատուն մնան փորձության ժամին: Իսկ Պետրոսն Իր Տիրոջ հանդեպ ունեցած գթառատ սիրուց անփորձաբար խիզախեց, բայց Տերը նրան նախապես ասաց, թե ինչ է լինելու: Եվ Պետրոսը, փորձություններից իմաստնացած, դառը արտասուքներով և մեծ զղջումով վերստին իրեն հաստատեց աշակերտության մեջ: Եվ նա, ով փորձության ժամին ավելի կակուղ էր, քան մոմը, հետո ադամանդից ավելի կարծր երևաց:

Օ՜, որքա՜ն մեծ եղավ քահանաների, քահանայապետի և նրանց հետ եղող բոլոր մեծամեծների հանդգնությունը. մինչ ամեն բանի Տերը բոլորի համար ողբալով աղաչում էր, որ չմատնվեն անբժշկելի հարվածներին, նրանք հոգ անգամ չէին անում կատարվելիքի մասին, այլ սոդոմայեցիներից առավել հանդգնությամբ հարձակվեցին Նրա վրա: Հիրավի ասացի, թե ավելի մեծ չարությամբ, քան սոդոմայեցիները, որովհետև Սոդոմում հրեշտակները ոչ մի նշան չարեցին, այլ Սոդո՛մն ահագին նշան դարձրին բոլոր տեսնողների համար՝ արժանի հատուցում տալով անարժաններին: Եվ եթե հրեշտակներին անարգելու համար երկրի բոլոր մասերն ընդունեցին աստվածային հարվածները, երբ հրեշտակների Տերն էր կրում մահվան անարգանքները, ո՞վ կարող էր հատուցել այդ դատաստանի վրեժը. ոչ միայն թանձրացած մարմինները, որոնք այստեղ տեսանելի կերպով են ընդունում մահվան վճիռը, այլ նաև անապական հոգիները մարմնի հետ կկապվեն և կնետվեն գեհենի ան-

չեջ հրի մեջ, որ այրվեն առավել սաստկությամբ, քան սոդոմայեցիների երկիրը:

Եվ քահանայապետն ու ամբոխը հասան, ասում է, առանց պատկառելու մեկնեցին իրենց ձեռքերը, բռնեցին Հիսուսին, կապեցին Նրան և առան տարան քահանայապետի տուն: Կապեցին Նրան, Ով եկավ՝ արձակելու մեզ անլույծ կապանքներից. տուն տարան Նրան, Ում երկինքն ու երկիրը չեն կարող տեղավորել. հրեղեն բնությունը մտել էր փայտյա տան մեջ և չէր այրում տունը. Նա, Ով հուր էր իջեցնում նրանց գոհերի վրա և ընդունում դրանք՝ մեղքերի քավության համար, Ինքը՝ Ընդունողը, ում մեծության առիթ սերովբեներն ու քերովբեները թևերով ծածկում էին իրենց ոտքերն ու երեսները, կանգնած էր գոհ մատուցողի առջև:

Տաճարի Տիրոջը տաճարի համար էին պահանջում: Ո՛վ մեծ ոճիր. ի՞նչ չար բան ասաց. «Քանդեցե՛ք այդ տաճարը, և ես երեք օրվա ընթացքում կշինեմ այն» (Հովհ., Բ 19): «Մենք լսեցինք», – ասացին (Մարկ., ԺԴ 58): Ո՛վ քահանաներ, մե՞ծ է արդյոք այդ հանցանքը: Ասում են. «Զափազանց մեծ. կշինեմ, ասաց, ոչ թե՝ կավերեմ»: Ինձ թվում է՝ դուք երեք օրում չեք կարող ավերել, ոչ էլ բազում տարիներում: Բայց լավ ասաց, թե՝ քանդեցեք, քանզի սկզբից իսկ միայն քանդել գիտեք և ոչ շինել: Քանդեցե՛ք արդարների ազգը, և ես ձեր մեջ ուրիշ արդարներ կպատրաստեմ, քանդեցե՛ք մարգարեությունը ձեր միջից, և ես ուրիշ մարգարեներ կհանեմ՝ ձեզ ճշմարտությունը քարոզելու, անարգեցե՛ք վեմը, որ անկյան գլուխն էր, և ես տասներկու այլ վեմեր կկանգնեցնեմ ձեր երկրում, որպեսզի կառուցեմ ձեզ անշարժ հիմքի վրա, բայց չեք կամենում: Իսկ արդ, ո՞րն է մեծ. «Քանդեցե՛ք այդ տաճարը, և ես երեք օրում կկանգնեցնեմ այն»: Մի՞թե երկինքը առանց օրվա չկանգնեցրի, երկիրն առանց ժամի չհաստատեցի և գոյություն ունեցող ամեն բան վեց օրում չզարդարեցի: Դուք այդ տաճարը քառասուն տարում կառուցեցիք, ես քառասուն օրում մարդ ձևավորեցի արգանդում. դուք այդ տաճարը քառասուն տարում կառուցեցիք, ես ձեզ քառասուն տարի կառուցեցի անապատում, և չկառուցվեցիք: Արդ, որովհետև քառասնամյաներդ չխրատվեցիք և չկառուցվեցիք այն Վեմի վրա, որ անապատում ձեզ ջուր տվեց, քանդեցե՛ք այս տաճարը, որ տեսնում եք՝ ինձ, և ես երեք օրում առանց ձեռքի կշինեմ սա, որը եթե քանդել կամենաք, չե՛ք կարող: Իսկ այդ տաճարը, որը շինեց Սողոմոնը, կամենում եք թե ոչ, պիտի քանդվի ձեր թշնամիների ձեռքով, մանավանդ որ ես դառնապես ողբացել եմ տաճարի համար, իսկ դու, ո՛վ քահանայապետ Կայիափա, ո՛չ քո կամքով ես մարգարեացել. «Կգան, ասացիր, հռոմեացիները ու կվերացնեն մեր ազգը, սրբավայրն ու մեր օրենքները» (տե՛ս Հովհ., ԺԱ 48-49), որ և պիտի կատարվի ոչ շատ օրեր անց. դու պիտի տեսնես այդ»:

Այս ասելով՝ բարկացրեց քահանայապետին, մանավանդ երբ վեր՝ դեպի բարձրագույնը նայել տվեց նրան՝ ասելով. «Այժմ քո առջև եմ բերվել կապանքների մեջ և մեծ անարգությամբ, պիտի տեսնես ինձ երկինք բարձրացած և Աստծու զորության աջ կողմում՝ իմ հայրենի աթոռին նստած» (տե՛ս Մարկ., ԺԴ 62): Այս լսելով՝ քահանայապետը պատռեց իր պատմուճանը, երկու կես արեց այն, որպեսզի ամբողջ ազգին զայրացնի ու հանի Հիսուսի դեմ: Բայց թերևս հիրավի պատռեցիր պատմուճանդ, քանզի դրա հետ պատռվելու էր նաև քահանայությունը: Սակայն արժան էր օձիք պատռել այն մեծ չարիքի պատճառով, որ գործվելու էր այդտեղ: Կատարվեց տերունական առակը. «Ոչ ոք հին գինին չի լցնի նոր տիկերի մեջ, ապա թե ոչ՝ նոր գինին

հին տիկերը կպայթեցնի» (Մատթ., Թ, 17, Մարկ., Բ 22, Ղուկ., Ե 37). ահա կաթեց փոքր-ինչ զորություն՝ դույզն-ինչ նոր գինի, և հին տիկը երկու մասի բաժանվեց: Իսկ ի՞նչ մեծ բան էր մարդու Որդու՝ Հոր աջ կողմում նստելու մասին ասվածը: Ո՛վ հնացած կուրություն, որ չի տեսնում նույնիսկ իր ոտքերի մոտ ընկածը. [չէ՞ որ] սաղմոսն հանապազ ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ» (Սաղմ., ՃԹ 1): Ո՛չ նստածին է վեր կացնում և ո՛չ էլ այնտեղից հանում է Նրա ոտքերին պատվանդան դրված թշնամուն, որ քեզ պես ընդդիմացավ: Եվ եթե քեզ դժվար է թվում մարդու՝ Աստծու Որդի լինելը, ինչո՞ւ [պատմուճանդ] չպատռեցիր ավելի առաջ, երբ լսեցիր Սուրբ Հոգուն, որը Մովսեսի բերանով ասում էր. «Իմ անդրանիկ որդին Իսրայելն է. արձակի՛ր նրան, որ պաշտի ինձ: Իսկ եթե չուզենաս ազատ արձակել, կսպանեմ քո անդրանիկ որդուն» (տե՛ս Ելք, Դ 22-23):

Արդ, քե՛զ համար կամեցավ, որ Աստված եգիպտացիների թագավորի անդրանիկ որդուն սպանի, որ դու լինես Աստծու անդրանիկ որդին. իսկ դու հայհոյում և սպանո՞ւմ ես Աստծու Միածին Որդուն, և բարկանո՞ւմ ես, թե ինչու է նստեցնում Իր աջ կողմում:

Այս ընդդիմությունը նաև դևերի ամբարշտությանն է գերազանցում, պատերազմում Աստծու, մարդկանց և Սուրբ Հոգու դեմ միաժամանակ: Տերն ինձ ասաց. «Իմ որդին ես դու, և ես այսօր ծնեցի քեզ» (Սաղմ., Բ 7): Եվ ապա իշխանությունը տվեց ձեռքը ոչ միայն այն ազգի համար, որից ծնվեց, այլ երկրի բոլոր ծագերի բոլոր հեթանոսների համար:

Արդ, քանի որ ատեցիր ու մերժեցիր խաղաղությունը և քեզնից հեռացրիր այն, աշխարհական պատերազմով

խմբվեցիր երկրի վրա, որ նախապես փողերով ազդարարում էիր ամսագլուխներին, քո շաբաթներին, լուսնի լրվելու և պակասելու ժամանակ և քո բոլոր երևելի տոներին, պարզ է, որ սկզբից իսկ ինձ հետ պատերազմի մեջ էիր մտել: Արդ, դու, որ կռվում էիր բոլոր երևելիների դեմ, բոլորը թող քեզ հետ պատերազմեն. թող փողը լռի, շաբաթը լուծվի, թող լուսնի լրումները քեզ հեթանոսների երկրում երևան, այլևս չտեսնես հրեշտակների երևումները, որովհետև այս բոլորը քեզ վրա հեղվել էին իբրև պատիվ, մեծարանք ու փառք: Արդ, Սուրբ Հոգին թող ելնի ու հեռանա քեզնից, որպեսզի այլևս մարդարե չմարգարեանա քո մեջ, որովհետև ասացիր, թե՝ հայհոյեց: Դու համարձակվեցիր այդ ասել, և բոլորը քո սուտ խոսքերին վկայություն տվեցին, թե՝ մահապա՛րտ է (Մատթ., ԻԶ 66):

Իսկ արդ, ո՛վ նզովյալներ, ո՞ր մահապարտին են բռնցքահարում և երեսին թքում: Բռնցքահարում ես Նրան, որ գլուխդ պատվական ակներով զարդարեց, թքում ես Նրա երեսին, Ով քեզ արարելիս քո մեջ կենդանության շունչ փչեց. որի մասին այն կույրը, շրջելով քաղաքի փողոցներում, աղաղակում է՝ հայտարարելով, թե՝ «Նա, ում Հիսուս են ասում, կավ շինեց թքով, ծեփեց իմ աչքերին և հրամայեց, որ լվանամ Սելոամում: Եվ տեսնում եմ» (տե՛ս Հովհ., Թ 11): Կույրը լուսավորվեց, իսկ դու՝ լուսավորդ, կուրացար: Տեսնո՞ւմ ես տգետների հանդգնությունը և Աստծու անհամեմատելի համբերությունը. բոլորի Ազատիչն անօրենների կողմից բռնցքահարվում է և մեղավորներից թուք է ընդունում Իր դեմքին: Սա վեր է մարդկային բնությունից. Ով արարածներին արարեց՝ Նա՛ միայն կարողացավ տանել այս ամենը:

Քահանայապե՛տ, դարձյալ հարցնում եմ քեզ՝ արծաթը որտեղի՞ց տվեցիր մատնիչին. չէ՞ որ նախապես քեզ ասել

էի՝ մի՛ տուր. արդար արյունը երբեք չի գնվում արծաթով: Ահա այժմ քեզ վրա ես ընդունում երկուսն էլ:

«Երբ Հուդան տեսավ, որ Տիրոջը մատնեց մահվան դատաստանի, հույժ զղջաց և արծաթը վերադարձրեց քահանայապետներին ու ժողովրդի ծերերին և ասաց. «Մեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի»: Իսկ նրանք ասացին. «Մեր հոգը չէ, դո՛ւ գիտես»: Եվ նա արծաթ դրամները նետեց տաճարի մեջ և հեռացավ ու գնաց ինքն իրեն կախեց» (Տե՛ս Մատթ., ԻԷ 3-6):

Ո՛վ Հուդա, որքա՜ն վատ եղավ քեզ համար թողնելը քո ճշմարիտ Վարդապետին, ով ուսուցանում էր քեզ արդարության ճանապարհն ու ճշմարտության խոսքերը. ո՞վ սովորեցրեց քեզ հակառակ խոստովանությունը: «Մեղանչեցի, ասում է, որովհետև արդար արյուն մատնեցի»: Ո՞ր արդարը երբևէ սաստեց ծովին, և նրա ալիքները հանդարտվեցին, կամ երբևէ ո՞ր մարգարեին հնազանդվեցին դևերը, ինչպես Հիսուս Քրիստոսի անունով այն յոթանասունին (տե՛ս Ղուկ., Ժ 17): «Արդար արյուն մատնեցի» ասելու փոխարեն ինչո՞ւ չասացիր. «Աստծու Որդուն մատնեցի». թող ամաչեին Աննան ու Կայիափան ամբողջ ժողովրդի առջև: Արծաթը քահանաներին վերադարձնելու փոխարեն ինչո՞ւ Պիղատոսի մոտ չտարար, տաճարի մեջ նետելու փոխարեն ինչո՞ւ չնետեցիր ատյանում, երբ դատաստան էին անում. թող դատավորը կորստյան մատներ ժողովրդի մեջ ամենապատվավորներին և հանդիմաներ ու կշտամբեր քահանայապետներին, թե՝ «Անմեղ մարդուն արծաթով գնում և դատապարտում եք սուտ խոսքերով, ի՞նձ էլ եք ուզում մասնակից դարձնել ձեր ամբարշտությանը»: Դարձյալ՝ տուն գնալու և խեղդվելու փոխարեն գնայիր դատավորի մոտ, ճչալով և աղաղակելով ամբողջ բազմության առջև պատմեիր մեծամեծ գործերի ու հրաշքների մասին, որ գործում

էր քո Վարդապետը: Եվ եթե չլսեին քո խոսքերը, երանի՜ թե կանգնեիր խաչի առջև և Խաչվածի առջև ասեիր. «Մեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի»: Հայրը գթության և Տերը ողորմության, որ բոլորի Փրկիչն ու Ապրեցնողն է, չեկավ դատապարտելու մարդկանց, այլ արդարացնելու և ներելու հանցանքները բոլոր նրանց, ովքեր դառնում են դեպի Խաչվածը: Քո մեղքը մեծ չէր Աստծու գթությունից, որ բարձր ձայնով աղաղակում էր և ասում. «Եթե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ և խմի կենդանի ջուրը՝ միաժամանակ [մեղքերի] թողության և անմահության համար» (տե՛ս Հովհ., Է 37): Մի՞թե աշխարհի մեծ մեղքերի համար Իր մեծ արյունը չի հեղում երկրի վրա և մի՞թե այդ սուրբ արյամբ չի գնում մեռյալներին ու ողջերին. համարի՛ր, թե դու էլ մեկն էիր նրանցից: Նա կարող էր այդ ամենն անել, միայն քե՞զ փրկության արժանի չհամարեցիր: Պարզ է, որ առաջին մարդուն պատվիրանազանց դարձնողը քեզ հագցրեց սև կուրությունդ, որի պատճառով էլ մոլորվածիդ հոգում չծագեց Աստծու Որդու շնորհի ճառագայթը, ուստիև ընկած մնացիր և ժառանգեցիր խեղդող դառնությունը:

Ապա ուրեմն Սուրբ Հոգին արդարորեն է Դավթի բերանով ողբալով ասում. «Ո՛վ իմ օրհնության Աստված, մի՛ լռիր, քանզի մեղավորի բերանը՝ բերանը նենգավորի, բացվեց ինձ վրա: Խօսեցին իմ մասին նենգամիտ լեզվով և ատելության խոսքերով պաշարեցին ինձ՝ հանիրավի մարտնչելով իմ դեմ, բայց ես աղոթքի կանգնեցի» (Սաղմ., ՃԸ 2-4): Այս սաղմոսը չարությամբ և անեծքով մատնիչի մասին ասվեց. և Տերը մեծ համբերությամբ խաչելության ժամանակ կատարեց այն: Եվ քանի որ Անմեղին մահվան դատապարտեց, նրա վրա կատարվեց այն խոսքը, թե՝ «Ով հայհոյի Սուրբ Հոգուն, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում,

և ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ., ԺԲ 32, Մարկ., Գ 29, Ղուկ., ԺԲ 10), ինչպես որ եղավ նրան: Քանի որ աշակերտակիցները և քահանաները բարկացած էին, իսկ նրա ընտանիքը՝ հուզմունքի մեջ, ոչ ոք չչտապեց փնտրել անգտնելիորեն կորածին, ոչ ոք չիջեցրեց նրան չար կախաղանից. նրա փորը ուռեց, որովայնը դուրս թափվեց, բոլոր ոսկորները ցիրուցան եղան դժոխքում: Շան նման մեռավ և լեշի նման քարշ տրվեց, դատարկաձեռն դուրս եկավ վաստակից, և ջնջվեց նրա անունը կենաց գրքից (հմմտ. Սաղմ. ԿԸ 29):

Իսկ քահանայապետներն ու ժողովրդի ծերերը առան արծաթն ու ասացին. «Արժանավոր չէ դրանք պահել գանձարանում, որովհետև արյան գին են»: Մտածեցին և բրուտի մի ագարակ գնեցին: Եղո՛ւկ քահանաների մեծ անմտությանը. արժան էր տաճարից տալ այդ արծաթը, իսկ ընդունել արժան չէ՞ր. այդ արծաթը չպղծվեց այժմ, այլ շատ ժամանակ առաջ՝ դեռևս Երեմիա մարգարեի օրերին. «Առա, ասում է, երեսուն արծաթը՝ գինը Վաճառվածի, որին գնեցի Իսրայելի որդիներից, և տվեցի այն բրուտի ագարակի համար» (տե՛ս Երեմ. ԼԲ 25, 44, Մատթ., ԻԷ 9): Որպեսզի չկարծեք, թե մարդկային է այս միտքը, մարգարեն ասում է. «Ինչպես Տերը ինձ հրամայել էր» (Եզեկ. ԻԴ 18): Ահա երևում է, որ դուք սատանայի ծնունդներ եք, որովհետև մշտապես ձեր հոր գործերն եք կատարում (հմմտ. Հովհ., Ը 44): Ոչ թե պիղծ էր արծաթը, այլ դո՛ւք պղծեցիք դրա սրբությունը:

Պիղծ էր այլազգի Գողիաթը և պիղծ զենքերով կամենում էր կոտորել Իսրայելը, իսկ Աստված Դավթի ձեռքով կործանեց նրա հպարտությունը, որում սատանան էր բնակվում, նույն զենքով կտրեց հսկայի գլուխը, և սուրը, որով կտրեց, ոչ միայն պիղծ չհամարվեց, այլև խիստ

սուրբ, և տվեց այն Աբիաթար քահանայապետին, որը դրեց այն սեղանի տակ՝ պահարանում՝ Աստծուց նվիրված [համարելով] հաղթությունը և ո՛չ մարդուց, և սեղանը չպղծվեց: Սողոմոնը տաճարը կառուցեց ո՛չ հեթանոսական մտքի զորությամբ և կռապաշտ Խիրանի օգնությամբ, ուստի և Հեզաբելը նզովելով մոլորեցրեց Իսրայելը: Դարձյալ՝ որտեղի՞ց նորոգեց Զորաբաբելը տաճարի գույնը, հայտնի է բոլորին: Քանի որ վերադառնալիս հարվածեցին շատ ազգերի և իրենց գերիների ավարով պատրաստեցին ավերումը տաճարի, որի մասին և Անգե մեծ մարգարեի բերանով [Աստված] ասում է. «Այս Տան վերջին փառքը կլինի ավելի մեծ, քան նախկին փառքը» (Անգ. Բ 9): Եվ որպեսզի ընկած դիակների կողոպուտը պիղծ չհամարեին, Զաքարիան ասում է. «Այն օրը նույնիսկ ձիերի սանձերի վրա գրված պիտի լինի՝ «Սրբություն՝ նվիրված Տիրոջը» (Զաք., ԺԴ 20): Այն գործով կատարվեց Երուսաղեմում, երբ Հոսեդեկի որդի Հեսու մեծ քահանայի և Սաղաթիելի որդի Զորաբաբելի օրոք կոտորեցին տասներկու հազարին:

Արդ, ոչ թե արժան չէ այդ արծաթն ընդունել գանձարանում, այլ [արժան է] ամենասուրբ տաճարից հանել ձեզ բոլորիդ, որ պղծեցիք ոչ միայն դրա արծաթը, այլ նաև Մովսեսի օրենքը՝ չընդունելով օրենքը Լրողին: Այդ պատճառով էլ ձեզ մեղադրում են ոչ միայն տաճարի սպասքները, այլև երկինքն ու երկիրը իրենց բոլոր զարդերով:

«Եվ նրան կապանքներով տարան, ասում է, Կայիափայի տնից Պիղատոսի մոտ: Բայց իրենք ապարանք չմտան, որպեսզի չպղծվեն» (տե՛ս Հովհ., ԺԸ 28):

Որտե՞ղ է ձեր սրբությունը, քահանանե՛ր, սուրբ տաճարը պղծեցիք Վաճառվածի գնով, ձեր և ձեզ մոտ գտնվողների անձերը սուրբ արյան հանձնառությամբ պղծեցիք, այժմ ինչո՞ւ չեք մտնում ատյանի տունը: Եթե դատաստանն

արդարությամբ լինի, Նա մահվան չի արժանանա, և դուք կփրկվեք արդար արյունից, իսկ այն տեղը, որի հատակին դիպան Նրա սուրբ գարշապարները, եթե ուներ անիրավության աղտեր, արդար դատաստանի միջոցով սրբված ու մաքրված կլինի ամբողջ տան և ատյանի հետ միասին: Իսկ եթե խորշում եք դատավորից՝ իբրև չթլփատված հեթանոսից, ահա նա դուրս է գալիս, ձեզ մոտ կանգնած՝ առանց միջնորդի խոսում է սուրբ կարծված քահանայապետներիդ հետ: Բայց ինձ թվում է՝ ումից դուք խորշում եք, նա նախապես իմացել է ոչ միայն ձեր պղծության, այլ նաև ձեր մեծ անիրավության մասին, որովհետև գիտի, որ նախանձից մատնեցին Նրան, որի համար էլ երկու և երեք անգամ կրկնում, բազում անգամ հարցնում է. «Ի՞նչ չար բան է արել Սա, որ մատնում եք մահվան դատաստանի» (Մատթ., ԻԷ 23): Իսկ երբ ոչ մի պատասխան չգտան, մեղադրեցին, թե Գալիլիայից մինչև Երուսաղեմ մեծ խռովության պատճառ է դարձել և Ինքն Իր մասին ասում է, թե թագավոր է:

Ասում է. «Երբ Պիղատոսը տեսավ, թե նրանք չեն մտնում, ինքը դուրս ելավ նրանց մոտ և մտքում մեղադրելով նրանց՝ ասաց. «Գիտեմ, որ քահանաներ ու քահանայապետներ եք, սուտ խոսել չգիտեք և երբեք չեք ստում, որովհետև սուրբ եք: Անգամ ինձ մոտ՝ ներս չմտաք, որ չպղծվեք: Արդ, ասացե՛ք ինձ՝ Նա ի՞նչ չարիք է գործել, որ թողեցիք ձեր այնքան պատվական տոնի ուրախությունը և իբրև արդարության նախանձախնդիրներ՝ ուզում եք վրեժ լուծել, ինչպես մի չարագործից: Գրեք և տուե՛ք ինձ ձեր ամբաստանությունը, որպեսզի ըստ Նրա գործերի դատաստան անեմ»: Բոլորը միաբերան ասացին. «Մենք գիտենք, որ մահապարտ է ըստ մեր օրենքի»: Բարկացավ դատավորը և ասաց. «Ինձ թվում է՝ դուք ատում եք ճշմարտությունը: Ես ինչպե՞ս կարող եմ սպանել հանցանք չգործած անմեղ մարդուն: Արդ, առեք և դատեք՝ ըստ ձեր օրենքի, ինչպես որ սովոր եք» (Հովհ., ԺԸ 31): Քահանայապետները պատասխանեցին ու ասացին. «Մենք վկայում ենք, թե պիտի մեռնի, որովհետև խռովարար է և Իր մասին ասում է, թե թագավոր է»: Դատավորը դարձյալ հարցրեց. «Ինչպիսի՞ խռովարար է. ավազակի՞ պես հափշտակող, թե՞ բռնությամբ՝ իբրև թագավոր, թե՞ հափշտակող և ավարառու: Ո՞ր լեռներում էր բնակվում և ո՞ր ճանապարհներն էր պաշարում, ո՞ր ճանապարհորդին կողոպտեց, ո՞ր գավառն ավերեց՝ ավազակությամբ հարձակվելով, ի՞նչ շատ գերի տարավ՝ մա՞րդ, թե՞ անասուն: Բերե՛ք գերվածների մնացած ընկերներին, որպեսզի նրանցից նույնպես ճշմարտությունն իմանամ: Եվ եթե մեկի գանձերը բռնի առավ, ինչո՞ւ նախապես չբողոքեցիք ինձ: Եվ եթե ինչպես ասում եք՝ «թագավոր եմ» ասելով՝ խռովքի է մատնում ձեզ և արգելում կայսրին հարկ տալ, ցո՛ւյց տվեք ինձ՝ ովքեր են Նրա սպասավորները և կամ քանի զինվոր ունի, ինչպիսի զենքեր, որոնցով կարող է ընդդիմանալ հռոմեացիներին՝ հանելով ձեզ կայսեր ծառայությունից, ինչպես ասում եք»:

Երբ քահանաները տեսան, որ բերեց բոլոր կողմերը և արգելք դրեց նրանց անպատասխանատու (վարմունքին), սկսեցին անամոթաբար խոսել դատավորի հետ և ասացին. «Ո՛վ քաջ դատավոր, ինչո՞ւ չես հավատում արդարներիս. դու մեզ պես տեսար ատյանում, արժան չէ, որ դու այդպիսի խոսքերով մեծ քննություն անես, այլ արժան է միայն, որ հավատաս մեզ և շուտափույթ կատարես, ինչ որ ասում ենք»: Երբ Պիղատոսը լսեց այդ, բարկացավ նրանց անմիտ պատասխանի վրա և մտքում արհամարհեց քահանայապետին: Ապա մտավ Հիսուսի մոտ ու հարցրեց.

— Դու իսկապե՞ս հրեաների թագավորն ես:

Հիսուս պատասխանեց և ասաց.

— Դու քեզնի՞ց ես այդ ասում, թե ուրիշներն իմ մասին քեզ ասացին (Հովհ., ԺԸ 34):

Պիղատոսն ասաց.

— Ես հրեա չեմ, Քո ազգակիցնե՛րը Քեզ իմ ձեռքը մատնեցին:

Հիսուս պատասխան տվեց և ասաց.

— Իսկապես թագավոր եմ ես, բայց ոչ այս աշխարհից:

Դատավորն ասաց.

— Եթե այդպես է՝ Դու թագավոր ես:

Եվ Պիղատոսը դուրս ելավ հրեաների մոտ և նրանց ասաց.

— Իմացե՛ք բոլորդ, որ ես Նրան մահվան դատապարտելու ոչ մի պատճառ չեմ կարողանում գտնել: Դուք սովորություն ունեք այս տոնի առիթով մի բանտարկյալի ազատել. կամենո՞ւմ եք՝ ձեզ համար արձակեմ հրեաներիդ Արքային:

Բոլորը միաբերան աղաղակեցին.

— Ո՛չ Դրան, ո՛չ Դրան, այլ արձակի՛ր մեզ համար Աբբայի որդուն:

Իսկ Աբբայի որդին ավազակ էր: Երբ Պիղատոսն այդ լսեց, հույժ տրտմեց ժողովրդի կատաղության պատճառով:

— Տեսնում եմ ձեզ ամեն բանում ճշմարտությունից հեռացած. մեղադրում եք իբրև խռովարարի, բայց ոչ մի վնասի մասին չկարողացաք վկայել, հայհոյում եք, թե Իրեն թագավոր է համարում, բայց Նրա իշխանական ոչ մի գործ ինձ ցույց չտվեցիք: Իսկ այս ավազակին, որ երկար ժամանակ բազում չարիքներ է գործել, որ դաշտում ճանապարհներն էր պաշարում, մարդկանց էր սպանում, ճամփորդների ճանապարհն էր խափանում, հովիվներին էր հալածում լեռներից, ճանապարհներ էր կտրում, չինությունների պատերն էր ծակում, հարուստների դանձերն էր տանում, աղքատներին անողորմաբար լաց լինել էր տալիս, Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում, դատավորներից չէր պատկառում, տանջանքներից ու տուգանքներից չէր վախենում, բոլոր պղծություններն իրար խառնում, բոլոր չարիքները գործում էր: Ես երկար ժամանակ է՝ փնտրում էի նրան և մեծ չարչարանքներով հազիվ բռնեցի: Արդ, արժա՞ն է այսպիսի մի տոնի ժամանակ այդպիսի մարդու խնդրել:

Քահանայապետները պատասխանեցին.

— Որովհետև մեծ տոն է, կամենում ենք, որ մեծ մեղքեր ունեցող մարդ փրկվի այս մեծ տոնին:

Պիղատոսը պատասխանեց քահանայապետներին.

— Որովհետև այդքան մարդասեր եք և մեծ մեղքեր ունեցողի փրկությունն եք խնդրում այս մեծ տոնին, արձակեմ ձեզ համար Քրիստոսին. ինչպես դուք եք ասում՝ Նա բոլորից ավելի մեղավոր է:

Բոլորը հիացան՝ լսելով այս, և նրանց բերանում պատասխան չգտնվեց, դրդեցին հավաքված ամբոխին, բարձր ձայնով աղաղակեցին և ասացին.

— Ո՛չ Դրան, ո՛չ Դրան, մեզ համար Աբբայի որդուն արձակիր:

Պիղատոսը դարձյալ ասաց.

— Իսկ ի՞նչ անեմ հրեաների Արքային:

Նրանք նախկինից ավելի բարձր ձայնով ասացին.

— Վերացրո՛ւ մեր միջից, խա՛չ հանիր:

Եվ մինչ դատավորը ատյանում էր, նրա կինը մարդ ուղարկեց նրա մոտ և ասաց. «Քո և այդ Արդարի միջև ոչինչ չկա: Այս գիշեր Նրա պատճառով շատ բաներ կատարվեցին ինձ հետ» (Մատթ., ԻԷ 19): Դատավորը մարդ ուղարկեց կնոջ մոտ և ասաց. «Ի՞նչ անեմ. քահանայապետներին և քահանաներին կարող եմ պատասխանել, բայց բազմութ-

յան աղաղակի դեմ դուրս գալ չեմ կարող: Այս մարդուն ոչ միայն չեմ կարող օգնել, նաև հույժ վախենում եմ. գուցե ակամայից խառնվեմ արդար արյանը: Դու գիշերային տեսիլքիդ մեջ տեսնելով ես զարմացած ու զարհուրած Սրա արդարությամբ, բայց ես ցերեկով իսկ սարսափում եմ Սրա պատճառով: Քանզի ինչպես որ մարդն է առավել իր ստվերից, այնպես առավել է Սրա իրական տեսքը գիշերային արհավիրքից»:

Երբ դատավորը տեսավ, որ ողջ բազմությունը միաբերան աղաղակում է. «Խա՛չ հանիր», և արքունիքում կատարված դեպքերի համար հայհոյում են նաև իրեն, շտապ ջուր խնդրեց, լվաց ձեռքերը և իրեն ձեռնպահ հայտարարեց՝ ողջ ամբոխի, քահանաների ու քահանայապետների առջև ասելով, թե.

– Իմացե՛ք, հրեանե՛ր, ես անպարտ եմ արյունից, որ ուզում եք հանիրավի հեղել:

Եվ նրանք միաբան հանձն առան՝ ասելով.

– Եթե արյունն արդարի է, թող մեր գլխին լինի, եթե մեղավորի է, թող լինի մեր և մեր որդիների գլխին, իսկ եթե Աստծու Որդու արյունն է, թող մեր, մեր որդիների և մեր որդիների որդիների վրա լինի:

Այնժամ արձակեց նրանց համար Բարաբբային՝ Աբբայի որդուն, և Հիսուսին տվեց նրանց ձեռքը, որ խաչ հանեն:

Փա՜ռք, Աստծու անսահման բարերարությանը և Նրա սիրո անկշռելի մեծությանը, որ անցնում է ոչ միայն իմաստուն մարդկանց, այլ նաև վերին զվարթունների մտքից ու խորհուրդներից: Նա՝ երկնային Հիսուսը, ով երկիրն է հերկում, այլ մարմին կակղեցնում և սնում բույսերին, երկրացավ և կամավոր կերպով եկավ հերկվելու և կակղացվելու, և Իր մարմինը վերցրեց մեր բոլոր չարիքների սերմերը: Պիղծ և հայհոյող բերաններից Իր սուրբ երեսին ընդունեց

պիղծ թուքը, Իր ամենասուրբ թքով բացեց մեր հոգիների ու մարմինների կույր աչքերը: Ծառաների ծառայից ապտակ ընդունեց և ազատեց մեզ աներևույթ ապտակների հարվածներից: Ազատն ու բոլորի Ազատիչն Իրեն ապտակների տվեց, որպեսզի Իր ազատությամբ ազատի մեզ անարժան ծառայությունից, որին կամովին հանձնեցինք մեզ և նույն կամքով փշաբույս դարձրինք ոչ միայն երկիրը, այլ նաև մեր մարմինները, մարմնից առավել՝ հոգին: Նա արմատախիլ արեց մեր չար փշերը և չթողեց այստեղ՝ երկրում, այլ բոլորեց, իբրև պատվական պսակ կազմեց և դրեց Իր գլխին:

Օ՜, որքա՜ն է մարդկային չարությունը, և որքա՜ն է Աստծու բարերարությունը:

Նա, Ով քահանաներին պսակեց ոսկով, զմրուխտով և բազում այլ պատվական ակներով, նրանց զարդարեց ոսկեհուռ պատմուճանով, զանգակաձայն հնչյուններով, զարմանալի վակասով. այս ամենի փոխարեն տեսնում եմ ձախողակի հատուցումը, որովհետև ոչ միայն փշե պսակ դրեցին գլխին, այլև Նրա աջ ձեռքը տվեցին անարգանքի եղեգը: Բայց առավել շատ զարմանում եմ այն բանի վրա, թե ինչպե՞ս կարող է եղեգը անարգանքի համար լինել. ինձ թվում է՝ այդ եղեգը չէր բուսել այդ օրերին, այլ շատ վաղուց՝ դեռ Եսայի մարգարեի օրերին. «Առկայծող ճրագը չի մարելու, ասում է, և ջախջախված եղեգը չի ջարդվելու, մինչև արդարությամբ դատաստան տեսնելը» (տե՛ս Եսայի, ԽԲ 3): Բոլորին հայտնի է այն, որ լույսով են ուղղվում դատաստանները, և եղեգով է հաստատվում գիրը: Իսկ արդ, եթե առկայծող ճրագը Հովհաննեսն էր (և իսկապես նա էր), որքան էլ կամեցան մարել, նա արեգակի ճառագայթներից առավել պայծառ արձակեց իր լույսի շողերը: Արդ, լա՜վ եք կատարում ձեր մարգարեների՝ նախապես ասած խոսքերը

և ձեր անձերում չարաչար ընդունում դատաստանի վճիռը: Եղեգով մարդիկ գրվում և ազատ են արձակվում ծանր ստրկությունից, իսկ դուք ահա երկրի վրա բուսած եղեգով աստվածային ձեռքով չջնջվող թանաքով գրվում և երկնավոր ազատությունից արձակվում եք դեպի սատանայական ծառայություն, ապա ուրեմն իրավացիորեն եք առնում եղեգը Նրա ձեռքից և խփում Նրա գլխին, որպեսզի երևա, որ ինքներդ ձեզ հրաժարեցնում եք այդ Գլխից, որ արքայության մեջ բոլոր սուրբերին պիտի պսակի անթառամ պսակներով:

Դարձյալ ասում է. «Նրան լեղի խառնած գինի տվեցին խմելու, և երբ համտեսեց, չկամեցավ խմել» (Մատթ., ԻԷ 34): Սա նույնպես առավել մեծ սիրո վկայություն է երևում. Եգիպտոսից տեղափոխված այգին Նա տնկեց Քանանում, այնտեղ շատ այգիներ արմատախիլ անելուց հետո, պարսպեց օրենքով, ամրացրեց մարգարեներով, նրա մեջ իբրև վերակացու՝ թագավորներ և իբրև առաջնորդ՝ քահանաներ ու քահանայապետներ դրեց, ուխտեր ու զոհաբերություններ, Աստծուն մատուցվելիք նվերներ սահմանեց գիշեր և ցերեկ: Երբ պտուղների ժամանակը եկավ, եկավ այգու Տերը՝ նրանցից ընդունելու և ճաշակելու վայելուչ գինին (գինին չփոխեց իր անուշ բնությունը, քանի որ այգին աստվածային Աջով էր տնկվել), և գինու հետ խառնած լեղի տվեցին խմելու: Լեղին կատարելապես դառն է. այս բերքը աստվածային տունկից չէ, այլ գյուտը չարասեր մարդկանց և նախանձոտ կամքի, որոնք խառնել են կամենում անխառնը. Աստծու գործի մաքուր բնությանը խառնել կամեցան իրենց մեղքերի դառնությունը: Աստվածությունն հանձն չառավ [խմել] այն, որովհետև լեղին քիչ չխառնեցին, այլ անչափ թանձրացրին. այդ մասին Դավիթ մարգարեն կանխավ ասում էր ողբալով. «Կերակուրի տեղ

ինձ լեղի տվեցին, և երբ ծարավեցի, քացախ խմեցրին» (Սաղմ., ԿԸ 22): Որովհետև առատաձեռն եք չարություն գործելիս և գծուծ՝ բարեգործության մեջ, ձեր այդ կամքը չեմ կատարի: «Երբ համտեսեց, չկամեցավ խմել»: Որովհետև նրանք ուզում էին, որ եթե հնարավոր է, ամբողջ լեղին ուտի և խմի ամբողջ քացախը: Եվ եթե մեկը հարցնի՝ որտեղի՞ց գիտես աներևույթ կամքը, մանավանդ, որ այդ մասին գրված չէ, պատրաստությունից իմացիր. երբևէ ո՞ր մարդու կողմից մահվան ժամի համար իբրև մխիթարություն գտնվեց լեղին ու քացախը, այլ միայն սրանց կողմից, որոնց առաջնորդն ու վարդապետը նրանց հայրն էր՝ սատանան, որի հետ էլ նրանք ժառանգելու են [իրենց համար] պատրաստված տեղը երկու կողմերից:

Արդ, դատավորի կողմից ազատ արձակվելով՝ նրանց չնորհվեց Բարաբբան, որին արդար համարեցին: Քրիստոսի և երկու ուրիշ՝ ավելի չար ավազակների, որոնց գործերն իրենց չարությամբ ու դաժանությամբ ավելին էին, քան բոլոր մահվան դատապարտվածներինը, և որոնք պահվում էին դատավորի բանտում, խաչելության օրը համընկավ. մեկը՝ Նրա աջ, և մյուսը՝ ձախ կողմում, որպեսզի կանխավ գրված մարգարեությունից չպակասի ոչ մի բան:

Եվ Նրա հետևից գնում էր մեծ բազմություն՝ տղամարդիկ ու կանայք, քահանաներ ու քահանայապետներ, Օրենքի մեկնիչներ և ժողովրդի ծերեր, շտապում էին ականատես լինելու իրենց Կենարարի անարդ մահվանը: Մեծ էր միասին մոլորվածների ուրախությունը, որ ավազակների միջև պիտի խաչվի՝ հայհոյված երկրից և դատապարտված երկնքում:

Մարդիկ այնպիսի բնություն ունեն, որ երբ մեկին տեսնում են մեծ թշվառության ու չարաչար հարվածների մեջ, ծաղրուծանակի [ենթարկված] և անարդ մահվան դատա-

պարտված, իրենց ամբարիշտ մտքով կարծում են, թե Աստծու պատիժն է եկել հասել նրա վրա, սրտմտելով բարկանում են և պատժվողի տանջանքներն ավելացնող այլ դառը բաներ են հնարում: Այս անխոհեմությունը ծնունդն է կույր մտքի, որ գիտի միայն ժամանակավորը և չի տեսնում գալիքը, որ հեռացել է ճշմարտությունից և խոտորվել հանդերձյալ կյանքից, ինչպես որ եղավ կենսագյուտ վայրում. ընտրություն երկու կողմից. ոմանք վայր ընկան, ոմանք վեր ելան: Քանզի մինչ հայհոյում էին, նայում Նրա անարգանքին ու ծաղրուծանակին, կամենում էին նույն հայհոյանքը լսել նաև ավազակների բերանից, քանզի երբ մարդ դառնացած է տանջանքների, տառապանքների մեջ, ապրելու հույսը կտրած և անդառնալի մահվան դռանը մոտեցած, մանավանդ այնպիսի մահվան, որն ավազակներին էր սպասում, չի պատկառում անարգել իրեն դատողին, նաև հայհոյական խոսքեր ուղղել դեպ երկինք:

Բայց այժմ դու ե՛կ, բարձրացի՛ր լուսավոր տեղը, մերձեցիր տերունական փրկող խաչին և տե՛ս նոր ու չքնաղ գործերը, որ կատարվեցին: Երեք փայտ՝ կանգնած, և երեք մարդ՝ խաչված՝ հավասարապես կրում են նույն պատիժը, ոչ մեկը մյուսից ավելի լավ տեղում չէ, այլ մեկը մյուսից ավելի դժնդակ հարվածների մեջ: Այստեղ հույժ զարմանալով՝ հիանում եմ, թե որտեղի՞ց ավազակը ճշմարտության ջատագով դարձավ. պարզ աչքով չտեսավ ոչ մի զարմանալի բան, նախապես ոչինչ չգիտեր Տիրոջ ճշմարիտ վարդապետության մասին, իր գործե՞ը... արդար վաստակ չուներ, երկնային իմաստությունն հեռու էր նրանից, որովհետև մեղքերի ծնունդ էր և դառնության սնունդ, մի մարդ, որ իբրև խելագար՝ լքվել էր քաղաքից, մարդկանցից հեռացել, ցերեկվա լույսն ատել էր և սիրել էր գիշերվա խավարը, միացել էր քաղաքներ ավերող գողերին, հաղորդակից դարձել հափշտակող ավազակներին, որի խորհուրդները նենգ էին, իսկ գործերը՝ վատթար, որ ստահակների բարեկամն էր և լկտիների սիրելին, զգաստների համար ատելի էր և բարեսեր մարդկանց համար զազրելի, որ իր բազում հանցանքների համար բռնվել էր դատավորի կողմից և իր բազում հանցանքների համար էլ կրում էր իր պատիժը: Եվ այժմ ի՞նչ է խոսում. իր ընկերոջը սաստելով և իրեն դատապարտելով՝ հանդիմանում է քահանաներին, առավել ևս՝ քահանայապետներին: Ինձ թվում է՝ շատ խիստ է նախատում դատավորին, կշտամբում է ատյանին և ամոթանք է տալիս դատավորի իմաստուն աթոռակցին:

Նրա ընկերը, որ համամիտ էր հայհոյող ժողովրդին, սկսեց հեգնանքով ասել. «Եթե իսկապես Դու ես Քրիստոսը, փրկի՛ր Ինքդ Քեզ և մեզ» (տե՛ս Ղուկ., ԻԳ 39): Իսկ մյուսը բարձր ձայնով ի լուր ամբողջ ժողովրդի սկսեց հանդիմանել նրան և ասել. «Աստծուց չե՞ս վախենում. արժան է, որ մարդկանցից էլ ամաչեիր. մենք մեր արած գործերի համար արժանի հատուցում ստացանք, ինչո՞ւ է պատժվում Սա, որ ոչ մի վատ բան չի արել և երբեք որևէ մեկի կողմից չի մեղադրվել» (տե՛ս Ղուկ., ԻԳ 41): Նրա այս խոսքերից ամաչեց դատողների բազմությունը: Եվ ավազակն ասաց. «Տե՛ր Հիսուս, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայությամբ» (Ղուկ., ԻԳ 42):

Չգիտեմ այս մարդու անունը և ամաչում եմ նրան ավազակ ասել, որովհետև ավելի բարձր է ոչ միայն որևէ բարեգործից, այլև օրենքներն ու մարգարեները շատ լավ սովորած մարդուց:

Որտեղի՞ց է քեզ այդ, ո՛վ հափշտակող, ո՞ւր ես, ո՞ւմ ես տեսնում և ո՞ւմ հետ ես խոսում. խաչի վրա խաչված ես տեսնում և խոսում ես միաժամանակ Տիրոջ՝ Հիսուսի և Արքայի Որդու հետ, որ իշխում է արքայությանը և բոլորին

պարգևներ է բաշխում: Այժմ ի՞նչ տեսար. մի՞թե Իր խաչի փայտը քոնից ավելի կակուղ դարձրեց. չե՞ս տեսնում ժայռի վրա կանգնած քառակողմ խաչը, ոտքերն ու ձեռքերը երկաթյա մեխերով մեխված, անքակտելի կապանքներով ամրացված, տեգավոր զինվորներով շրջապատված: Քահանաներն հայհոյում են, քահանայապետները՝ մեղադրում, ծերերն անամոթաբար այպանում են, փարիսեցիները՝ լկտիությամբ ոտնահարում, ժողովրդի բազմությունը բարձրաձայն աղաղակում է՝ ասելով. «Ուրիշներին ապրեցրեց, Իրեն չի կարողանում փրկել» (Ղուկ., ԻԳ 35): Դու ինքդ էլ տեսնում ես անարգանքի եղեգը, լեղախառը քացախը՝ իբրև կերակուր և ըմպելիք, հագուստները հանված են, պատմուճանի վրա վիճակ է գցված, մերկ կախված է փայտից, գլուխը՝ փշով պսակված, երեսները թքով պատված, ծնոտն՝ ապտակված. և դու ասում ես՝ հիշի՛ր ինձ, երբ գաս Քո արքայությամբ:

Որտեղի՞ց ծագեց այդպիսի լույսը ավազակի հոգում: Հույժ զարմանում, և առավել հույժ սքանչանում եմ. Նազարեթում չէր եղել, [Նրա] ծնվելու մասին չէր իմացել, գալիլիացիների Կանա քաղաք չէր գնացել. սրան հարսանիքի ոչ ոք չկանչեց, թակույկաբուխ գինուց չէր խմել, նկանակածին հացից չէր կերել, կավածեփ կույրին չէր տեսել, սամարացի կնոջը չէր աշակերտել, անդամալույծի մահիճը չէր տեսել, Ղազարոսի դատարկ գերեզմանը չէր այցելել, գերգեսացիների երկրում դևերի բողոքը չէր լսել. ինչպե՞ս մեկ առ մեկ թվեմ. ինչպես որ ոչ մի բարի գործ չէր արել, այդպես էլ չէր տեսել մեր Տիրոջ գործած ոչ մի հրաշք ու չէր էլ լսել դրանց մասին: Այժմ այս բոլոր փառավոր բաների փոխարեն խաչի վրա տեսնում էր անարգված մի մարդու և Նրան Տեր Հիսուս, Աստծու Որդի, Հոր փառքի արքայության Իշխան էր խոստովանում: Աներկբա էր հավատը, անթերահավատ էր խնդրանքը: Ուստիև լսում է անսուտ պատասխանը. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ., ԻԳ 43): Կարճառոտ խնդիր, համառոտ պատասխան. խոսքով հավատաց, խոսքին պատասխան խոսք լսեց. այն ժամին ինչ որ իրենն էր, իրեն ամբողջովին հեղեց բոլորի Տիրոջ առջև՝ իբրև մարդ և աղքատ, բայց միայն՝ մեծացած հավատով: Իսկ Տերը ոչ իբրև մարդ, ոչ իբրև աղքատ, ոչ իբրև նախանձոտ և ոչ իբրև կես պարգև տվող, այլ իբրև բարերար և առատաձեռն Մեծատուն՝ աննախանձաբար շնորհում է ո՛չ թե պարգևի մի մասը, այլ ամբողջ հայրենի վայրը, ոչ այն, ուր մահվան ծառն է, այլ այն, ուր միայն կենաց ծառն է, ոչ այն անցնակապատ վայրը, ուր սողաց մտավ օձը, այլ այն, որ Ինքը՝ Աստված, Իր նիզակի սուր տեգով պարսպեց հրեղեն շրջանակով, որ պահպանում էր քերովբեն ինքը, որի ցանկապատը չկարողացավ ճեղքել արդարներից և ոչ մեկը՝ ո՛չ Աբրահամը, ո՛չ Իսահակը, ո՛չ Հակոբը, ո՛չ Մովսեսը՝ օրենքով և ո՛չ մարգարեները՝ քարոզությամբ, ո՛չ քահանաները՝ պատարագով և ո՛չ զևատացիները՝ իրենց պաշտամունքով, ո՛չ ուխտավորները՝ ուխտերով, ո՛չ ճշմարիտ հայրերը և ո՛չ արդար թագավորները, ո՛չ մարտիրոսների գնդերը և ո՛չ առաքյալների դասը, մանավանդ թե (ավելի բարձրներին ասեմ) ո՛չ հրեշտակները, ո՛չ հրեշտակապետները, ո՛չ աթոռները, ո՛չ տերությունները, ո՛չ պետություններն ու իշխանությունները դրախտի դուռը բանալ չկարողացան, այլ միայն՝ այս ավազակը:

Ուրեմն հիրավի ասվեց, թե՝ ավազակը բացեց դրախտի դուռը[41]: Այն ժամին տրտմել ու սգում էին բոլոր արարածները. արեգակը թաքնված էր, լուսինը՝ խավարած, աստղերը ծածկված էին, ցերեկը հեռացած էր, և գիշերը՝ մոտեցած, վերինները զարմացած էին, և ներքինները՝ հիմարա-

ցած, աշակերտները՝ փախած, ծանոթները՝ հեռացած, բարեկամները՝ չարախոս, և մերձավորներն՝ անարգող. ամենքը լքած, ամբողջովին ետ քաշված, և միայն սա մոտեցած՝ խոստովանելու: Ո՛չ ծնունդից է սկսում և ո՛չ որևէ հրաշագործությունից բռնում, այլ բարձրանում է ախտական տեսակներից վեր, հասնում է աներևույթ արքայություն և ասում է. «Հիշի՛ր ինձ, երբ գաս Քո անչարչարելի թագավորությամբ»:

Ի՞նչ է այն գալուստը, որտեղի՞ց պիտի գա, ինչո՞ւ պիտի գա. ինչպե՞ս իմացար դու, ո՛վ ավազակ, պատմի՛ր մեզ. ընկեր եղար Մովսեսի՞ն. ահա դու Սինայից ավելի վեր բարձրացար և անմարմին տեսիլք տեսար. ինձ թվում է՝ Սուրբ Հոգին հանդիպեց քեզ, բոլորի Հորը տեսար դու, և այն, ինչ մեծ Պողոսը չկարողացավ բացատրել մեզ՝ պատրաստված պարգևները (տե՛ս Ա Կորնթ. Բ 9), դու առաջինը մտար և ժառանգեցիր դրանք:

Այո՛, ասում է, իսկապես այդպես է. որովհետև Տերն Ինքը առաջնորդեց ինձ և խոստացավ էլ. ոչ թե դրախտ ուղարկեց ինձ, որ օձը կրկին այնտեղից հանի, այդ պատճառով է ասում. «Ինձ հետ դրախտում կլինես»: «Ինձ հետ» ասելով՝ ո՛չ ժամանակավորը և ո՛չ անժամանակը, այլ ամբողջ հավիտենականը [ցույց տվեց]. Ինքը՝ Աստված միշտ իր հետ, միշտ հավատացած՝ իր հետ Աստված:

Եկավ չարչարվելու, որ չարչարվողին օգնական լինի: Առաջին ծառի առաջին պտուղը սպանեց առաջին մարդուն, իսկ խաչի առաջին Պտուղը Իր անձի մեջ սպանեց դեպի մահ առաջնորդողին, և մահվան մահի պահին խաչի զորությունից իբրև առաջին պտուղ ավազակը քաղվեց: Ո՛վ չարադև քահանաներ, ա՞յժմ էլ եք ծաղրում խաչը և խաչվածին անարգում. մինչ կամենում էիք անօրենների հետ սպանել Նրան, օրինավորներդ այդ անօրենի կողմից կշտամբվեցիք ու հանդիմանվեցիք, և անօրենը օրինավորներից բարձր դտնվեց. ոչ միայն ձեզնից, այլ նաև ձեր օրենքից:

Ինչո՞ւ. ոչ թե որովհետև տկար էր օրենքը, այլ դուք եք տկարացնում այն՝ չպահելով, որովհետև չէիք հավատում: Իսկ նա հավատով տեսավ օրենքն ու Օրենսդրին: Օրենքը տեսավ, քանզի կարիք ունեին հավատի և չէին դտնում: Տեսավ Օրենսդրին, որ եկավ՝ լրացնելու օրենքը և ոչ պակասեցնելու (տե՛ս Մատթ., Ե 17), միաժամանակ մոտեցավ, հավատով պատվեց օրենքը, քանզի խոստովանեց օրենքը Տվողին, մեծարեց Օրենսդրին, որովհետև Նրան Աստված և Աստծու Որդի, պարգևներ Բաշխող և արքայության Տեր ասաց:

Եղավ հավատի սկիզբ և օրենքը կատարող, Աբրահամի որդի և մարգարեների սիրելի, առաքյալների աշակերտակից, մարտիրոսների առաջնորդ, արքայության ժառանգորդ, կենաց դրախտի դռնապան, միաժամանակ սիրող և սիրելի Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Արդ, ինձ համար հույժ սիրելի է առաքյալի այն խոսքը, որ ասում է. «Ուր որ մեղքը շատացավ, շնորհն է՛լ ավելի շատացավ» (Հռոմ., Ե 20): Այժմ, այս լսելով, եղբայրնե՛ր, մեր միտքը, ճշմարիտը իմանալով, ընթանում է դեպի տեսանող ազգը, արդարների զավակը, պարգևների երկիրը՝ դեպի անձկալի Երուսաղեմ քաղաքը, դեպի Աստծու հրաշակերտ տաճարը, ուր աստվածատուր օրենքներն են և հոգեկիր մարգարեները, շնորհներով լցված արդարները, կատարյալ հայրերը և խրատված որդիները, ուր երկնային նշաններ ու երկրային գործեր են, ուր հրեշտակների հայտնություն է և պատարագների ընդունելություն կենդանի Սուրբ Հոգու ձեռքով, որով Աստված ճշմարտապես ճանաչում է նրանց, որոնց հոգիները սրբությամբ նմանվում են Աստծուն:

Արդ, այս ամենի համար հույժ սիրում եմ այն աշխարհն ու այն աշխարհի գավառները, գավառում՝ այն ընտրյալ քաղաքը, քաղաքում՝ բարձրացած տեղը՝ Գողգոթան, այն-տեղ՝ ավելի բարձրացած վեմը, վեմի վրա՝ աշխարհաձև խաչը, խաչի վրա՝ Խաչվածին, որ կանգնած էր երկնավոր տեսնողների առջև և գերիվեր էր ոչ միայն բարձր լեռնե-րից, այլ նաև երկնքից, որ բարձրացել էր երկինքների երկնքից էլ վեր:

Եվ որովհետև իսկապես այսպես է, առանց երկբայելու նայի՛ր տեղին և տե՛ս ճշմարտապես եղածը այն գործերից, որ այնտեղ կատարվեցին: Քանզի մերկացրին արարածնե-րի Տիրոջը՝ Նրան, Ով լուսե զարդերով զուգեց երկինքը և երկիրը պսակեց անուշահոտ ծաղիկներով: Եվ վիճակ գցե-ցին Նրա պատմուճանի վրա, ով առանց կշռի և վիճակ գցելու ծովից ու ցամաքից մարդկանց որդիներին զարդա-րանքի զգեստներ տվեց: Ծարավի ժամին, երբ չարչարանք-ների մեջ ասաց՝ ծարա՛վ եմ, ջուր չխմեցրին Նրան, ով ամ-պերից մեծ բխմամբ բազմահոսանք հորձանքներով ոռո-գում էր ամբողջ երկիրը: Աղբյուրների Ստեղծողն ասում է՝ ծարա՛վ եմ, օվկիանոսների Տերն ու անձրևներ Տվողը, ոչ մի բանի կարիք Զուսեցողն ու կարոտյալներին Լիացնողն ա-սում էր՝ ծարա՛վ եմ: Նա, Ով լինելության սկզբում ջրով այնքան էր ողողել արարածներին, որ մինչև իսկ Սուրբ Հո-գին շրջում էր ջրերի վրա, ով մեծամեծ վիհերի միջով վայր էր հոսեցնում անչափ խորը ծովերը, այս ամենի Տերը գթա-ռատ սիրով յուրայինների մոտ եկավ և յուրայինների կող-մից մեծապես չարչարվեց. չարչարանքներն ընդունեց, մին-չև իսկ մի բաժակ ջրի կարոտ մնաց՝ ասելով՝ ծարա՛վ եմ, և ոչ ոք ջուր չտվեց Նրան:

Ո՛վ դառնացած սրտեր, խարխլված մտքեր և հիմարա-ցած անձեր. եթե մեզնից մեկի մեջ այսօր լիներ երկնավոր

սիրո գութը և Նրա կարոտի տապը, չարչարակից լինելով Նրա մեծ տանջանքներին՝ Նրա հետ և մենք կասեինք՝ ծա-րա՛վ եմ: Ոչ թե, որպեսզի գինի խմենք՝ սգից մխիթարվե-լու համար, այլ որպեսզի հոժարությամբ և չարչարանքով Փրկչի մահն ու անարգանքը հանձն առնենք, քաջությամբ և համբերությամբ դեպի նահատակության հանդես ընթա-նանք և վանենք կանգնած ախոյանին՝ թշնամուն: Նաև ծա-րավի ժամին մի բաժակ ջրի կարոտենք՝ ծարավից մխիթար-վելու համար: Հարկ է նաև, որ Քրիստոսի արժանավոր սի-րողները ձայնակից լինեն սուրբ մարգարեին. «Երանի՜, ա-սում է, երանի՜ թե մեկը իմ գլուխը շատ ջրերի շտեմարան դարձներ և իմ աչքերը՝ աղբյուր հորդ արտասուքների» (տե՛ս Երեմ., Թ 1): Ի՞նչ պիտի անեիր այդ ամենով, ո՛վ մար-գարե: «Զօր ու գիշեր պիտի ողբայի Իսրայելին» (տե՛ս Ե-րեմ., Թ 1):

Արդ, Նա, Ով ահագին անապատում անջուր վեմից բազ-մածուփ վտակներ բխեցրեց, նույն Ինքը, որ առանց ժո-ղովրդի չարչարանքի գնում էր նրա հետ՝ խմեցնելու ընտ-րյալ ազգին, նույն Վեմը այժմ նրանց համար մարդացած՝ ասում էր՝ ծարա՛վ եմ: Եվ Նրան ոչ միայն ջուր չտվեցին, այլ ջրի փոխարեն լեղախառը քացախ մատուցեցին:

Ո՞վ ունի քարեղեն սիրտ ու պղնձե մարմին, որ լսելով այս՝ լաց չլինի: Քանի որ եթե մեր սիրելիներից բաժանվե-լիս հեծեծում, լաց ենք լինում, կոծում ենք, դառնացած սրտով ճչում, այրվում, խորովվում ենք՝ նրանց գթալով, և դառը ողբում, և այս անելով՝ ոչ թե անում ենք արժանին, քանզի մեր պարտքն ենք հատուցում: Իսկ Նա, որ ո՛չ թե պարտական էր, այլ Իրենով հատուցում էր մեր պարտքե-րը, ոչ թե պարտքերից փրկվել էր աղաչում, այլ խիստ ցա-մաքած ու ծարաված՝ մի քիչ ջուր էր խնդրում՝ թրջելու պապակած քիմքը: «Ծարա՛վ եմ», ասում էր: Անունով ոչ

ոքի չէր դիմում, առանձին ոչ մեկի անունը չէր տալիս, աղերսը մեզ էր ուղղում, Իր կարիքը բոլորին էր հայտնում, անողորմությունը բոլորի մեջ էր տեսնում:

Սիրտս ճմլվում է, հոգիս խեղդվում է, միտքս փղձկում է, և չեմ կարողանում խոսել Մարիամի խանդաղատանքի մասին: Մինչ Տերը տառապանքների մեջ էր, Նրա [խաչի] մոտ կանգնած էին Նրա մայրը, մորաքույրը, Մարիամ Մագդաղենացին և ուրիշ կանայք, որոնք ավելի առաջ հավատացել էին Աստծու Որդու գալստյանը, իրենց աչքով տեսնում էին մեծ չարչարանքները, իրենց ականջներով լսում էին հայհոյանքները, մանավանդ, երբ Նրա բերանից լսեցին՝ ծարա՛վ եմ:

Գիտեք կանանց բնույթը, թե որքան խանդաղատանքով լի և ողորմած են մանավանդ իրենց սիրելի ծնունդների հանդեպ: Իսկ այժմ այն ժամին ի՞նչ մտածենք այս կանանց մասին. ի՞նչ արեցին. եթե հնար գտնեին, ոչ միայն ամանով ջուր կմատուցեին Նրան, այլ խաչի առջևով հորդառատ գետեր կանցկացնեին: Բայց քանի որ ոչինչ չէին կարող անել, ծեծում էին իրենց կուրծքը, կոծում էին սրտով, ողբում էին իրենց մտքում և հորդ արտասուքներ էին բխեցնում, վայ էին տալիս իրենց անձերին և գերադասում էին մեռնել, քան ապրել, այս աշխարհում էին, բայց ծեծված դիակների էին նմանվում:

Այս ամենի համար նախապես պատասխան լսել էին Տիրոջից, որը ողբալով բոլոր ազգերին, ասում էր. «Երուսաղեմի՛ դուստրեր, ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լաց եղեք ձեր և ձեր որդիների վրա, որովհետև օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի՛ չքեր կանանց և նրանց, որոնք բնավ չծնեցին ու չկերակրեցին»: Այն ժամանակ մարդիկ պիտի ասեն լեռներին, թե՝ ընկե՛ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցե՛ք մեզ, որովհետև երբ դալար փայտին այսպես անեն, չորին ի՞նչ կպատահի» (Ղուկ., ԻԳ 28-31):

Այնժամ այնտեղ ստուգաբանվում է Բարաքիայի որդի Զաքարիա մարգարեի կանխասացությունը. «Եվ Ամոնի որդու մահը նմանվեց Աստծու Որդու մահվանը»:

[Ամոնի որդին]՝ Հոսիան, արդար մարդ էր և Իսրայելի թագավորը, ժողովրդին առաջնորդում էր աստվածապաշտության ճանապարհով և երբեք ոչ մեկի հանդեպ չէր մեղանչում, այլ հորդորելով՝ բոլորի սրտերն ուղղորդում էր՝ երկրպագելու Մեկ Աստծուն:

Եվ երբ խաղաղասեր վարքով ավարտում էր իր կյանքը, եգիպտացիների երկրից նրա վրա հարձակվեց կաղ փարավոնը, պատերազմեց նրա հետ և սպանեց նրան Հրեաստանում:

Եվ որովհետև Հոսիան արդար թագավոր էր, միամորիկ զավակ և պատերազմում հանիրավի մեռավ, մարգարեն դառնապես ողբում է նրա մահը, իսկ ամբողջ ազգը հորդորվելով լացուկոծ է անում:

Մարգարեն կոծի սաստկությունը համեմատում է դաշտում կտրտված նռնենիների վրա արվող սգի հետ [տե՛ս Զաք., ԺԲ 11]: Ինձ թվում է՝ որովհետև նռնենու ծաղիկը ցանկալի ու գեղեցիկ է մարդկանց աչքին:

Երբ փչում է խորշակը, այն հեշտությամբ է ընկնում, և նախկինում բոլոր ծաղիկներից պայծառագույնը տրտմում ու տխուր է լինում ավելի, քան բոլոր փշաբեր ծառերը: Դրա համար էլ մարգարեն ծաղկի ու պսակի է նմանեցնում արդար թագավորին. ժողովուրդն ունայն ու դատարկ մնաց մրգաթափ ծառի նման, որ անպիտան է թվում մարդկանց:

Արդ, չորս ցեղով, տղամարդկանց և կանանց առանձին-առանձին, իբրև հոգի և մարմին միասին բովանդակելով՝ մարգարեն կոչում էր՝ կոծելու և սգալու թագավորին, այդպես նաև մեր Տերը՝ ասելով. «Երուսաղեմի՛ դուստրեր»,

կանանց ցույց է տալիս, որ պիտի կոծեն իրենց և ամբողջ Իսրայելի վրա, ոչ միայն տղամարդիկ և կանայք առանձին-առանձին, ինչպես Դավթի ու նրա երեք ընկերների տները, այլ բոլոր ազգերն ու ցեղերը, ոչ միայն մարդկանց, այլ նաև վերին զորությունների՝ երկնքի և երկնավորների, և այդ թվով են, և այդ չորսի միջոցով պիտի կոծեն բոլորը: Իսկ ինչո՞ւ պիտի լինի այս: Որովհետև բոլորը անողորմ եղան, հրեաները իզուր մեղադրեցին ու մատնեցին:

Արդ, որովհետև երկու կողմերը միաբանեցին չարության մեջ, չորս տարերքների միջոցով չորս մասերով երկրի չորս անկյունները մեծ ահով ու ահագին կոծով պիտի կոծեն՝ տղամարդիկ՝ առանձին, և կանայք՝ առանձին. Իսրայելը պիտի կոծի, որովհետև անջատվեց ճշմարիտ Աստծուց, հեթանոսները պիտի կոծեն, որովհետև անջատվում են իրենց սուտ աստվածներից:

Երկու կողմերը պիտի սգան ու սաստիկ պիտի կոծեն. ոմանց կոծը պիտի լինի անգտնելի կորստի, ոմանցը՝ անանց Լույսի կորստի պատճառով:

Այստեղ ճշմարտապես կատարվում է մարգարեի այն խոսքը, որ ասում է. «Պիտի հեկեկա երկիրը՝ ամեն մի ազգատոհմ՝ առանձին» [տե՛ս Զաք., ԺԲ 12]: Նաև այժմ Տիրոջ խաչի մոտ փոքր ու քիչ չէր լացուկոծը, այլ հույժ մեծ ու ահագին, որ գերազանցում էր [երբևէ եղած] բոլոր կոծերը:

ԳԼՈՒԽ Բ

«Այն ժամին, ասում է, երբ մեր Տերը խաչ բարձրացավ, արեգակը խավարեց, տաճարի վարագույրը վերևից ներքև պատռվեց, երկու կես եղավ, երկիրը շարժվեց, ժայռերը ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին, մեռելներից շատերը հարություն առան, Նրա հարությունից հետո մտան սուրբ քաղաք և շատերին երևացին» [Մատթ., ԻԷ 51-53]:

Իսկ թե ինչո՞ւ արեգակը թաքնվեց, կորավ ցերեկվա գեղեցիկ լույսը, և խավարը թանձրացավ, տարածվեց երկրի վրա, հայտնի է, և կարող ենք չթաքցնել ճշմարտությունը. քանի որ Նրա հագուստները հանել և իրենց էին վերցրել և Նրան մերկ պրկել մեխել էին փայտին, վերին գնդերը չէին կարողանում նայել երկնքի ու երկրի Տիրոջ մերկությանը: Սերովբեները, որ խաչելությունից առաջ Նրա Աստվածության շուրջն էին, չկարողանալով նայել Նրա ահագին փառքին, երկու թևով ծածկում էին իրենց երեսը, երկու թևով ծածկում էին իրենց ոտքերը, իսկ երկու թևով բարձրանալով վեր՝ կախվում էին Նրա անպարտելի զորությունից և հրեղեն բերաններով անդադար «Սուրբ, Սուրբ, Սուրբ»ը ասելով՝ անհագ ձայներով փառաբանում էին արարչական Զորությանը: Նաև հրեշտակները, հրեշտակապետներն ու զվարթունների բոլոր դասերը ահուդողի մեջ էին և չէին կարողանում նայել ու տեսնել ինքնագո Բնությանը, խույս տալով՝ թաքնվում են ինքնածագ բնական Լույսի անմատչելի ճառագայթներից. ոչ միայն պատվելով արարչական Զորությանը, այլև իմանալով իրենց նեղությունը՝ չէին համարձակվում հանդգնաբար նայել, մեր-

ձենալ, մոտենալ, որպեսզի անմատչելի զորությունից չհատնեն-վերջանան: Եվ Արարչի՝ բոլորին խնայելն այս է՝ անվնաս պահել արարված ամեն մի բնություն առավելապես այն ժամին, երբ Աստծու Որդու ահագին մահը երևում էր երկնավորներին ու երկրավորներին, տարերքները սպասավորում էին՝ պատվելով Խաչյալին և ծածկույթ դառնալով զվարթունների համար, որոնք չէին կամենում նայել ու տեսնել Նրա անարգ մահը: Միաժամանակ ամաչեցնելով տգետ ժողովրդին, որ առանց ամոթի ու պատկառանքի նայում էր Աստծու Որդու մերկությանը, խավարը խտացավ թանձրացավ նրանց լրբենի դեմքերի դիմաց, որոնք արժանի չէին նայելու և խաչի վրա տեսնելու իրենց կյանք [Պարգևողին]:

Արդ, սրա օրինակը ավելի առաջ Աստծու Հոգով տեսավ Մովսեսը, այնտեղ՝ անապատում, դատաստանի ատյան կանգնեցրեց, որովհետև Աստծու՝ իր հանդեպ արած փրկական բարեգործությունների փոխարեն ժողովուրդը չգոհացավ, այլ հայհոյեց ու տրտնջաց Մովսեսից և Աստծուց: Նրանք բարկացրին ու դառնացրին Աստծու Սուրբ Հոգուն, և Աստված նրանց վրա առաքեց մահաբեր օձեր, որոնք անխնա խայթեցին ու սպանեցին նրանցից շատերին: Աստված, Իր բարերարությամբ հիշելով ուխտը, որ արել էր Իր սիրելիների հետ, գթաց, ողորմեց օձից խայթվածներին և նրանց համար մորմոքողներին, հրամայեց Մովսեսին պատրաստել մի նյութական օձ, բարձրացնել այն ժողովրդի մեջ, որպեսզի ով կարողանա նայել ու տեսնել Մովսեսի օձը, փրկվել կարողանա սպանող օձերի դառը թույնից: Հույժ սքանչելի, մտքով և ոչ աչքով տեսանելի տեսություն է սա. Մովսեսին հրամայեց պատրաստել օձ և չասաց՝ ինչ նյութից. ո՛չ վարպետի կռանի տակ դրվող և ո՛չ էլ ձեռքով, առանց հրի փորձության պատրաստվող [նյութի անուն

տվեց], այլ միայն հրամայեց. «Դու մի օձ պատրաստի՛ր և դի՛ր այն ձողի վրա» [Թվեր, ԻԱ 8-9], ի՛նքդ պատրաստիր, ասաց: Եվ Մովսեսը, սրան նայելով, հույժ իմաստնացավ, տեսավ խորհուրդը ապագայում կատարվելիքի, պղնձե օձ պատրաստեց:

Ինչպես ինձ երևում է քիչը շատից, Մովսեսը իմաստության աղոտ հայտնությամբ Աստծու անպարտելի շնորհները նմանեցրեց պղնձի, որպեսզի անվնաս պահվեն նրանք, ովքեր ճշմարիտ հավատով կունենան այն, և դրա ձևը չկայացրեց այլ օրինակով, քան թունավորների և սպանողների:

Արդ, տե՛ս ընտրությունը. խայթվում էին բոլորը, մեռնում էին ոչ բոլորը. սա ցույց է տալիս դատաստանի ընտրությունը: Եվ որովհետև մեղքը աշխարհ մտավ առաջին օձի միջնորդությամբ և որկրամոլության պատճառով, կերակրի նույն ցանկությունն էլ շարժեց անհագ ժողովրդի մարմինը, որի պատճառով էլ հայհոյական տրտունջ հնչեց նրանց բերաններից. հարվածվեցին ու խայթվեցին օձերից, որն էլ մահվան հասցրեց նրանց:

Ոչ մի ուրիշ բան այնպես նման չէ ցանկությանը, ինչպես օձի խորագետ ու նենգավոր բնությունը. սողում, սպրդում է՝ մտնելու նեղ ու նուրբ ծերպերով, մտնում է և հայտնի է դարձնում մահվան դառը գործը. հեղում է որպես իգական ցանկություն, տապալում է կերակրի տենչանքով, մղում, ցոփացնում է անհագ արբեցությամբ, որտեղից էլ բազմագլուխ գազան ցանկությունը զորանում է մարդու զգայություններ մեջ և անհագորեն մղում դեպի աղտեղի գործերը: Դարձյալ՝ այս սողունի շարժվելու ձևը նույնպես ճշմարտորեն ցույց է տալիս մեր բնության շարժումը, ինչպես որ սովորեցինք բնությունը քննող փիլիսոփաներից, որին անստությամբ հավանություն են տալիս իմաստասեր մարդիկ: Օձը սողալիս հինգ գալար է անում,

իսկ առջևի և ետևի կողմերը միասին կազմում են յոթ թիվը և նմանվում մեր զգայություններին՝ երկու աչքով, զույգ ականջներով, քիմքով, խոհականությամբ և որովայնի ներքին համով, որոնք բոլոր մարդկանց շարժում են դեպի մարմնական ցանկությունները: Այս է [նշանակում] օձի տեղալը ցանկացող ժողովրդի վրա, որոնք զգայությունների բոլոր մասերով լցված էին ցանկությամբ և գործով կատարում էին իրենց աղտեղի կամքը[42]*:*

Երբ օձը խայթում էր, մարդիկ մեռնում էին, իսկ նա, ով միայն կոխկռտվել էր ցանկության շարժումից, չէր մեռնում՝ թունավոր օձից խայթվելով: Կարելի էր նայել ու տեսնել Մովսեսի օձը. քանի որ օձն էր, որ սպանում էր, նույնը նաև կսկծեցնում էր, բայց այս օձին նայելով՝ կսկծացողներն առողջանում էին: Եվ շրջապատեցին բարձրացած օձին խայթվածներն ու կսկծացողները, և նա միջնորդ դարձավ, դատավոր կանգնեց երկու կողմերի միջև և շնորհեց ոմանց՝ առողջություն և ոմանց՝ հակառակը: Մեծ էր պղնձե օձը, որ պատրաստվեց իմաստունի՝ Մովսեսի ձեռքով, իսկ նրա զորության մեծությունը նմանվում էր բարձրացած խաչին, որ կանգնեցվեց Գողգոթայում, որ Տերն Ինքը նախապես օրինադրեց՝ ասելով. «Մովսեսի՝ անապատում բարձրացրած օձի նման պիտի բարձրանա Մարդու Որդին երկու կողմերի միջև՝ ոմանց՝ անդարձ մոլորության, և այլոց՝ ճշմարտության ճանապարհի համար» (տե՛ս Հովհ., Գ 14):

Այժմ արեգակը խավարեց մոլորվածների վրա, որովհետև արժանի չէին տեսնելու արդարության Արեգակին, որ բժշկում էր առաջին օձի աներևույթ հարվածներից[43]*: Եվ ինչպես որ անապատում նրանք, ովքեր իրենց հոգով խայթվել էին ցանկության օձից և մարմնով կատարում էին ապականության գործերը, չէին կարողանում տեսնել Մովսեսի օձը, որովհետև արժանի չէին շնորհատուր թողությանը, ուստիև մեռնում և մնում էին անապատում, իսկ նրանք, ովքեր թեթևակի էին ախտացել ցանկություններով, հեշտությամբ էին բժշկվում, այդպես էլ այստեղ՝ Գագաթ տեղում, Տիրոջ՝ Հիսուսի խաչը շրջապատեցին անօրեններն ու օրինավորները, անարժաններն ու արժանավորները: Ովքեր հին կուրությամբ էին խայթված, չկարողացան տեսնել, որ մահը կյանքի է փոխարկվել, մոլորությունը՝ ճշմարտության, անեծքը՝ օրհնության. ժամանակավոր տառապանքներին նայեցին և հանդերձյալ հանգստից վրիպեցին:*

Իսկ Նա Իր մարդասիրությամբ բժշկեց և առողջություն շնորհեց երկու կողմերին էլ, որ խայթվել ու խոցոտվել էին հին վիշապի թույնից, և հավատի միջոցով առողջություն շնորհեց աչքերին, որոնք կարող են նայել և խաչի վրա տեսնել մարդու Որդուն, Ով Իր մարմնի վրա ընդունեց չարչարանքները, և Նույնին ճանաչել Աստծու Որդի՝ Արարիչ երևացողների և աներևույթների: Քանզի ոչ թե Մովսեսի՝ անապատում փայտից կախած օձի նման պղնձից է, որ ոմանց զորացնում և բժշկում էր, ոմանց՝ տկարացնում և անդարձ մահվան տանում: Քանզի մեր Տերն ասաց՝ նման է, և չասաց, թե ինչպես է նման, որ չի ենթադրում նմանության իսկություն: Քանզի եթե իսկությամբ նմանվեր, ի՞նչ հարկ կար, որ Երկրորդը գար և մտներ նրա տեղը: Մեծ առաքյալը մեկնում է մեզ Խաչվածի զորությունը՝ [ասելով]. «Նա, ով մեղքը չէր ճանաչել, մեզ համար մեղք եղավ, որպեսզի մենք նրանով Աստծու արդարները լինենք» (տե՛ս Բ Կորնթ., Ե 22): Իսկ մեղքը օձի միջոցով աշխարհ մտավ:

Արդ, Տերը, Իրեն նմանեցնելով օձին, դրոշմվեց, կերպարանվեց յոթ զգայություններում և անվերջ բաժանելի խոհականության մեջ, եղավ մեղք, որովհետև բոլորս խայթվեցինք նույն մեղքից և կսկծացինք. խայթվեցինք առաջին

վիշապի հին թույնից և կսկծացինք մեր մարմնի բոլոր մասերի ամեն մի շարժումով. մեր աչքերը ծակծկվեցին՝ անարժան բաների նայելու, մեր ականջներն ախտացան՝ այլանդակ բաներ լսելու պատճառով, մեր ճաշակելիքը՝ անհագ տենչալով, մեր շարժումները՝ անասնական ցանկությամբ, մեր միտքը հպարտացավ, բարձրացավ, ամեն բանով [եղծվեցինք] և ոչ մի մասով արդար չեղանք: Իսկ Նա, ով չէր ճանաչում մեղքը և հեռու էր այդ ամենից, Իր բարերար կամքով եղավ մեղք, որ Իրենը չէր, որպեսզի մենք Իրենով արդար լինենք: Կորցրինք, ինչ որ մերն էր, այժմ գտնենք Նրանով՝ այլևս չկորցնելու համար:

Բայց պղնձե օձը, որ Մովսեսը բարձրացրեց անապատում, այսպիսին էր. խայթել չգիտեր, որովհետև իր մեջ թույն չուներ, ուրիշներից էլ չէր խայթվում, որովհետև անխայթելի նյութ էր: Սրան շրջապատեցին խայթվածներն ու խայթողները. խայթվածները բժշկվեցին, խայթողները պարտվեցին, որովհետև նրանց թույնը ջնջվեց մարմնի նյութի անպարտելի զորությունից: Այս օձը բարձրացված փայտից կախվեց ոչ թե չերևացող, ծածուկ մի տեղում, այլ շատ բարձր տեղում, չթաքնված ու զգեստներով չծածկված, և բոլոր մասերով մերկ երևում է ժողովրդի մեծ բազմության մեջ: Բոլորին է երևում, բայց տեսնում են ոչ բոլորը. ովքեր տեսնում են, բժշկվում են, իսկ ովքեր չեն տեսնում, հեռանում են այս աշխարհից և կենաց աշխարհից:

Ապա հիրավի է, ուրեմն, որ մեր Տերը այս օձին չի նմանեցնում արդարներից, մարգարեներից և կատարյալ հայրերից և ոչ մեկին, այլ նմանեցնում է մի ոմն Մարդու՝ միայնակ և հույժ միայնացած, ոչ սովորական մարդու, այլ մարդու Որդուն, որ ունի բոլորի բնությունը և վեր է բոլորից, Արարիչն է բոլորի և ամենքին Նորոգողը, ունի մարմին մորմոքելի, բայց ոչ մորմոք[եցն]ող, և մորմոքում է մարմնով և ոչ հոգով: Ասացի՝ մարմին՝ [նկատի ունենալով] ձեռքերն ու ոտքերը, կողն ու թիկունքը, ծնոտն ու գլուխը: Իսկ Նրա զգայարանները մեր զգայարանների թիվն ունեն, բայց խոցելի չեն, ինչպես մերը:

Ասեմ նաև քիչը շատից սակավ խոսքերով: Մարդիկ ավելի առաջ մեղանչում են աչքերով, քան գործով, իսկ մեր Տերը՝ Քրիստոս, աչքերով նայեց իր բնակված քաղաքի բոլոր [մարդկանցից] առավել բազմամեղ կնոջը, ճանաչեց նրան և Իրեն ճանաչեցրեց նրան: Աչքերը աչքերին հանդիպեցին, և ապաշխարության հորդահոս արցունքներ թափվեցին. մեղքը մեռավ, և արդարությունը կենդանացավ: Ականջներով մարդիկ գերվում են լկտի երգերի ձայներով. նույն ականջներով [լսելով]՝ մեր Տերը մտավ քահանայապետի տուն և այնտեղ թագավորած տեսավ մահը, լսեց մեծ ողբի ու կոծի ձայներ, հալածեց մահը և լռեցրեց հուսահատությամբ կոծողների ողբը: Ուներ և ճաշակելիք, բայց միայն անհրաժեշտը և ոչ ավելին [էր ճաշակում], բազմություններին հագեցրեց, և շատ հոգնեց լի սակառները տանողների մեջքը: Խոհականության շնորհիվ բարձունքների վրա խոսում էր Հոր հետ, իսկ երկրում շնորհալից խոնարհությամբ շրջում էր մարդկանց հետ:

Եվ որովհետև ճշմարտապես այսպես էր, որևէ բանում չսխալվեցի՝ ասելով՝ մեր մարմինը ավելի բարձր եղավ, քան մեր բնությունը: Եվ սրա համար Ինքն Իրեն նմանեցնում է պղնձե օձին, իբրև մեղքի և արդարության. մեղքի, որովհետև մեր գոյացությամբ երևաց, արդարության, որովհետև չշարժվեց մեր զգայություններով: Եվ դրանով տարակուսանքի ու վարանման մեջ է գցում լսողներին. «Ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, ասում է, այդպես էլ մարդու Որդին պետք է բարձրանա» (Հովհ., Գ 14):

Ասում են՝ ինչո՞ւ է այսպիսի խոսքեր ասում Տերը, որ բնությամբ Աստված է և ճշմարիտ մարդ, Արարիչ՝ Աստվածությամբ, և արդար՝ մարդկությամբ, ինչո՞ւ է օձի նմանեցնում Իրեն:

Ո՛վ իմաստուն լսող, Տիրոջ կողմից ասված բարի խոսքերը մի՛ լսիր իբրև այլ՝ տգեղ խոսքեր. Իրեն նմանեցրեց օձի՝ ոչ թե խայթողին ու սպանողին, այլ՝ անթույնին և բժշկողին, որովհետև թունավոր օձերից խայթվեցինք ու մեռանք, իսկ անթույն օձի միջոցով բժշկվեցինք ու ողջացանք: Ստույգ մարմին է օձի գոյացությունը, մարմին է նաև մեր բնությունը. մարմինը մարմնի հանդիպեց դրախտում, մարմինը մարմնի հետ խոսեց, մարմինը մարմնից խաբվեց, թունավորն անթույնին խայթեց ու սպանեց: Մեր Տեր Հիսուս Քրիստոս մարմին առավ՝ ոչ թունավոր հին օձի, այլ վիրավորվածի [մարմինը], և մահկանացու դարձրեց. մարմինը մարմնին երևաց, անթույնը՝ թունավորին, չվնասվածը՝ վնասվածին, անչարչարելին՝ չարչարելիին, անապականը՝ ապականվածին, ահա միանգամից ասեմ՝ անմահը՝ մահկանացուին, և Աստվածը՝ մարդուն. մարմնացավ, թանձր մարմին դարձավ և կախվեց փայտից ո՛չ անապատում և ո՛չ քաղաքում, այլ քաղաքից դուրս և անապատից հեռու: Եվ բոլոր երկրներն ու քաղաքները հավաքվելով՝ շրջապատեցին Նրան. նայում էին Նրան բոլորը, բայց տեսնում էին ո՛չ բոլորը: Ովքեր տեսնում են, ջնջվում է օձահարության թույնը, և առանց դեղի կատարյալ առողջություն են ընդունում. աչքերն զգաստանում են՝ նայելով ցած ու տեսնելով Աստվածությունը մեղապարտ մարմնի մեջ, ականջներով լսում են նույն Աստվածության խոսքն առ Հայր, որ ասում է. «Հա՛յր, քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին» (Ղուկ., ԻԳ 46): Այս խոսքը լսողների բերանում քաղցրանում է քիմքը և հագեցնում բոլոր անուշահամ կերակուրներից ավելի, մարմնավոր զգայարանների միջոցով առողջանում են հոգիները, լուսավորվում են մտքերը և դառնում հույժ սրատես. նայում են խաչի չարչարաքներին և տեսնում են Որդու անչարչարելի Աստվածությունը, հավատը թռչում բարձրանում է երկինք՝ դեպի բոլորի Հայրը, և հիշում են Մովսեսին ու պղնձե օձը, որ այլաբանական օրինակն էր այս ժամանակի մեջ՝ Քրիստոսի խաչելության պահին տեղի ունեցածի, որ ոչ բոլորը կարողացան տեսնել: Նրանք, ում սրտերը խավարել, իսկ հոգիները կուրացել էին հին կուրությամբ, նախանձեցին ու մաշվեցին իրենց մարմիններում, զարկվեցին ու սարսեցին հաստատուն Վեմի առջև, նրանց աչքերի առջև փակվեց Քրիստոսի խաչի մեծափայլ լույսի ճառագայթների տեսիլը, որ ծագեց բոլոր արարածների մեջ:

Այս պատճառով այնտեղ երևացին ահռելի բաներ ու մեծամեծ, սքանչելի գործեր, քանզի [պատռվեց] վարագույրը, որ Աստծու հրամանով պատրաստել էր Մովսեսը և կախել խորանի ներսում, որպեսզի սահման լինի և աներևույթ պահի Սրբություն սրբոցը: Արտաքին խորանը, որտեղ ղևտացիները հանապազ կատարում էին իրենց պաշտամունքը, ստույգ նմանությունն էր երկինքների երկնքի, որտեղ, կարծում ենք, Անեղի բնությունն է: Իսկ այժմ ինչո՞ւ էր պետք վարագույրը, որ ծածկված էր պահում Սրբություն սրբոցը՝ աներևույթ զորության խորհուրդները:

Իսկ այսօր ոչ թե խորհրդին է ձեռք զարկում, այլ խորհրդի բուն Տիրոջը՝ Նրան, որ եկավ հայտնելու և ցույց տալու խորհուրդը՝ իբրև ժամանակավոր օգուտ, որպեսզի ճանաչեն և ընդունեն խորհրդի անժամանակ Տիրոջը, իսկ նրանք ոչ միայն չընդունեցին, այլև մերկ փայտին բևեռեցին և սպանեցին: Այդ պատճառով էլ պատռվեց վարագույրը: Երբ այն պատռվեց, Սրբություն սրբոցը դատարկ ու

թափուր մնաց, որովհետև Սուրբ Հոգին ելավ գնաց տաճարից: Եվ որովհետև չպատռեցին իրենց հանգուստները այն արյան փոխարեն, որ թափեցին, վարագույրը, որ պահում էր խորհուրդը Նրա պատվի, իր օձիքը նետեց Տիրոջ վրա: Վարագույրի պատռվելու հետ թող պատռվեին քահանայապետների սրտերը, երբ տեսնեին սրբության պատիվը երկու մասի բաժանված, և թող ամաչեին ժողովրդի առաջ, որ իրենց ձեռքը երկարեցին ոչ թե մարդու, այլ տաճարի Տիրոջ վրա: Եվ ինչպես որ վարագույրը պատռվեց՝ նրանց ցույց տալով, թե՝ այսուհետև չպետք է լինեմ ծածկույթը անպտուղ սրբության, որում այլևս երկնային զորություններ չեն լինելու: Եվ քանի որ նրանք հեռացան, անջատվեցին երկնքի ու երկրի Տիրոջից, նաև երկիրը շարժվեց անօրեն ժողովրդի ոտքերի տակ: Որովհետև արեգակը մասն է երկնքի, մի մասով, որ փակեց իր լույսը արարածներից, երկնքի բոլոր մասերը տագնապեցին և սուգ հագան նրա հետ: Եվ որովհետև վարագույրը մասն է երկրի, մի մասի հետ երկրի բոլոր մասերը երերալով դողացին ոչ թեթևակի, այլ խիստ սաստիկ, ահագին և այնքան ուժգին, որ պայթեց, պատռվեց ոչ միայն նրա թանձր հողը, այլ նաև հիմքի վրա հաստատված մեծամեծ վեմերը ճեղքվեցին ու պատռվեցին:

Երկինքն ու երկիրը միաբանեցին Աստծու Միածնի մահվան ժամանակ, և հիրավի արժանիորեն: Երբ մեծ Թագավորը երկնքից գալիս էր՝ փրկելու և կենդանություն պարգևելու, երկինքը չշարժեց և երկիրը չդողացրեց, [այլ եկավ] հեզ ու հանդարտ, մեծ խաղաղությամբ, ինչպես Սուրբ Հոգին երգեց Դավթի բերանով. «Նա թող իջնի որպես անձրև գեղմի վրա» (Սաղմ., ՀԲ 6): Քանզի երբ անձրևն իջնում է գեղմի վրա, ո՛չ ձայն է լինում և ո՛չ էլ բախման ճայթյուն ու դղրդման թնդյուն, այլ իջնում է չլսված ու նմանը չունեցող ձայնի քաղցրությամբ: Ասում է՝ գեղմ՝

չբաժանելով ու չկտրելով և հեռու չդնելով այն կենդանուց. մարդիկ չունեն էլ այդպիսի սովորություն, այլ երբ կենդանու վրա անձրև է իջնում, սրբում է փոշին, լվանում է կեղտը, աճեցնում բուրդը, զվարթացնում է կենդանուն: Նրա նմանությամբ Սուրբ Հոգին մեծ զորությամբ ցողի պես ազդեց սուրբ Կույսին. չլսված, չտեսնված երևույթ, տեսակ. ինչպես կամեցավ, կատարեց արժանին խաղաղությամբ՝ առանց խռովության ու շարժումի: Եկավ հասավ այս տեղին, ուր արժան էր այն խաղաղությունն անել, բայց չկամեցան, այլ հակառակն արեցին Նրա վրա: Տեսնո՞ւմ ես, որ նույնը հատուցվեց ընդդեմ նրանց:

Բայց որովհետև Աստված է, Նրան հակառակողներ չկան, այլ [ամեն բան] բոլոր կողմերից ամեն բանով օգտակար է երևում. ինչպես որ վեմերի շարժվելու և երկրի պատռվելու ժամանակ «բացվեցին, ասում է, գերեզմանները, և մեռելներից շատերը հարություն առան իրենց գերեզմաններից, եկան մտան սուրբ քաղաք և շատերին երևացին» (տե՛ս Մատթ., ԻԷ 52-53): Հարություն առածների անունները չի ասում, ո՛չ նրանց տունն է ցույց տալիս, ո՛չ էլ նրանց թիվն է հայտնի դարձնում, այլ միայն ասում է՝ շատերը, իսկ շատը թվով սահմանազատված չէ, այլ [թվերը] միմյանցով են առավելանում, ինչպես հինգը շատ է երեքից, տասը՝ հինգից, ավելի շատերը՝ տասից, և շատի սահմանը չի ավարտվում. եթե մինչև թվերի վերջը հասնես, անթիվը թվից ավելի շատ կմնա: Բայց այն, որ ճշմարտապես հարություն առան, անսուտ ավետարանագիրը գրով է հաստատում և՛ հարությունը, և՛ հարություն առածների շատ լինելը, և ինչպես որ անորոշ ասաց նրանց շատ լինելու, նույն անորոշ խոսքով էլ ասաց նրանց երևալու մասին. «Շատերին, ասում է, երևացին» (Մատթ., ԻԷ 53). ոչ մեկի անունը չի հայտնում:

Ամեն բան նոր ու սքանչելի երևաց մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ, որովհետև նոր աշխարհ էր արարելու: Ասեմ քիչը շատից նույն այն գործի մասին, որ գործվեց այնտեղ՝ խաչի մոտ. ո՛չ իմ, ո՛չ էլ ուրևէ այլ մարդու [խոսքերն են], այլ նույն Տերը սուրբ մարգարեի բերանով նախապես ասել էր. «Եվ պիտի լինի մի մեծ օր, երբ ո՛չ լույս պիտի լինի և ո՛չ խավար, այլ՝ ցուրտ ու պարզ օր: Այդ օրը հայտնի պիտի լինի միայն Տիրոջը. ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ էլ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան» (տե՛ս Զաք., ԺԴ 6): Տեսնո՞ւմ ես՝ ինչ է հայտնում Սուրբ Հոգին. արարածների սկզբից այսպիսին եղավ միայն Տիրոջ խաչելության օրը, քանզի ո՛չ լուսավոր էր այն (որովհետև արեգակը թաքնվեց) և ո՛չ խավար (որովհետև գիշերվա ժամը դեռ չէր հասել). կեսօրին արեգակը մայր մտավ, ասաց խավար, ոչ թե գիշեր. և որովհետև ջերմ ճառագայթները արգելափակվեցին, ասաց՝ ցուրտ [պիտի լինի] և ոչ թե տաք, և ոչ թե քիչ ցուրտ, այլ պարզ, սառը՝ նման անպտղաբեր ձմեռվա, որ նշանակն է չարի ատելության, որ և գործվեց ժողովրդի կողմից: Դարձյալ ասում է. «Լույս պիտի լինի երեկոյան» (Զաք., ԺԴ 7): Երեկոյի ժամը դրացի ու մերձավոր է խավար գիշերվան, ինչպես որ այս աշխարհն էր մերձ կատարածին և դրացի էր անվախճան խավարին. մեծ Օրվա երեկոյան խաչից անխավար լույսը ծագեց նրանց հոգիներում, ովքեր կարողացան տեսնել Որդու Աստվածությունը, և նրանով լուսավորվեցին, որպեսզի այլևս խավարը իրենց չտիրի:

«Եվ այն օրը, ասում է, հայտնի պիտի լինի միայն Տիրոջը» (Զաք., ԺԴ 7): Այդ հայտնությունը [լինելու է] ոչ մեկ կամ երկու մասով, այլ ամբողջությամբ: Եվ օրվա [ավելի] մեծ ի՞նչ հայտնություն [կա], քան այն, քանզի ամեն բան նոր էր ու ահագին. և՛ խավարն էր նոր, և՛ գիշերն էր նոր,

և՛ օրն էր նոր. նոր էր և վարագույրի պատռվելը, նոր էր երկրի շարժվելը, նոր էր վեմերի ճեղքվելը, նոր էր գերեզմանների բացվելը, նոր էր բազմությունը հարություն առած մեռելների, նոր էր նրանց հայտնությունը՝ երևալը շատերին, նոր էր և սուրբ քաղաքը: Հիրավի ասացի, թե նոր էր ամեն բան, քանզի նոր էր խաչը, նոր էր և Խաչվածն ու Նորոգողն էր բոլոր նորոգվածների: Այդ պատճառով էլ չգրեց անունները հարություն առածների և ոչ էլ նրանց, ում նրանք երևացին, քանի որ նմանությունն ու օրինակն էին հարության այն մեծ Օրվա, երբ մեկ-մեկ չէ, որ հարություն պիտի առնեն, և ոչ էլ բազումի մի մասը, այլ բոլորս միաժամանակ, առանց թվի և առանց անունով կանչվելու: Բայց բազում անգամ ասելով՝ նոր էր, չենք շեղվում նորապես եղած նորագործ բաներից:

Ասում է. «Երբ հրեաները տեսան, որ Հիսուս խոնարհեց Իր գլուխը և արձակեց հոգին, որպեսզի մինչև շաբաթ օրը մարմինները չմնան խաչի վրա, Պիղատոսին աղաչեցին, որ կոտրեն նրանց սրունքները և վերցնեն նրանց: Զինվորները եկան և կոտրեցին ավազակների սրունքները: Իսկ երբ եկան Հիսուսի մոտ և տեսան, որ Նա մեռել է, Նրա սրունքները չկոտրեցին, այլ զինվորներից մեկը տեգով խոցեց Նրա կողը, և իսկույն արյուն և ջուր ելավ» (տե՛ս Հովհ., Ի 31-33):

Ահա դարձյալ նոր ու սքանչելի երևույթ: Ո՞ր մարդն է երբևէ տեսել, որ մահից հետո խոցեն մեկի կողը, և այնտեղից ջուր և արյուն հոսի: Սրանից առաջ չի եղել, և սրանից հետո չի լինելու, այլ եղավ միայն Հիսուս Քրիստոսի մարմնի վրա: Եվ այդ էլ՝ մարգարեություններից ոչ դուրս, այլ նույն Խոցվածի Հոգով [Դավիթը մարգարեանում է]. «Պիտի դառնան, ասում է, և պիտի նայեն նրան, ում խոցեցին» (Սաղմ., ԻԲ 16,17): Հարցնում են ոչ խոցողները և չեն տեսնում Նրան, ում խոցեցին, ուրիշ է խոցողը, և ուրիշ է տես-

նողն ու ընդունողը ոչ Խոցվածին, այլ Ողջացածին ու վերքերը Ողջացնողին, վերքերը ոչ միայն երևացող, այլ նաև աներևույթ հարվածների. արյան դեղով՝ արյան և ջրի դեղով՝ ջրի: Եթե կամենում ես, ընկալի՛ր ճշմարտապես, որովհետև ջուրը բոլոր կենդանիների գոյացությունն է, իսկ արյունը բոլոր մարմնավորների կենդանությունն է: Արյանը խառնված է ջերմության հոսման մաս, իսկ ջրին խառնված է հողի զորությունը, այս երկու տեսակներին են միանում բոլոր տարերքները և ցույց են տալիս գոյացությունը Բան Աստծու մարմնի, որ ճշմարտապես առավ բնությունը մեր էության, որ Ինքը ստեղծեց արարչության ժամանակ:

Արդ, Նրա կողից ելած ջուրը սուրբ Ավազանի լվացումն էր, իսկ արյունը՝ Նոր Ուխտի բաժակը, որպեսզի մեր անձերը մեղքերից սրբենք ջրով, իսկ արյամբ չարչարակից լինենք խաչի վրա Նրա մահվանը: Այն, ինչ գրված էր, ակամայից կատարեցին իրենց համար և հօգուտ հեթանոսների. ճշմարտության մարգարեներ էին, բայց ոչ իրենց կամքով, մշակներ էին, բայց ուրիշի հողն էին մշակում, վաճառականներ էին, բայց ուրիշի համար էին հարստություն ժողովում, առաջնորդներ էին, բայց ուրիշի համար էին բացում կյանքի դուռը, ընթերցողներ էին, բայց ուրիշին էին մեկնում Կտակարանների խոսքերն ու այլաբանորեն ասված ճշմարտությունը:

Աղաչեցին, ասում է, Պիղատոսին, որպեսզի չմնան խաչի վրա: Լավ եք հրաժարվում Նրանից, ով վերցվեց ձեզնից և տրվեց հեթանոսներին: Եվ քանի որ մահը չի կարող դրացի լինել կյանքին, այդ երեկոյան ժամին և դուք եք հրաժարվում կենաց ծառից, որպեսզի ծածկվեք գիշերվա ստվերով, որը սիրեցիք. դրա մեջ պիտի լինի ձեր բնակությունը: Անարժան [էր] ձեր խնդրանքը. այն, որ դատավորին աղաչեցիք սրունքները կոտրել և խաչից իջեցնել. երկու

հազար և ավելի տարիներ Մովսեսի հրամանով գառի ոսկորները կոտրել չկարողացար, բայց խաչեցիր Աստծու Գառին և կոտրել ես ուզում. կամենում ես քո կամքով անել այն, ինչ Սուրբ Հոգին քեզ չի հանձնարարում. չե՛ս կարող: Իսկ ինչո՞ւ Տերը, որ չարչարակից լինելով աշխարհին՝ Իրեն մահվան տվեց, հանձն չի առնում ոսկորը կոտրելը: Այս մասին ասենք քիչը շատից:

Ըստ բնության[44] և ըստ բարոյականի[45]՝ մեր մարմնի գոյացությունը բաղկացած է երկու բանից. էգ մասի նյութն են կակուղ միսն ու ներքին գործող անդամները, որոնք կյանքի պատճառ ունեն մարմնի սնունդը: Իսկ արու գոյացության զորությունն են ջղերը, նյարդերը, շունչը, ոսկորները. դա բնականն է: Իսկ բարոյականը իգական մասի նյութն է, ամբողջ մարմնի, ջղերի հարստության և ոսկորների արվացած պնդությամբ. անախտ, անկոտրելի ամրությամբ նմանվում է երկնային մտքին: Այդ պատճառով էլ ոչ անասուն գառների նյութական մասը Եգիպտոսում կերակուր տրվեց ժողովրդին, իսկ ոսկորները ուրիշ մասերի հետ միասին պահվեցին առանց կոտրվելու և փշրվելու խոհականության[46] նմանությամբ: Այդ պատճառով էլ Աստծուն գառներ էին զոհաբերվում զոհի ծխի և հոտի և ոչ թե կշտանալու կարիքի համար, այլ միայն իբրև իմաստություն և իբրև կատարյալ խորհուրդ ապագայում կատարվելիքի, որը երևաց Աստծու Գառի պատարագվելու ժամանակ: Իրեն ամբողջովին տվեց մարդկանց ձեռքը, մարդուն ամբողջովին ավանդեց Բան Աստծուն, մարգարեների՝ կանխավ գրած խոսքերը ամբողջովին կատարեց Իր անձի մեջ, և քեզ ամբողջովին կատարյալ պիտի դարձնի Աստծու մեջ:

Կոտրեցին, ասում է, ավազակների սրունքները, եկան Հիսուսի մոտ և տեսան, որ Նա մեռած էր: Անսուտ խոսք և

ճշմարիտ երևույթ. քանի որ ինչպես կատարյալ էր Աստվածությամբը, այնպես էլ կատարյալ էր Իր կամքով և ո՛չ ակամա [կրած] չարչարանքներով, այդ պատճառով էլ. «Նրա ոսկորը չպիտի փշրվի» (Հովհ., ԺԹ 36): Իսկ կողի խոցվածքը, որ ընդունեց, աշխարհի բխման աղբյուր էր, կենդանության ջրի նորոգում, որ առավել տնկագործի[47] ո՛չ թե Եդեմի պարտեզի, այլ Աստծու Եկեղեցու կենդանի ծառերը:

ԳԼՈՒԽ Գ

Դարձյալ՝ այս ամենի կատարումից հետո նաև Հիսուսի թաղումն է վկայվում հրեաների ազգի կողմից, որովհետև բոլորը միաբանեցին՝ վկա լինելու Աստծու Որդու մահվանը, բայց ոչ բոլորն էին միաբան՝ կցորդ լինելու Նրա կյանքին: Եկավ, ասում է, Հովսեփը՝ արդար այր, ազատ՝ ըստ բնության և հարուստ՝ ըստ աշխարհի, մարդկանցից ծածուկ և Աստծուց հայտնապես: Նա անմասն էր ոչ միայն նրանց չար գործերին, այլ նաև նրանց ամբարիշտ խորհուրդներին: Տե՛ս այդ մարդու քաջությունը. այն ժամին, երբ բոլորը միաբանել և հեռացել էին Աստծուց, միայն նա զինվեց առաքինության ծածուկ զենքով, առավ իր հավատի բազմագունդ զորքերը, քաջալերվեց և պատերազմի մեջ մտնելուց առաջ տեսավ հաղթանակը, թե՝ պատերազմակից կլինեմ Աստծուն և կհաղթեմ մարդկանց: Բայց գիտեմ, որ ոմանք, այս լսելով, բնավ չեն զարմանում ասածս խոսքերի վրա. սա սովորությունն է անփորձ մտքերի: Եղբա՛յր, փոքր բան մի՛ համարիր այս, քանզի զարհուրելի էր տեղը, և երկյուղալի էր ժամը, [մեծ էր] մահվան վտանգը նրա համար, ով կհամարձակվեր ասել, թե արդար էր այն մարդը, որ մեռավ. քահանաները ոչ միայն աղոթքից կհանեին նրան, այլև ավազակներից առավել չար մահով կսպանեին: Ավետարանագիրը նույնպես քիչ չի պատմում այս մարդու առաքինության մասին, այլ շատ և մեծապես:

«Եկավ, ասում է, Հովսեփ Արեմաթիացին, համարձակվեց ու մտավ դատավորի մոտ և խնդրեց Հիսուսի մարմինը» (տե՛ս Հովհ., ԺԹ 38): Երբ լսես՝ համարձակվեց, փոքր բան մի՛ համարիր այն, այլ հոգով ու մարմնով ճգնություն.

հոգով, քանզի այն ժամին մեծ հավատ էր պետք (քանի որ վերցնում էր ոչ լոկ իբրև մարդու, այլ իբրև Աստծու Որդու մարմին), մարմնով՝ նրա մահվան վախը ոչ միայն ժողովրդից էր, այլ առավել ևս դատավորից և նրա սպասավորներից, որովհետև մտածում էին՝ ի՞նչ է խնդրում այս մարդը. մի Մարդու, որ այնքան բազմության կողմից վկայվեց, թե մահապարտ է, որը և ըստ հանցավորների օրենքի խաչվեց ու մեռավ, իսկ սա եկած՝ խնդրում է Նրան՝ իբրև հանցանք Զունեցողի, իբրև Անմեղի և հանիրավի Մեռածի, իբրև Աստծու մեծ և ճշմարիտ Վկայի է խնդրում. գուցե շուտով նաև մեզ վրա հասնի պատուհասի պատիժը:

Այս մարդը չմտածեց այս ամենը, այլ ինչպես որ նախապես հաստատվել էր Քրիստոսի ճշմարտության, այդպես և առավել հաստատուն մնաց մահվան մեջ: Վերցնելով Հիսուսի մարմինը՝ պատեց ոչ թե շտապելով, անփութորեն ու անխոհեմաբար, այլ մեծ խորհրդով և զորությամբ. պատեց սուրբ և պատվական կտավներով, զմուռսով ու անուշահոտ խունկերով, և սրա մեջ Սուրբ Հոգու նախախնամությունը կար: Ահա և ոսկին, որ առաջ ընդունել էր մոգերից, փոխանակեց [կայսեր] պատկերը կրող դահեկանով՝ ժողովրդի որդիներին ասելով. «Այն, ինչի վրա կայսեր պատկերն է, կայսրինն է, իսկ ինչի վրա երևում է իմ պատկերը, իմն է: Իշխանություն ունեցող մարդիկ իրենց արձաններն են կանգնեցնում, իրենց դեմքն են պատկերում դրամի վրա, որպեսզի ոսկին պատկերագրով մեծարվի և հարգվի աշխարհում: Ես իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դեմքին նկարեցի, և մարդուց բացի ուրիշ ոչինչ աշխարհում չի կրում Աստծու նմանությունը, Աստված ոչ մեկի մեջ չի երևում, այլ միայն մարդու, Աստված ոչ մեկին չի երևում, բացի միայն մարդուց, Աստված երկրից ոչ մեկի չի սիրում, այլ միայն մարդուն. միայն Աստված է մարդասեր,

և միայն մարդն է աստվածասեր, Աստված՝ մարդուն, և մարդը՝ Աստծուն. Աստված միայն մարդու համար մարդացավ, և Աստծու համար մարդն աստվածացավ: Ուստիև. «Գնացե՛ք, տվեք կայսրինը կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն» (Ղուկ., Ի 25):

Քրիստոս երկրպագող մոգերից նախապես ընդունել էր այս ընծաները. ոսկին, ինչպես ասացի, ի պատիվ թագավորության, իսկ զմուռսն ու խունկը՝ ի պատիվ վիրավոր մահվան և թաղման: Նա մարդկանց ձեռքով կտավներով պատվեց, որպեսզի դու Աստծու Որդու փառքի պատմուճանի զգեստով պատվես: Նրա մարմնի դին զմռսվեց, որ պահի՝ երկարժամանակյա անխախտելի տևողությունն է, որպեսզի զմռսի քեզ ոչ ժամանակի տևողության, այլ Սուրբ Հոգով նորոգման անմահության մեջ: Նա, Ով պիտի խնկի ամենքին կենաց Լույսից բխող անուշության հոտով, մեռած մարմնի պես խունկերով պատվեց և դրվեց նոր գերեզմանում, որի մեջ երբեք ոչինչ չէր դրվել: Նա քեզ գերեզմանի փոխարեն երկնավոր անձեռակերտ քաղաք պիտի տանի:

«Եվ դրեց, ասում է, մի մեծ քար, որպես կափարիչ, գերեզմանի դռան առաջ և գնաց» (տե՛ս Մատթ., ԻԷ 60): Լավ ես անում, տե՛ր Հովսեփ, որ մեր Տիրոջ թաղման ճշմարիտ վկան ես լինում, որովհետև գիտես, որ ազգդ ժխտող է. գուցէ վաղը կուրանա, թե՝ Նրան բնավ չենք դրել այդ գերեզմանում, քանզի շատ են նրանք, որ ստում են, բայց շատ եք և դուք, որ չգիտեք ստել: Քո գործակիցն է Նիկոդեմոսը. նա էր, որ Տիրոջ հետ ճարտարորեն խոսքերի քննության մեջ էր մտնում: Քեզ վկայում են գերեզմանը փորողները, վկայում են կտավների վաճառականները, վկայում են հարյուր լիտր զմուռսը վաճառողները, վկայում են դիակը զարդարողները, որ խնկեցին տերունական մարմինը, վկայում են և օգնականների ձեռքերը, որ այն մեծ վեմը հե-

նեցին գերեզմանի դռանը, եթե արժան է գերեզման անվանել այն, այլ ոչ կյանքի հարություն:

Տե՛ր իմ Հովսեփ, հիշեցի նաև քո ամենամեծ վկային՝ դատավորին, որի մոտ գնացիր և մարմինը վերցնելու իշխանություն խնդրեցիր: Իսկ այժմ ինչո՞ւ է այդ անում. եթե բոլորը միաբանեն նրանց և ստեն, ի՞նչ պիտի ունենան խոսելու, երբ դու հարություն Առածին ձեր մեջ ունենաս: Եթե պնդեն ու քո դեմ համառեն, ինչպես որ սովոր են, նրանց կասես՝ ինչպես որ կապանքների մեջ տվեցիք Պիղատոսին, Պիղատոսը տվեց զինվորներին, զինվորները տվեցին խաչին, և խաչը տվեց գերեզմանին, այժմ թող ձեր ընտրությունը լինի. թեպետ գերեզմանից ինձ տվեցիք Մեռածին, թեպետ առաք ընդունեցիք Հարություն Առածին, ապա եթե չանեք սրանցից մեկը, դուք ուրիշ գործ չունեք այլևս, այլ միայն հրաժարվել և հեռու գնալ հարություն Առածից, որը և արեցիք: Այժմ դու, տե՛ր իմ Հովսեփ, խնդա՛ և ուրա՛խ եղիր. մեծ էր առաջին Հովսեփը, արդարև արժանի մեծամեծ հայտնությունների. մեծությունը ձգվեց Հովսեփից Հովսեփ. նա՝ վկա սուրբ Կույսի անարատ ծնունդին, իսկ սա՝ վկա Նրա թաղմանը. և այս երկու ճշմարիտ վկաներից Նրա լուսավոր հարության վկաների այլ բազմություն պիտի երևա:

«Դարձյալ եկան, ասում է, քահանաները Պիղատոսի մոտ և ասացին. «Տե՛ր, հիշեցինք, որ այն Մոլորվածն ասում էր, թե՝ երեք օրից հարություն պիտի առնեմ մեռելներից: Արդ, հրամայի՛ր, որ պահպանեն Նրա գերեզմանը. գուցե աշակերտները դավ նյութեն, և շատերը մոլորվեն այդ լուրից»: Պիղատոսը նրանց ասաց. «Զինվորներ ունեք. գնացեք և գերեզմանի ապահովությանը հոգ տարեք, ինչպես որ գիտեք» (Մատթ., ԻԷ 62-65): Դատավորից այս հրամանն առնելով՝ երկու կողմերից մատանիով կնքեցին գերեզմանը: Ո՛վ փութաջան և զգուշավոր քահանաներ, լա՛վ եք անում, որ զգուշանում եք. դուք, որ ձեր անձերը պահել չեք կարող, կամենում եք Ուրիշի պահապա՞նը լինել, դուք, որ մոլորվել եք ճանապարհից, Նրան մոլորված ու մոլորեցնո՞ղ եք անվանում: Որտեղի՞ց գիտեք, թե Նա մոլորված է և արժանի չէ ճշմարիտ ճանապարհը ցույց տալու բոլորին. թերևս մեղադրեք մոգերին, որոնք մոլորեցրին Հերովդեսին, որովհետև օգուտ չուներ Նրան ճշմարիտ ճանապարհին կանգնեցնելը:

«Մենք հիշեցինք, ասում են, այն Մոլորվածին»: Ինձ թվում է՝ սխալ պատասխան եք տալիս. արժան չէ, որ դուք մոլորված անվանեք Նրան, այլ մոլորեցնող [պետք է անվանել] մոլորվածներիդ, ինչպես որ ասում է. «Մոլորվեցին նրանք անապատում և ոչ ճանապարհին» (Սաղմ., ՃԽ 4): Եվ թե ինչու է Սուրբ Հոգին ասում, հոգեկիր պատմությունն հայտնում է. «Զառաջնորդեց նրանց, ասում է, փղշտացիների երկրով՝ կարճ ճանապարհով, այլ շրջեցին անապատով քառասուն տարի» (տե՛ս Ելք, ԺԳ 17), որպեսզի անապատում սպառվի ամեն մի մեղք, և ապա խրատված՝ արժանի լինեն մտնելու պարգևների երկիրը: Ինչպես կարծում եմ՝ դուք մոլորվեցիք ո՛չ անապատում, այլ քաղաքում, ո՛չ խոստման երկրից, այլ երկնքի ու երկրի Տիրոջից, և այժմ եկած դատավորի մոտ՝ Նրան մոլորվա՞ծ եք անվանում: Մի՞թե մոլորեցնողը ճշմարտությունը կխոսի. թողե՛ք այդ, չպետք է կասկածել Նրա խոսքերին: Եթե ինչ որ առաջ անում էր, ճշմարիտ է, և ժխտել չեք կարող, իսկ եթե ժխտեք էլ, ձեզնից շատ են նրանք՝ Նրա հրաշագործությունների վկաները, ոչ միայն հիվանդություններից բժշկված ողջերը, այլ նաև մահացած և հարություն առածները, ոչ միայն ձեր ազգի զավակները, այլ նաև շատ հեթանոսներ, ավելի շատ են դևերից [ազատվածները]:

Արդ, եթե բոլորը Նրան մոլորվածներին Դարձնող անվանեն և ոչ մոլորված, և միայն ձեզ մոլորված թվա, գնացե՛ք, զգո՛ւյշ եղեք, գուցե սխալվեք և պատճառը այլ տեղ փնտրեք: Ահա դատավորը ձեզ բարերար թվաց, որովհետև կատարեց ձեր չար կամքը՝ ինչ որ ասացիք: Իսկ այժմ ոչ թե մեկ կամ երկու մարդ է օգնական տալիս ձեզ, այլ զինվորների մի ամբողջ գունդ, այն էլ այնպիսի գունդ, որ ունի առաջնորդ և պետ, որ մեծ է և հավատարիմ դատավորին:

Եվ գնացին մեծ պատրաստությամբ, իրենց դասի մատանիով կնքեցին գերեզմանի դուռը և իրենք էլ մնացին այնտեղ՝ մեծ զգուշությամբ անքուն պահպանելով, որ չլինի թե որևէ տեղից դավաճանություն լինի: Ո՛վ իմաստուններ, մանավանդ հույժ անմիտներ. եթե կամենա մեռելներից հարություն առնել, ամեն բան կարող է անել. գերեզմանի դուռը չի բացի, կնիքը չի կոտրի և Իրեն ցույց չի տա ձեզ. դուք ինչպե՞ս կարող եք իմանալ, թե հարություն է առնելու Նա, ում գերեզման դրեցիք. շատ թանձրասիրտ եք և առավել շատ թմրած ուղեղ ունեք: Համարե՛ք, թե դատավորի զինվորներն անտեղյակ են իբրև հեթանոսներ և ոչ ազգակիցներ, դուք, որ այդքան մեծամեծ սքանչելիքներ տեսաք նաև Նրա մահվան ժամին, տակավին անբան եք և չգիտեք, թե ինչպե՞ս կարող եք պահել Նրան, ով շարժեց երկիրը և դղրդացրեց երկինքը, Նրան, ում միջոցով պահվում եք դուք: Ձեմ կարող մեղադրել զինվորներին, որովհետև դատավորի սպասավորներն են և հարկադրված են կատարելու նրա հրամանները, իսկ քահանաներն ու դպիրները հույժ արժանի են լացի ու արտասուքի. Վեմի վրա վեմ են հենում, Վեմին՝ երկնքի ու երկրի Արարչին, արգելափակում են ներսում, վրան կնիք են դնում և պահակներով զգուշորեն պահպանում:

Տեսնո՞ւմ ես հիմարությունը. դու չես կարողանում պահպան լինել անգամ քո մտքին. մինչ սուրը տեղում ես կանգնած, [մտքով] անարժան վայրում ես, գտնվում ես քաղաքում, բայց տեսնում ես Իտալիան, գործում ես ցամաքի վրա, բայց ծովում՝ նավի մեջ ես նստած, երկրի վրա ես, բայց վերևում՝ երկինքների երկնքում, շրջում ես հրեշտակների գնդերի հետ: Բայց ձեր մասին գիտեմ, որ երբեք երկրից վեր բարձրանալ և երկնային գնդերին տեսնել չկարողացաք, այլ հանապազ այստեղ գետնաքարշ սողալով՝ նմանվեցիք սատանային՝ ձեր հորը, քանզի ոչ միայն հողակեր եք[48], այլև հոգով ու մարմնով հողահեղձ, որի պատճառով էլ չգիտեք, թե ինչ եք անում: Քանզի ինչպես որ ամեն բանով ամոթահար եղաք դատավորի և ամբողջ ժողովրդի առջև, առավել ամոթահար պիտի լինեք զինվորների առջև, որոնք պահպանում են գերեզմանը: Երբ դրանք ձեզ ճշմարտությունը պատմեն, կվարանեք ու կտարակուսեք. չեք կարող ստախոս անվանել նրանց, որովհետև հավատարիմ են ձեզ, հայտնել և արդարացնել չեք կամենում, քանզի կույր եք աչքով այդ դատավորից և ժողովրդից, միաժամանակ նաև Աստծուց: Այժմ ի՞նչ պիտի անեք, խեղճե՛ր, վա՛յ ձեզ, չունեք այլ մխիթարություն և ոչ էլ ապաստանի այլ տեղ, բացի նույն Նրանից, ում սպանեցիք ու թաղեցիք: Եվ որովհետև մարդասեր է, կընդունի և չի հիշի ձեր նախկին հանցանքները: Բայց ես գիտեմ, որ դուք այդ չեք անի, որովհետև արժանի չեք, այլ այդտեղից կգնաք դեպի տաճար, որովհետև դեռ մնում է ձեր սուտ հույսը: Գիտեմ, որ խորհուրդ եք անում, և ձեր միտքն ընթանում է դեպի այն նզովյալ արծաթը. կորցնելու եք այդ արծաթը, դրա հետ նաև ձեր ու բոլոր նրանց հոգիները, ովքեր լսելու են ձեր մոլորությունը:

Այլ մեր Տեր Հիսուս Քրիստոս արեգակի տակ գտնվողների փրկության ամբողջ գործը կատարեց և Իր ամբողջ

զորությամբ իջավ-գնաց երկրի ստորին կողմը՝ տեսնելու մահվան զորությունը և մխիթարելու ադամյան զավակներին՝ նրանց, ովքեր հուսահատությամբ նստած էին խավարի ու մահվան ստվերների մեջ: Եվ երբ հասավ դժոխքի ամուր պարիսպներին և պղնձյա նիգերով երկաթյա դռանը, մեծ Կարապետի ահագին ձայնը դողացնելով՝ կործանեց ամբողջ պարիսպը, կենդանի Հրի զորությունը մոմի պես հալեց, սպառեց կարծր նիգերով դռները, անեղ և անսկիզբ Լույսի ճառագայթները սփռվեցին նրա անմատչելի, ամուր վայրերի բոլոր ծալքերում ու խորշերում, մաշվեց, վերջացավ թանձրացած խավարը, և երևաց սանդարամետականի մերկ, խայտառակված ու զզրատես պատկերը:

Այնժամ մահը ճչաց, աղաղակեց, դառնապես լաց եղավ, բարձրաձայն գոչեց ու ասաց. «Ո՞վ է սա, որ եկավ մտավ իմ անմատչելի ամրոցը, բաժանեց ինձ իմ զգեստից՝ բնական խավարից: Նրա հրեղեն ահագին փառքից այրվում եմ այս տապակի տապի մեջ: Զմնաց ինձ խավար խորշ և գիշերվա մութ, ո՛չ փախչելու դաշտ, ո՛չ թաքնվելու լեռ և ո՛չ ապավինելու ծերպ. թե փախչեմ, չկա հեռաստան, թե մնամ, չկա մոտիկ խորխորատ: Անդունդներն աղաղակում են՝ այստե՛ղ է, լեռները մոմի պես հալչում են Սրա փառքի առջև: Գերեց ամբողջ տարտարոսս, դողացրեց խավարիս զորքերին՝ իմ ձախակողմյան զինվորներին: Վա՛յ է իմ շուրջը, ողորմելի եմ ես, կողոպտեց գանձս, ավար առավ ամբողջ հարստությունս, մխիթարության հույս չտվեց ինձ իմ սեփականությունից ոչինչ: Ո՞վ է Սա, ում ես չգիտեմ. Ենոքն ու Եղիան այստեղ չեկան, Աբրահամը, Իսահակն ու Հակոբը ինձ հետ այս չգործեցին, Նոյը, Աբելն ու բոլոր արդարները իմ [իշխանության] ներքո են գտնվում, Մովսեսն ու մարգարեները ինձ են հնազանդվում, Մելքիսեդեկն ու

բոլոր արդար թագավորները ինձնից չապստամբեցին: Ինչպե՞ս մեկ առ մեկ թվեմ անունները տղամարդկանց ու կանանց: Ահա սկզբից մինչև այսօր արդարներն ու մեղավորները, հզորներն ու տկարները, ծերերն ու երիտասարդները, նաև նրանք, ովքեր աշխարհի լույսը չտեսան, ինձ մոտ են հավաքված, բոլորը հնազանդ, իմ իշխանության ներքո են: Իսկ Սա ո՞վ է. երանի՜ թե մեկն ինձ ասեր: Եթե կարողանայի տեղն իմանալ, թերևս հնար էլ կիմանայի. եթե երկրից է, ապա կիմանայի գավառը և ազգատոհմը. բնությունը, որ տեսնում եմ, բոլոր մարդկանց նմանությունն ունի, մանավանդ մարմնի մասերի թիվը ո՛չ ավելի և ո՛չ պակաս եմ տեսնում, այլ ինչպես բոլորինն է, այնպես էլ Նրանն է: Բայց Սրա երեսից սաստիկ զարհուրում եմ, քանզի եթե ինձ մոտ իջնելիս շատերին կորզեց-հանեց ինձնից, վա՛յ ինձ, եթե չարակամներիս տեղը ելնի. վախենում եմ, որ բոլորին կտանի Իր հետ, և ես մենակ կմնամ: Իմ անձի համար էլ եմ վախենում, քանի որ ոչ միայն իմն է ինձնից հանում, այլև խավար տեղ չի թողնում ինձ, և ինչպես տեսնում եմ՝ այս խավարից դեպի այլ խավար է ուղարկելու ինձ: Երանի՜ այսպիսին լինի այն խավարը, ուր տանելու է ինձ: Բայց եթե այսպիսին է այն տեղը, ուր տանելու է ինձ, այստեղից ինձ չի հանի: Այժմ ահա հայտնի է, որ ինչպես չիմացա Սրա գավառը, այդպես էլ չգիտեմ այն խավարը, ուր պիտի տանի ինձ: Բայց ամենավատն ինձ համար այն է, որ ինչպես երևում է՝ եկել է ոչ միայն արդարների, այլ նաև բոլոր մեղավորների համար: Եվ եթե դա, հաշիվ անի ինձ հետ և ինձնից պահանջի ոսկորները վախճանվածների, որոնք ինձ մոտ եկան, թերևս կարող եմ տալ: Իսկ արդ, եթե Ենոքին ու Եղիային ինձնից պահանջի, եթե այդ էլ անի ինձ հետ, այնժամ կվտանգվեմ ու կտագնապեմ, կվարանեմ ու կտարակուսեմ, որովհետև գնալու տեղ չեմ գտնի»:

Երբ մահն իր մեջ այսպես տագնապում էր և ոչ մեկից մխիթարության խոսք չէր գտնում, դժոխքը նրան պատասխան տվեց և ասաց. «Մենք գիտենք Դրա բնությունը և ճանաչում ենք Դրա ազգատոհմը: Դա է, որի մասին Սուրբ Հոգին նախապես ասաց. «Վե՛ր քաշեցեք, իշխանն՝ե՛ր, ձեր դռները, թող բացվե՛ն հավիտենական դռները, և փառքի Արքան թող ներս մտնի» (Սաղմ., ԻԳ 7): Եթե կրկնես, երեք և բազում անգամ հարցնես, նույնը կլսես. «Զորությունների Տերը՝ Նա ինքն է փառքի Արքան» (Սաղմ., ԻԳ 10): Երբ մահը լսեց Տեր անունը, և որ հզոր է, պատերազմող և եկել է կռվելու մահվան իշխանության դեմ, քակտվեց, լքվեց ու կոտրվեց նրա ամբողջ զորությունը, կտրվեց նրա թագավորելու հույսը, Նրա երեսից սարսափած՝ շտապեց, փութաց փախչել ու թաքնվել, բայց տեղ չգտավ, բարձր ձայնով աղերսեց ու աղաչեց. «Ճանաչում եմ Քեզ, Նազովրեցի՛ Հիսուս, Դու Աստծու Սուրբն ես, ժամանակից շուտ մի՛ տանջիր մեզ»:

Արդ, երբ նրան կապեց և գամեց, մեխեց նրա ոտքերն ու ձեռքերը, պրկեց-կապեց անպարտելի խաչի զորությամբ և բոլոր նրանց, ովքեր հավատում են Խաչյալին և կատարում են Բան Աստծու պատվիրանները, զորություն տվեց գնալու իժերի, քարբերի և մահվան ամբողջ զորության վրայով, մեծ ավար առավ և բերեց բաշխեց բոլոր հավատացյալներին: Մինչ Տերը կատարում էր այս ամենը, պահապանները քնած էին, իսկ քահանաներն ուտում էին եղեգն ու բաղարջը: Տերը հարություն առավ ավելի կանուխ, քան ասված ժամը, և երևաց հրեշտակներին. ո՛չ գերեզմանը խախտեց, ո՛չ դուռը բացեց, ո՛չ կնիքը կոտրեց և ո՛չ էլ պահապանների աչքին երևաց: Հրեշտակները հույժ զոհանում են. նրանք, որ առաջներում չէին կարող նայել ու տեսնել ծածկված փառքը Աստծու Որդու, որ այսօր մեր փրկության համար գալով, երկնավորների, երկրավորների և սանդարամետականների Իր ամբողջ տնտեսությունը կարգով կատարելով, նոր աշխարհի նոր պտուղ երևալով նորոգապես նոր և նախնի, նախ իրենք ընդունեցին և ուրախացան Նրա տեսքով, որին առաջ կարոտ էին: Եվ որովհետև նրանք աննախանձ կամք ունեն և առանց ստության սուրբ սեր, ճեպելով փութացին ավետիս տալ կանանց ոչ միայն խոսքով, այլ նաև ցույց տալով: Շտապով գերեզմանի դռնից գլորեցին քարը և ներս մտնելով՝ երկրպագեցին տեղին, ուր մեղավորների փրկության և մեռածների կենդանության համար բազմել էր մարդացած Աստված: Խոնարհվեցին ու համբուրեցին ժայռը, մեծապես պատվեցին տերունական տեղը, սքանչացած զարմացան, թե Նա, ում բնակության համար բավական չէր երկինքների երկինքը, Իր մարդասիրությամբ ամփոփեց Իր փառքի մեծությունը, իջավ, բազմեց փոքրիկ տեղում և արժանավոր համարեց այն՝ երեք օր մնալու: Այնժամ միաժամանակ կատարեցին այն, ինչ ասել էր Դավիթը. «Երկրպագեցե՛ք այն տեղին, ուր կանգնած են ոտքերը նրա» (Սաղմ., ՃԼԱ 7), և դարձյալ՝ «Երկրպագեցե՛ք նրա ոտքերի պատվանդանին, քանզի սուրբ է» (Սաղմ., ՂԸ 5): Եվ այնքան սիրելի է տեղը, որ հրեշտակները ոչ միայն ներս մտան, այլև. «Նստել էին, ասում է ավետարանագիրը, մեկը՝ սնարին, և մյուսը՝ ոտքերի մոտ» (Հովհ., Ի 12): Արդ, երբ լսես, թե՝ նստել էին, մի՛ շտապիր հեռու գնալ այնտեղից, քանզի ոչ թե [մի որոշ] ժամանակով էին նստել, այլ նստեցին, նստած են և պիտի նստած լինեն մինչև այն Օրը, երբ միաբանություն կլինի մեր, հրեշտակների և այն աշխարհի միջև, ուր գնաց և երեք օր մնաց Քրիստոս և ժամադրեց բոլորին՝ ժողովվելու նույն գերեզմանի դռանը:

ԳԼՈՒԽ Դ

Արդ, հույժ սիրում եմ տեղը և չեմ կամենում հեռանալ գերեզմանի դռնից, այլ կամենում եմ հրեշտակների հետ նստել այնտեղ, տեսնել մեծամեծ սքանչելիքները, լսել հրեշտակների բերանից, որոնք խոսում էին կանանց հետ, և նրանց ավետիսի ձայնը հնչում է ամբողջ աշխարհում: Քանզի այն կանայք անունով տիրամայրեր են կոչվում, իսկ հավատով մեծ ու սքանչելի են ճանաչվում: Քանզի գիտեն նույն Տիրոջը անմայր՝ երկնքում և անհայր՝ երկրի վրա, և այն գթառատ մեծ սիրո համար, որ ունեին Նրա հանդեպ, անուշահոտ յուղեր էին բերել, որ թափեն գերեզմանի վրա:

Եվ քանի որ երեք օր ու գիշեր էր՝ կտրվել էր նրանց աչքերի քունը, առավոտ կանուխ Մարիամ Մագդաղենացին եկավ հասավ գերեզման, և որովհետև հրեշտակները գլորել էին քարը, նայեց ներս և տերունական մարմինն այնտեղ չտեսավ: Ուստիև լաց է լինում, կոծում է ողբալով ու ասում է. «Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ, որտե՞ղ փնտրեմ: Խաչից իջեցրին, դրեցին գերեզման, դուռը վեմով կնքեցին ու զգուշությամբ պահպանում են: Վկա եմ, որ աշակերտները գիշերը ոչ մի տեղ չգնացին, հրեաներից ոչ ոք այդ չէր անի մեծ շաբաթի պատվի համար, հեթանոսների հոգը չէ, մարդկանցից ոչ մեկի համար օրենք չէ շրջել դիակ գողանալու համար, ոչ մի կասկած չկա գազանների վրա՝ մեծ վեմի ծանրության պատճառով, առավել ևս, որ զինվորները պահպանում են այն: Իսկ եթե կարծեմ, թե հարություն է առել, դեռ շատ շուտ է. ուրբաթ երեկոյան թաղվեց, ահա երկու գիշեր, մեկ ցերեկ և երկու ժամ է անցել. չէ՞ որ Նա ասաց, թե երեք օր ու երեք գիշեր պիտի մնա երկրի սրտում: Եվ մի՞թե Նա, ով ամեն բանում արդար էր խոսում, այստեղ ստեց. քա՛վ լիցի, չե՛մ կարող կասկածել Նրան. երբեք սուտ չխոսեց, արդար էր ամեն բանում, և ամեն բան, որ ասաց Իր կենդանության ժամանակ, եղավ և կատարվեց, միայն սա՞ սուտ կլինի արդյոք: Արդ, ես չգիտեմ, թե իսկապե՞ս հարություն է առել կամ էլ որևէ մեկի կողմից նենգվել»:

Այս ասելով՝ ծեծում էր կուրծքը և արտասվում էր, քահանաների ահից և զգուշանալով պահապաններից՝ բարձրաձայն ճչալ չէր համարձակվում, այլ փղձկում էր իր սրտում, խեղդվում էր իր մտքում և մխիթարություն չէր գտնում, մինչև հրեշտակը, հույժ գթալով, ողորմեց նրան և ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես հուսահատ լաց լինում, անմխիթար սգում ու կոծում, ասա՛ ինձ պատճառը, թերևս կլսես անսուտ պատասխանը»: Եվ նա ասաց. «Որովհետև իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են, և չգիտեմ՝ Նրան ուր են դրել» (Հովհ., Ի 13): Հրեշտակը նրան ասաց. «Լավ է, որ սուրբ հավատ ու սեր ունես, բայց իմաստությամբ չէ, որ դառը արտասուք ես թափում գերեզմանի վրա: Ո՞վ է լսել ու տեսել, որ մեռածները ողջին փնտրեն, և կամ մարդիկ որոնեն կենդանի Աստծուն: Ինձ թվում է՝ դու ավելի հիմար ես, քան պահապանները: Եթե կամենում ես, ե՛կ, մոտեցիր այս տեղին և տե՛ս, որ հարություն առավ. այստեղ չէ: Ինչո՞ւ ես փնտրում ողջին մեռածների մեջ»: Այս ասելով՝ կնոջը մեծ տարակուսանքի մեջ դցեց:

Հրեշտակը դարձյալ նրան ասաց. «Եթե ինձ, որպես օտարերկրացու, չես հավատում, հարցրո՛ւ քո գավառակիցներին, որոնք հավատարիմ են դատավորին և խորհրդակից են ձեր քահանաներին. նրանք կպատմեն ոչ միայն ձեզ, որ Նրա սիրելիներն եք, այլ նաև Նրա թշնամիներին: Բայց Նրա հարության ժամը ես չգիտեմ. կարծում եմ՝ երկրա-

շարժի ժամանակ եղավ այդ. ես և իմ շատ ընկերներն այս-տեղ՝ գերեզմանի մոտ էինք, և մեզնից ոչ ոք չիմացավ. բո-լորս նայեցինք գերեզմանի դռանը. վեմն անխախտ էր, և կնիքները պարզ երևում էին: Իսկ մենք, երկրաշարժից վա-խեցած, բացեցինք դուռը և Նրան ներսում չտեսանք, մին-չև որ Ինքը, ողորմելով, մեզ երևաց մոտ մեկ ժամ: Բայց այժմ մենք էլ չգիտենք՝ ուր է, բայց չենք համարձակվում թողնել մեր տեղը, որովհետև այնքան է սիրում վեմը, խա-չը, վիմափոր գերեզմանը և առավել ձեզ, որ փնտրում եք Իրեն: Եվ այս ամենի պատճառով թող դարձյալ մեզ ողոր-մի, և արժանի լինենք կրկին տեսնելու մեռելներից հա-րություն Առածին»:

Եվ մինչ հրեշտակը կնոջ հետ խոսում էր այս ամենը, ա-հա պահապաններից ոմանք թափվեցին մտան քաղաք՝ պատմելու քահանայապետներին: «Ո՞ւր եք, ասում են, ին-չո՞ւ եք նստել, տեսեք՝ ի՞նչ պիտի անեք. իսկապե՛ս հա-րություն առավ, թաքցնել չենք կարող: Ահա բողոքում ենք դատավորի ապարանքի մոտ և աղաղակում ենք ամբողջ քաղաքում: Չենք կարող ուրանալ հարության ահագին տեսիլը, քանզի վերջին երկրաշարժը մեծ էր, քան առաջի-նը. որովհետև խաչելության ժամին մենք այնտեղ էինք և տեսանք մեծամեծ ու ահագին բաները, որ այնտեղ եղան: Բայց այն օրը մեզ համար ավելի դյուրին էր, քան այս օրը, քանի որ մեր սրտերը սարսափեցին ոչ միայն երկրաշար-ժից, այլ նաև մեզ երևացին մարդիկ, որոնք չգիտեմ, թե որ-տեղից էին՝ երկրի՞ց, թե՞ երկնքից, խիստ լուսավոր էին ու ահագին, այնքան լուսավոր, որ եթե կեսօրին երևային, ա-րեգակի ճառագայթները կծածկվեին նրանց անմատույց լույսից: Բայց զարմացած ենք, թե ինչպե՞ս է, որ դուք չտե-սաք, կամ նրանց բոցի տապը այստեղ ինչպե՞ս չազդեց. այնտեղի քարերը եռացին, հողը երաշտից ցամաքեց, մենք

կիսամահ գետնին ընկանք, և մեզնից շատերը, որ այնտեղ մնացին, մեռել են»:

Երբ քահանայապետները զինվորների բերանից լսեցին այս ամենը, սկսեցին պատասխանել. «Եթե ինչպես դուք ա-սում եք, այդպիսի ահագին գործեր եղան, և ձեզնից ոմանք կիսամահ ընկած են, ինչպե՞ս է, որ դուք կարողացաք գալ և պատմել մեզ»: Զինվորները պատասխանեցին և ասացին. «Երբ գիշերը դեռ չէր լուսացել, գերեզման եկան մի քանի երանելի կանայք, որոնք բերում էին անուշահոտ յուղեր ու սքանչելի խունկեր՝ իբրև աստվածային նվերներ: Երբ նրանք մոտենում էին գերեզմանին, այդ ժամին մեզ հույժ դյուրություն եղավ. թող օրհնյալ լինեն այն կանայք, երա-նի՛ այն քաղաքին, ուր նրանք ապրում են. և հիրավի երա-նի ենք տալիս այդպիսի կանանց: Մենք այնպես թմրել և վայր էինք ընկել՝ չկարողանալով ոտքի կանգնել, նրանցից մեկը աներկյուղ ու անվախ մոտենալով՝ նայեց գերեզմանի մեջ: Եվ երբ այնտեղ չտեսավ մարմինը և սկսեց դառնորեն լաց լինել, այն մարդկանցից Մեռածի մասին պատասխան լսեց, թե հարություն է առել և կենդանի է: Ինչպես այդ պահին իմացվեց, նրանք մարդիկ չէին, այլ հրեշտակներ, ո-րոնք կանանց մերձավորագույն նշաններ էին տալիս՝ խաչ-վածին խոստովանելու իբրև Աստված և ո՛չ մարդ, կենդա-նի և ո՛չ մեռյալ, քանզի երբ այդ կանանց գալու ժամանակ մեզ դյուրին եղավ, մենք ինքներս էլ երևացողների բերա-նից լսեցինք պատասխանը. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Զե՞ք հիշում՝ ինչպես կանխավ ձեզ ասաց, թե պետք է մեռնի, թաղվի և երրորդ օրը հարություն առ-նի: Եվ եթե այդ չեք հիշում, այժմ ահա տեսեք՝ հարութ-յուն է առել, այստեղ չէ: Ահա Նա ձեզնից առաջ Գալիլիա է գնում, այնտեղ կտեսնեք Նրան. ահա ասացի ձեզ» (տես՛ Ղուկ., ԻԴ 6-7, Մարկ., ԺԶ 6-7):

Քահանայապետներն, այս լսելով, զարմացան, հիացան, և նրանց սրտերը բեկվեցին, հասկացան, որ ճիշտ են ասում, խորհրդակցեցին ու ասացին. «Այժմ ի՞նչ պիտի անենք. ո-րովհետև այսպիսի հայտնությամբ հարություն առավ, մարդիկ ու հրեշտակները տեսան, պահակները, որ խնդրե-ցինք դատավորից, մեծամեծ նշաններով պատմում են Նրա՝ հարություն առած լինելու մասին. այժմ էլ Գալիլիա է գնում, և մեծապես մեծ կլինի հայտնությունը այնտեղ»: Եվ որովհետև ուրիշ հնար գտնել չկարողացան, ձեռք ձգեցին տաճարի գանձերին, բազում արծաթ տվեցին պահակներին և սովորեցրին նրանց պատասխանել այնպես, ինչպես հրա-մայվել էր նրանց դատավորի կողմից:

Իսկ Մարիամն այնտեղ հրեշտակների հետ փարում է գե-րեզմանի շուրջը, փնտրում է հարություն Առածին և հույժ ջերմ սիրուց աչքերով անդադար որոնում է Նրան, մինչև որ նրան չնորհվեց փափագելի երևումը՝ ո՛չ թե որևէ հրեշ-տակի, այլ Տիրոջ՝ Հիսուսի: Ավետարանագիրը գրում է. «Երբ հրեշտակն այդ ամենն ասաց նրան, նա նայեց այն տեղին, ուր խաչ էր հանվել Հիսուս, և այնտեղ տեսավ Տի-րոջը, բայց ճանաչել չկարողացավ, կարծեց, թե պարտիզ-պանն է, և խանդաղատալի բառերով ասաց Նրան. «Տե՛ր, եթե Դու ես վերցրել Նրան, ասա՛ ինձ՝ ուր դրեցիր Նրան, որպեսզի ես վերցնեմ» (տե՛ս Հովհ., Ի 14-15):

Բարի է ողջ գիշերվա տքնանքդ, ո՛վ Մարիամ, և գեղե-ցիկ է առավոտյան փնտրտուքդ. մարդկանցից ոչ ոք չի զրկում իր հանդեպ վաստակ ունեցողին, և ոչ էլ Աստված կզլանա քո չարչարանքի վարձը տալ. քո գիշերվա չարչա-րանքի վարձը հրեշտակը հատուցեց՝ քեզ ավետիս տալով Նրա՝ մեռելներից հարություն առած լինելու մասին, իսկ սրտիդ կարոտի տապը փարատում է պարտիզպանի երևու-մը: Ինչպես ինձ է թվում, գտար գողին, ոչ միայն գողին,

այլ գողի հետ նաև Գողոնը գտար. քաջապնդվի՛ր, իրոք Նա է, և ոչ ուրիշից գողացածը, այլ Իրենն իսկ առած ունի: Մի՛ ասա. «Եթե դու ես վերցրել», իբրև ուրիշը՝ մի ուրիշի իրը, այլ ունի և Իրե՛նն ունի: Նա՛ է, որ դրվեց այդ գերեզմա-նում, Նա՛ է, որ այնտեղից հարություն առավ, Նա՛ է, որ խաչվեց, Նա՛ է, որ մեռելների մոտ գնաց, Նա՛ է, որ մտավ հզորի տունը, Նա՛ է, որ կապեց հզորին, Նա՛ է, որ նրա գանձերն ավար առավ, Նա՛ է, որ շատ-շատերին պարգևներ տվեց, Նա՛ է ճշմարիտ պարտիզպանը, Նա՛ է, որ դրախտ տարավ ավազակին: Նրա՛ն էիր փնտրում, Նրա՛ համար էիր լաց լինում, Նրա՛ մասին հրեշտակից լսեցիր, թե՝ հարութ-յուն առավ, Նրա՛ համար էիր ողբում, Նրա՛ համար է հրեշ-տակը շրջում գերեզմանի շուրջը, Նրա՛ համար բերեցիր յուղն ու խունկերը. եթե Նրա համար բերեցիր, ուրիշին մի՛ փնտրիր: Բայց որ ասացիր. «Ո՞ւր դրեցիր Նրան, ցո՛ւյց տուր ինձ , որ ես վերցնեմ Նրան», գիտեմ, որ սիրուց ասա-ցիր, և եթե Իրեն տա քեզ, տանել չես կարող, ո՛չ մյուս Մա-րիամը՝ Հակոբոսի մայրը, ո՛չ Կղեովպասի Մարիամը, ո՛չ Ղազարոսի քույրը և ո՛չ էլ կույս Մարիամը, որ Նրա մայրն է, տանել չեն կարող: Եվ եթե բոլորդ միաբանեք, Նրան չեք կարողանա տանել, քանզի հույժ ծանրացավ: Այսուհետև ծանր է [նրանց համար], ովքեր կամենում են մարմնով մո-տենալ Նրան, և թեթև է նրանց համար, ովքեր հավատով են մոտենում Նրան, որ այժմ պիտի լսես Նրանից: Քանզի երբ Մարիամը իմացավ, ասում է, թե Հիսուսն է Նա, Նրան հին սովորությամբ ասաց՝ Ռաբունի՛, որ նշանակում է վար-դապետ: Ահա դեռևս մարմնի մեջ ես, Մարիա՛մ, և մարմնա-պես ես լաց լինում, մարմնապես խոսում, մարմնապես փնտրում: Արդ, ինչպես որ գթաց ու հայտնվեց քեզ Իր նույն՝ նախկին կերպարանքով, այդպես էլ կամենում ես մոտենալ Նրան թանձրությամբ, այդ պատճառով ես լսում

պատասխանը. «Մի՛ մոտենա ինձ, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել» (Հովհ., Ի 17): Եվ ինչո՞ւ էր արդյոք այս ասում. որովհետև նոր կենաց ծառի պտուղ էր, հանձն չառավ, որ կանայք տղամարդկանցից առաջ մոտենան Իրեն, բավական համարեց կանանց ազգը պատվել Իր ծննդյամբ, իսկ հարությամբ երևալը հայտնում է հրեշտակների միջոցով, որոնք ազգակցություն ունեն տղամարդկային բնության հետ, այցելությամբ և հրեշտակների առաջնորդությամբ երևաց կանանց և ուղարկեց նրանց աշակերտների մոտ:

Այստեղ երկու բան հայտնելով՝ Մարիամին ուսուցանում է Իր բարձր բնության մասին՝ ասելով, որ Իր Հայրը երկնքում է, և մխիթարում է Իր աշակերտներին՝ նրանց եղբայրներ անվանելով: Քանզի երբ ասում է. «Ես գնում եմ իմ Հոր և ձեր Հոր մոտ» (Հովհ., Ի 17), Իրեն հավասարեցնում է աշակերտներին և Իրեն ու նրանց մեկ Հայր է ցույց տալիս, բայց Իր համար՝ առանձին, իսկ նրանց բոլորի համար միասին ասելով: Հույժ անջրպետելով՝ զատում է միմյանցից և հայտնությամբ իմացվում իմաստունների հոգում. որովհետև բնությամբ մարդ է բոլորի նման, Իրեն ըստ աշխարհի հավասարեցնում է [մարդկանց], և անեղությամբ Աստված է Հոր հետ, Իրեն զատում է ոչ միայն աշակերտներից, այլ ամեն մի բանական գոյից: «Եվ իմ Աստծու մոտ և ձեր Աստծու մոտ» (Հովհ., Ի 17): Ահա մենք գիտենք, որ Աստված է, Արարիչ, Թագավոր և Տեր, և գոհանում ենք արարչական զորությունից, Նա մեր վերակացու Թագավորն ու Խնամածուն է, և եթե ընդդիմանում ենք, Նա մեր Տերն է, դատում է, խրատում և ուղղում:

Իսկ որ Քո Հայրն է, Տե՛ր, գիտենք, քանզի ճշմարտապես Քեզնից սովորեցինք այդ: Ինչպե՞ս ես ասում. «Ես գնում եմ իմ Աստծու մոտ և ձեր Աստծու մոտ»: Այո՛, որովհետև ձեր Հայրն է արարչությամբ, իսկ իմ Հայրն է ծնողությամբ, ձեր Աստվածն է, ինչպես արդեն ասացի, ձեզ ստեղծելով, իսկ իմ Աստվածն է տնօրինությամբ: Բայց իմն է՝ առանձին միայն, իսկ ձերն է ո՛չ առանձին, այլ ամեն բանի՝ մարդկանց, հրեշտակների, երկնքի, երկրի, բոլոր տարերքների: Եվ որպես Հայր՝ Իր բարերարությամբ առանց որևէ մեկի խնդրելու Որդու միջոցով ստեղծեց այս աշխարհը, երևացող ու աներևույթ ամեն բան, նույն մարդասիրությամբ էլ Որդին Հոր կամքով հանձն առավ մեր բնությամբ մարմնանալ, Իր մարմնով չարչարվեց խաչի վրա մահվան չափ, թաղվեց և հարություն առավ: Եվ Աստված դրա համար մարմնացավ, բայց այսուհետև ոչ թե մարմին, այլ Աստված է, և Աստված է ոչ առանց մարմնի, և մարմինը՝ այլևս ոչ ծանր բնությամբ, այլ՝ աստվածային, անփոփոխ և անչափ, աներբ, անժամանակ ու անվայր: Անբաժանելի ու անքակտելի է Աստված Բանը, միշտ անճառ ու անպատում, Նրա հետ անճառելի է նաև մարմինը: Միշտ Աստված՝ Ինքն Իր մեջ, ոչ տեղի մեջ, այլ բոլորի տեղ, ոչ ժամանակի մեջ, այլ ժամանակը Նրանից է, ոչ եղածի մեջ, այլ բոլոր եղածները Նրանով են, Նա վեր է ամեն բանից՝ երկնքից, երկրից և երկինքների երկնքի շրջագծ բնությունից, Նրա հետ իմացեք նաև կուսածին մարմինը: Այս ամենի համար իշխանություն ունենք անվանվելու Քրիստոսի եղբայր և Նրա հետ մեր Հայր ասելու Աստծուն, քանզի մի մասի հետ, որ միացավ Բան Աստծուն, վեր բարձրացավ, երկինք ելավ և նստեց Հոր աջ կողմում, մեր մարդկային բնության բոլոր մասերը ընդունեցին լուսո ավետիսը, որպեսզի Նրանով և Նրա միջոցով վեր բարձրանան և հասնեն ու ժառանգեն անախտ ու անչարչարելի տեղը, ուր Աստծու Որդին նստում է Հոր աջ կողմում:

Սրա համար էլ Տերը Մարիամ Մագդաղենացուն ուղար-

կեց աշակերտների մոտ՝ ասելով. «Ես գնում եմ իմ Հոր և ձեր Հոր, իմ Աստծու և ձեր Աստծու մոտ»:

Եվ Մարիամը եկավ ու Պետրոսին ու Հովհաննեսին պատմեց, որ տեսել է Տիրոջը, և Նա խոսել է իր հետ այդ բաները: Պետրոսն, այդ լսելով, հիշեց Տիրոջ ասած այն խոսքը, թե՝ «Երեք օրից հարություն պիտի առնեմ» (Մատթ., ԻԷ 63): Շտապ վեր կացավ, Հովհաննեսի հետ վազեց դեպի գերեզման: Եվ որովհետև շատ էին շտապում, յուրաքանչյուրը ջանում էր առաջինը հասնել. առաջինը հասավ Հովհաննեսը, նայեց, բայց ներս չմտավ: Հասավ նաև Պետրոսը, միասին մտան ու գերեզմանը տեսան թափուր այն մեծ Գանձից, որ ավանդվել էր այնտեղ, միայն կտավներն էին ընկած բարձրացված քարի վրա, իսկ վարշամակը, որով պատել էին գլուխը, կտավի հետ չէր, այլ ծալված դրված էր առանձին:

Իսկ ի՞նչ է նշանակում այն, որ կտավներն ընկած էին, և վարշամակը կտավներին չէր խառնված: Ըստ բնախոսության՝ հայտնի է բոլորին, որ երկնավոր բնակիչները երկրավոր հանդերձների կարիք չունեն, իսկ երկնքի ու երկրի Տերը Իր զորությամբ և բնական փառքով ծնվեց սուրբ Կույսից. մի՞թե Հոր մոտ չպիտի բարձրանա այն զորությամբ, ինչ զորությամբ որ Հորից եկավ մեզ մոտ: Բայց ես կասեմ նաև՝ ըստ մեր բնության. այս աշխարհի Տերը մեզ համար եկավ աշխարհ, իսկ երբ մերը դեպ Իրեն տարավ, մեր պետքերի կարիքը չկար այնտեղ. կտավները թողեց այստեղ, և որովհետև կտավներն այստեղ մնացին, աշխարհը մնաց սգի ու չարչարանքի մեջ այս երևումով, որպեսզի դու քեզ ըստ քո Վարդապետի պատրաստես: Քանզի ամբողջովին մերկ էիր աշխարհում և մինչ աշխարհում էիր, վեր բարձրացար սրա պետքերի համեմատ, իսկ երբ ելնես այստեղից, քեզ հետ ոչինչ տանել չես կարող, այլ պիտի գնաս այնպես,

ինչպես որ եկել ես: Եթե նախապես իմանաս այս, քո կենցաղավարությունը հրեշտակներին կնմանվի, և քո վախճանի ելքը Տիրոջը կհետևի:

Իսկ վարշամակի մեջ մեծ խորհուրդ ենք տեսնում, որովհետև մարդու և Աստծու հարություն էր. մարդու՝ ըստ բնության, Աստծու՝ ըստ տարաբնության. երկուսը միացած այլևս երկու չեն, այլ մեկ դոյ: Այնտեղ երևացին հույժ օրինավոր բաներ, որոնք և մեծ առաքյալը մեզ ցույց է տալիս հաստատուն վկայությամբ. «Կնոջ գլուխը իր ամուսինն է, իսկ մարդու գլուխը՝ Քրիստոս, և Քրիստոսի գլուխը՝ Աստված» (տե՛ս Ա Կորնթ., ԺԱ 3): Գլխից գլուխ աստիճանավորում է այս աշխարհը և բոլորին հանելով տանում է դեպի բոլորի Հայրը:

Այս պատճառով էլ այլ կտավների մեջ ամենապատվականը երևաց վարշամակը, որպեսզի դու ճշմարտապես իմանաս ո՛չ զատումն ու բաժանումը, ո՛չ սեղմ միությունը և ո՛չ էլ այն, թե այլ մեկինն է գլուխը, այլ Նրանը, ում մարմինն է, և ո՛չ էլ այլ մեկինն է մարմինը, այլ նույն գլխինը, և ո՛չ մարմինը գլուխ է, և ո՛չ գլուխը՝ ոտք, այլ բազում անդամներ կարգված, հաստատված և կազմված են յուրաքանչյուր մարմնում, որովհետև պատիվը գլխինն է, նույն գլխի հետ նաև մարմնի բոլոր մասերն են պատվում:

Իսկ եթե այդպիսին է մեր տեսնելու ունակությունը, ապա որքան ավելի՝ իմանալի բնությանը: Գլուխ է Աստվածությունը, գլուխ է Որդիությունը, գլուխ է և Սուրբ Հոգին:

Մտքիդ աչքերով նայիր, տես և հավատով լսի՛ր տերունական այն խոսքը, որ ասում է. «Ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին, և ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը» (տե՛ս Մատթ., ԺԱ 27), և Սուրբ Հոգու միջոցով ճանաչվում է Հայրը, [ճանաչվում է] և Որդին նույն Սուրբ

Հոգով: Քանզի Աստված Հոգի է, և Հոգին՝ Աստված, Հոգի է Որդին, Հոգի է և Սուրբ Հոգին: Եվ քանի որ այսպես է, ո՛չ Հայրը Որդի է, ո՛չ Որդին՝ Հայր, ո՛չ Սուրբ Հոգին՝ Հայր և Որդի:

Հայրը արարչական զորություն է, որ թագավորական զորության նշանակն է, Որդին բնական զորություն է, որով երևում է դատողական զորությունը, Հոգին քավչական զորություն է, որով հայտնի երևում է կենարար զորությունը: Եվ ասվում է միասնական Աստվածություն: Հաճում է Որդին Իր բուն անունը, որ զորություն է և իմաստություն, և նույն Ինքը՝ ծնելություն և անեղություն, հաճում է Սուրբ Հոգին Իր անձն ու էությունը, որ բխում է Աստծուց, անճառելի և անպատմելի: Հոր կամքը Հայրության Աստվածության մեջ է, որ պատճառն է ճառելիներիս և անճառելիների:

Արդ, ծալեց ու մի կողմ դրեց վարշամակը. Ինքը՝ Քրիստոս, պատվեց Իր գլուխը: Եվ արդ, ո՞վ է մեծ. պատվվո՞ղը, թե՞ պատվողը:

Եթե ուրիշը պատվվեր մեկ ուրիշի կողմից, այդպես կլիներ, բայց եթե Ինքն էր Իրեն պատվում, ինչպե՞ս կարող ես անբաժանելիին բաժանել: Եվ ինչպես որ անջրպետ չկա Քրիստոսի ու Նրա գլխի միջև, այդպես էլ՝ Քրիստոսի և Նրա Հոր միջև, այլ միայն՝ պատվի խորհուրդ, որպեսզի ուսուցանի տասներկուսին[49]:

Հայրը հարություն էր տալիս, Որդին հարություն էր առնում, Սուրբ Հոգին ավետում էր արարածներին: Եվ ինչպես որ արարչության ժամանակ էր հավասարություն. Հայրը կամենում էր, Որդին արարում էր, Սուրբ Հոգին զարդարում էր, Քրիստոսի հարությունն էլ լինելության սկիզբն էր նոր աշխարհի, ուստիև ամբողջությամբ այնտեղ է Սուրբ Երրորդությունը, միաժամանակ և արարածներիս ամբողջ զորությունը:

Տեսնո՞ւմ ես, որ կտավներն Իր հետ տանելու հարկ չկար. կտավների փոխարեն Նա հագավ ամբողջ աշխարհը և զարդարեց աշխարհի հայրենի փառքը: Իսկ գերեզմանի, կտավների ու վարշամակի խորհուրդը հայտնեց աշակերտների գլխին: Գերեզմանը նմանությունն է այս աշխարհի, որում թաղված ենք, կտավները՝ ժամանակավորի, որ նրա զարդերի պատանքներն են, իսկ վարշամակի պատիվը, ինչպես վերևում ասացինք, հույսն ու ակնկալությունն է նրանց, ովքեր կարող են բաց աչքով հեռվից տեսնել բոլորի Հորը, ով պիտի պատվի բոլոր նրանց գլուխները, ովքեր արժանի կլինեն երկնավոր պարգևների պսակին:

Բայց թերևս ուսումնասեր փափագողներից որևէ մեկը կամենում է քննել ու լսել նաև այն, թե ո՛վ ծալեց ու մի կողմ դրեց Նրա գլխի վարշամակը. Ինքը՝ Տե՞րը, թե՞ հրեշտակները: Այդպիսի հարցնողը թող իմանա, որ Աստծու հրամանը կատարում են բոլորը՝ և՛ բանականները, և՛ ոչ բանականները. բանականները Նրա հրամանները կատարում են զգայարանների միջոցով, իսկ ոչ բանական տարերքները՝ բնական շարժումների միջոցով. հրեշտակները բանականությամբ առավել են, իսկ բնակությամբ ամենամոտն են Աստվածությանը և գիտեն Նրա կամքի խորհուրդը:

Եվ ինչպես երևում է, փարելով իրենց Տիրոջ հանդեպ սիրուն՝ խանդաղատում են գերեզմանի շուրջը և ներս մտնելով՝ իրենց կարոտը կտավի վրա էին սփռում՝ բազում անգամ վերցնելով, դնելով և համբուրելով այն, ինչպես նա, ով գտնում է իր անձկալիի հետքը և փարվում, շրջապատում է այն և գուրգուրում. չգիտեմ, թե ինչ է արժան անել: Հրեշտակներն էլ այդպես արեցին կտավների հետ, իսկ վարշամակը, իրենց ձեռքն առնելով, ծալեցին, պատրաստեցին այն ու մի կողմ դրեցին, ինչպես արքունիքի սենեկա-

պաններն են Թագավորի բոլոր հագուստները դնում պատ-վական տեղում, իսկ Թագը պահում են առանձին զգու-շությամբ և ոչ մյուս հագուստների հետ: Մեր երկնավոր Թագավորի զորքերը նույնպես, սպասավորելու համար երկնից իջնելով, թռչկոտում էին ցանկալի գերեզմանի շուրջը, երկուսը, ներս մտնելով, պատվում են այնտեղ գտնվող ամեն բան, բայց Թագը չեն դնում այլ բաների հետ միասին, այլ դնելով առանձին՝ սովորեցնում են մարդկանց Երրորդության միասնական բովանդակությունը, որից բոլորս լինելություն ստացանք:

ԳԼՈՒԽ Ե

Արդ, Պետրոսը, իմանալով այս խորհուրդը, գերեզմանից գնաց՝ իր մտքում զարմանալով, և մտավ տուն մյուս աշակերտների հետ միասին: Եվ որովհետև հրեաներից վա-խենում էին, նրանք մեծ զգուշությամբ փակել էին դուռը, լուռ նստել էին և բազում խորհուրդներ էին խորհում ի-րենց սրտում: Իրենց համարում էին որբ ու անվերակացու. հրեաներից հալածված, Աստծուց բաժանված և ընտանիքից վաղուց հեռացած՝ այդ պահին բոլոր մարդկանցից առավել տխուր, տրտում և ողորմելի էին երևում, և նրանցից ոչ ոք չէր կարողանում բացել իր բերանն ու մխիթարության խոսք ասել:

Մինչ այս նեղության մեջ էին, Հիսուս եկավ կանգնեց նրանց մեջ և ասաց. «Ողջո՛ւյն ձեզ» (տե՛ս Հովհ., Ի 19): Մեծ զարմանք ու ահավոր տեսարան էր այս. դռները փակված էին, շինությունը բոլոր կողմերից հսկվում էր ամենայն զգուշությամբ, դեպի ներս մուտք ամենևին չկար: Երբ Տերը տեսավ, որ ապշեցին, շտապ ցույց տվեց Իր ձեռքերն ու կողը, որպեսզի մեծ ու երևելի նշաններից ճանաչեն Իրեն, և փարատվի նրանց սրտի տրտմությունը: Դարձյալ կրկնեց ու քաջալերեց երկրորդ ողջույնով: Եվ որովհետև խռովքն ու խաղաղությունը հակառակ են միմյանց, ողջույնը տվեց իբրև օգնական խաղաղության, հալածեց ու հեռացրեց նրանց սրտերից խռովքը, նրանց անձերից փարատեց երկրավոր սուգն ու տրտմությունը և նրանց մտքով անսասան ու հոգով անչարչարելի դարձ-րեց:

Եվ երբ բոլոր կողմերից նրանց մաքրեց երկրավոր ապա-

կանությունների, ամրացրեց ու կարծրացրեց աղամանդից ավելի, որպեսզի կարող լինեն ընդունելու անպատում շնորհները Նրա, Ով մեծ է և առավել բոլորից, Ով ոչնչով չի համեմատվում երևացողներիս հետ: Ինչպե՞ս համեմատեմ Նրա հետ, ով չի երևում, չի քննվում և բոլոր երևացողների ու մտքով ընկալելիների կենդանությունն է: Չեմ կարող ասել Նրա մասին, Ով, այնչափ բարձրացած, առավել եղավ, քան բոլորը, գիտեմ՝ է, ճշմարտապես գիտեմ, որ կա Աստված, հավատարիմ է ինձ. Նրա որպիսությունը չգիտեմ. ես գիտեմ միայն այն, ինչ երևում է, Աստծու աներևույթը Աստված միայն գիտի: Բայց այժմ ահա հարկադրված եղա ասել, ինչ որ չգիտեմ. քանզի ինչպես որ մտավ փակված դռների միջով, և պատերն ամբողջ մնացին, իսկ դռները՝ չխախտված, Ինքը ներսում էր, մինչևիսկ ձեռքերն ու կողը ցույց տվեց, երկու անգամ լիաբերան ողջույնով հաստատեց նրանց, այդ նույն օրինակով էլ Տերն Իր աշակերտներին շնորհեց այն պարգևները, որ ծովը չի տանի, իսկ ցամաքը չի դիմանա, երկինքը եթե բավականացնի բնակության համար:

— Արդ, ասա՛, ինչ որ ասելու ես, մինչև ե՞րբ պիտի մեծացնես անչափելին:

— Ահա կամենում եմ ասել, բայց իմանալուց վաղ հրաժարվեցի: Բայց նաև հույժ վախենում եմ. գուցե երբ ասեմ, չես դիմանա՝ լսելու, և չդիմանալով՝ կասկածում եմ, գուցեև մեռնես էլ, և կմեռնես ոչ միայն ընությամբ, այլ ընությամբ և տարաբնությամբ: Բայց ես գիտեմ, որ դու այստեղ ընդդիմանում ես ինձ և ասում ես, թե՝ «Դու որտեղի՞ց լսեցիր, երբ լսեցիր, ինչո՞ւ նույն պահին չմեռար, այլ մինչև հիմա կաս և ապրելու հույս էլ ունես»:

— Այո՛, այդպես է. ես ոչ միայն այժմ կամ և սակավ ապրելու հույս ունեմ, այլ նաև անմահացել եմ:

— Եթե այդպես է, ասա՛ ինձ, որպեսզի ես էլ լսեմ, ընդունեմ և անմահանամ:

— Ասեմ, եթե հանձն ես առնում: Բայց սրբվի՛ր, մաքրվի՛ր, ամբողջովին պարկեշտ դարձիր, լիովին առողջացած՝ քեզ հեռո՛ւ պահիր երկրավոր ախտերից չարչարանքներով ու տանջանքներով, պատրաստի՛ր քեզ երկնագնաց ընտրյալների նման, քեզ դո՛ւրս դիր աշխարհիկ ամեն մի հոգսից և սրա բոլոր աղտեղություններից, շրջափակվիր զբաղմունքներից, որ ժամանակավոր մեծությունն է:

— Երբ այս ամենը թողնեմ, ի՞նչ կտա ինձ դրանց փոխարեն:

— Ասում եմ քեզ՝ միայն հավատա՛, միայն հուսա՛, միայն կամեցի՛ր, միայն ախորժի՛ր, միայն բռնի՛ր և գնա՛ հետևից:

— Ես ո՞ւր գնամ և ո՞ւմ հետևից:

— Խաչվածի:

— Եվ ո՞ւր կտանի:

— Տուն:

— Ո՞ր տունը:

— Ուր աշակերտներն հավաքված նստած են, և փակված են դռները, որոնցով, եթե կամենա, կմտնի, և արարածները չեն արգելի Նրան: Եվ դու էլ կարող ես, եթե կամենաս:

— Նրա բնությունն, ասում է, ընդունակ է այդ անելու, դու հավատա՛, վստահի՛ր քեզ և կարո՛ղ ես մտնել Նրանով: Քեզ մոտ գալիս Նա խոնարհեցրեց երկինքը և իջավ, դու հավատա՛ առաջին գալստյանը և կթռչես ու վեր կելնես: Նա ծնվեց սուրբ Կույսից, և կուսությունը չխախտվեց, և դու հավատում ես կուսածին Բան Աստծուն, ծնվում ես սուրբ կույս Ավազանից, անվանվում ես Քրիստոսի եղբայր, և Ավազանի կուսությունը չի լուծվում: Նա Իր մարմնի վրա ընդունեց չարչարանքները և չարչարելի մարմնով վերացրեց չարչարանքներն ամեն մի մարմնից, և Ինքն ան-

վնաս պահվեց ամենայն չարությունից: Հավատա՛ և դու Քրիստոսի սուրբ չարչարանքներին, չարչարելի մարմնովդ չարչարակի՛ց եղիր Նրան և հոգիդ անվնա՛ս պահիր աշխարհի բոլոր վնասակար ախտերից: Նա, ով պարտական չէր մահվան, մեռավ, թաղվեց, մեռելներից հարություն առավ և գերեզմանի դուռը չբացեց: Դու հավատա՛ թաղված և հարություն առածին, որ գալիս է՝ ավերելու բոլոր գերեզմանները և հարություն տալու բոլոր ննջեցյալներին անթերի ու անպակաս: Արդ, եթե հավատի այս զորությունն հագնես, Պետրոսի տունը մտնես և նույն հավատով նստես բոլոր աշակերտների հետ, նույն ողջույնը կընդունես և նույն ողջույնով դարձյալ կարժանանաս այն մեծ պարգևին, որի մասին ասելու եմ:

Քանզի երբ Տերը կանգնած էր աշակերտների մեջ՝ տանը, ուր մտավ փակված դռների միջով, այն տունը նմանվեց երկնքի ու երկրի, երկնքի բոլոր զարդերի ու զվարթուններին և երկրի վրա գտնվող ամեն մի գոյի՝ կենդանիների ու մարդկանց, մանավանդ Իրեն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Եվ ինչպես որ ըստ գրվածի [մարդուն] արարելիս ասած «Ստեղծենք մեր պատկերով» (Ծննդ., Ա 26) խոսքն ընկալվում է [հոգնակի] թվով, իսկ ստեղծվածը՝ ըստ Աստծու պատկերի, և փչեց իմանալին Միակի զորությամբ, այդպես էլ այս տանը՝ երկու անգամ ողջունելով: «Ինչպես որ Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Մատթ., ԻԸ 18), հասկացվում է առաջին եռյակ թվով:

Իսկ որ փչեց նրանց վրա և ասաց. «Առեք Սուրբ Հոգին ձեզ վրա: Եվ եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (տե՛ս Հովհ., Ի 22-23), սա դարձյալ այնտեղից տանում հանում է դեպի առաջինը՝ սկիզբը բովանդակող խոսքերը. «Եվ Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել է, շատ լավ է» (Ծննդ., Ա 30):

Եկա՞նք արդյոք տան մոտ, թե՞ կրկին պետք է գալ: Ահա եկանք, ներս էլ մտանք և սակավ խոսքերով ասացինք ամեն բան, բայց բոլորին համոզել չկարողացանք: Ինչո՞ւ. որովհետև ոչ բոլորն էին ներսում: Բայց եթե տունը երկինք էր, ապա ո՞վ էր դրսում մնում: Դարձյալ՝ բազում անգամ հարցնում եմ ասվածների մասին, և կրկին ասել է տալիս. նա, ով հավատ չուներ, դրսում էր, քանզի առանց հավատի անհնարին է ընդունել Սուրբ Հոգին: Ահա այս է մեծ պարգևը, որ չէի կարողանում, բայց հարկադրվեցի ասել: Եթե մեկը համարձակվի և կամենա առանց հավատի մոտենալ Հոգու զորությանը, եթե քահանա է, Կայիափայի պես կպատռվի ու կճեղքվի, իսկ եթե աշխարհիկ է, կլինի, ինչպես Անանիան ու Սափիրան (տե՛ս Գործք Ե 1-10): Իսկ արդ, ո՞վ կարող է առանց մեծ օգնականի ընդունել արարող Սուրբ Հոգին, եթե Ինքը՝ Տերը, չփչի՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին ձեզ վրա»:

Զարմանում եմ այս բանի վրա և հույժ սքանչանում եմ, թե ինչպե՞ս տան պատերը դիմացան, հատակը չպատռվեց: Բայց դարձյալ հիշեցի, որ տունը երկինքների երկինք էր: Ինչպես որ եթե թագավորը բնակվի անապատում, անապատը կչինվի, և այնուհետև այն կանվանեն մեծ քաղաք և ոչ անապատ, դրանից առավել այս տունը երկնային քաղաք եղավ, ովքեր ներսում էին՝ երկնաքաղաքացիներ, իսկ նա, ով այնտեղ չէր, դեռևս երկրավոր էր՝ դժվարությամբ հավանության եկող: Բայց եթե նույն Ինքը՝ Տերը, նույն զորությամբ հանդիպի [նրան], [նա էլ] կընդունի նույն շնորհը, ապա կկարողանա վիճակակից լինել տասներկուսին, մանավանդ եթե նույն տանը, նույն տեղում՝ նույն Տիրոջը: Եթե կամենում ես, լսի՛ր ավետարանագրին, որն ամենայն

ճշմարտությամբ ասում է. «Իսկ Թովմասը՝ տասներկուսից մեկը, աշակերտների հետ չէր, երբ Հիսուս եկավ և երևաց նրանց» (Հովհ., Ի 24): Որովհետև թեև նա լսել էր մյուսներից, բայց չէր հավատացել և կամենում է ինքը տեսնել, մոտիկից զննել գամերի վերքերը:

Եթե հիշում եք, ես ձեզ ասացի, թե ջրայինների համար որքան դժվար է ցամաքում, իսկ ցամաքայինների համար՝ ջրում լինելը, [դրանից] առավել դժվար է Սուրբ Հոգու պարգևները առանց հավատի ընդունելը. իսկ այս այրը վիճում էր՝ թերահավատ խոսքերով ընդդիմանալով ընկերներին:

Ո՛վ Տեր իմ Թովմաս, չէ՞ որ հավատը լսելուց է. եթե տեսնում ես, զննում ես և հասու ես լինում ճշմարտին, այլևս չի ասվի հավատք, այլ՝ ճշմարտություն: Տիրոջից բազում անգամ լսեցիր, որ պիտի չարչարվի, մեռնի և հարություն պիտի առնի: Աշակերտները նշաններով խոսում են քեզ հետ և պատմում են, թե ինչպես հայտնվեց. որ նրանք սուտ չեն, դու լավ գիտես, և որ Տերը ճշմարիտն էր խոսում, տեղյակ ես. ինչո՞ւ ես այդքան համառում: «Եթե չտեսնեմ, ասում ես, չեմ հավատա» (Հովհ., Ի 25): Ահա տեսնում ես. չի լինի մեկը, որ քեզ մեղադրի: Ո՛չ, ասում է, թող միայն երևա ինձ, միայն թե տեսնեմ. եթե տեսնեմ ու զննեմ, միտքս կասկածից մաքուր դարձնեմ. և եթե որևէ մեկը մեղադրի, ես հանձն կառնեմ, չեմ ամաչի Նրանից. ես գիտեմ իմ Տիրոջ քաղցրությունը, որ մարդասեր է և ողորմած:

Պետրոսից մեծ չեմ, ոչ էլ իմ թերահավատությունն է մեծ նրա ուրացությունից: Եթե նրա արտասուքները փրկություն եղան նրան, իմ ամոթն էլ իմ թողությունը կլինի. բայց միայն տեսնեմ Նրան, ում ցանկանում եմ: Եթե համարձակվեմ այս էլ ասել՝ պիտի աղաչեմ Տիրոջը, որ ինձ երևա նույն տանը նույն հայտնությամբ. ոչ միայն փակված

դռների միջով, այլ նաև նույն ողջույնով նույն ընտանիքի մեջ: Ահա ես ասացի իմ կամքը, չեմ համարձակվում հրամայել, այլ կամենում եմ աղաչել. եթե արժանի եմ, կօգնի իմ տկարությանը»:

Իսկ ամեն բանում Բարերարը, երբ տեսավ Իր աշակերտի տապը, գթալով՝ ողորմեց նրա մտքի շփոթմունքին, բայց թույլ տվեց, որ լրանան նախապես նշված թվով օրերը, մինչև որ թլփատվի նրա թերահավատության անթլփատությունը, և ապա արժանանա նորոգելու և առանց երկմտության ընդունելու ավետիսը, ինչպես նրա աշակերտակիցները:

Ավետարանագիրն ասում է. «Ութ օր հետո աշակերտները դարձյալ այնտեղ՝ ներսում էին, և Թովմասը նրանց հետ էր: Հիսուս եկավ փակ դռների միջով, կանգնեց նրանց մեջտեղում ու ասաց. «Խաղաղությո՛ւն ձեզ»: Ապա Թովմասին ասաց. «Բե՛ր քո մատները և դի՛ր իմ ձեռքերի մեջ. և բե՛ր քո ձեռքը ու մտցրու իմ կողի մեջ և ստուգի՛ր, և մի՛ լինիր թերահավատ, այլ հավատա՛» (տե՛ս Հովհ., Ի 26-28):

Այս լսելով՝ Թովմասը միաժամանակ ամաչեց ու երկյուղեց. ընկերներից ամաչեց և Տիրոջից երկյուղեց՝ ասելով. «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ» (Հովհ., Ի 28):

Իսկ ինչո՞ւ նախ Տեր ասաց և ապա Աստված: Արարչության ժամանակ այդպես չէր. հինգ օր Տեր անունը չկա, Աստված անունն է, ով արարում է ամեն բան, ապա միայն վեցերորդ օրը երևում է Տեր անունը: Պատճառը հայտնի է. քանզի Աստված անունը արարչական զորություն է, հաշտ է, հանդարտ և արարող:

Իսկ ուր արարչագործություն է, օրենքի խոսք դեռևս չկա. ապա երբ արարածները դատելու հասնեն, պետք կլինի և օրինադրականը, ինչպես որ առաքյալը հայտնեց, ընտրող իմաստությամբ պատասխան տվեց ու ասաց. «Տե՛ր իմ

և Աստվա՛ծ իմ»: Որովհետև ընկա իմ թերահավատության դատաստանի տակ, դատում ես ինձ, որովհետև խրատի եմ արժանի, բայց մի՛ հանիր ինձ աշակերտներիդ թվից, քանի որ գիտեմ, որ մեծ է իմ հանցանքը. շատ են հարությանդ վկաները, և հարկ էր, որ ես ոչ միայն հավատայի բազմությանը, այլ նաև Քո իսկ խոսքերին, որ հանապազ սովորեցնում և կրթում էիր մեզ, որը և գործով իսկ կատարեցիր:

Բայց արդ, որովհետև ողորմությամբ երևացիր այստեղ առաջին գալուդ օրինակով, իմ խորհուրդներից մաքրեցիր թերահավատությունը, բացվեցին մտքիս աչքերը, դեմհանդիման տեսա Քեզ՝ իմ Տիրոջը, համարձակվեցի ասել. «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ», քանզի ինձ հանդիմանելով՝ նոր մարդ դարձրիր, իմ հոգում ու մարմնում կասկածի տեղ չթողեցիր:

Այսուհետ իմ Աստվածն ես Դու, և որով իմ Աստվածն ես, նույնով և՝ Տերը, նույնով և՝ Օրենսդիրը, նույնով և Թագավորը, նույնով և՝ Հայրը, Ծնողն ու Սնողը, պարգևներ Տվողը, հավիտենական կյանք Ժառանգեցնողը:

Բայց թերևս որևէ մեկը կասի՝ ահա Տերը երեք անգամ երևաց նույն տանը, ինչո՞ւ Պետրոսի և նրա աշակերտակիցների վրա փչեց՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին» (Հովհ., Ի 22), իսկ Թովմասի վրա չփչեց. եթե տվչական շնորհը Սուրբ Հոգին է, երևում է՝ այս առաքյալը զրկվեց դրանից:

Ինչքան կարող եմ, նաև այդ մասին խոսեմ ո՛չ նոր կամ այլ տեսակի բան, այլ այն, ինչ բոլորդ գիտեք և հավատով ընկալում եք: Սուրբ Հոգին Աստծու արարող զորությունն է, և Նրա սիրո գութը թափանցում է արարածների մեջ, բայց Ինքն Իր մեջ իմացվում է անհատնելի ու անբաժանելի, և շնորհը ոչ թե [ինքն] իրենից է, այլ շնորհը Նրանից է, պարգևը ոչ թե [ինքն] իրենից է, այլ բոլորի Պարգևատուն [Նա է]: Եվ ինչպես որ Իր Հայրը՝ էությամբ Անձից, այդպես էլ Սուրբ Հոգին՝ ըստ Հոր և Որդու: Արդ, երբ Որդին աշակերտներին ասաց. «Խաղաղությո՛ւն ձեզ», բոլորը լցվեցին Սուրբ Հոգով, որովհետև նրանց վրա փչեց, այստեղ՝ երկրորդ [արարչագործության] ժամանակ, հիշեցրեց առաջին արարչությունը՝ այն, որ Նա, ով արարեց առաջին մարդուն, նույն Ինքն է, որ եկավ, փրկեց ու նորոգեց նրան: Իսկ «Առե՛ք Սուրբ Հոգին» ասելը տեսական իմացություն է:

Որդին Հոր կամքով մեր բնությամբ մարմին հագավ, նույնը կամքն էր նաև Սուրբ Հոգու, քանզի ինչպես որ Որդին հագավ մարդկություն, այդպես էլ մարդկությունը հագավ Սուրբ Հոգի, որպեսզի մենք Սուրբ Հոգու միջոցով հագնենք Որդիությունը և Հայրությունը: Եթե իսկապես այսպես չէ, ինչպե՞ս կարող ենք Աստծուն Հայր մեր ասել, Քրիստոսին՝ մեր եղբայր, իսկ Սուրբ Հոգուն՝ մեր Նորոգումն անվանել. որովհետև ոսկոր ենք Քրիստոսի ոսկորներից, ապա և միտք՝ Հոր մտքից, նույնպես և զորություն Սուրբ Հոգու:

Ապա եթե դարձյալ մեկը հարցնի, թե՝ Սուրբ Երրորդությանը անհատնելի ու անխառն զորություն դո՞ւ ասացիր, ես ո՛չ կժխտեմ, ինչ որ ասացի, և ո՛չ էլ կընդդիմանամ քեզ, ո՛չ Արարչին արարածներիս հետ կհամեմատեմ և ո՛չ անշարժելի բնությունը կփոփոխեմ: Քանզի Աստվածությունն անփոփոխ է, իսկ մեր բնությունն ընկած է ապականության ու բազում փոփոխությունների ներքո և կարոտ է արարչական զորության օգնությանը. որպեսզի Նա, ով ստեղծեց, նորոգի և անապական դարձնի: Եվ ինչպես բազում անգամ ասացինք, նորոգումը [կատարվեց]՝ աշակերտներին փչելով տվեց Սուրբ Հոգին, այդ նույն Հոգով էլ պիտի նորոգի բոլոր արարածներին, առավելապես մեր՝ մարդկության բնությունը. բաժանում է բազում մասերի, և

պետք է մի Հոգի՝ կապելու և զոդելու բոլորին, ինչպես ամեն ոք իր մարմնի վրա կուսանի ճշմարտապես:

Աղաչում եմ քեզ, նայի՛ր քեզ և տե՛ս քո բնության խառնվածքը. մեկ մարմին է, իսկ անդամները՝ բազում, յուրաքանչյուր անդամի՝ բաժանված մասերն իրար հանդեպ անքեն են, աննախանձ, հույժ սիրելի են միմյանց, և բոլորն էլ՝ գործող: Իսկ երբ իրենց կատարած ամեն մի գործի համար հատուցում են ընդունում, նրանցից ոչ ոք պարգևն առանձին իրենը չի համարում. մանավանդ եթե արագընթաց են ոտքերը, կամ կորովի՝ ձեռքերը, ճարտար է խոսքը, կամ միտքը՝ իմաստուն, և կամ մարմնի ուրիշ անդամներ այլ շնորհներ ունեն:

Քանզի ոչ թե խառնիխուռն են շարժվում, այլ օրինավոր կարգով, ըստ մարմնի մասերի թվի: Այժմ ասա՛ դու ինձ՝ նրանցից ո՞վ պիտի ընդունի պարգևը: Ես գիտեմ՝ դու դեպի գլուխը կգնաս, բայց ոտքերը չեն նախանձի, և եթե ձեռքերն ընդունեն, մյուսները չեն չարանա. եթե միայն մարմնինն է պատիվը, ուրախությունը բոլորինն է: Նաև անունը, որ մարդն ունի, դրված է և ոչ բնական. այն չի գործակցում քաջ նահատակությանը, բայց մարմնից առաջ է ասվում, մեծարվում ու պսակվում. վերքեր ու սպիներ մարմնի մասերն ունեն, իսկ քաջություն անունն է ժառանգում, և բոլոր անդամները ուրախանալով՝ բերկրում են անվան հետ, և այդպես միաբանություն է լինում բազում անդամների մեջ ամեն բանում: Արդ, եթե մարդով է այսպես երևում, ապա որքան առավել կերևա Աստծու Որդու միջոցով, որ հագավ մի մարմին մի մարդու թվով, բայց ամբողջ մարդկությունն ունի:

Արդ, եթե նրանց վրա փչեց և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին», թվով են, որ ներսում են, բայց չգիտենք՝ բոլո՞ր ստացան Սուրբ Հոգին: Նաև չպետք է կասկածի ու տարակուսանքի մեջ ընկնել այստեղ. քանզի ոչ թե տեղն էր, որ սրբում էր մարդկանց և արժանի դարձնում՝ ընդունելու Հոգին, այլ տեղի Տերը, քանի որ Տիրոջով է սուրբը երևում տեղը: Եթե ամեն բան Տիրոջով է, Տերն ամենուր է. երբ երկնքում էր, երկրի վրա էր, երբ երկրի վրա էր, երկնքում էր, և երբ տան մեջ էր, աշխարհում էր և բոլոր տեղերում, յուրաքանչյուր մարդու և բոլոր մարդկանց, նաև Թովմասի հետ էր, ապա ուրեմն և՝ բոլորի հետ:

[Միայն] հավատացյալների՞ վրա փչեց: Այո՛: Իսկ թերահավատներից ոչ ոքի վրա, թեև նրանք տանն էին: Լսի՛ր նույն Իրեն՝ Տիրոջը, որ Թովմասին ոչ թե գովելով, այլ պարսավելով ասում է. «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր. երանի՜ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Հովհ., Ի 29): Այս երանությունը փո՞քր բան ես համարում. եթե մարդն է մարդուն երանի տալիս, մեծ բան է այն, ուր մնաց թե՝ երբ Աստված է մարդուն երանի տալիս. եթե երանի տվեց այն մարդուն, որ Իրեն չտեսնելով՝ հավատում է, ի՞նչ բան ես կարծում այս երանությունը, եթե ոչ՝ Սուրբ Հոգին:

Եվ եթե դարձյալ հարցնես. «Ահա Պետրոսն ու նրա աշակերտակիցները, ինչպես դու ես ասում, հավատում էին և ընդունել էին Սուրբ Հոգին, ինչո՞ւ էր անհրաժեշտ [նրանց վրա] փչել»:

Դու հարցնում ես իբրև մարդ և իբրև մարդ էլ անգիտանում ես. չգիտես Աստծու աներևույթները. Նրան նաև մեր ծածուկներն են հայտնի: Ահա քեզ նույնպես ոչ թե փչումն է պետք, այլ նախ՝ հավատ, և ապա՝ հավատի միջոցով կարող ես ընդունել սուրբը փչումը՝ [փչված] ո՛չ բերանով և ո՛չ ռունգերով, այլ Աստծու իմանալի զգայությամբ: Դու ի՞նչ գիտես, թե ովքեր էին տանը և քանիսն էին: Իզուր չասացի՝ ինչո՞ւ էր նրանց պետք: Ձասացի՞, թե հույժ սար-

սափելու ժամանակներ էին. բոլորը, թեև հաստատված էին հավատով, վախենում էին, և պետք էր մխիթարել հավատացյալներին, իսկ Մխիթարիչը միայն Սուրբ Հոգին է:

Բայց զուր չասացի, թե ովքե՞ր և քանի՞սն էին այնտեղ, քանզի խռովության պատճառը այլ բան չէ, քան միայն մեղքը, մեղքի զորությունը սատանան է, իսկ սատանայի զորությունը դևերն են: Արդ, երբ Տերը, փչելով առաքյալների վրա, ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին ձեզ վրա», դևերն հալածվեցին, սատանան ետ գնաց, մեղքերը կորան, առաքյալները լցվեցին Սուրբ Հոգով: Բայց ասելով. «Առե՛ք ձեզ վրա»՝ [ուզում է ասել, թե] ես բռնի կերպով չեմ տալիս. աստվածային Հոգին երկմտող անձի մեջ չի մտնում և նենգավոր հոգում չի բնակվում, այլ բնակվում է սուրբ մարմնում, հստակ հոգում և հաստատուն մտքում: «Առե՛ք, ասում է, ձեզ վրա ձեր իսկ կամքով և կատարեցե՛ք Սուրբը Հոգու կամքը»:

Բայց երբ լսես՝ փչեց, նրբիմա՛ց եղիր, մանրամասն քննի՛ր, մտքով առավել սրատե՛ս եղիր, քան աչքով: Քանզի ոչ մեկի անունը չասաց, առանձին չփչեց ոչ մեկի վրա, այլ ասում է.«Փչեց նրանց վրա», իսկ ասված «նրանց վրա» խոսքից, ըստ գրվածի երևում է՝ տանը եղածների վրա, իսկ ըստ հոգևորի՝ ամբողջ աշխարհի վրա: Իսկ ամբողջ աշխարհ ասելով՝ երևում է՝ ամեն մարդու վրա, իսկ ամեն մարդ ասելով՝ երևում է՝ ճշմարիտ հավատի միջոցով, քանզի ուր հավատ կա, այնտեղ է Աստված, և ուր Աստված է, այնտեղ է ամեն ոք:

Արդ, եթե այս առաքյալը հավատով ընդուներ Պետրոսից ու նրա աշակերտակիցներից լսած այն լուրը, թե՝ «Տիրոջը տեսանք, և Նա այդ բաները խոսեց մեզ հետ» (տե՛ս Հովհ., Ի 24), նաև նրան կլիներ նույն հայտնությունը, նրա հետ էլ կլիներ նույն խաղաղությունը և նույն փչումը,

նույն Սուրբ Հոգին կերևար նրան՝ ըստ Տիրոջ ասած այն խոսքի, թե՝ «Երանի՛ նրանց, ովքեր չեն տեսել և սակայն կհավատան ինձ» [...]: Եվ ինչպես վերևում ասացինք, եթե մի մարդու մարմնի բազում անդամները միաբան են, ապա ամբողջ աշխարհն էլ մի նյութ է՝ մի ձեռքի ստեղծած և բազում տեսակների բաժանված, և յուրաքանչյուր տեսակի սեռերը զույգ և հավասար են, և բոլորը նայում են այն Մեկին, որտեղից լինելություն ու կյանք ունեն՝ Աստծուն, և բոլորի իշխանն ու առաջնորդը մարդն է, որ առավել է բոլորից բնական խոհականությամբ և ստացական առաքինությամբ, իսկ երկուսի գործն է՝ հավատալ Աստծու Որդուն:

Արդ, ում մեջ կա ճշմարիտ հավատ, նրա մեջ երևում է ամեն բան, որ առանց ախտերի ու չարչարանքների է. մեծն Մովսեսը նույնպես ուներ Սուրբ Հոգու փչումը, և նույն շնորհներից, որ Աստծու տվչությամբ ուներ Մովսեսը, լցվեցին յոթանասուներկու ծերերը և մարգարեացան ժողովրդի մեջ, բայց Մովսեսի մեջ Սուրբ Հոգու շնորհները չպակասեցին. թեև ոմանք նախանձում էին, նա, առավել լցված Սուրբ Հոգով, փափագում էր, որ ամբողջ ժողովուրդը Տիրոջը դառնա մարգարեությունը հաստատելու համար: Մովսեսին Սուրբ Հոգի շնորհողը նույն Տերն է, այն տանը նույնպես Նա փչեց նույն Հոգին: Որպեսզի այն քչի միջոցով անթիվ լինեն Քրիստոսին հավատացող բազմությունները, ընդունեն Հոգու նույն շնորհները անքեն ու աննախանձ: Քանզի պարգևը ոչ թե մաս է, այլ աստվածատուր շնորհի բոլոր մասերը, որով արարեց երկինքը, երկիրն ու նրանցում գտնվող ամեն մի գոյի:

Բայց թերևս հույժ քննելի է տասներկուսի թիվը, որոնց վրա փչեց Սուրբ Հոգին (թեև փչեց ոչ բոլորի վրա), սակայն նրանք, ովքեր մեծապես սիրում են Հոգու և մարմնի

իմաստությունը, տասներկու առաքյալների բաժնից մաս կժառանգեն: Տասներկուսի մեջ երեք չորս և վեց երկու կա, և մեկտեղ բովանդակելով՝ լինում է տասներկու, որ է սկիզբը միակի՝ գլուխը տասներկուսի՝ Սուրբ Հոգու փչումը, և մեկից, երկուսից և չորսից լրացնում և կատարում է յոթ թիվը. որպեսզի վեցի մեջ երևա աշխարհի արարումը, մեկի մեջ՝ յոթնյակի կատարելությունը, իսկ չորսի մեջ՝ նյութական գոյացությունը: Իսկ մի վեցյակում երեք երկուսով լրացնում է երեք թիվը և բերում է նմանությունը Անեղի ու Անսկզբի՝ Ինքնագո Զորության: Իսկ միակ երեքից գերիվեր և անճառելի, միայն իմանալի անունն է, որ անբաժանելի է. լինում է երեքից՝ լի և զեղուն երեք թվից: Իսկ յոթով երևում է նաև մեր զգայությունների գոյացությունը, որ բաժանված է յոթ տեսակների՝ աչքեր, քիթ, ականջներ և բերան:

Եվ ինչպես որ լինելության սկզբում այս թվի միջոցով աշխարհը գոյացավ պատճառից, որ ունի նմանությունը միակի, վեց օրով, որում գոյացան լինելության տեսակները[50]*, իսկ միակի առաջխաղացությամբ, աճմամբ, որ յոթն է, վեցի ներքո ընկած թուով աճում, բազմանում և լրացնում է տասներկու թիվը, որում երևում են ամենքը՝ երկնայիններն ու երկրայինները. երկնայինները՝ արեգակն ու լուսինը, հինգ մոլորակներն ու յոթ անմոլար աստղերը, որ լինում են երկու յոթ, և ախտավորներիս բոլոր լինելությունները գոյանում են այս երկու յոթից, որոնք պատճառն են աշխարհի լինելու և տևողության: Դարձյալ՝ նույն յոթ թվով երկինքն ունի յոթ պարունակներ, որ անվանվում են գոտիներ*[51]*, որոնք օդեղեն հարկեր են՝ միմյանցից անջրպետված բաց միջոցներով. շրջանաձև կազմությունն Արարողի հրամանով լինելության պատճառն է ոչ միայն արեգակի ներքո գտնվողների, այլև լինելության և բարի լինելության և իմանալի խորհուրդ երկնավոր իմաստության մեջ, որի մասին Եսայի մարգարեն, լցված Տիրոջ Հոգով և տեսնելով արարվածները, որ մեծամեծ են ու սքանչելի, ասում է, որ դրանց մեջ ճանաչվում է դրանց Արարիչն ու Ստեղծողը [...]: Եվ լսում ենք նույն Հոգուց, որ Դավթի բերանով ասում է. «Որքա՜ն մեծ են գործերը քո, Տե՛ր, և ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր դու» (Սաղմ., ՃԳ 24): Արդարև մեծ են, քանզի Աստված երևում է Իր գործերի մեջ, որ իմաստությամբ են, որովհետև Քրիստոսով է արարել, իսկ Քրիստոս Աստծու զորությունն ու իմաստությունն է:*

Եվ ինչպես որ [արարել է] Աստծու իմաստությամբ, որ Քրիստոսն է, այդպես էլ՝ Սուրբ Հոգով, ինչպես նույն Դավիթն է ասում. «Նրա բերանի Հոգով ստեղծվեցին նրանց բոլոր զորությունները» (Սաղմ., ԼԲ 6). ասելով՝ Նրա, նա նկատի ունի՝ Հորը՝ Հոգով, իսկ ասելով՝ նրանց՝ նկատի ունի եղածներին: Արդ, ուր ասում է. «Երկինքը պատմում է Աստծու փառքը» (Սաղմ., ԺԸ 1), հայտնում է Աստվածությունը, իսկ ուր ասում է. «Ամեն բան իմաստությամբ ստեղծեցիր», այնտեղ նկատի ունի Աստծու Որդուն, իսկ ուր բերան, Հոգի և զորություն է ասում, այնտեղ նկատի ունի Սուրբ Հոգուն՝ Հոր և Որդու Էակցին:

Բայց Եսային Սուրբ Երրորդության շնորհներով Նույն Հոգու պարգևը ըստ երկնքի յոթ պարունակների՝ բաժանում է յոթ մասերի, բռնում է երկնքից ու երկրից, բերում է մի միաբանության և ասում է այսպես. «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղի, ծաղիկ պիտի բուսնի նրա արմատից: Նրա վրա պիտի իջնի Աստծու Հոգին՝ իմաստության և հանճարի Հոգին, խորհուրդի և աստվածպաշտության Հոգին. Աստծու երկյուղի Հոգին պիտի լցնի այն» (Եսայի, ԺԱ 1-3):

Արդ, բազում անգամ ասելով յոթ թիվը, որ գեր ի վեր է բնությունից, Եսայի մարգարեն բոլորեց, բովանդակեց, բերեց և ամբողջացրեց Բանն Աստծու մեջ, ով արարեց երկինքն ու երկիրը ի սկզբանե, Իրեն կերպարանեց, դրոշմեց արարածների վրա և դեպի նրանց եկած՝ Իրենն է առնում, Իրենն է հագնում: Եվ հագնում է ո՛չ դիպվածով և ո՛չ պատահաբար, այլ Իրեն կերպարանում է երկնքով ու երկրով և նրանց միջոցով. երկնքով՝ ըստ Միակի, որ Բան Աստված է, երկրով, որ մենք՝ հողեղեններս ենք, իսկ միջոցով՝ թվե գոտիներով՝ ըստ մեր յոթ զգայարանների: Քանզի ինչպես որ առավ մեր հողե մարմինը, որ մասն է երկրի, նաև օդեղենն ու հրայինը, որ երկնքից է և Քրիստոսով՝ մեր մեջ. նույնը և Տերը Իրեն մարմին ուներ, որում ամբողջանում է ամեն բան. քանզի Նրանով է սկիզբը լինելության և ավարտը նոր աշխարհի նորոգման:

Եվ քանզի զգայարանները, որ մեր մեջ են, անոսրագույն բնություն են, ի տարբերություն թանձր մարմնի՝ հարակցություն ունեն իմանալի խոհականության հետ, որին մարգարեն հոգու մասեր է ասում: Եվ ճշմարիտ է. քանզի ականջներով լսում ենք Աստծուն և աչքերով տեսնում ենք արարածներին, որոնց մեջ ճանաչվում է Աստված, ռունգերով շնչում ենք օդը, որ կենդանությունն է բոլորի, և ձայնով Աստծուն ենք փառավորում արարածների համար: Իսկ եթե մերն այսպիսին է, ինչպիսի՞ն իմանանք Տերունի զգայարանները: Երկրի վրա է և աչքերով տեսնում է Հորը երկնքում. շրջում է Գալիլիայում և Ղազարոսի մահվան հոտը զգում է հեռվից. [Օրենքի] մեկնիչն իր մտքում բամբասում է՝ ասելով. «Եթե սա մարգարե լիներ, ապա կիմանար, թե ով կամ ինչպիսի կին է մոտենում իրեն» (Ղուկ., Է 39), իսկ Տերն իբրև բարձրաձայն աղաղակ է լսում այդ, հանդիմանում է նրան երկու պարտապանների մասին առակով [...]. [խոսում է] մեզ նման սովորական խոսքերով, և բոլոր տարերքները առանց ականջի լսում են Նրան. ջուրը՝ թակույկների մեջ, նկանակը՝ ձեռքում, հողմերը՝ ծովում, մեղքը՝ մարդկանց մեջ, մեռելները՝ գերեզմանում:

Արդ, Եսայի մարգարեն այս է ասում, թե՝ «Նրա վրա պիտի իջնի յոթ հոգի» [...]. յոթ զգայությունների միջոցով, որ առավ Տերը և գործեց Սուրբ Հոգու բոլոր սրբազան խորհուրդները և Իր մեջ բովանդակեց երկնային յոթն ու երկրային յոթը, որ առաջին սկիզբն ու վերջին վախճանն է, քանզի սկսվում ենք միակից, որ հիմք ու հաստատություն է, և ավարտում ենք յոթով, որ է ծայր և ավարտ ոչ թե թվական մասի, այլ տեսական իմաստության: Քանզի վեցի մեջ, ասում է, Աստված ստեղծեց ամեն բան, և յոթերորդում հանգստացավ: Բայց հանգստանո՞ւմ է արդյոք Աստված. ո՛չ, երբեք: Եվ ինչպե՞ս կկարողանամ հանգստանալ ասել Նրան, ով չի հոգնում: Բայց լավ իմանալով՝ մտածի՛ր՝ ինչ է Աստծու հանգստանալը, եթե ոչ այն, որ կատարվի Նրա կամքը: Իսկ այստեղ եղածներից ո՞վ երբևէ կարողացավ հաճելի լինել Աստծուն և հանգստացրեց Նրա քավչական զորությունը, եթե ոչ Միածինը՝ Հորից և Կուսածինը՝ երկրից, ում միջոցով Աստված արարեց ամեն բան, Նա եկավ և կատարեց ամենն, ինչ հաճելի է Աստծուն: Ապա ուրեմն այս է յոթերորդ օրը, որում, ասում ենք, թե Աստված հանգստացավ: Քանզի վեց օրում եղան բոլոր ախտավորները, իսկ Աստված հեռու է ախտից և չարչարանքներից: Բարի անվանեց, իսկ ախտեր՝ ոչ, քանզի հնարավոր է, որ ախտավորներից բարի լինեն, բայց ոչ առանց չարչարանքների ու ճգնության: Իսկ ուր առաքինություն կա, այնտեղ մարմնի մեծ ճնշում է տեսնվում, իսկ ուր մարմնի ճնշում կա, այնտեղ և՛ օրերը, և՛ ամիսները, և՛ տարիները, և՛ ժամանակները ընկած են ապականության ներքո: Ուս-

տի և մեկ օր՝ սուրբ հանգիստ, որ անվանվել է շաբաթ, թվով յոթերորդ, իսկ յոթ թիվը նմանությունն է Անծինի, Անծինը՝ Անեղի, իսկ Անեղն ունի արարչական զորությունը[52]:

Արդ, վեց օրվա մեջ երևում է հազար տարին, որում ամբողջ աշխարհն ընկած էր ապականության տակ, մինչև եկավ հասավ յոթ թիվը, որ վերևում շաբաթ անվանեց և հանգիստ համարեց այն [Աստված]: Այս է Տիրոջ գալուստը, որ մտավ փակ դռների միջով, սրբեց ու մաքրեց առաջին վեց օրերի աղտը և յոթի անվամբ, որ կույս է և չի ծնվել մահկանացու գոյություններից, և առանց ախտերի ու չարչարանքների՝ բազմածնունդ, տասներկու առաքյալներին շնորհեց այն զորությունը, որով հարդարեն ու պատրաստեն այս աշխարհը վեցից դեպի յոթերորդ դարը, որպեսզի բազմաբեղուն լինեն արդարության մեջ և չծնեն չարություն, ատելություն և այս աշխարհի բոլոր ապականացու կարիքները, ինչպես որ առաքյալների նույն տասներկու թիվն ունի դիտավորություն՝ գլխավոր Միակի միջոցով ախտը վերացնելու աշխարհից՝ ըստ նրա տասներկու մասի, որ հայտնությամբ երևաց տասներկուամյա արյունահոսողի հիվանդության մեջ (տե՛ս Մատթ., Թ 20-22): Այն կինը միայն ինքն ուներ ցավը, իսկ աշխարհը ծածուկ էր տանջվում ցերեկվա և գիշերվա տասներկու մասերով. ցերեկն ունի տասներկու ժամ, նույնը և՝ գիշերը՝ [միասին]՝ մեկ օր, և օրն ամբողջ գիշերային մասով հնազանդվեց ունայնության: Ասում եմ՝ ունայնություն՝ [նկատի ունենալով] բարեգործությունից [զուրկ լինելը], իսկ նա, ով չունի բարի գործեր, լի է անարգությամբ: Անարգություն անվանում եմ ճշմարտությունից վրիպելը, իսկ վրիպել նշանակում է թողնել Աստծուն:

Եվ որովհետև մարդիկ սկզբից իսկ գնացին թշնամու հետևից և իրենց կամքով հնազանդվեցին ամենայն ապականության. առաջին՝ թողեցին Աստծուն, երկրորդ՝ երկրպագեցին ձեռակերտներին, երրորդ զոհ մատուցեցին զգայություն չունեցողներին, չորրորդ՝ առանց խտրականության ապականվեցին, հինգերորդ՝ սպանեցին իրենց պատկերակցին, վեցերորդ՝ ագահ դարձան, որ արմատն է դառնության, յոթերորդ՝ ատեցին, որ արդար մասի անպտղաբերություն է, ութերորդ՝ գողացան, որ աշխարհի ավերման սկիզբն է, իններորդ՝ հափշտակեցին, որ պատերազմների պատճառն է, տասներորդ՝ ստեցին, որ Աստծուն ուրանալն է, տասնմեկերորդ՝ ամբարտավանացան, որ բեկում է հոգին ու մարմինը, տասներկուերորդ՝ մահվան պտուղը վաստակեցին, որով ժառանգեցինք մահը:

Արդ, այս տասներկու մասերով ամբողջ աշխարհն ընկել էր հիվանդության ախտի մեջ, և նրա աներևույթ վերքերից արյուն էր ծորում: Բազում անգամ շտապեց բժիշկների մոտ, որոնք ոչ միայն չառողջացրին, այլև վերքերի վրա վերքեր դրեցին, և ոչ միայն մարմիններից էր արյուն հոսում, այլ նաև աներևույթ ու անարյուն հոգիներից, որ ապականացու աներևույթ բխումն էր: Քանզի դեպի վեր՝ երկինք նայելով՝ տեսան աստղերը, որ պատճառն են այս ժամանակավոր կյանքի, և մոլորվեցին, նրանց հետ փոխանակեցին անժամանակ Աստծուն, իսկ այստեղ՝ երկրում, ըստ տասներկու թվի, որի մասին բանաստեղծներն առասպելաբանեցին՝ ասելով, թե մեծ մեկը կար, և նրա առջև՝ անհուն ժամանակը, և երբ նրանք մերձեցան միմյանց, ծնեցին վեց որդիներ, որոնց նկարագրեցին իբրև տիտաններ, ծնեցին նաև դուստրեր, որոնց տիտանիսներ անվանեցին, ծնունդներ կարգեցին, և մարդիկ իրենց անձերի ախտերը երկրից դեպի երկինք ձգեցին, այնտեղ՝ վերևում գումարելով՝ Աստվածության դեմ մեծամեծ հայհոյություններ արձակեցին[53]:

Եվ հոգիների պարզությունն այս տասներկուսով իրենց թանձրացած մարմինների պես արյան մեջ թաթախեցին երկու մասերով՝ հոգով և մարմնով. ոչ միայն զոհեցին, այլ նաև զոհվեցին: Ասում ենք՝ զոհվեցին, աչքերը՝ անառակությամբ նայելով, ականջները՝ լկտի ձայներ լսելով, ռունգերը՝ զոհի հոտի ու ծխի մեջ, ճաշակելիքը՝ անասունի պես չհագենալով, որից էլ բազմացավ անառակ ցանկությունը. բոլորս թավալվեցինք մեր աղտեղի գործերի արյան մեջ, և մեր պատճառով պղծվեց օրը, օրվա հետ՝ տասներկու ժամը և տարին, և տարվա հետ՝ տասներկու ամիսը, ահա միաժամանակ և ամբողջ երկիրը:

Եվ երկրավորներովս պղծվեց երկիրը, իսկ երկնավորներով՝ երկինքը, և Տերը, բժշկելով տասներկու տարի արյունահոսող կնոջը, որ նշանակն էր այս աշխարհի ցավերի, պետք է, անշուշտ, և այս աշխարհը բժշկեր: Քանզի Տերը ոչ թե աշխարհի մի մասի, այլ բոլոր մասերի համար եկավ աշխարհ: Բժշկեց մի մասին, որպեսզի մի մասով բոլոր մասերը սովորեն գնալ նույն Բժշկի մոտ և բռնել ո՛չ թե նույն զգեստի քղանցքից, այլ Սուրբ Հոգուց, իսկ Սուրբ Հոգուն կտեսնեն տասներկու առաքյալների մեջ: Քանզի կինը բժշկություն ստացավ ոչ թե զգեստը բռնելով, այլ զգեստից առաջ հավատից բռնեց և ստանալով հավատը՝ արժանի եղավ ազատվելու ցավերից, նաև տեսնելու Որդու Աստվածությունը: Եվ տեսնելով Աստծուն՝ նույն պահին միացավ Նրան: Ինչպես որ Տերն Ինքը ոչ միայն գովեց կնոջը, այլ նաև հույժ զարմացավ. «Մեկն ինձ մոտեցավ, որովհետև զգացի, որ ինձնից մեծ զորություն դուրս եկավ» (տե՛ս Ղուկ., Ը 46): Երբ լսես՝ մոտեցավ, Աստծուն միանալն իմացիր, իսկ [երբ լսես]. «Ինձնից մեծ զորություն դուրս եկավ»՝ [իմացիր] Սուրբ Հոգին՝ կնոջ հավատի պահապանն ու պաշտպանը:

Արդ, եթե Աստծու անչափ մեծությամբ այսպես լցվեց մի մարդ, ապա որքան առավել՝ այն տասներկուսը, որոնք ընդունեցին աստվածային Հոգու փչումը, լցվեցին կատարելությամբ և ամբողջ աշխարհը առանց ապականության լցրեցին նույն Հոգով: Եվ բժշկեցին ոչ միայն մարդկանց, այլ նաև օրը, օրվա հետ՝ տասներկու ժամն ու տարին և տարվա հետ՝ տասներկու ամիսը: Իսկ ինչպե՞ս է բժշկվում օրը: Ասեմ՝ ինչպես հիվանդացավ, այնպես էլ բժշկվեց. հիվանդացավ կռապաշտությամբ և բժշկվեց աստվածպաշտությամբ: Օրվա տասներկու ժամերի նմանությամբ մարդիկ մոլորած էին տասներկու աստղերով, որոնցով նրանց խաբում և պատրում էին աստղագուշակները: Իսկ այսօր, ըստ ցերեկվա տասներկու ժամերի, մարգարեների խոսքերն են հնչում եկեղեցում, մեկնվում են տասներկու առաքյալների խոսքերը, և կենաց ավետիս է բաշխվում բոլոր հավատացյալներին, որով մարդիկ հորդորվում են դեպի առաքինություն և նախկին մոլորության փոխարեն խոսում են ճշմարտություն, գործում են արդարություն և աստվածային պտուղներ են տալիս սուրբ ամուսնությամբ, կուսությամբ, ողորմածությամբ, օտարասիրությամբ, Աստծուն հուսալով, ճշմարիտ հավատ, աներկմիտ սեր ունենալով: Եվ փոխանակ պիղծ զոհերի, որոնք անասունների արյուն են հեղում՝ նվիրելով դևերին, այսօր մարտիրոսներն իրենց կամքով և ոչ բռնությամբ իրենց արյունն են հեղում Քրիստոսի արյան համար:

Այս են տասներկու առաքյալները, որոնք սրբեցին և սրբում են ամբողջ աշխարհը: Քանզի ժամանակների սկիզբը օրն է, որն աճեց, լցվեց և հասավ վեցերորդ դարին. և երբ օրը, ինչպես ասացինք, սրբվեց առաքյալների քարոզությամբ, սրբվեցին ամիսները, տարիները, ժամանակները և հավիտյանները: Քանզի եթե սուրբ է սկիզբը, սրբվում

են նաև ամենքը, որ սկսվում և աճում են նրանից: Քանզի առաքյալների տասներկու թիվը ոչ թե պատահաբար եկավ մտավ առաքելության կարգի մեջ, այլ ժամանակների հեռվից Աստծու տվչությամբ հայտնություններ երևացին. նախ այն երևաց Հակոբի տասներկու որդիներով, որոնց թվով աճեց ու բազմացավ ազգը և ժառանգեց պարգևների երկիրը:

Դարձյալ՝ երևաց նաև Հեսուի միջոցով. տասներկու վեմերով. սա փոքր հայտնություն էր, մանավանդ որ կեսը բարձրանում էր, և կեսն իջնում, իբրև սքանչելիքի կենդանի տեսիլ. բարձրանում էին խավարից դեպի լույս, և իջնում լույսից դեպի խավար. հեթանոսները, որ թաղված էին իրենց մեղքերի գործերի մեջ, ծովի անդունդներից ելան տասներկու առաքյալների ձեռքով, որոնք ճշմարտության վեմեր են, և ո՛չ հողմերն ու հեղեղները նրանց շարժել կարողացան, ո՛չ էլ ուժգին անձրևները, իսկ տասներկու ազգապետները վերջացան ու մնացին, իջան ու դադարեցին գետի հատակում՝ թանձր ջրերի տակ, և այնտեղ են մինչև այսօր:

Գնանք նաև Գալիլիայի անապատ, ուր Տերը հացի բազմացման հրաշքով կերակրեց ժողովրդին, իսկ ավելացածը ո՛չ ավելի և ո՛չ պակաս էր, քան տասներկու լիքը զամբյուղ. մի՞թե այս սքանչելիքից չի երևում այդ: Հացի բազմացումից առաջ դատարկ էին տանում զամբյուղները, և դրանք լցնում են ճաշից ավելացածով: Ավելին՝ քանզի Աստված էր, որ մատակարարում էր, ներկայում հագեցրեց, իսկ խորհուրդը ամբարեց ապագայի համար: Ըստ հայտնի գրվածի՝ զամբյուղները լցվեցին հացով, իսկ ըստ ծածուկ հոգևորի՝ տասներկու առաքյալները լցվեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով և սփռեցին տարածեցին դրանք աշխարհի տասներկու մասերում և լցրեցին աշխարհի չորս կողմերը, ուր բնակվում են հեթանոսների բոլոր ազգերը:

Բազում անգամ եկանք տան մոտ, որ ինչպես նախապես ասացինք, երկրացավ ու երկնացավ և կարող եղավ ընդունելու ամենը: Ինձ թվում է՝ ավելի շատ օրինակներով շրջապատվեցինք այս տասներկու թվով: Եվ թեպետ մենք չկարողացանք ըստ արժանվույն մատուցել, բայց երբ Տերն Ինքը Սուրբ Հոգու ամբողջ զորությամբ սփռելով տարածի նրանց ազգերի մեջ, այնժամ կկատարվի մարգարեի այն խոսքը, որ ասում է. «Պատմեցի և խոսեցի դրանց մասին, բայց դրանք անթիվ են» (Սաղմ., ԼԹ 6), այսինքն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատացողների Եկեղեցիները: Նրան փառք և զորություն այժմ և հավիտյանս:

Դարձյալ՝ Հիսուս Իրեն երկրորդ անգամ աշակերտներին հայտնեց Տիբերացիների ծովի վրա: Այնտեղ էին Պետրոսը, Թովմասը, Նաթանայելը, Հակոբոսը, Հակոբի եղբայրը՝ Հովհաննեսը, և երկու ուրիշ աշակերտ: Արդ, ի՞նչ էր արել նրանց. նրանց տնից հանել էր, լցրել էր Սուրբ Հոգու շնորհներով, ուղարկել էր աշխարհ՝ գործելու: Իսկ նրանք անհոգությամբ պարապ շրջում էին:

Շրջում էին ոչ այլ վայրում, այլ ծովում՝ առանց թողնել կարողանալու հայրենի արհեստը. դեպի այն էին վերադառնում, նրա մասին էին հոգում, նույնի մեջ վարժվում և կամենում էին հիշել մոռացածը:

Տեսնո՞ւմ ես՝ որքան թանձր է միտքը. տեղից վեր չէին թռչում՝ Տիրոջից այնքան խրատվելով ու կրթվելով և Սուրբ Հոգուց այնքան կոկվելով ու Նրան իրենց մեջ ունենալով, և դեռևս հատու չէին, ուրեմն պետք էր նորից սրել:

Ի՞նչ ես խոսում, տե՛ր իմ Պետրոս. ծովեզրին նստած՝ ծովի մասին ես հոգում, մակույկդ ես պատրաստում և ասում

ես՝ գնանք ձուկ հանենք: Տեսնո՞ւմ ես՝ այդ ասելով՝ այդ-պես ես սովորեցնում մյուս առաքյալներին, և հարկ է, որ նրանք էլ քեզ հետ գան, քանի որ ոտքերը տանում են այն-տեղ, ուր կամենում է միտքը. միտքը գլխում է, իսկ աշա-կերտների գլուխը դու ես: Երբ դու ասում ես՝ գնանք ձուկ հանենք, ի՞նչ ես լսում նրանցից, եթե ոչ այն, թե՝ մենք քեզ հետ ենք: Քանի որ ուր էլ որ գնան, դու ես նրանց տունը, քաղաքը և այն ամենը, ինչ որ պետք է ձեր երկրավոր վի-ճակին: Դու մի՛ մոռանա. ձեր թիվը գեղեցիկ է. ահա յոթն եք, և ձեր մեջ աշխարհն է երևում, միաժամանակ և՝ աշ-խարհի Տերը: Արդ, բարի չէ ձեր պարապ լինելը: Եթե այլ գործ չունեք, դարձյալ գնացեք Հրեաստան, շրջեք հարութ-յան տեղում, եղեք վեմի մոտ, խաչի շուրջը նայեք, ուշա-դի՛ր եղեք, տեսե՛ք՝ քահանաները ո՛ւր թաքցրեցին [խաչը], տեսե՛ք տեղը:

Վաղը պիտի փնտրվի խաչը. Տերը հողի մեջ չի թողնի Իր զենքը, որով սպանեց Իր թշնամուն և գերիներին ազա-տեց նրանից: Ա՛չք ածեք տեղի շուրջը, մտե՛ք դռնով. թե-րևս հրեշտակներն այնտեղ կլինեն, ինչպես որ իսկապես այնտեղ են:

Գնացե՛ք Սիոն, ելե՛ք վերնատուն, նայեցե՛ք փակ դռնե-րին, որոնցով մտավ Տերը, հիշեցե՛ք տեղը, ուր եկավ կանգ-նեց ձեր մեջ և ողջույն տվեց ձեզ, ուր և Սուրբ Հոգին փչեց ձեզ վրա: Այդ ամենո՛վ կրթեցեք ձեր անձերը, այս ամե՛նը խոկացեք, որպեսզի ձեր սրտերից չմոռացվեն մեծամեծ զո-րությունները, որ գործվեցին ձեր մեջ:

Բայց եթե վախենում եք Հրեաստան գնալ, քանի որ այն-տեղ են Աննան, Կայիափան և ամբողջ դառնաշունչ ժողո-վուրդը, մի՛ գնացեք, չեմ մեղադրում և այդ: Այնտեղ է մեծն Հակոբոսը, որ բավական է բոլոր առաքինի գործերի համար, և ինչպես որ ինքն է արդար հարություն Առածի

քարոզության մեջ և աներկյուղ խոսում է խաչ հանողնե-րի մեջ, փութա՛, շտապի՛ր նաև դու, Պետրո՛ս, այդքան մի՛ ուշացրու առաքյալներին, որոնց առել ու ծովեզերք ես ի-ջել: Չեմ ասում, թե՝ մի՛ ասա՝ գնամ ձուկ հանեմ: Եթե այդպես է, գնա՛, ո՞վ գիտի, դու լավ գիտես, ո՞վ կարող է քեզ վարդապետ լինել, քանզի ահա դո՛ւ ունես Սուրբ Հո-գու շնորհները՝ վարդապետելու:

Բայց ինձ թվում է՝ այսօր դեռ կասկածում ես, որովհե-տև այլ են շնորհները ձկնորսների և այլ՝ ուրիշ արհեստ ու-նեցողների: Դու ո՛չ ձկնորսների շնորհն ունես և ո՛չ էլ նա-վավարների գործը գիտես. թեև մի ժամանակ [ձկնորս] էիր, բայց թողեցիր այն, իսկ թողնելը քեզնից չեղավ, այլ Նրա-նից, ով ընտրեց քեզ: Եթե կամենում ես, հիշի՛ր այն խոս-քը, որ ասաց. «Թողե՛ք ձեր ձկնորսությունը, և ես ձեզ մարդկանց որսորդներ պիտի դարձնեմ» (Մատթ., Դ 19, Մարկ., Ա 17). մարդկանց որսորդ ես, այսուհետ ձուկ որսալ չես կարող:

«Եվ ելան, ասում է, նավի վրա և ամբողջ գիշեր չարչար-վեցին, բայց ոչինչ չբռնեցին» (տե՛ս Հովհ., ԻԱ 3): Արդար և ճշմարիտ. գիշեր է բոլոր նրանց համար, ովքեր առանց Աստծու են ապրում աշխարհում, և նրանց գիրկը դատարկ է կենաց որսից, որ իրենց Տիրոջ օգնականությամբ բռնում են միայն հավատացյալները:

Արդ, երբ լույսը բացվեց, ասում է, Տերը երևաց նրանց. ծովեզրին կանգնած էր: Երբևէ ո՞վ է տեսել, որ լույսից ա-ռաջ երևա արեգակը: Այս բանը միայն Տիբերացիների ծո-վի վրա երևաց. իմանալի Արեգակը, երկնքից երկիր իջած, կանգնած էր ծովի ափին և Իր մեջ ամփոփել պահել էր Իր անմատչելի լույսի ճառագայթները: Լա՛վ եմ ասում, թե՝ ամփոփել պահել էր, քանզի անհնարին է տեսնել այն Արե-գակին: Եկել է ծովակի մոտ, ինչպես առաջներում՝ մինչև

նրանց ուսուցանելը, ծովից հանելն ու առաքյալ լինելու վիճակին հասցնելը, նույն կերպ նաև այժմ է անում: «Տղանե՛ր, ասում է, ի՞նչ ունեք ուտելու» (Հովհ., ԻԱ 5): Տղանեները, արդարև, միայն ուտելու մասին էին [հոգում]. ես ձեզ շուտ կորզեցի հանեցի, ասում է, աշխարհից և կատարելության չափի հասցրեցի՝ առաքինության բազում հանդեսներով անցկացնելով, մինչև իսկ Սուրբ Հոգին ընդունեցիք, որով երկինքն ու երկիրը իրենց լրումին հասան, բայց դարձյալ տղաներ եք, դեռևս տղայականն եք խորհում և դրանով եք զբաղված: Տեսնո՞ւմ եք, ահա կրկին առանց ինձ չեք կարող լրացնել ձեր կարիքները, որովհետև ոչինչ չունեք, քանզի եթե ունենայիք, չէի հարցնի, այլ միայն կհրամայեի, որ բերեք: Հարցրի, որովհետև չունեք, ես ոչ թե չգիտեի, որ չունեք, այլ ձեզ սովորեցրի խոստովանել արդարը՝ ձեր տգիտությունը: Եթե ձկան կարիք ունեիք և հույժ անհրաժեշտ էր ձեզ այդ ժամանակ, որի համար և ամբողջ գիշեր չարչարվեցիք, ինչո՞ւ իմ անունով չգցեցիք ուռկանը. գիտեիք իմ անունը. բազում անգամ լսել եք այն: Դևերն ո՞ւմ անունով հնազանդվեցին ձեզ. մի՞թե ոչ Հիսուս Քրիստոսի անունով. Հիսուս Քրիստոս՝ Նա, ով Նազարեթից է, իսկ Նազարեթը սահմանն է ձեր երկրի, իսկ այս ծովում ու նրա ափերին այնքան հրաշքներ, գործեր ու զորություններ երևացին, և դուք տակավին չե՞ք իմացել: Ապա ուրեմն դեռևս մարմնի թանձրության մեջ եք և չեք թեթևացել նախկին ծանրությունից, չեմ ասում՝ զգայությունից, այլ վատթար մտքերից, որոնք չաճեցրին աստվածային տունկեր:

Արդ, «Եկե՛ք, ասում է, ուռկանը գցե՛ք նավակի աջ կողմը» (Հովհ., ԻԱ 6): Քանզի երբ առանց ինձ գցեցիք, գիշեր էր, և ձախակողմ, իսկ այն, որ ինձնով եք գցում, ցերեկ է և աջակողմ: Իսկ եթե աջակողմ է, այնտեղ կգտնեք, եթե

գտնեք, մի՛ ուրանաք Սուրբ Հոգու գիտության շնորհները, որպեսզի հաստատուն պահեք ձեր հոգում:

Այդ անելով՝ նրանք մեծ քանակությամբ ձուկ որսացին, այնքան շատ, որ ուռկանը քաշելիս օգնականի կարիք ունեցան և շատ չարչարվեցին, մինչև ցամաք հանեցին այն: Պետրոսը խիստ զարմացած էր ոչ միայն, որ շատ ձուկ էր բռնվել, այլ նաև, որ այնքան մեծ, անչափ շատ ձկների բազմությունից ուռկանը չէր պատռվել: Եվ որովհետև երբևէ այսպիսի որս չէր պատահել իրենց, հրաշագործություն կարծեցին այն և ոչ որս, այդ պատճառով էլ Հովհաննեսն ասաց. «Տե՛րն է» (Հովհ., ԻԱ 7): Հովհաննեսի խոսքից և Տիրոջ՝ «Աջ կողմը նետեք» հրամանից Պետրոսը վեր թռավ, իրեն մերկ ծովը նետեց և նավակից առաջ հասավ Տիրոջ մոտ: Սարսափով և ուրախությամբ լցված՝ չկարողացավ արժանն իմանալ, այլ նույն՝ հին սովորությամբ մտածեց, թե կարիք ունի կերակրի ու հանգստի: Իսկ Տերը, ողորմելով նրանց, ճաշ էր պատրաստել: Սակայն աշակերտներից ոչ ոք չհամարձակվեց հարցնել, թե՝ «Դու ո՞վ ես», որովհետև իմացան, որ Տերն է: Իմացան, որովհետև Նա նախկինի նման չէր: Իսկ Հիսուս ավելի ու ավելի մոտեցավ նրանց և նախկին սովորությամբ օրհնեց, նրանց հետ կերավ և հարությունից հետո ամբողջացրեց ու ավարտեց Երրորդության հայտնությունը:

Բայց գիտեմ, թե ինչ եք ասելու ինձ. որ այդ ամենն ավետարանագիրը պատմել է ձեզ: Արդ, ինչի՞ համար է Տիրոջ՝ ծովի վրա հայտնությունը և կամ ձկների բազմությունը, ուռկանի չպատռվելը, հացի ու ձկան՝ կայծերի վրա լինելը: Նույն մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ Իր մարգասիրությամբ Իրեն հայտնեց Իր աշակերտներին, մեզ նույնպես ցույց կտա Իր խորհրդավոր խոսքերում ծածկվածը՝ ոչ միայն Տիբերական ծովում եղած, այլ ամեն ժամ և ամեն

տեղ, ոչ միայն, որպեսզի իմանանք և ասենք Նրա պատվերները, այլ նաև, որպեսզի Նրան սիրենք մեր ամբողջ զորությամբ և ո՛չ թե հրաշքների միջնորդության պատճառով: Քանզի շատ մարդիկ կան, որ աշխարհում հաջողություններ ունենալու պատճառով են սիրում Աստծուն, մարդիկ էլ կան, որ իրենց գործերի համար դատապարտվելով՝ դառնում են դեպի ապաշխարություն և սիրում են Աստծուն: Իսկ նրանք, որ քաջ են ու ամեն բանում կատարյալ, երիտասարդությունից իրենց անձերը նվիրում են աստվածպաշտության, չեն փնտրում նշաններ ու հրաշքներ և հեռու են աշխարհի ամոթալի գործերից: Սրանք են, որ բարձր են երեք թվից, որի հետ եղածներից ոչինչ համեմատելի չէ: Բայց Աստվածությունը բարերար է, ընդունում է երեք մասին էլ, և բոլորը շրջում են աստվածային հարկերում:

Մենք էլ, եղբայրնե՛ր, թեև առաջիններից չենք, վերջինների հետ գնանք, աղաչենք նույն Տիրոջը, որպեսզի մեզ նույնպես ընդունի Իր սիրո գութով, թողություն շնորհի, ինչպես մյուսներին, և մեզ արժանացնի ամեն ժամ գնալու Սուրբ Ավետարանի խոսքի ետևից, նրանով գալու, նույնը սիրելու, նույնի մասին մտածելու և նրանով հասնելու խոստացված ավետիսների կատարմանը:

Արդ, պետք է իմանալ, որ Տիբերական ծովը անբաժանելի մեծ ծովի մաս չէ, այլ ուրույն է, զատ և առանձին, անվանվում է ծովակ, ոչ թե ծով. իսկ աշխարհը նման է ծովի և ոչ թե լճի: Եվ ինչպես երևում է՝ Տիրոջ գալուստից առաջ ցամաքաբնակները նմանվել էին ջրայիններին՝ անիշխան ու անառաջնորդ, խառնակ կենցաղավարությամբ, առանց խղճալու և պատկառելու զրկում ու սպանում էին միմյանց, չէին ճանաչում արարածների Արարչին, և ինչպես գիշերվա ու թանձրացած խավարի մեջ [ընակվող]՝ ամենևին չէին կարողանում վերև նայել, նմանվում էին մեծամեծ ձկների, որոնք անխտիր կուլ են տալիս մանրերին, և իրենց էլ կուլ են տալիս ավելի մեծերը, և կարծում էին, թե իրենցից վեր այլ արարածներ գոյություն չունեն: Ինչպես սուրբը մարգարեն է բողոքում. «Ինչո՞ւ նայեցիր արհամարհողներին և չնկատեցիր, երբ ամբարիշտը կուլ էր տալիս արդարին: Մարդկանց ծովի ձկների պե՞ս ես դարձնում և սողունների՞ պես, որոնք առաջնորդ չունեն» (Ամբ., Ա 14). երբ հայտնի է Աստծու համբերության համար այս մեղադրանքը, ինչո՞ւ, ասում է, այն ժամանակներից [այդ ամենը] թույլ տվեցիր: Մարգարեն տառապում է Սուրբ Հոգով, չի կարողանում տեսնել թշվառացածների տառապանքը: Փութա՛, շտապի՛ր, ասում է, արի՛, Տե՛ր, և երևա՛, մոտեցի՛ր՝ փրկելու, հանի՛ր աշխարհը մեղքերի ծովից, որպեսզի Քեզ ճանաչեն Տեր և Արարիչ, Իշխան և Առաջնորդ կյանքի, որպեսզի չլինեն ջրային գազաններ, այլ մարդիկ՝ երկրային և երկնային, իմանալի զորության պատկեր ու կերպարանք: Ուստիև. «Ուռկանը գցե՛ք նավակի աջ կողմը» (Հովհ., ԻԱ 6):

Եվ ո՞վ է, որ ասում է այս: Ով նստում է երկնքում՝ Հոր աջ կողմում: Նա աշակերտներին ասում է. «Եվ Հոր աջակողմում կնստեցնեմ ձեզ և ձեր ամեն ինչը կհաջողեցնեմ ձեզ. ձեր մեջ խավարի մաս չկա և ոչ էլ ճախակողմ. մի՛ որսացեք գիշերով, որովհետև լույսը հեռու է նրանից, և շատերն են նրանով գայթակղվում: Դուք լույսի ու ցերեկվա որդիներ եք, և ինչպես որ դուք եք լույսի որդիներ, այդպես էլ ձեր գործերը պիտի լուսավորվեն աշխարհում, և աշխարհը ձեր ետևից պիտի գնա դեպի կյանքի լույսը: Եվ ճախ կողմ մի՛ նետեք ձեր ուռկանը, որովհետև նրանք, ովքեր ճախի որդիներ են, խավարային իշխանի ծնունդներ են, և ինչպես որ նրանց համար չկա աջակողմյան մաս և

բաժին, այդպես էլ թող ձեզ համար չլինի ձախակողմյան մաս և բաժին»[54]:

Եվ Պետրոսն ու իր ընկերները, առավել մտքով, քան ականջներով լսելով այս, ուռկանը նետեցին նավի աջ կողմը և բռնեցին հարյուր հիսուներեք ձուկ: Իմաստության այս նախագաղափարը հայտնի է: Հների մեջ ոմանք, բանական իմաստությունը գործի դնելով, ոչնչով պակաս չեն երկնավոր իմաստությունից: Նրանք ասում են՝ ամեն բան, որ երեք է, բաժանելի է[55], իսկ այն, ինչ բաժանելի է, միավորելի ու կապակցելի է, նաև շատ է և անախտ: Արդ, ձկների թիվը բաժանվում է երեք հիսնյակի և մեկ երեքի, որոնք հարում և միանում են իրար: Երեք հիսունը, որի մեջ կրկնաբաժանմամբ երևում է վեց մաս, գնում ելնում է դեպի լինելության սկիզբ, իսկ այնտեղից ընդհանրությամբ իջնում են դեպի նույն թիվը, որին հիսուն ենք ասում, որը և Մովսեսն օրինադրեց՝ այն անվանելով հոբելյան, երկրից հանգստացուցիչ և մարդկանց ծառայությունից ձերբազատող: Արդ, այս ամենի մեջ Մովսեսը սահմանեց ժամանակավոր օրենքը, որի աղոտ ակնարկությունը կատարվեց ժողովրդի մեջ, իսկ ճշմարտությունը երևաց մարդկային բոլոր ազգերի մեջ, ինչպես ցույց է տալիս ձկների թիվը: Քանզի օրենքի սահմանումը տրվեց Տիրոջ կողմից, բայց այնտեղ ուր Տերն էր, այլևս չկար խորհուրդ, այլ ճշմարիտ հայտնություն, ինչպես որ պարզ կերպով ասացինք այս ճառում: Քանի որ երեք հիսունի բազմությունն ամբողջ աշխարհն էր՝ և՛ օրերը, և՛ ամիսները, և՛ տարիները, և՛ ժամանակները, և՛ կենդանիները, որովհետև այն նյութական է, ծնելու ունակ և ընկած է ապականության ախտի ներքո, և նրան պետք է անախտ օգնական, որը շատ պարզորեն երևում է երեք ձկների թվից: Քանի որ ոչ թե վեցյակներն են, և աճելով կլրացնեն տասներկու թիվը, և կամ տասներկուսը կրկին թվելով՝ կբաղկանա վեց թիվը, այլ ասաց՝ երեք. ո՛չ ավելի և ո՛չ պակաս, քանզի հրամանը տերունական էր, կողմը աջ էր, իսկ խորհուրդը հայտնություն էր:

Եվ ի՞նչ ավելի մեծ բան կա, քան այն, որ գործը կատարվի Աստծու խոսքով, և Ինքը պատկերված երևա Իր գործի մեջ: Քանզի Սուրբ Երրորդությունն անբաժանելի է, բայց տեսանք անսեղմությամբ առանձնացած, ինչպես այս ձկների թվի մեջ՝ Հայրը որսակից եղավ Որդուն, և Սուրբ Հոգին սատար և օգնական եղավ առաքյալներին: Ծովից որսացին հայտնի ձուկը, իսկ ձկներից երևում է, որ որսացին ամբողջ աշխարհը ոչ թե ջրից դեպի ցամաք, այլ երաշտացած ցամաքից դեպի կենդանի ջուրը:

Մարդիկ կարիքից են ձուկ որսում՝ ծովից դեպի ցամաք, կյանքից դեպի մահ հանելով այն, բայց երբեք իրենց իբրև որս որսալ չեն տալիս, քանի որ մահկանացու են և իրենք են իրենց որսը: Իսկ Աստված կենդանի է և կենդանարար՝ ամենայն մեռելություն կենդանացնող, որսին որսում է մահից դեպի կյանք, ոչ թե դեպի ժամանակավոր, այլ անժամանակ և անանց կյանք:

Ոչ միայն որսում է, այլ նաև Ինքն է որսից որսվում ո՛չ երևութապես, այլ ճշմարտապես, քանի որ աներկյուղ է և անվախ, անհատնելի ու անբաժանելի: Ինչպես որ երեքի կերպով Իրեն ձկների թվին խառնեց առանց ժլատության ու նախանձի, այդպես էլ որսվում է Իր որսի կողմից և Իրեն է կերակուր տալիս, քանզի միաժամանակ ծով է, տեղ, խայծ, կերակուր և ձկնորս:

Հիրավի այսպես է, քանզի կյանքը անպակաս ու անսպառելի կերակուր է, և ամեն ոք, ով ուտում է կյանքից, կենդանանում է նրա հետ. կյանքը չի մեռնում, այլ առավել բազմանում է, մեծանում, ցնծում և ուրախանում:

Ասացի շատից քիչը, ճշմարիտ օրինակը, որ ունի նմա-

նությունը, բայց ոչ էությունը, բայց կասեմ ոչ իմ, այլ Նրա՝ կենաց Խոսքի [օրինակը]. երբ փորձիչը մոտեցավ Նրան, փորձելով՝ ասաց. «Եթե իսկապես Աստծու Որդի ես, ապա այս քարերին ասա, որ հաց լինեն»: Եվ լսում է պատասխանը. «Ո՛չ միայն հացով կապրի մարդ, այլև Աստծու ամեն խոսքով» (տե՛ս Ղուկ., Դ 3-4): Իսկ Աստծու Խոսքը Աստծու Որդին է և Իրեն է տալիս որպես կերակուր. և չի երկնչում. ինչպես որ կերակրում է աշխարհը առանց չարչարանքի, այդպես էլ ուտվում է աշխարհի կողմից առանց հատնելու ու բաժանվելու: Բայց ես հարցնում եմ նույն իրեն՝ փորձիչին՝ դու ի՞նչ ես ուտում. հող չունես, վարուցանք և հունձք չես անում, պարզ է, որ հացով չես ապրում, ոչ էլ ուրիշ թանձր կերակուրներով: Ահա երևում է, որ Աստծու խոսքով ես կերակրվում. թեև արժանի չես, բայց Աստված բարերար է, մնում է առանց վերջանալու և պակասելու: Ասածս այն խոսքը, թե մահկանացուներին դեպի կյանք է որսում, և Ինքն էլ որս է լինում, [նշանակում է] Իրեն հավասարեցնելով ապականացու որսին, և՛ գաղտնի, և՛ հայտնի կորզելով՝ հանում է ապականությունից:

Եվ բոլոր ձկներն, ասում է, մեծամեծ էին: Ինչո՞ւ ես զարմանում. երբ Աստված է ձուկ որսում, Նրա ամենատես աչքից ոչինչ չի թաքնվում. երբ կամենում է, ամենամեծերն է բռնում, երբ կամենում է՝ մանրերը, երբ կամենում է՝ միջինները, և այս երեք թվի մասերով ամենքս Նրանն ենք: Ձկների դեպքում այսպես է. նախ որսաց ամենամեծերին, քանի որ խորհուրդ էր և ոչ ճշմարտություն, բայց առաքյալների ընտրության դեպքում այդպես չէր. նախ՝ [որսաց] փոքրերին և ապա՝ մեծամեծներին: Ասացի՝ փոքրերին, և հիրավի այդպես է. նրանք ոչ միայն փոքր էին, այլ նաև տգետ էին ու գալիլիացի, լեզվով՝ անպիտան, գավառով՝ անարդ, աղքատ ու տնանկ: Ո՞վ է ձկնորսից ավելի աղքատ,

նրանից ավելի հիմար, քանզի նրա միակ հոգսը իր մակույկն է, նրա խոսակցությունը՝ անխոս ձկների հետ, երևում է, թե բոլոր մարդկանցից ոչ միայն առավել տգետ են, այլև առավել վայրենի, բազում անգամ ավելի նվաստ, քան վկայում եմ քեզ: Դու մի՛ նայիր այնպիսի աղքատությանը, որ իրենց կամքով չէ, այլ աշխարհի պատահարներից, քանի որ երբ մարդիկ ագահությունից հասնում են իշխանության ու տերության, զրկում են ու գողանում և իրենց ընկերակիցներին մեծ թշվառության հասցնում:

Այժմ նայի՛ր Աստծու բարերարությանը և տե՛ս, թե ինչո՞ւ Տերը աշխարհ եկավ: Իհարկե, որպեսզի խափանի այդ ամենը և կյանքի հավասարություն գործի: Իսկ արդ, ո՞ւմ ընտրել կտայիր դու, որ գարշում ես աղքատներից և փախչում ես տնանկներից. որովհետև «աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն նրա իմաստությամբ» (Ա Կորնթ., Ա 20), հարկ էր ընտրել հիմարներին: Դարձյալ՝ հզորները ոչ միայն արհամարհում էին Աստծու հավատն ու օրենքները, այլ նաև մեծ հարվածներ էին հասցնում տկարներին, «դրա համար էլ Աստված այս աշխարհի տկարներին ընտրեց, որպեսզի ամաչեցնի հզորներին» (Ա Կորնթ., Ա 27), և ինչպես որ տկարներով ամաչեցրեց հզորներին, այդպես էլ հիմարներով պիտի լռեցնի իմաստուններին: Քանզի ընտրեց, ասում է, Աստված, իսկ ուր Աստծու ընտրությունն է, այնտեղ չկա ո՛չ տկարություն, ո՛չ հիմարություն: Ինչպես որ աշխարհը չգոյությունից գոյության, այդպես էլ տկարությունից զորության և աղքատությունից հարստության բերեց: Քանզի արարում է նոր աշխարհ. նյութի ու տեսակի մասին չեմ ասում, այլ նախկիններին, որ ապականվեցին իրենց կամքով, դեպի նույն ընությունը տանելով՝ հանում է նորոգությամբ. և նախ նոր ու հարուստ, նաև իմաստուն դարձրեց նրանց, ում միջոցով նո-

բոգում է նրանց, միաժամանակ և նրանց իմաստության առաջնորդ ու վարդապետ դարձրեց, և նրանց գործակից է Սուրբ Հոգին, որով նախապես ամեն բան եղավ:

Տեսնո՞ւմ ես, որ այսուհետև ոչ թե շրջում են Գալիլիայի ծովակի շուրջը, այլ մեծ ծովի, և ոչ թե ծովի ջրի, այլ կղզիների և ամբողջ ցամաքի շուրջը, և ոչ թե սովորական, այլ նոր ուռկան ունեն, որով որսացվել էին իրենք, որը չի պատռվում, որովհետև երկար է այն, և նրանից առավել՝ նրա լարը, քանի որ խայծը մեջն են դնում, և ուռկանը սփռելով տարածում են ամբողջ աշխարհում:

Եվ որովհետև թվով տասներկուսն են, իսկ ուռկանի լարերը երկուսն են, լարերը չորս ծայր ունեն, և նրանք երեք-երեք մեկական ծայր են առնում, քանի որ երեք զույգն է անվթար զորություն. մի կողմը՝ դեպի արևմուտք, մյուսը՝ դեպի արևելք, և երկուսն էլ՝ դեպի հյուսիս և դեպի հարավ: Եվ ամբողջ աշխարհը բոլորակ պարույրաձև ներս առնելով՝ փակեցին. և ամեն մեկն իր կողմը չի գցում ուռկանը, այլ բոլորը միաբան են. ուր խայծն է, այնտեղ են հավաքում բոլորին՝ դեպի կյանք և ո՛չ դեպի մահ, քանզի կերակուրը կենդանի է, [այն կերակուրն է] կենդանիների և ո՛չ մեռելների:

Բայց գիտեմ՝ ինչ ես ասելու: Ի՞նչ օգուտ, կասես. ծովակից հանեց, բայց նա ծովում դարձյալ ձուկ որսաց: Եղբա՛յր, ես այդ չասացի, բայց որովհետև իմաստություն ես փնտրում, դու ինքդ ուսանի՛ր ուռկանի առակը, որին Տերը նախապես նմանեցրեց [երկնքի արքայությունը] (տե՛ս Մատթ. ԺԳ 47): Դարձյալ՝ հզորին ես սիրում. մարդկանցից ո՞վ է ավելի զորեղ, քան սա, որ կարող է ամբողջ աշխարհը բովանդակել մի միաբանության մեջ, նաև ոչ մի մեծատուն նրանցից ավելի հարուստ չի երևա: Եթե քո միտքը հաճեց ու հավանեց այս երեք մասերը, ապա կասեմ քեզ

նաև ուռկանի և ուռկանավորների մասին, ձկների մասին էլ կասեմ և չեմ թաքցնի քեզնից: Իսկ բազմության մասին. եթե կարող ես, դու թվիր նրանց, ես չեմ կարող: Ծովը այս աշխարհն է, ուռկանը՝ Տիրոջ քարոզությունը, ուռկանի ծայրերը՝ չորս Ավետարանները, ուռկանավորները՝ տասներկու առաքյալները, որսված ձկները՝ որսը՝ հեթանոսների բոլոր ազգերը, միջի խայծը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը, իսկ մեջտեղում՝ ճշմարիտ հավատը: Քանզի Աստվածությունը բարձր է, իսկ մարդկային բնությունը երկրի ստորին կողմում է, Հոգու զորությունը վերից վար խոնարհվեց, իսկ հավատը վարից վեր կանգնեց և զորությունից բռնած՝ հաստատվեց մնաց վերջինների մեջ, որպեսզի ձգելով՝ կորզի դեպի վեր:

Արդ, որովհետև ծովից ցամաք ելանք և ձկներից եկանք հասանք մարդկային ազգին, եկ և տե՛ս այս տասներկուսին. ծովում ոչ միայն ուռկանավորներ են, այլ նաև նավավարներ, ցամաքում՝ սուրհանդակներ, պատերազմում՝ զինվորներ, աշխարհում՝ քաղաքի կառավարիչներ և օրենսդիրներ: Այսուհետ մարդկանցից օգնական ունենալու կարիք այլևս չունեն, որովհետև իրենց հետ է բոլորին Զորացնողը, աներկյուղ ու անվախ են. նրանք, որ սարսափած փախչում էին Երուսաղեմից, այնտեղից իսկ սկսում են նոր քարոզությունը և համարձակորեն ուսուցանում են ոչ թե ծածուկ խորշերում ու թաքստոցներում, այլ տաճարի ներսում, ուր հավաքվել էր ամբողջ աշխարհը, և ստեպ մեջբերելով Քրիստոսի անունը՝ բոլորի առջև բազում նշաններ ու հրաշքներ են ցույց տալիս: Շտապ դուրս չեն ելնում ու մեկնում անձկալի քաղաքից, նաև անարգ չեն համարում տեղը, ուր ամեն բանի Տերը անարգանքով մեռավ, այլ մեծ պարծանք ու կենդանություն բոլոր արարածների: Ձայնով բարբառում են, ձեռքով ցույց են տալիս, աչքերով տես-

նում են Բեթղեհեմը, ուր ծնվեց, Նազարեթը, ուր սնվեց, Գալիլիան, ուր ապրեց, Գողգոթան, ուր խաչվեց, գերեզմանը, որտեղից հարություն առավ, Ձիթենյաց լեռը, որտեղից համբարձվեց, երկինքը, ուր նստեց Հոր աջ կողմում:

Արդ, ո՞վ է ավելի հարուստ, քան առաքյալները, և ի՞մաստուն ավելի, քան նրանք, որ գիտեն այս ամենը, նաև առատաձեռն ու ամբողջը տվող: Մի-մի լումա էր ընդունում այն տկարը, որ նստած էր տաճարի՝ Գեղեցիկ կոչվող դռան մոտ և հազիվ էր մի քիչ ուտելիք հայթայթում (տե՛ս Գործք, Գ 2): Տե՛ս առաքյալների մեծությունը, դրա հետ նաև՝ առատաձեռնությունը. ոչ միայն նրա օրվա կամ ամսվա, այլ նրա կյանքի բոլոր օրերի ուտելիքը տվեցին, քանզի ոչ միայն ժամանակավոր ցավերից բժշկվեց նա, այլ նաև հավատի միջոցով հավիտենական կյանքը ժառանգեց (տե՛ս Գործք, Գ 7-8):

Արդ, առաքյալներն սկսեցին այնտեղից, որտեղից Տերը սկսեց աշխարհին հայտնել Իր Աստվածությունը. բազում անգամ ուսուցանեցին նրանց և վկայեցին քահանաների ու դպիրների մեջ, թե երկնքի տակ չկա այլ անուն, որով բժշկություն լինի, բացի մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունից:

Քանզի Հիսուս և Քրիստոս Իր մարդասիրության պատճառով թանձրացրեց Իրեն՝ մարմնավորմամբ, որպեսզի մարմնավորները կարողանան տեսնել Իրեն և ուսանել, որ Իրենով եղան երկինքն ու երկիրը, որ Ինքն է օրենսդիրը Մովսեսի ձեռքով, Իր մասին քարոզեցին մարգարեները, և Իր գալստյան օրն էին ցանկանում տեսնել մեր նահապետներն ու թագավորները:

Այս ամենի վկայությամբ առաքյալները խոսում էին բազմության հետ, նույնիսկ Կայիափա քահանայապետին էին համոզում լսել այդ իրենցից:

Այնքան համարձակ էին, մինչևիսկ սուրբ Ստեփանոսը, թեև այն ժամանակ ավելի երիտասարդ էր, քան մյուսները, Քրիստոսի հանդեպ տածած սիրուց Նրա համար փութաց հեղել իր արյունը, որպեսզի վկայությունը լինի ոչ միայն խոսքով, այն նաև մեծ զորությամբ, նույնիսկ մահվամբ: Տե՛ս Խաչվածի զորությունը. դեպի ո՜ր բարձրությունը ձգեց աշխարհը. այդ մասին նախապես ասել էր. «Երբ բարձրանամ երկրից, ամենքին դեպի ինձ կձգեմ» (Հովհ., ԺԲ 32): Քանզի սա՝ նույն Ստեփանոսը, մինչ ողջանդամ էր, միայն խոսել գիտեր Հիսուս Քրիստոսի անունով, քանզի թեև շնորհ ուներ և մեծամեծ հրաշքներ էր գործում, սակայն Նրան դեմ-հանդիման չէր տեսել, հենց այդպես էլ այն օրը Նրա վրա տեղացին քարերը, արյունն հոսեց երեսներով, մարմինն ընկավ գետնին: Իսկ նա այդ մասին բնավ հոգ չէր անում. նայելով վերև՝ բացում էր երկինքը, Քրիստոսին էր տեսնում Հոր աջ կողմում, աղոթում էր [իրեն] սպանողների համար: Եվ սա նմանությունն էր Քրիստոսի մահվան, իսկ աղոթքը՝ Նրա աղոթքի. քանզի ինչպես որ Նա էր աղոթում Իրեն խաչ հանողների համար, այնպես էլ սա՝ իրեն քարկոծողների համար:

Թերևս մեկը հարցնի, թե ի՞նչ օգուտ ունի չարերի համար աղաչելը, որովհետև ավելի ու ավելի կշատացնեն չարագործությունները: Այդպես չէ՛: Դու նույնիսկ մտքովդ չանցկացնես այդ. լա՛վ տես աղոթքի զորությունը և ուրա՛խ եղիր պտղով, որ քաղվեց նրանից: Սավուղն էր, որ քարկոծել տվեց նրան, իսկ Ստեփանոսն աղոթեց. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (տե՛ս Գործք, Է 59), ճշմարտությամբ աղաչեց, և Նա արդարությամբ լսեց նրան, քանզի ոչ միայն նրանց մեղքերը ներեց, այլ նաև առաքյալների դասին խառնեց նրան:

Արդ, խոսքով ու գործով վկայում էին Երուսաղեմում՝

քահանայապետների առջև: Եվ այնտեղ թողեցին Հակոբոսին՝ բոլորի փոխարեն բավական համարելով այդ ազնիվ այրին և դատարկ չթողնելու համար այն տեղը, որտեղից Տերն հրամայեց ամենևին չհեռանալ: Եվ իրենք, վիճակահանությամբ առնելով բոլոր ազգերին, շտապեցին քարոզելու Ավետարանը: Տեսնո՞ւմ ես. նրանք, որ այն ժամանակ այնքան ծուլացան, որ մինչևիսկ Տերը հազիվ արթնացրեց քնից, այսօր գիշեր ու ցերեկ առանց դադարի շտապում, աճապարում են ասել, լսել ու կատարել իրենց Առաքողի ամբողջ կամքը, մանավանդ երբ տեսան գազանացած գայլին, որ խառնում ու կոտորում էր ամբողջ անհովիվ հոտը: Ինչպես նույն մեծ Հակոբոսն էր Պետրոսին ասում. «Փութա՛, շտապիր և հասի՛ր Կեսարիա, քանզի այնտեղ է Սիմոն կախարդը, որ իբրև զգեստ դևեր է հագել և իր հոգում իբրև զենք ունի սատանային. ոչ միայն ինքն է մոլորվել դեպ կորստյան ճանապարհ, այլ նաև բոլոր նրանք, ովքեր լսում են նրան: Արդ, շտապի՛ր, եղբա՛յր, և շուտ օգնութեա՛ն հասիր բազմությանը, որ կորչում է տգիտությամբ, քանզի այնտեղ քեզ շատ օգնականներ կգտնես»: Հակոբը, այս ասելով և Սուրբ Հոգուն հանձնելով նրան, ուղարկեց, իսկ ինքը մնաց այնտեղ:

Պետրոսը, հասնելով բազմամբոխ քաղաք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով մեծամեծ նշաններով ու գործերով ժողովրդից շատերին հաստատեց, կշտամբեց ապստամբներին, հալածեց չար գազանին, մոլորությունից փրկեց անմեղ հոտին, Սուրբ Հոգու շնորհներով նաև մահը հալածեց նրանց սահմաններից: Եվ մինչ Կեսարիայում էր, առաքյալներին աշակերտող Այծեմնիկ անունով մի կին, որ Լյուդդա քաղաքում խնամում էր որբերին ու այրիներին, մեռավ, և Պետրոսը, հասնելով, կենդանացրեց նրան և շատ զարմացրեց այդ երկրի բնակիչներին: Հավատացյալների

թվին բյուր բազումներ ավելացան: Պետրոսի մասին այս լսելով՝ Հակոբոսը ցնծաց և ուրախացավ Սուրբ Հոգով, ավելի համարձակ վկայեց Տիրոջ անունը ամբողջ ժողովրդի առջև և հաստատուն էր այդ գործում: Իսկ Պետրոսը դարձյալ բժշկեց վերքերը նրանց, ում կորզել էր թունավոր գազանից, և սովորեցնում էր բոլորին սուտ կուռքերի պաշտամունքից դառնալ դեպի Մեկ Աստված՝ բոլորի Հայրը, ով ստեղծեց ամեն բան, և դեպի Միածինը, ով Իր բարերարությամբ եկավ և ցույց տվեց Իրեն մարդկային ազգին, որպեսզի ոչ միայն լսելով, այլ նաև նայելով ու տեսնելով, մոտ մերձավորությամբ խոսելով Իր հետ, ճանաչեն և ճանաչվեն, ինչպես որ եղավ իսկ: Մինչ Պետրոսը Հոպպեում էր, Կեսարիայում Տիրոջ հրեշտակը երևաց Կոռնելիոսին, որ հեթանոսների ազգից էր, բայց գործերով առավել էր, քան բոլոր իսրայելացիները, և կարոտ էր ճանաչելու Հիսուս Քրիստոսին և Նրա անունով մկրտություն ընդունելու, և նրան հրամայեց Պետրոսին իր տուն կանչել:

Արդ, տե՛ս մեծ ուռկանի գործը, որ չպատռվեց և պահում է մեծամեծ ձկներ, որոնք ոչ միայն ջրից են, այլ նաև ցամաքից. ինչպես որ Սուրբ Հոգին կտավի անոթի նմանությամբ հայտնվեց Պետրոսին և կախվեց չորս ծայրերից՝ իր մեջ պահելով բոլոր կենդանիներին՝ սուրբ և անսուրբ, փոքր ու մեծամեծ: Եթե հիշում եք, ես նախապես ասացի, թե երկնային ուռկանը չորս ողոց ունի, որոնք իրենց ներսում արգելափակում են երկրի չորս անկյունները: Արդ, երբ լսում ես՝ անոթները երկնքից երկիր իջան, մի՛ պատկերացրու կտավ կամ [մեկ այլ] նյութեղեն տարրից անոթ, քանի որ եղածներից ոչ մի բանի մի մասը չի կարող իր մեջ ընդունել բոլոր կենդանիներին, այլ իմացիր, որ այն զորությունն է Սուրբ Հոգու, որով եղավ ամեն բան: Տարածեց պրկեց Իրեն կտավի անոթի նմանությամբ: Իսկ ինչո՞ւ

[կտավի նմանությամբ]: Որովհետև կտավի անոթը ավելի մաքուր է և լուսափայլ: Հավաքեց բոլոր ազգերին. որոնք սուրբ էին, և որոնք սուրբ չէին. ըստ երևացող հայտնության՝ իբրև երկնքից երկիր խոնարհվեց, բայց ըստ իմանալի խորհրդի՝ երկրավորներին մերձեցրեց երկնայիններին: Պետրոսին հայտնվում են կենդանիները, որ տրվեցին իբրև կերակուր մարդկանց. և այնտեղ են բոլորը՝ և՛ նրանք, որ օրենքը ուտել է հրամայում, և՛ նրանք, որ օրենքն արգելում է ուտել: Եվ որովհետև Պետրոսը քաղցած էր, մեծ տեսիլքում նրան կերակուր է երևում, միաժամանակ և ուսուցանում է նրան Աստծու կատարյալ գիտությունը. «Եթե քաղցած ես, ասում է, մորթի՛ր և կե՛ր» (տե՛ս Գործք, Ժ 13, ԺԱ 7): Իսկ նա, որ շարժվում էր օրենքի սովորությամբ, ասում է, «Քա՛վ լիցի, Տե՛ր, որովհետև երբեք պիղծ և անմաքուր բան չեմ կերել» (տե՛ս Գործք, Ժ 14, ԺԱ 8): Եվ ապա լսում է պատասխանը. «Ինչ որ Աստված սրբել է, դու պիղծ մի՛ համարիր» (Գործք, Ժ 14, ԺԱ 8): Իսկ ինչպե՞ս է սրբել: Որովհետև կտավի վրա տեսավ բոլոր կենդանիներին, և եթե կտավի անոթը նմանությունն է արարող Հոգու, իսկ նրա միջի կենդանիները՝ հեթանոս ազգերի, ապա նրանք, որ կտավի վրա էին, Նրանով էլ սրբվեցին, քանզի բոլոր նրանք, ովքեր ճշմարիտ հավատով մոտենում են Սուրբ Հոգուն, Նրա հետ և Հոգիանում են. քանզի պատասխանը նույնն է ասում. «Ինչ որ Աստված սրբեց»: Տեսիլքը աստվածային էր և ոչ մարդկային: Արդ, եթե Աստված սրբեց, իսկ դու քաղցում ես կերակրի, Աստված էլ քաղցում է արդարության մասին:

Արդ, ըստ քեզ՝ ո՞վ է սուրբ: Թերևս կասես՝ օրենքի որդիները: Նրանք ոչ միայն սուրբ չեն, այլև հույժ պղծվել են: Ես գիտեմ՝ դու դարշում ես հեթանոսներից և չես կամենում նրանց մոտենալ, որովհետև անթլփատ են մարմնով և

ոչ սրտով: Ես չեմ մեղադրում այդ. բայց վե՛ր կաց և գնա՛ հեթանոսների տուն և մի՛ ուսուցանիր թլփատել, այլ մկրտի՛ր, և այնտեղ կտեսնես Սուրբ Հոգու շատ մեծ հայտնությունն: Ի՞նչ մեծ բան կա, քան այն, որ հրեշտակը երևա մարդուն. այդպես Կոռնելիոսին պատահեց. [հրեշտակը] ոչ միայն երևաց նրան, այլ նաև հույժ գովեց. «Քո աղոթքները, ասում է, լսելի եղան, և քո ողորմությունները Աստծու առջև ելան» (տե՛ս Գործք, Ժ 31): Իսկ այժմ էլ ի՞նչ է պետք այս մարդուն. աղոթքներով սուրբ էր, ողորմություններ տալով՝ բարեգործ, ինքը՝ հավատացյալ, ընտանիք ուներ՝ ըստ արդար կամքի, ուներ նաև իշխանություն, կարող էր նաև ուրիշներին առաջնորդել բարեգործության:

Այժմ տե՛ս Քրիստոսի զորությունը, որ Տիրոջ ոչ մի խոսքը սուտ չէր. «Հովհաննեսը մկրտեց ջրով, իսկ դուք կմկրտվեք Սուրբ Հոգով» (տե՛ս Գործք, Ա 5): Արդ, Ինքը՝ Սուրբ Հոգին եկավ Կոռնելիոսի մոտ և չիշխեց նրան ձեռնադրել և մկրտել[56], եկավ Պետրոսը և երբ մտնում էր հարյուրապետի ապարանքը, բոլոր նրանք, ովքեր գտնվում էին տանը, լցվեցին Սուրբ Հոգով և լեզուներով խոսեցին: Այդ իմանալով՝ Պետրոսը շտապ մկրտեց բոլորին:

Իսկ ի՞նչ հարկ կար Հոգով լցվածներին ջրով մկրտելու: Ասեմ քեզ, որ արժան էր մկրտել ոչ միայն Սուրբ Հոգին ընդունած բոլոր մարդկանց, այլ նաև Սուրբ Հոգուն, ինչպես որ եղավ իսկ: Քանզի նրանք, ովքեր ընդունեցին Սուրբ Հոգին և ձեռնադրվեցին Պետրոսի կողմից ավազանում մկրտության ժամանակ, արդարև Հոգին նույնպես մկրտվեց նրանց հետ: Քանզի եթե Սուրբ Հոգին չմկրտվի մկրտվողների հետ, մկրտությունը կատարյալ չի ասվի, այլ միայն ջրով լվացում, ինչպես որ ոմանք առանց Սուրբ Հոգին ընդունելու մկրտվեցին ջրով, հետո առաքյալները նրանց արժանացրին վերստին մկրտության, որպեսզի ըն-

դունեն Սուրբ Հոգին: Քանզի սկզբում մկրտվեց Աստված և ոչ մարդը. Աստված մարդուց ընդունեց մկրտություն: Քանզի երբ Տերը Հովհաննեսին ասաց. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք ամենայն արդարություն» (տե՛ս Մատթ., Գ 15): Իսկ արդարություն կատարելը Սուրբ Երրորդությունը ճշմարտապես ճանաչելն է, և այս ճանաչողությունը մեզ հայտնվեց Որդու մկրտության ժամանակ: Հայրը վկայեց ձայնով, Սուրբ Հոգին երևաց հայտնությամբ, Որդին մկրտվեց ճշմարտությամբ, և արդարությունը կատարվեց առանց պակասության: Այդպես նաև Կոռնելիոսի տանը հրեշտակի միջոցով հայտնվեց Հայրը, Սուրբ Հոգին լցրեց բոլորին, Պետրոսը մկրտեց բոլորին Սուրբ Հոգու անունով: Այն, ինչ Տերը նախապես ասել էր, թե՝ «Երկնքի արքայությունը նման է ծով նետված ուռկանի, որ բերում հավաքում է բոլոր ազգերից, որոնցից պիտանիներին վերցնում են, անպիտաններին՝ բաց թողնում» (տե՛ս Մատթ., ԺԳ 47): Մարդկանց վերաբերյալ ուռկանն այդպես է, իսկ երկնավորների վերաբերյալ այդպես չէ. այնտեղ անպիտան ու խոտան չկա, այլ բոլորն ընտիր են, նաև՝ մեծամեծները: Բայց եթե մեկն իր կամքով անարգ ու վատթար լինի և դուրս ելնի հոգևոր ուռկանից, ոչ միայն դուրս նետված կլինի, այլ նաև ոտնակոխ կարվի և քարշ կտրվի նրանց կողմից, ովքեր իրենից ավելի վատթար են:

ԳԼՈՒԽ Զ

Արդ, Որդին մկրտության սկիզբը դնում է Հորդանան գետում, այն այնտեղից տարածվում է Հրեաստանում, աճում, գալիս հասնում է ընդարձակ ծովեզերք, իսկ երկրորդ անգամ սկիզբը դրվում է հարյուրապետի տանը և սփռվում տարածվում է բոլոր հեթանոս ազգերի մեջ: Քանզի երբ Պետրոսը տեսավ, որ հեթանոսներին նույնպես տրվեցին Սուրբ Հոգու շնորհները, ելավ Երուսաղեմ և Հակոբոսին հայտնեց, քանզի նրան մեղադրում էին հրեությունից դարձածները, իսկ երբ Պետրոսից լսեցին Սուրբ Հոգու զորության մասին հաստատուն վկայությունը, թե երևաց հեթանոսների, ինչպես մեր մեջ, այլևս չմեղադրեցին Պետրոսին, այլ բոլորը Սուրբ Հոգու առաջնորդությամբ շտապեցին տարբեր կողմեր. ինքը՝ Պետրոսը, դեպի մեծ Հռոմ, Մարկոսը՝ Ալեքսանդրիա, Թովմասը՝ Հնդկաց երկիր, Թադեոսը արևելքում է հանդիպում, իսկ Փիլիպպոսը ներքինուն կառքի վրա է ուսուցանում, մկրտում և Սուրբ Հոգու զորությամբ ուղարկում Եթիոպիա, Հովհաննեսին գտնում ենք Ասիայում, իսկ Անդրեասին՝ հյուսիսի կողմերում: Եվ շտապում էին բոլորը. ոմանք՝ դեպի հեռավոր կղզիներ, մյուսները սփռվեցին ցամաքի խորշերում ու երկրի բոլոր կողմերում գտնվող գոգավորություններում: Իսկ Պողոսը սկսում է մկրտել Դամասկոսում և անդադար ընթացքով Երուսաղեմից մինչև Լյուրիկիա է հասնում:

Եվ ամենամեծ գործն ու սքանչելի տեսիլն այս է, որ ոչ թե որևէ անկյունում էին քարոզում կամ ծածուկ տեղում էին պատմում Հիսուս Քրիստոսի անունը, այլ բացեիբաց և բարձր ձայնով մեծամեծ քաղաքներում, ուր իշխաններն

էին նստում, բուն իսկ մեծ Հռոմում, որտեղ թագավորն էր, և Աթենքում, ուր մեծ փիլիսոփաներն էին և երկրների օրենսդիրները, Եփեսոսում, ուր երևելի մեհյաններն էին և հեթանոսական հայտնի պաշտամունքները, բարբարոսների կղզիներում, որտեղ մարդկանց բարքը ոչնչով պակաս չէր վայրենի գազաններից, Եգիպտացիների երկրում, որտեղ շաղախվել էին կախարդությունների մեջ, և մարմին առած դևերը շրջում էին մարդկանց հետ խառը և պարսկական օրենքով առանց խտրություն դնելու իրենց անձերն անառակ պոռնկության էին տալիս: Ո՞վ կարող է ասել այն բոլոր չարիքների մասին, որ գործվում էին հեթանոսների մեջ, քանի որ ոչ միայն անասուն կենդանիներին էին զոհաբերում դևերին, այլ նաև իրենց ուստրերին ու դուստրերին էին զոհաբերում, նվիրում՝ սպանելով և այրելով, անխտիր գործում էին բոլոր չարիքները, մինչև իսկ ոմանք բարբարոսների կղզիներում օրենք ու սովորություն դարձրին առանց խղճալու ու պատկառելու մորթել և ուտել իրենց ընկերակիցներին, ոչ միայն իրենց մոտ հասած օտարականներին, այլ նաև իրենց իսկ տոհմակիցներին, ինչպես պարզ կերպով ցույց է տալիս Անդրեասի պատմությունը, որ փրկվեց Մատթեոս ավետարանչի ձեռքով[57]:

Եվ արդ, ինչպե՞ս մեկ առ մեկ նշեմ. այլ ինչպես վերևում ասացինք, ըստ մարգարեի գանգատի՝ մարդիկ եղան ինչպես վայրի գազաններ, ինչպես ցամաքի սողուններ և ծովի ձկներ. սպանեցին միմյանց և սպանվեցին միմյանցից: Իսկ երբ եկավ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, Իր տասներկու առաքյալների ձեռքով, որոնց նախապես ընտրեց, փրկեց և ազատեց բոլոր մարդկանց: Իսկ քարոզությունը սակավ խոսքերով էր և մեծամեծ և առավել զորավոր գործերով, քանզի ոչ թե բազում խոսքերով հանդիմանում էին հեթանոսներին և նախատում բազում մեղքերի համար, այլ այս-

չափ միայն. «Հեռո՛ւ մնացեք պոռնկությունից, կուռքերին զոհաբերված կենդանիներից, խեղդամահ արված կենդանիներից ու արյունից» (Գործք, ԺԵ 20), այս ամենը պահելով՝ ընդունել մկրտություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, Նրանով ճանաչել Սուրբ Հոգուն և բոլորի Հորը: Առաքյալներն այս սակավ խոսքերը բավական համարեցին՝ արդարության կատարման համար: Թեև հեթանոսները մոլեգնում ու կատաղում էին դևերի մոլորությունների ու անամոթ պոռնկության մեջ, սակայն ունեին կենցաղավարության օրենքներ, որ արգելում էր գողանալն ու հափշտակությունը, անխտրաբար սպանելը, դրված օրենքը բավական համարեցին մարդկանց՝ իրենց մարմնին իշխելու համար:

Իսկ Հոգու հորդորման մասին, որի մասին չհոգացին իշխաններն ու թագավորները, այս երեք կանոն-խոսքերով մեծ զորությամբ արդարության բոլոր մասերում նշաններով ու գործերով, որ Աստված կատարում էր առաքյալների ձեռքով, ահ և երկյուղ էր գցում բոլոր կռապաշտների վրա: Քանզի դևերն հալածվեցին, զոհաբերությունները խափանվեցին, ճենճերի ծուխը դադարեց, լկտի երգերը լռեցին, կախարդության մոլորությունն հատավ, պոռնկությունն ամաչեց, ամուսնությունը զգաստ դարձավ, սրբությունը բացվեց:

Այս ամենը եղավ, երբ իմանալի Արեգակը ծագեց հեթանոսների մեջ: Երբ նրանց միջից փարատվեց վերացավ մոլորության խավարը, կարողացան տեսնել Սուրբ Հոգու շնորհի լույսը, որին հակառակվում էր սատանայի անդրանիկը՝ Սիմոնը, որը խաբում ու մոլորեցնում էր բյուր բազումներին, իրեն անվանում էր երկնավոր զորություն՝ եկած մարդկային ազգի փրկության համար (տե՛ս Գործք Ը 9-14): Սուրբ Հոգու զորությամբ հասնելով՝ Պետրոսը ոչ

միայն հանդիմանեց ու կշտամբեց նրան, այլև բազում մարդկանց հեռացրեց նրանից և հաստատեց նրանց Ավետարանի քարոզության ճշմարտության մեջ: Իսկ նա, ցամաքից հալածվելով, մտավ ծով, անցավ Հռոմից, իսկ Պետրոսը, նրա հետևից գնալով, չէր շտապում, այլ շրջում էր փյունիկեցիների քաղաքներով, Հիսուս Քրիստոսի անունով հրաշագործություններ էր անում և հաստատում բազում ժողովուրդների: Անցնելով կախարդի հետևից և հասնելով Հռոմ՝ քաղաքից չհալածեց նրան, այլ խոսքով հանդիմանեց և հրաշքներ գործելով՝ հաստատեց քաղաքը: Եվ Սիմոնը, հափշտակվելով դևերից ու վեր բարձրանալով քաղաքի վրա, բոլորի աչքի առջև խորտակվեց վայր ընկավ: Եվ ոչ միայն ականատես եղան այս բանին, այլ իրենց իսկ ձեռքով նրան քարշ տվեցին և դուրս հանեցին քաղաքից: Այս տեսնող տղամարդկանց ու կանանց բազմությունը հավատաց Ավետարանի քարոզությանը, մկրտվեց Պետրոսի կողմից, և [հավատացյալների թիվը] շատ մեծացավ, մինչև իսկ թագավորի տուն հասավ այս լուրը, հավատացին և հաստատուն հավատով ընդունեցին Ավետարանը, արժանացան մարտիրոսության շնորհի և նահատակվեցին[58]:

Ինչպես որ ինքն իսկ՝ աշակերտների գլուխ Պետրոսը, նույն քաղաքում ընդունեց մահվան վճիռը՝ Քրիստոսի նման խաչվեց և հաստատուն վեմ դրվեց Եկեղեցու հիմքում՝ կատարելով Տիրոջ այն խոսքը, թե՝ «Դու ես վեմը, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին» (Մատթ., ԺԶ 18): Արդարև իսկ վեմ է հավատի ճշմարիտ դավանությունը: Ինչպես որ Պետրոսը Քրիստոսի վրա կառուցեց իր անձը մահվան վկայությամբ, այդպես էլ Եկեղեցին կառուցվեց Պետրոսի հավատի վրա ոչ միայն Հռոմում, այլ նաև բոլոր մեծ ու փոքր քաղաքներում ու գյուղերում. նույն է հավատը, նույն է հիմքը, և նույն է հաստատությունը: Քանզի

մեկ է Տերը, և մեկ է մկրտությունը, որով ընդունեցինք մեղքերի թողություն և հոգիների կենդանություն Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով:

Եվ ինչպես որ Պետրոսը Հռոմում հաստատեց Եկեղեցին, այդպես էլ մյուս առաքյալները՝ աշխարհի՝ իրենց վիճակ ընկած մասում, ուր հրամայվեց նրանց քարոզել Քրիստոսի Ավետարանը: Աստված Սուրբ Հոգուց նրանց շնորհներ տվեց և նրանց ձեռքով կատարեց մեծամեծ հրաշքներ ու գործեր. նրանք բժշկում էին մարմնի և հոգու ախտերը, մինչև իսկ մեռելներ կենդանացրին և հեթանոսների մեջ մարդկանց բնությունից առավել պայծառ երևացին: Նրանք, ցուլեր ու պսակներ առած, կամենում էին զոհեր մատուցել նրանց՝ իբրև Աստծու: Երկնավոր հայտնություններով այնքան մեծացան և Սուրբ Հոգով այնքան իմաստնացան, որ մինչև իսկ մեծ փիլիսոփաներին էին համոզում, հաստատում ճշմարիտ հավատի մեջ և իրենց գործակից էին դարձնում ավետարանելու գործում:

Եվ նոր ու սքանչելի տեսիլքն այս էր. գալիլիացիները հռոմեացիներ եղան, ամենատկարները զորությամբ մարտնչեցին ոչ միայն իշխանների ու քաղաքապետների, այլ նաև ինքնակալների և նրանց զորքերի դեմ, Գեննեսարեթի ծովակի մոտ սնված հիմարները վիճում էին՝ աթենացիների հետ պայքարելով, և ոչ միայն հաղթում և լռեցնում էին նրանց, այլև կորզում հանում էին բնական գիտությունից՝ նրանց ուսուցանելով ու հաստատելով Սուրբ Հոգու շնորհների մեջ:

Եվ ո՞վ կարող է պատմել նրանց մեծությունը. իրենք անտուն ու անքաղաք՝ երկրում, այլոց տներ ու քաղաքներ էին խոստանում երկնքում, իրենք՝ աղքատ և այլոց հարստությունն էին ավար առնում, հալածված էին մարդկանցից, բայց դևերին էին հալածում աշխարհից, իրենց մար-

մինները ծեծված, բայց այլոց վերքերն էին ողջացնում անբժշկելի հարվածներից, հացից [զրկված]՝ քաղցում էին, բայց հոգևոր կերակրով կերակրում էին շատերին, ծարավ էին ջրի, բայց մխիթարության բաժակ էին մատուցում բոլորին: Բանտարկված էին, բայց այլոց մեղքերի կապանքներն էին քանդում, դատապարտված էին, և դատապարտվածներին էին շղթայազերծ անում, մահապարտ էին, բայց մահկանացուներին թողություն էին տալիս: Երևում էին երկրում և շրջում էին երկնքում, կռվում էին մարդկանց հետ, բայց հաղթում էին դևերին, իրենց մարմինների վրա ծեծ էին ընդունում, բայց տանջվում էին դևերի գնդերը:

Երկրի վրա չեմ կարողանում գտնել տասներկու առաքյալների նմանը, որովհետև ծաղկալից դաշտերից ավելի պայծառ են և լեռներից ավելի բարձրագույն: Մեծ են ծովի մեծությունից և ավելի խորն են, քան նրանց անդունդները, երկրից հրաժարվեցին և երկնքից ավելի բարձր եղան: Իսկ արդ, ո՞ւմ նմանեցնեմ կամ ո՞ւմ օրինակ բերեմ: Եթե ամպերին ասեմ, ոչնչով չեն համեմատվի. ամպերը ծովից են ջուր վերցնում և ցանում երկրի վրա, իսկ սրանք Սուրբ Հոգին ունեն իրենց մեջ և ո՛չ տեղում են ու ո՛չ ցանում, այլ ամբողջովին թաթախում ու թաղում են ավազանի ջրի մեջ և դարձնում են երկնավոր բույսեր, կենդանի, անանց տունկեր: Եթե լուսինն ասեմ, լուսինը լրվում է և պակասում, իսկ առաքյալները լրում և լրացնում են առանց պակասության, և իրենք մնում են անանց: Եթե աստղերն ասեմ, նրանք ո՛չ նույն փառքն ունեն և ո՛չ նույն պայծառությամբ են երևում, այլ մեկը՝ շատ և մյուսը՝ սակավ, մեկն արուսյակ է, և մեկը՝ գիշերավար, իսկ առաքյալները բոլորն են արուսյակ, բոլորն են պայծառ, բոլորն են զվարթուն՝ միապես և հավասար, միաբան և անհակառակ: Ավելին՝ ի՞նչ նմանություն կա աստղերի ու առաքյալների մի-

ջև. աստղերից մեկը վերև է, մեկը՝ ներքև, մյուսը՝ մեջտեղում, առաքյալները՝ բոլորը վերևում են և բարձրացած: Աստղերը գիշերը երևում են, իսկ ցերեկով ընկղմվում և ծածկվում են արեգակի լույսով, իսկ առաքյալները փայլում են գիշեր և ցերեկ. ցերեկով լույս են հոգիներին, գիշերով՝ զգաստություն հոգիներին ու մարմիններին:

Առաքյալները Սուրբ Հոգու զորությամբ արեգակից պայծառ են: Արեգակն իշխանություն ունի ցերեկվա վրա, առաքյալներն իշխանություն ունեն ցերեկվա և գիշերվա վրա: Արեգակը՝ երկիրը տեսնելու և մեր մարմնավոր պետքերին ծառայելու համար է, առաքյալները՝ երկինքն ու երկիրը տեսնելու և հոգիների ու մարմինների խոհականության համար: Արեգակը այլայլվում ու փոփոխվում է, իսկ առաքյալներն առանց հեղհեղման ու փոփոխման, առանց շարժվելու են: Արեգակը ծագում է ժամանակով և մայր է մտնում, առաքյալները լույսի ծագման ժամանակ քարոզեցին աշխարհին: Արեգակը երբեք չի ծնում ուրիշ արեգակ, իսկ առաքյալների ծնունդներն իրենց հայրերի գործերն են կատարում: Արեգակի ծնունդները նրա լույսի ճառագայթներն են և ոչ մի կույրի երբևէ լուսավորել չկարողացան, առաքյալների ծնունդները բազում անգամ սուրբ Եկեղեցում լուսավորեցին կույրերին, կաղերին բժշկեցին, ախտերը հալածեցին, մեռելներին հարություն տվեցին: Արեգակի լույսը պարում է մարմինների շուրջը և երևացող բաներն է ցույց տալիս, առաջնորդում է ճանապարհորդների ճանապարհները, առաքյալների քարոզության լույսը և՛ մարմինների շուրջն է պարում, և՛ հոգիների աչքերն է բացում, և՛ առաջնորդում է դեպի երկնավոր քաղաք: Արեգակի լույսով մարդիկ ու կենդանիները շրջում են ցերեկով, իսկ գիշերը հանգստանում աշխատանքից, առաքյալների հավատի լույսով երկնավորներն ու երկրավորները հրավիրվեցին՝

նորոգելու իրենց կյանքը, որ անանց ու անապական է:

Այս են առաքյալները, որ մեծացան, վեր բարձրացան և երկնքից վեր ելան, հասան բոլորի Հորը և հորդորեցին ամբողջ աշխարհին՝ քարոզելու ճշմարտության Ավետարանը, որպեսզի բոլորը հասնեն նույն՝ վերին քաղաքը, ուր տասներկուսի [հետ] ընդունելու են արքայության անպատմելի պսակները:

Ինչպես որ Ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, երեք անգամ հարցրեց աշակերտներին գլխին՝ ասելով. «Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ» (տե՛ս Հովհ., ԻԱ 15): Եվ նա ճշմարտությամբ վկայեց, թե Նա է միայն սիրո արժանի, որովհետև Արարիչ է. եկավ՝ նորոգելու Իր արարածներին ո՛չ հրեշտակի, ո՛չ մարգարեի և ո՛չ երևացող մեկ այլ միջնորդի, այլ Իր իսկ ձեռքով: Քանզի ինչպես որ Իր սիրուց մղված արարեց մարդուն, այդպես էլ այդ սիրո համար եկավ՝ փնտրելու կորածին, Իր սիրո համար գտավ կորած ոչխարին, Իր սիրո համար Իր ուսին առավ նրան, Իր սիրո համար գգվեց ու դրեց Իր բազուկների վրա, իր սիրո համար բերեց ու խառնեց բանական հոտին, որ արածում է հոգևոր արոտներում և հանգստանում անմահության մակաղատեղիներում: Իր սիրո համար Պետրոսը պատասխանեց ու ասաց. «Տե՛ր, Դու ամեն բան գիտես, ամեն բան ճանաչում ես, և եթե մեկը Քեզ սիրում է, Դու լավ գիտես: Գիտեմ, որ փորձելու համար ես հարցնում. եթե բազում անգամ հարցնես, նույնը կլսես ինձնից: Դու իբրև Աստված ու Բարերարի Որդի՝ անչափ սիրեցիր աշխարհը և Քո անձը դրեցիր նրա համար, ես իբրև մարդ՝ ըստ իմ տկարության սիրում եմ Քեզ, ոչինչ տալ չեմ կարող, որովհետև աղքատ եմ, իսկ եթե տամ, Քեզնից է, որ պիտի առնեմ ու տամ Քեզ:

Երանի՜ թե մեկը իմանալ տար պատճառը, թե ինչպես է, որ Դու կարիք ունես, ի՞նչ ես կամենում խնդրել, և ի՞նչ ուզեմ ես, որ Քեզ տամ: Քանզի առաջներում երբեք այդպիսի բան չհարցրիր ինձ: Արդ, եթե նոր է հարցումը, ես գիտեմ, որ մի նոր հրաման պիտի տաս ինձ: Ասա՛, Տե՛ր իմ, համարձակ, գիտեմ, որ չես հրամայի ինձ այն, ինչ անել չեմ կարող, և ոչ էլ ինձնից կխնդրես այն, ինչ տալ չեմ կարող Քեզ»:

Երբ Տերը տեսավ, որ ամբողջ սրտով սիրում, ամբողջ կամքով կամենում և ամբողջ զորությամբ համարձակվում է, քանզի իրեն ամբողջովին Նրան տվեց, հանձնեց սկիզբը, միջինը և վախճանը՝ մանկությունը, երիտասարդությունը և ծերությունը: Եվ այս երեք հատվածներում երևում է այս աշխարհը, և ճանաչվում է կատարյալ արարչությունը, բայց լավագույնն առաջինն է, և ամենակրտսերը՝ միջինը: Եվ քանզի Տերը, Պետրոսին ասելով «Արածեցրո՛ւ իմ գառներին» (Հովհ. ԻԱ 15), անմեղներին է հանձնում նրան, երկրորդ անգամ ասելով «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին» (Հովհ. ԻԱ 16), անորոշ ասաց և ոչ պարզորոշ, ինչպես գառների դեպքում, որովհետև գառները ծնունդն են ոչխարների, իսկ ոչխարները աջակողմյանի՝ խոհականության խորհուրդն ունեն: Իսկ ոչխարներ ասելը մարդկանց սովորությունն է. ոչխարը, նույնը և այծը, պարզ չէ, այլ խառնված, քանզի սևն ու սպիտակը բաժանված են, և բնության բաժանածները միմյանց հետ չխառնվեցին: Եվ ինչպես որ աջակողմյանն իբրև լավագույն երևաց, այդպես էլ ձախակողմյանը վատթարագույնն ընտրեց իր կամքով և ոչ բնությամբ:

Եվ ինչո՞ւ պիտի այսպես լինի: Ինձ համար ճշմարիտ են բնական անսուտ բաների մասին ասվածները. խոյը նմանությունն է արուների՝ օդի, և նա է երկնավորների ճշմարիտ տեսակը, իսկ այծը նմանությունն է ջրային մասի մարմնաձև թանձրություն է, որ ունի ապականության ախտը և բաժանված, հեռացած է բանական բնությունից, որտեղ աջակողմյանն է: Դարձյալ՝ Տիրոջ այն խոսքը, թե՝ «Ա-

բածեցրո՛ւ իմ խաչներին» (Հովհ. ԻԱ 17), նույնպես մեծ բազմություն և հայտնագույն բաժանում է [ցույց տալիս]. խաչն անվանում ենք հոտի բոլոր անասուններին. ահա մի բառով եզրափակեցինք բոլորին՝ անմեղներին ու մեղավորներին, սուրբերին ու անսուրբներին, պիտանիներին ու անպիտաններին, ընտանիներին ու մարդու իշխանության տակ հնազանդվողներին, բոլորին խաչներ ենք ասում, որովհետև [նրանք բոլորն էլ] կարիք ունեն առաջնորդ Հովվի: Արդ, որովհետև մեկ է հոտը, և մեկ է Հովիվը, մեկն է արոտը, և մի հանգստյան մակաղատեղի կա բոլորի համար. այնտեղ են գառներն ու ոչխարները և ամբողջ բազմությունը, որին խաչներ ասաց, մանավանդ նրանք իսկ՝ առաքյալները, որոնց հանձնեց Պետրոսին, և նրանք, ովքեր գործակից եղան նրանց քարոզությանը, սրանք բոլորը սուրբ ու աստվածային գառներ են:

Իսկ նրանք, ովքեր արտաքին երևույթով աշակերտեցին Ավետարանին և նոր ճանապարհ ցույց տվեցին բազմություններին, ընդդեմ եղան ճշմարտությանը: Եվ որովհետև ունեին Քրիստոսի անունը, իրենց առաքյալ էին ձևացնում, իսկ իրենց չար գործով նմանվում էին սատանային, նրանք այծերն են, որոնք ձախ կողմում են՝ իրենց հոր՝ սատանայի կողմում, որն ընտրեցին իրենց կամքով և նրա հետ էլ գնալու են իրենց համար պատրաստված տեղը:

Իսկ ում խաչներ ասաց, նրանք են, ովքեր ընդդիմացան ճշմարտությանը և ոչ միայն արգելք եղան ու խափանեցին Ավետարանի քարոզությունը, այլ նաև ձեռք դցեցին սուրբ առաքյալներին ու նրանց աշակերտներին՝ բազում անգամ ծեծելով, չարչարելով նրանց և սրով սպանելով նրանցից շատերին: Այդպիսիք էին Ներոնն ու նրա բազում ընկերները. մինչ այսօր այդ գործը գործվում է և պիտի գործվի:

Արդ, արածեցրո՛ւ դու, ասում է, անմեղներին ու մեղավորներին և նրանց, ովքեր սպանում են ձեզ, դու արածեցրո՛ւ, ասում է, մի՛ վախենա. ինչպես որ ես եկա բոլորի՝ և՛ չարերի, և՛ բարիների համար՝ փրկելու և կենդանությամբ նորոգելու նրանց, որպեսզի լինեն մի հոտ մի Հովվի ձեռքի տակ, Նրա ձայնը լսեն, Նրա հետևից գնան, նույն կյանքը ընդունեն, որպեսզի բոլորը լինեն անմեղ գառներ, այլ ոչ թե մոլորեցնող, գարկող ու բզկտող: Բայց եթե կլինի մեկը, որը կելնի քո հովվության ցուպի տակից և կընդդիմանա Ավետարանիդ ճշմարտությանը, դու մի՛ վախենա, այլ քաջալերվի՛ր ու զորացի՛ր, մինչ ի մահ անգամ պատերազմի՛ր. դրանով կփառավորես ինձ:

Բայց թերևս բոլորս փափագում ենք լսել, թե ուր է հրամայում Տերը արածեցնել խաչներին, կամ ինչպիսի արոտներ, ջրեր ու հանգստյան տեղեր կան: Արդարև, այդ մասին լսելն ախորժելի է ինձ և բոլոր նրանց, ովքեր սիրում են լսել: Քանզի հովվության մեջ թաքնված են Պետրոսի վարքն ու հավատը, իսկ խաչները բոլոր հեթանոս ազգերն են, արոտատեղիները՝ սուրբ ու առաքելական Եկեղեցին, խոտը՝ օրենքը, մարգարեները և առաքյալները, ջրերը՝ Ավետարանի անանց ավետիսները, տեղը, ուր հանգստանում են անհոգ ու առանց երկյուղի՝ Վերին Երուսաղեմը, որ մեր բոլորի մայրն է: Քանզի այնտեղ չկան ո՛չ ձախակողմյան այծեր և գարկող ուլեր, ո՛չ պոզահարող խոյեր ու սպանող ցուլեր, ամենևին չկան նաև վնասակարներ, այլ ամենքը մի մտքով, անմեղ, սուրբ, պարզ, հստակ, ոչ միայն գույնով սպիտակազգեստ, այլ նաև հոգով և լուսատեսակ՝ երկնավոր հրեշտակային գնդերի նման, որպեսզի նրանց համահունչ լինեն ձայնով, ձևով և գույնով, նրանց ուրախակից և պսակակից լինեն՝ հպված, մերձեցած, նահատակակից [եղած] Քրիստոսին, Ում լսեցին, Ում աշակերտեցին, Ում հնազանդվեցին, Ում կամքով բոլոր պատվիրված-

ները գործով կատարեցին, Ում մահվանը չարչարակից եղան, Նրա հետ էլ պիտի ընդունեն անանց ուրախությունը, Նրա հետ էլ պիտի տեսնեն բոլորի Հորը Սուրբ Հոգու զորությամբ, Ում միջոցով կատարեցին երկնավոր նահատակությունը, Նրա հետ էլ պիտի գան Նրա երկրորդ գալստյան ժամանակ՝ դատելու ողջերին ու մեռածներին և հատուցելու յուրաքանչյուրին ըստ իր գործերի՝ բաժանելով երկու կողմերի՝ ըստ նրանց՝ այստեղ կատարած ընտրության. ոմանց՝ անողորմ տանջանքների, իսկ ոմանց՝ հավիտենական անպատում կյանքի մեջ:

Արդ, որդինե՛ր ու եղբայրնե՛ր, հայրե՛ր ու տերե՛ր, բոլո՛ր մեծեր, սուրբ Եկեղեցու մկրտության ծնունդնե՛ր, ընթերցե՛նք օրենքն ու մարգարեները, Ավետարանի ավետիսին աչակերտե՛նք, առաքյալների հավատի վրա հաստատվե՛նք, հաստատուն վեմի վրա կառուցվե՛նք, երկնավոր հույսն ակնկալե՛նք, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան և մեզ բոլորիս՝ Նրան ընդառաջ ելնելու ժամանակ լինենք առանց ամոթի ու ամաչելու և ճանաչենք Նրան Նրա չարչարանքներից մեխերի նշաններով և Ավետարանի գրված խոսքերով: Նաև մեր գործերով ճանաչենք Նրան. թող մեր ընթացքը լինի՝ ըստ սուրբ առաքյալների քարոզության, թե՝ «Կատարյալ է Աստծու մարդը ամենայն ճշմարտությամբ» (Բ Տիմ. Գ 17), որպեսզի լսենք Բարերարի ձայնը, որ ասում է բոլոր պատվիրանապահներին. «Եկե՛ք իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ., ԻԵ 34): Նրա հետ Հորը և Սուրբը Հոգուն փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Մարդկանց հոգիների մասին, թե որտեղից են գալիս և մարմնից ելնելուց հետո ում մոտ են գնում, կամ որ ավելի են իմաստնանում

Որ կա հոգի, սա նաև մեր բնությունն է ցույց տալիս. քանզի երկու [բանից է կազմված] մարդը. մեկը շարժում է, մյուսը՝ շարժվում, շարժողը՝ [հոգին], ունի իմանալի բնություն, իսկ շարժվողը՝ [մարմինը], գործում է, քանի դեռ սնվում է: Եվ միավորված են, երբ երկուսով տնակից են, բայց երբ հոգին լքում է [մարմինը], մարմինն ընկած է մնում և չի շարժվում: Բայց մեր օրինադիրն[59] ասում է, թե մարդու հոգին Աստծու փչած [շունչն] է [տե՛ս Ծննդ., Ա 7], իսկ նրան ծանոթ ու բարեկամ մի մարգարեի բերանով Տերն ասում է. «Հոգիներն իմ կողմից են արձակվում, և ամեն մի շունչ ես ստեղծեցի» [տե՛ս Եսայի, ԾԷ 16]: Նույն Հոգով Օսեե մարգարեն ասում է. «Մարդու հոգին ո՞վ հաստատեց նրա մեջ» [տե՛ս Զաք., ԺԲ 1]: Բարի է այդ միությունը, որովհետև առանց Աստծու ոչինչ չի եղել, բայց պետք է իմանալ, թե ինչպե՞ս [է եղել այն]:

Որ Աստված ստեղծեց արարածներին, գիտենք: Ոչ որևէ էության նյութից կամ հատումից, քանի որ գիտենք, որ Աստված անբաժանելի բնություն է, իսկ արարածները՝ մասերի բաժանվող: Դարձյալ՝ չենք կարող ասել, թե արարված այս մեծ մարմինը ոչնչից է, և ոչ էլ՝ թե ինքնաբույս բնություն է, նաև չենք վարանի ու տարակուսի, թե որտեղից եղավ Աստծու՝ իմանալու և արարելու բնական կամքը, այլ միշտ Աստված է, միշտ Արարող զորությունն Իր հետ: Եվ երբ Ինքը կամեցավ, կամեցավ նաև Նա, և ինչ որ ուներ իմացության մեջ, գոյության կոչեց, քանի որ բնական իմա-

ցությունը իմանալիների արարիչն է: Իսկ արարչական զորությունները անմարմին նյութն ինչպե՞ս [կյանքի կոչեցին], իսկ արարչությունն անմարմիններին և բազում մասերի մեջ մարմնացածին, յուրաքանչյուրին իր կարգում [դրեց], որպեսզի լինի մեկ ոստ, մեկ բուն և բազում արմատներ, իսկ այն ոստից [լինեն] բազմատեսակ ճյուղեր:

Արդ, ինչպես վերևում ասացինք, երկնայինները երկնքից են, երկրավորները՝ երկրից, իսկ մարդը կազմված է երկնայինից ու երկրայինից. անոսրը երկնքից է, թանձրը՝ երկրից: Եվ եթե ասում ենք, թե հրեշտակները երկնքի, կրակի և օդի ծնունդ են, ինչպես մեծ Դավիթն է ասում. «Դու ստեղծեցիր հրեշտակներին իբրև շունչ» [Սաղմ., ՃԳ 4], իսկ պաշտոնյաներին այրող կրակ է անվանում [Սաղմ., ՃԳ 4], ապա հայտնի է, որ մարդկանց հոգիները, գոյանալով նույն նյութից, Արարչի կամքով առաքվում են մեր բնության լինելության համար. [դրանք] ո՛չ հրեշտակացած են և ո՛չ դիվացած, ինչպես ոմանք են ասում, այլ միայն հոգիներ են՝ մարդկային հոգիներ[60]:

Հրեշտակների հոգիները պարզ բնություն են, չունեն մարմին, հոդ, ձև, չափ, կատարյալ անձ են, և անձի կատարելությունը որևէ մեկից չէ, այլ իրենք իրենց մեջ կատարյալ էություն են, կատարյալ բնություն:

Իսկ մարդկային հոգիները պարզ գոյություններ են, էությամբ հստակ, սուրբ, մաքուր. իմանալի բնություն են, սկզբնատիպի ձևը, դեպի վեր շարժվող, անմահ են, միավորված մարմնի հետ, միաբան որակ, անձանձրանալի միություն, անբաժանելի մասեր, անհատնելի զորություն, անծերանալի տևողություն, անվայր բնակություն, մինչև մարմնի մեջ գալը՝ եղած, ունեն իմացություն, չունեն չափ, և մարմնի մեջ լինելով՝ ունակ են անելու, ինչ որ կամենում են: Իմացվում են իբրև մարմնից տարբեր բնություն. բայց

ես ասում եմ, թե [մարմնի հետ] միաբան են բնությամբ և հոգու բարքով:

Գովվում է քնարը, բայց քնարահարի ձեռքում. գեղեցիկ են երաժշտության հնչյունները, բայց երաժիշտների շնորհիվ. տեսար մի չքնաղ շինություն, չհիացար մնացիր, այլ գովեցիր ճարտարապետին: Իսկ եթե քնար չլինի, չի երևա քնարահարը[61]. [չէ՞ որ] բոլոր երաժշտական գործիքները երաժիշտների միջոցով են երևում: Բայց եթե գործիքը փչացած լինի. փողը՝ կոտրված, իսկ լարերը խոնավացած լինեն, անգամ եթե երաժիշտն առողջ է և իր արվեստի լավ գիտակ, միևնույն է, չի կարող ցույց տալ արվեստի գեղեցկությունը և ամեն բանով վատ արվեստագետ կերևա: Բայց եթե [երկուսն էլ] կատարյալ լինեն, սփոփիչ ու մխիթարիչ կլինեն բազմամարդ քաղաքներին, բայց նրանցից յուրաքանչյուրի բնությունը կմնա զատ և առանձին խառը բնությամբ:

Մեր Արարիչը մեր մարմնի բնությունը ստեղծեց շատ ավելի լավ՝ իբրև բաժանելի շինվածք, իսկ հոգին՝ անբաժանելի բնություն, և միավորեց, ինչպես քնարահարին քնարի հետ, որպեսզի [հոգին] շարժվի և շարժի աչքերը՝ տեսնելու, ռունգերը՝ հոտոտելու, քիմքը՝ ճաշակելու, լեզուն՝ խոսելու, միտքը՝ իմանալու:

Մարմնի մասերի այս ամբողջ բազմությունը շարժվում ու գործում է այնքան ժամանակ, քանի դեռ միաբան են շարժողն ու շարժվողը:

Իսկ երբ [միաբանությունը] խաթարվի, սա քակտված, և նա հեռվում լինի, կլռի, կդադարի արվեստը. սա կդառնա դեպի իր բնությունը, իսկ նա կբարձրանա դեպի իր կայանը. այն ինքն իր մեջ իմանում է, ինքն իր մեջ հանգստանում, ինքն իր մեջ ավելանում, ինքն իր մեջ ուրախանում, ինքն իր մեջ տրտմում, ինքն իր մեջ շարժվում, ինքն իր մեջ

և դադարում, ինքն իրեն իմացող է, ինքն իրեն լսող, ինքն իրեն տեսնող:

Իսկ եթե մեկը կամենում է իմանալ հոգիների տեղերի կամ կայանների մասին, թող գա մեր խոսքերի ետևից. ո՛չ թե գետնաքարշ ընթացքով, ո՛չ թե ծովային ճանապարհորդությամբ, ո՛չ թե հնարովի առասպելներով, այլ ճշմարիտ վարդապետությամբ՝ Սուրբ Գրքի վկայությամբ, ուր հափշտակվեց առաքյալը, ուր պատրաստված են պարգևները, որոնց մասին մարմնավոր զգայություններով բացատրել չենք կարող. անմարմին վայրին երկնայինների քաղաք ենք ասում, Վերին Երուսաղեմ ենք անվանում այն, ազատ բանակատեղի. այնտեղ են բյուրավոր հրեշտակները, մարդկային բանական, իմանալի և ոչ զգալի հոգիներն են այնտեղ: Բայց եթե կամենում ես իմանալ կատարյալ արդարների [հոգիների մասին], ասեմ. ինչ նյութից որ առնվեցին, դեպի այն էլ գնացին: Լսի՛ր նաև մեծ Սիմոն վեմին ճարտար փիլիսոփաներին ուսուցանելիս. երբ նրանց մտքի համար հաճելի դարձրեց՝ լսելու արարչության մասին խոսքերը, ասաց նաև սուրբ, անապական, անպղտոր վերնային հոգիների, նաև հրեշտակների կայանների մասին, որոնց առաքյալը բանակատեղի անվանեց[62]:

Իսկ եթե մեկը դեպի Մովսեսի գրվածքները ընթանա և ասի, թե մեր հոգին Աստծու [շնչի] փչումն է, իմացիր, որ նա նույնպես ընկել է վարանման ու տարակուսանքի մեջ [այնպես], որ մինչևիսկ անմարմին Աստծուն մարմնի ձև է տվել՝ փչելն [ընկալելով] իբրև բերանով, ռունգերով ու շրթունքներով [կատարված գործ] (հարկ է, որ հետևեն նաև բոլոր մյուս անդամները): Սակայն չլինի՛ թե այդպես լինի. որևէ մեկի մտքով անգամ թող չանցնի՛ [ասել], թե Աստված զգալի գործի կարիք ունի, այլ իմացեք, որ փչելը ո՛չ թե Նրանից դեպի նա էր, այլ Աստծու՝ [Իր շունչը] փչելը հոգիացրեց մարդուն. [ճիշտ այնպես], ինչպես լինելության կոչեց գոյություն չունեցողներին, այդպես էլ հոգի չունեցողին հոգիացրեց և կենդանություն տվեց:

Քանզի եթե ասեք, թե փչումը Աստծու էությունից է, ի՞նչ հարկ կար լսելու այն խոսքը, թե՝ «Նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդը եղավ կենդանի էակ» (Ծննդ., Բ 7): Քանի որ հայտնի է այդ խոսքի զորությունը. առաջին արարչագործությունն հոգուն կենդանի շունչ անվանեց, իբրև մեկ արարչագործություն, նաև մեծ խորհուրդի համար. որպեսզի մարդը արարչության մեջ ամենապատվականը երևա, մեծարեց նրան՝ իբրև թե ձեռքերով ստեղծելով մարմինը և բերանով փչելով հոգին: Եվ որովհետև Աստվածությունն աննախանձ է և սիրում է առատ պարգևներ տալ, չհապաղեց մեր բնությունն անվանել Աստվածության պատկեր. իմաստուններին հայտնի է, թե բնությամբ որքան են իրարից հեռու մարդը և Աստված: Եսայի մեծ մարգարեն տեսավ Աստծուն, հիացավ ու զարհուրեց. զորության մասին պատմեց, իսկ իսկության մասին լռեց և իմանալով մեր բնությունը՝ խոնարհությամբ բարբառեց. «Իմ կողմից են արձակվում հոգիները, և ամեն մի շունչ ես ստեղծեցի. ասում է Տերը» (Տե՛ս Եսայի, ԾԷ 16):

Ահա հայտնի է հոգու արարումը. նրանք արձակվում են Աստծու կամքով անոսր բնությունից, ինչպես վերևում ասացինք. երկինքը կենդանածնեց իմանալիներին և ոչ շոշափելիներին: Այդպես էլ երբ հոգին դուրս է ելնում մարմնից, բոլոր դրսում գտնվող գոյություն ունեցողներին տեսնելով և նրանց հետ լինելով՝ [այլևս] չի կարող մարմնի մեջ լինել և նրա պետքերը կատարել. ինչպես որ նախկինում հարկադրված էր չելնել մարմնից, այդպես էլ ելնելուց հետո [չի կարող կրկին] ընկնել մարմնական կարիքների

[ենթակայության] տակ, մինչև այն Օրը, երբ կհայտնվի արարածների Արարիչը:

Մարդը բնությամբ երկու [բանից է կազմված]. մեկը կառավարողն է, սանձողն ու ուղղողը, մյուսը՝ [իր մեջ] բնակվողի բնակարանը՝ զարմանալի շինվածք, անմահ հոգու անուրանալի բնակատեղի, որի հետ այս կյանքում հաղորդակցվում է իմանալին՝ [հոգին]՝ մնալով ուրախությունների մեջ, իսկ այս տեսանելի [մարմինը], հաղորդակցվելով անտեսանելիի՝ [հոգու] հետ՝ չի դադարում թանձր լինելուց: Այն իշխող [հոգու] քաղաքն է, դարմանի, սննդի կարիք ունեցող, կենդանի տաճար, բայց մահկանացու է, ապականության ենթակա, արագ լուծվում է, և ժամանակավոր է նրա վայելչությունը: Իսկ տիրականը՝ [հոգին], իբրև թագավոր է, տեսուչ և իրավախոհ դատավոր, և որովհետև կարիք չունի դարմանի և [նյութական] սննդի, ուստի և անմահ է և անապական: Աստծո հրամանով օրենքը սահմանած Մովսեսն այն Աստծու [շնչի] փչում անվանեց: Արդ, թող ոչ ոք չստրկանա (նյութական) բառերին, այլ թող հնազանդվի մտքին, քանզի տգետներն են Աստծու [շնչի] փչումն ընկալում իբրև բերանով և ռունգերով [կատարված] (ապա նաև մարմնի մյուս մասերը եկած կլինեն) և անմարմինն ու անկարիքը [դարձնում] զգայականի ենթակայության տակ գտնվող և կարիք ունեցող: Այլ հավանելի է այն, որ Գոյացնողը [մարմնի] վրա փչեց հողմաշարժ կենդանությամբ, որից էլ մարդը եղավ կենդանի հոգի՝ հաստատված աստվածային և հրաշալի միավորությամբ, ըստ այն խոսքի, որ ասում է. «Ո՞վ հաստատեց մարդու հոգին նրա մեջ» (տե՛ս Զաք., ԺԲ 1):

Նաև արձակված և ոչ հաստատված, որ Երեմիան է ասում. «Կենդանի եմ ես, ասում է Տերը, քանզի հոգին ինձնից ելավ» (տե՛ս Երեմ., ԻԲ 24, ԽԶ 18), որով հայտնի է

դարձնում, որ միայն Նա է Արարիչը բարի կամեցողների:

Աստված անբաժանելի բնություն է, Աստծուց ոչինչ չի հատվում: Դարձյալ՝ երբ ստեղծում էր այս պատվական հոգին, դեռևս ոչ մի նյութ չկար. [ուրեմն] այն ինքնաբույս չէ, ինքնիրեն չի եղել, որովհետև ոչ ոք մշտնջենակից չէ Աստծուն, որ որևէ մեկի կողմից չի եղել, Նրա լինելության սահմանը ոչ ոք չգիտե, բայց [մարդկային հոգին] անքննելի չէ, որովհետև նրա Արարիչն Աստված է:

Հոգու՝ երկնային բնույթ ունենալը ցույց է տալիս այն, որ մարմնից ելնելով՝ այն չի իջնում ներքև՝ դեպի հողը, այլ բարձրանում է դեպի իր ծննդյան բուն վայրը՝ իմանալի երկիր: Իսկ մարմինը, իմանալի [հոգուց] բաժանվելով, չի բարձրանում դեպի վեր, այլ իջնում է դեպի հողը՝ իր ծնողը, որից էլ հայտնի է, որ Աստված ախտավորից ախտավորը ստեղծեց, իսկ անախտից՝ անախտը: Եվ բաժանումից հետո գնում է դեպի իրենը և մնում է այնտեղ, ըստ այն խոսքի, որ ասում է. «Մարդը գնաց իր հավիտենական տունը, իսկ հոգին գնաց Աստծու մոտ, ով տվեց այն» [տե՛ս Ժող., ԺԲ 5,7]:

Արդ, մենակ գնում է դեպի լույսը, որտեղից ծնվեց, քանի որ մարմնից, որին կապվել միացել էր, անջատվում է, ինչպես պարսատիկի՝ օդ նետված քար, իսկ երբ [մարմինն է] լուծվում, արագ հասնում է հողին, որտեղից առնվեց: Հոգին, որ այժմ ավելի ծանր է, քան օդի բնությունը, երկրորդ անգամ խառնվելու ժամանակ դարձյալ կզորանա ավելի, քան նա, և դեպի իրեն կձգի՝ վեր բարձրացնելով: Հոգին կրակ է, հողմ, լույս, իսկ մարմինը՝ կրակ, ջուր, օդ, հող՝ խառնված և զոդված իրար հակառակ, բայց զուգակշիռ միությամբ ընտանեցած տարրերից. երկուսը՝ թեթևությամբ անդադար դեպի վեր թռչող, իսկ երկուսը՝ ծանրությամբ անընդհատ դեպի ներքև [քաշող], երկրի վրա սողա-

ցող: Քանզի իմանալ, թե Աստծու բնական իմաստությունն [ինչպես է] արարել նյութը, այլ բան չէ, քան [գիտենալ] այն, որ Նա իմանալիի մեջ մշտնջենապես ուներ իմանալին և երբ կամեցավ գոյության կոչել, սահմանեց, և իմանալին իբրև մայր եղավ: Եվ նրանից երևացին երկու ծնունդներ՝ տեսանելի և իմանալի, և այդ երկուսից եղան բազում տեսակները՝ անմարմիններից՝ անմարմինները, մարմնավորից՝ մարմնավորները. դրանք հրեշտակներն են և մարդիկ:

Մարդը երկնքի ու երկրի գեղեցիկ խառնուրդ է՝ Աստծու ստեղծագործ իմաստությամբ միացրած [ընդ]դեմներին՝ պարզը և թեթևագույնը՝ երկնքից, ծանրը և բաղադրվածը՝ երկրից: Քանզի եթե զգայական այլ տեսակների բնությունն այստեղ հասկանանք, նրանք ծառա են և անհանճար, իսկ այս իմանալին մեր մեջ վեհ, ազատ ու անախտ նյութից է, մոտ է Աստծու բնությանը, հրեշտականման է և նույն էությունից, բայց հրեշտակ չէ, այլ միայն հոգի է՝ կապված այս անարգ նյութի հետ, բարձունքներից է, երկնային, հակառակ, օտար ու անընտել երկրավորին, բայց հնազանդված մարմնի կապանքներով:

Իսկ եթե մեկն ուզում է իմանալ մարդկանց հոգիների կայանների մասին, թող երկրաքարշ ախտերից ծանրացած ու թանձրացած մտքով չնայի, այլ թող թռչի սուրբ Պողոսի պես, ով ասաց, թե անճառելի է տեղը, դրախտ և երրորդ երկինք անվանեց, բայց ավելի բարձր հաստատություն իմացավ այն: Արդ, հոգին, այստեղից հափշտակվելով, հասնում է հոգևոր կայաններին, որ աստվածային Գրքերը Վերին Երուսաղեմ են անվանում [տե՛ս Գաղատ., Դ 26], որտեղ բյուրավոր արդար կատարյալների հոգիներն ուրախանում են՝ նախապես տեսնելով Աստծու [պատրաստած] բարիքները: Անպատմելի անուշահոտ ու լուսավոր է օդը, որի հետ ոչ մի դառնություն խառնված չէ:

Պարզագույն խոսքերով ասացի, թե հոգիները գնում են բնակվելու այնտեղ, որտեղից եղան, իսկ մարմինը դարձյալ միանում է իր տեղին՝ քայքայվելով ու նմանվելով նրան:

Եվ անտեսանելի և անեղծ [հոգին], ավելի փառավոր տեսք ստանալով, այլևս չունի այս կյանքի հետ կապված մարմնավոր կարիքներ, ոչ էլ կարոտում է և տեսնել է ուզում, և ոչ էլ մարտիրոսները՝ նրանք, ովքեր առավելագույն պատիվների են արժանացել, կարող են հայտնել որևէ մեկին: Իսկ եթե մեկը, արհամարհելով [քրիստոնեական վարդապետությունը], անխրատ սովորությամբ առաջնորդվի երազներով, վերստին կդառնա հեթանոսական սովորությանը. [չնայած] բազում օրինակներ կան. քաղդեացի մոգերը աստղագիտությամբ ճանաչեցին Աստծուն. երբ սուրը հասավ Ռաբովթ՝ Ամոնի որդիներին, բաբելացի գավազանահարներն ու լերդահմանները եկան երկու ճանապարհների գլխին, և նրանց աջ ձեռքից հմայություններ դուրս եկան Հրեաստանի և Երուսաղեմի դեմ (տե՛ս Եզեկ., ԻԱ 19-22): Գուշակները ստությամբ արդարացան, երբ սուրը մտավ Ղովտի պարանոցը, և անիրավության համար վրեժ լուծեց նրանցից: Նաև մի ոմն վհուկ կին Սավուղին ճշմարտությունը պատմեց, իսկ Բաղաամը՝ Միջագետքից եկած ճշմարտատեսը, [քնի մեջ բաց աչքերով տեսավ Աստծու տեսիլը] (տե՛ս Թվեր ԻԲ 20): Բաբելացի իմաստունը երազի մեկնությամբ փրկեց Երեմիային, իսկ Հովսեփը, երազ տեսնելով, մեկնեց փարավոնի երազը (տե՛ս Ծննդ. ԽԱ 25-36): Սակայն [երազներով առաջնորդվելը] մերժվում է Քրիստոսի Եկեղեցու կողմից՝ ըստ ճշմարիտ Գրքերի[63], քանզի հեթանոսներինն է այդ սովորությունը և ոչ քրիստոնյաներինը:

Իսկ եթե մեկը հանդգնորեն զանց առնի այս միտքը, օտար խորհուրդներով նշաններ գծի, գուշակի ապագան, ե-

բազներ մեկնի և դրանցով մոլորեցնի մարդկանց, ոչ քրիս-տոնեաբար ընթանա անթույլատրելի ճանապարհով և մեր մեջ բնական կրքերը հայտնի, որ լինում է խելապատակի՝ դատարկախոսությամբ վնասվելուց, և հիվանդության պատճառով բազում բաներ տեսնելով՝ խոսի տգիտաբար, ինչպես որ հարբեցողներին է թվում, թե իրենք պտտվում են երկրի շուրջը, իսկ ջերմությունից այլափոխված զգայա-բանները սրանք կատարված գործ են համարում: Կամ էլ այն, որ դևերը, որոնք գիտեին մարդու կյանքը, ընդունե-լով արդեն մեռած մոլորվածների կերպարանքը և նրանց նմանվելով, հայտնվում են տրտում կամ զվարթ դեմքով, իբրև թե պատվեր տալով կամ զգուշացնելով (կարծես թե մեռյալը և մարմնով սպանվածը հոգի է դարձել), որը ոչ թե ի շահ, այլ ի վնաս է լինում, և մոլորեցնում է, և նա տգիտաբար ճարտարությամբ պատմում է. այն դուրս է քրիստոնեությունից:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

Ահեղ և զարմանալի է [լինելու] Քրիստոսի գալուստը, ահավոր է [լինելու] դատաստանը, երբ դղրդալով պիտի շարժվեն երկինքն ու երկիրը, և Աստծու հրեշտակ-ներն այս ու այն կողմ պիտի ընթանան, ահավոր է [լինե-լու] Աստծու փողի ձայնը, որ պիտի ժողովի ազգերին ու ցեղերին դատաստանի ատյանում. այնտեղ սաստիկ քննութ-յուն պիտի լինի, և ամբողջովին դուրս պիտի պահանջի մեր բոլորի հոգին, շունչն ու մարմինը: Արարողն ու Աստված ամենևին չի մոռանում վախճանվածների ոսկորները՝ կա-տարյալ հասակ ունեցողից մինչև որովայնից վիժվածները: Հողը պիտի բռնվի սաստիկ երկունքով և զգուշությամբ դուրս՝ դեպի երկիր պիտի հանի բոլոր մարմինները: Ահեղ ու ահավոր է այն օրը տեսնելը. բոլոր արարածները տես-նում են Աստծուն երկնքից երկիր խոնարհված, շարժվում են լուսեղեն զորքերը, հրեշտակների ու հրեշտակապետերի բազմությունները: Դրվում է դատաստանի աթոռը փառ-քով՝ դատելու բոլոր արարածներին, ահավոր ատյանի ա-ռաջ կարգվում են առաքյալներն ու մարգարեները, հայրա-պետներն ու մարտիրոսները և Աստծու ընտրյալների բազ-մությունները: Խիստ դժնդակ է այն տեսնելը. այնքան մեծ բազմության մեջ ոչ ոք չի կարող փախչել Հանդիսադրից, և ոչ էլ երկրի ընդարձակության մեջ թաքնվելու տեղ կա. ծայրից ծայր տեսնում է բոլոր հեռու և մոտ գտնվողներին, և ըստ յուրաքանչյուրի գործի հատուցում է լինում: Նրանք, ում գործերը դժնդակ են, դատապարտվում են. ա-նողորմ դահիճներն, իբրև մարդուն թշնամի, մազերից

քարշ տալով՝ բերում են դատավորի առջև և տանջում գեհենի հրում, իսկ արդարների դասերը երկնքի արքայության մեջ փայլում են լուսատուների պես:

Երկնավոր փողը բարձունքներում գոչում է ննջեցյալներին և ասում է. «Վե՛ր կացեք, Քրիստոսի՛ սիրելիներ, ահա երկնավոր Թագավորը եկավ և ձեզ պարգևելու է հանգիստ, ուրախություն և անմահ կյանք ձեր չարչարանքի ու ճգնության փոխարեն: Վե՛ր կացեք և տեսեք Քրիստոս Թագավորին՝ անմահ Փեսային, ում ցանկանում եք, որովհետև Նրան փափագելով՝ Նրա համար պանդուխտ եղաք երկրում: Վե՛ր կացեք, տեսե՛ք նորասքանչ վայելչությունն ու մեծ փառքը: Վե՛ր կացեք, մտե՛ք Նրա արքայության մեջ, որ պատրաստեց ձեզ համար: Վե՛ր կացեք, տեսե՛ք տենչալի Տիրոջը, ում սիրեցիք, ում համար վշտեր կրեցիք: Վե՛ր կացեք, մեծ համարձակությամբ տեսեք Նրան և այնտեղ ցնծացե՛ք Նրանով, ձեր անճառելի բարիքներն ու ուրախությունը ոչ ոք չի վերցնի ձեզնից: Եկեք վայելեցե՛ք այն, «ինչ որ աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սրտի մեջ չընկավ, որ Աստված պատրաստեց Իր սիրելիների համար» (տե՛ս Ա Կորնթ., Բ 9), որ շնորհեց Իրեն փափագողներին:

Մեծ ուրախությամբ ուրախանում են բոլոր արարածները և փառաբանում ու երկրպագում են Քրիստոս Թագավորին, լուսավոր ամպերի վրայով օդի միջով թռչելով՝ սուրբերը հրեշտակների զորքերի բազմությեան հետ բարձրանում են Քրիստոսին ընդառաջ, անպատմելի փառքով ցնծալով՝ հրճվում են անմահ Աստծու՝ երկնավոր Փեսայի տեսությամբ և մտնում են սուրբ քաղաք՝ Վերին Երուսաղեմ՝ ժառանգելու անճառ բարիքները, որ Աստված է պատրաստել Իրեն սիրողների համար: Այնժամ ահավոր ատյանի և անկաշառ Դատավորի առաջ են բերվում նաև ապստամբ հրեշտակները դիվական բոլոր գնդերի հետ միասին: Եվ Քրիստոս Թագավորը տանջող հրեշտակներին հրամայում է անշեջ հրի և մշտնջենական տանջանքների մեջ նետել նրանց, միաժամանակ նաև նրանց, ովքեր անօրինություն են գործել և զղջմամբ ու խոստովանությամբ չեն քավել այն, մատնում է խավարին, որից ազատում չկա, և անքուն որդերին, որ պատրաստված են սատանայի և նրա հրեշտակների համար: Որից թող փրկի Քրիստոս Աստված Իր սուրբ անվանը հավատացողներին. ամեն:

ՄԵՌՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրենքը հայտնի է և հաստատված է օրենսդրի՝ Մովսեսի և այլ մարգարեների ձեռքով, կանոնները տրվեցին առաքյալների միջոցով, և իշխանություն տրվեց Եկեղեցու վարդապետներին. աղբյուրի ակը Մովսեսն ու մարգարեներն են, իսկ առաքյալները՝ մարդկանց՝ հավատի առողջ հասակով տնկողները: Ոչ թե այս հողե երկրում, որ ենթակա է ապականության, այլ դեպի վեր նայել [տալով]՝ տնկում են կենդանի դրախտում, որտեղ ոչ թե բարու և չարի գիտության, այլ կյանքի և անմահության ծառն է, որն ունի անճեղք ցանկապատ, ուր ո՛չ Եվան [կխաբվի], և ո՛չ էլ օձը կարող է սողոսկել մտնել և հակառակ խրատը տալ, ուր չկա հայրական փառքից զրկվել, ամաչել ու ծառերի ետևում թաքնվել: Այնտեղ չկա նաև թզենու տերևին ապավինել, ոչ էլ դրախտից ելնել ու նզովքների երկիրն ընկնել: Այս դրախտը կարիք չունի մշակության ու պահպանության՝ ըստ առաջին պատվիրանի, այլ՝ միշտ մնալու ու վայելելու: Արդ, տասներկու առաքյալները մեզ այս դրախտում տնկեցին տեսական հավատով և ոռոգում են այն բխող բուն ականակիտ աղբյուրից: [Մարգարեներն] հեռվից հենց այս էին տեսնում և ժամանակների իրենց դռում փափագով ցանկանում էին այստեղ լինել: Նրանք թեև հայտնապես չհանդիպեցին, բայց կանխագետ մարգարեությամբ հաստատուն հավատով վկայելով վախճանվեցին. նրանք նաև այսօր են գովվում Եկեղեցում, փառավորվում մարդկանցից և Աստծուց:

Արդ, բանական հովիվները բանական հոտին այս խորհրդական ջրով են մկրտում, որը նրանց երկնավոր Հոր որդեգիրներ է դարձնում, Քրիստոսի եղբայր անվանում և իբրև գրավական ապագայում կատարվելիքի՝ տալիս է հայտնի շնորհները: Իրեն ուտելի միս ու խմելի արյուն դարձնելով սուրբ սեղանի վրա՝ հրամայում է սրբությամբ համարձակվել, հավատի զորությամբ մոտենալ, առնել, ուտել և խմել: Իսկ չմկրտվածները, անգամ եթե կատարյալ լինեն ամենայն արդարությամբ, իշխանություն չունեն մոտենալու կամ ճաշակելու Աստծու Որդու մարմնից ու արյունից. այս կանոնը տերունական է: Քանզի մարդը, կենդանության օրոք արժանանալով վայելելու այսպիսի անանց պարգևները, իր մարմնի մահից հետո հավատով իշխանություն է ունենում և մեռյալների մեջ այդ կենդանի և իմանալի պաշարով քավվելով մեղքերից և ազատվելով տանջանքներից՝ խառնվում է արդարների գնդերին: Իսկ այստեղ մնացածներին հրաման է տրված՝ կատարել հանգուցյալների հիշատակը, որովհետև [նրանց] մարմինն է մեռած, հոգին կենդանի է, իսկ Աստվածությունը, որը ճշմարտապես առավ Իր իսկ ստեղծած հողեղեն [մարմինը], կենդանարար է:

[Վերջին] ընթրիքի ժամանակ՝ Իր կամքով անօրենների ձեռքը մատնվելուց առաջ, վերցնելով հացն ու գինին Հոր փառքի համար, նախ տվեց առաքյալներին: Մինչ մարմնի մեջ էր, Ինքն Իր հիշատակը մատուցեց և ուտելով՝ հավասարեցրեց Իրեն և առաքյալներին: Ինչպես և մեծն Պողոսը՝ Քրիստոսի խորհրդակիցն է ասում. «Հացը, որ կտրում ենք, հաղորդություն է Քրիստոսի մարմնին, բաժակը, որ օրհնում ենք, մի՞թե հաղորդություն չէ Քրիստոսի արյանը: Քանի անգամ որ ուտեք այս հացն ու այս բաժակը խմեք, պատմեցե՛ք Տիրոջ մահը, մինչև որ նա գա» (տե՛ս Ա

Կորնթ., Ժ 16, ԺԱ 26): Քանզի Քրիստոսի մահը պատմելով տերունական սեղանի վրա՝ հացն ու գինին չեն մնում այնպիսին, ինչպիսին առաջ էին, այլ ճշմարտապես [դառնում են] մարմինն ու արյունը ոչ թե որևէ մահկանացուի, այլ Անմահի՝ Քրիստոսի, որ մեր ապականությունն անապականության է վերածում: Այն հիշատակն է Բան Աստծու կատարյալ ու կուսածին մարմնի, որին մահը չկարողացավ արգելափակել ապականության ներքո. Տերը Իր բարերարությամբ խառնվեց նրան, այն հիշատակն է [նաև] մեր մարդկության: Քանզի եթե իմ բնութենակից մարմինն առավ, ինձ տվեց Իր Աստվածության իշխանությունը և Իր չարչարանքների մասին պատմող դարձրեց ինձ, ահա հայտնի է, որ ես նույնպես իշխանություն ունեմ Քրիստոսի հիշատակի հետ կատարելու հանգուցյալների հիշատակը: Երբ սրբությամբ կատարեմ, օգուտ կունենամ և օգուտ ունենալ կտամ. օգուտ կունենամ, որովհետև իմ հոգին կխառնեմ հանգուցյալների [հոգիներին], և օգուտ կտամ, որովհետև վկա եմ հանգուցյալների ճշմարիտ հավատին: Եթե այդպես է, ուրեմն ոչ միայն պետք է հանգուցյալների հիշատակը կատարենք, այլ նաև պետք է առատ ողորմություն տանք մեր մեղքերի քավության, աղքատների գովելի հավատի, հանգուցյալների հանգստի ու մխիթարության, նաև մեզնից հետո եկողների ուղղափառ վարդապետության համար:

Իսկ մեղավորների հիշատակության մասին. նրանք մոլորվեցին իրենց կյանքում, ջնջեցին Աստծու որդեգրության գիրը և իրենք դարձան իրենց՝ երկնային արքայությունից դուրս ելնելու պատճառը: Հրեշտակների բազմությունները սգում են նրանց համար, և միայն սատանան է իր սևագունդ զորքերի հետ միասին ուրախանում, որ քակտվեց կենդանի տաճարը, որ նա արժանի չեղավ Քրիստոս Թագավորի՝ իր մեջ բնակվելուն, որ բաժանվեց սուրբերի դասից, հեռացավ ուղղափառ Եկեղեցուց, չխառնվեց Քրիստոսի գնդերին, լուսազգեստ հրեշտակների պարին չմիացավ, այլ միաբանվեց սև ներկված մեղքերին, խառնվեց ձախակողմյան՝ այծերի երամակներին, արքայության ժառանգն անմահ որդերի կերակուր եղավ, լուսո որդին արտաքին խավարի մեջ բնակվեց, ուրախ լինելու և անթառամ պսակով խնդալու փոխարեն աչքերի լացը, ատամների կրճտոցն ու վայը բերանից չի պակասելու: Քանզի կրկնակի ու եռակի են դժոխքի հարվածները՝ սարսռեցնող առավել, քան ձմեռային ամենացուրտ սառնամանիքները, իսկ նրա կրակի բոցն ավելի խիստ է այրում, քան հնոցի հուրը, այնտեղից է ելնում հրեղեն գետը, որն ավելի հորդառատ է, քան բազում ջրերի սաստկությունը, հրեղեն բոցերը վեր են ցոլանում, իսկ հրանման շանթերը եռալով կտրտում են, մթին է բոցը, և խավարային է հուրը, այդ պատճառով էլ արտաքին է անվանվում, հրածին է որդը, որը թունավոր, անքուն ու անմահ է անվանվում, ահավոր են ժանիքները, և անհագ է որովայնը, կերակուրն անսպառ է, իսկ ուտողները՝ անդադար, չկա մեկը, որին աղաղակեն, ոչ էլ պաղատանքների ձայնը լսող կա, սերը ցամաքել է, և ընկերոջ արտասուքները չեն իջնում իր սիրելիների վրա, քանզի հեռացավ գութը, և թագավորեց ճշմարտությունը, որ հատուցում է յուրաքանչյուրին ըստ իր գործերի:

Բայց որովհետև գալիս է մկրտվելու, հեռանում է սատանայից ու նրա խավարային հրեշտակներից, խոստովանում է բոլորի Հորը, հանձն է առնում չարչարակից լինել Բան Աստծուն, որ սուրբ Կույսից առավ մեր բնութենակից մարմինը շնչով, հոգով ու մարմնով, հավատում է, որ Սուրբ Հոգին քավում է բոլոր հավատացողների մեղքերը, և ճաշակում է Քրիստոսի կենդանի պատարագից: Եվ թեև

մեղքեր գործում է, տկար մեղքերը չեն կարող լուծել տերունական անկոտրելի կնիքը. ինչպես որ առաջին մարդը, մեղքերի պատճառով մեռնելով, հող դարձավ, ապա Քրիստոսի երևման ժամանակ դարձավ նույն բնությանը. [Աստված] նրա փոխարեն ո՛չ թե նոր կամ մեկ այլ մարդ արարեց, այլ այն ապականվածին նորոգեց և անապական դարձրեց: Նույն օրինակով էլ նրանք, ովքեր մկրտության կարգից հետո մեղանչում են, բայց զղջում են ու ապաշխարում, պետք է առաքինության գործեր անեն և ոչ թե վերստին մկրտվեն: Քանզի նախկինում նրանց ոչ ոք բռնությամբ հավատի չբերեց, այլ իրենք իրենց կամքով եկան. իսկ Աստված կամավորներին է ընդունում և որդեգիր դարձնում: Նրանք հավատում և իրենց Աստծուն են հանձնում, որով լինում է մարդու և Աստծու միաբանություն: Որ սա իսկապես այսպես է, մենք նույնպես հավատում ենք: Եթե [մեկը] մարդկային մտքով թերահավատ լինի, Աստված հավատարիմ է Իր [խոստումին], Իր տված պարգևները չի հանում: Իսկ դատաստան անելիս մեղքերն է դատապարտում. սուրբ մկրտությունը չի լուծվում, և դատաստանի չի ենթարկվում:

Եթե կամենում ես, քեզ համար վերցրու մեկ այլ օրինակ: Առաջին մարդը դրախտում կատարելապես մեղանչեց. նրա հողեղեն մասը վերադարձավ հողին, իսկ կենդանի շունչը ապականության չենթարկվեց, այլ իր նախկին բնությամբ վեր բարձրացավ: Կնիքը Սուրբ Երրորդության նկատմամբ հավատն է, և անհնարին է, որ այն լուծվի կամ ապականության ենթարկվի: Երբ մեկն իր կամքով հավատում է և ապա ուրանում, ինքն է հեռանում կյանքից, կյանքը չի մեռնում մահկանացուի հետ: Ես կարծում եմ (նաև բոլորն են այդպես կարծում), թե այդպիսի մարդու հիշատակը արժան չէ կատարել և ոչ էլ նրա մեղքերի քավության համար

ողորմություն տալ: Բայց եթե նա վախճանվելու պահին զղջացել է, արժանի է ընդունվելու, քանի որ Աստված մարդասեր է: Արժան է այդպիսի ննջեցյալի անունով տուրքեր տալ. թերևս [Աստված] կընդունի ողորմությունը և կգթա նրան:

Իսկ անմեղ երախաների[64] մասին, որոնք առանց մկրտվելու են հեռացել այս աշխարհից. ինչպե՞ս անմեղ անվանենք նրանց, քանի որ առաջին պատվիրանը մկրտությունն է, որի մեջ է կատարյալ դառնում հավատը, իսկ նա արհամարհել է այն և բոլորի Հայր Աստծուն, քավիչ Սուրբ Հոգուն և Աստծու Միածին Որդուն, ով խոնարհեցրեց Իրեն մարդու աջը Աստվածության վրա դրվելու չափ. երբ Մկրտիչն հրաժարվում էր՝ ասելով. «Ի՛նձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մոտ ես գալիս» (Մատթ., Գ 14), մեր Տերը մարդկանց Աստծու որդիներ դարձնելու համար ասաց. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծու ամեն արդարություն» (Մատթ., Գ 15): Շտապում եմ մկրտվել մարդու ձեռքով, որպեսզի կատարեմ ամեն արդարություն. ուրեմն որքան առավել մարդը պետք է ապավինի սուրբ Ավազանի ջրին, որպեսզի ստանա Աստծու անջնջելի որդեգրությունը: Եվ արդ, արժա՞ն է անմեղ անվանել նրան, ով արհամարհել ու զանց է առել այս ամենը, ով լի է կորստյան տանող բոլոր չարիքներով: Իսկ եթե մեկն ասի, թե ոչ խելահաս տարիքում մոլորվեց, ես գիտեմ այդպիսիների հանցանքը ծնողների վրա գցել. իսկ ինչ վերաբերում է պատվիրանին, ասենք, որ եթե մեկն սպանվում է օտարի ձեռքով, մեռնում է, և եթե եղբոր ձեռքով է սպանվում, նույնն է պատահում, շատ որդիներ էլ իրենց հայրերի կողմից սպանվեցին: Մահը նույնն է բոլորի համար.[բայց] թվում է, հարկ է վրեժ լուծել վնասողներից և հանցավորներից:

Ասեմ, որ այդպիսիների անունով արժան չէ պատարագ մատուցել, քանի որ իրենց կենդանության օրով արժանի չեղան կենարար շնորհին: Ուրեմն ո՞վ է այնքան հանդուգն ու տգետ, որ այստեղ առանց դրոշմվելու հուղարկավորվի, քակտվի և տրոհվի տրոհելիով՝ [մարմնով], և անտրոհելիով՝ [հոգով], որոնք անհնարին է, որ միավորվեն, մինչև վերստին նորոգման ժամանակը[65]*: Այլ արժան է ողորմություն տալ միայն այնպիսիների [համար], ովքեր արժանավոր են, և բազում [սուրբերի] բարեխոսությունը [խնդրելով]՝ աղաչել բոլորի Դատավորին, որպեսզի մոլորվածին փրկի գեհենի անշեջ հրից, ուր պիտի գնա սատանան իր բոլոր գործակիցների հետ միասին: Որից թող պահպանի մեր Քրիստոս Աստված Իրեն սիրողներիս և բոլորին, որ Իր արյան գինն են: Նրան փառք հավիտյանս. ամեն:*

Կանոններ դիվահարների համար, թե պե՞տք է նրանց օրենքը տալ և կամ՝ երախաներին՝ կնիք, մինչ դեռ նրանց մեջ է

Արդու մեջ շատ ախտեր կան, որովհետև նա չարչարելի մարմին ունի: Ախտեր կան, որ բժշկվում են ճարտար բժիշկների ձեռքով, կան, որ իրենք իրենց հեշտությամբ թոթափվում են մարմնից, ախտեր էլ կան, որ երկարատև են, անբուժելի և մահվան են տանում: Դրանք բոլորն էլ [մարդու մեջ] են մտնում որևէ պատճառով. ժամանակի, սաստիկ տաք քամիների, կամ էլ [սառի ու տաքի] ոչ չափավոր խառնակության, ցուրտ սառնամանիքների, օդի գարշահոտության կամ խոնավության պատճառով: Դարձյալ՝ հիվանդություններ են առաջանում նաև կերակրի շատությունից և կամ երկար ժամանակ սոված մնալուց և այլ բազում պատճառներից, որ գիտենք բոլորս: Բայց դիվահարության մեկ այլ տեսակ է, երբ ստամոքսի սաստիկ ցավերից վնասվում է խելքը, մանավանդ ժամանակ առ ժամանակ՝ երբ լուսնի լրվելու և նվազելու հետ կապված՝ բոլոր կենդանի [մարմինների] աճում ու նվազում է տեղի ունենում, կամ խելքի զեղվելիս կամ նվազելիս, կամ երկու կերպ է նեղում այս ախտը. այն փրփրում է՝ արյունախառն [լորձ] բերելով բերանից և քթից, [կամ էլ հիվանդը] զարկում, ցնորվում, հիմարանում է, նրա միտքը ապուշ է դառնում: Իսկ երբ դադարում է ախտը, մարդը վերադառնում է իր նախկին մտքին, և եթե մեկը հարցնի, նա չի հիշի և չի կարողանա պատմել: Այնպիսի կարծիք է ստեղծվում, թե մարդը չարչարվում է դևից և ոչ ցավերից: Պատահում է, որ այսպիսիները առողջանում են, պատահում է, որ դրա-

նից էլ մեռնում են: Կա նաև ուրիշ հիվանդություն, որին կողացավ և թիկնացավ են անվանում, նաև այլ՝ հոդերի, ոտքերի, ձեռքերի, ողերի, որոնք կարկամեցնելով, սարսռեցնելով և դողացնելով՝ դիվահարի են նմանեցնում, մանավանդ երբ լինում են ամեն օր, ամեն ժամ, կամ էլ ամիսը մեկ անգամ, և կա, որ տարին մեկ անգամ է լինում: Դրանց պատճառները հայտնի են. բժիշկները բուժում են դրանցից շատերը, բայց մարդիկ դրանց բոլորին դիվահարություն են ասում:

Իսկ այն, որ [մարդիկ] չարչարվում են պիղծ այսերից, հայտնի է, և ուրանալ չենք կարող. մանավանդ [Աւետարանից ունենք օրինակներ], երբ այդպիսիներին բերում էին Տեր Հիսուսի մոտ, և Նա նրանցից շատերին բժշկում էր միայն խոսքով և ոչ մարմնական հնարքներով, նաև [ախտերի] անուններն էր ասում, և մարդիկ այն ախտերից [տառապողներին] սովորեցին վերնոտ և լուսնահար անվանել: Այո՛, աղաչում եմ, այստեղ ուշադի՛ր եղիր. [Տերը] երբեմն [բժշկում էր] միաժամանակ իբրև մարդ և Աստված, և դևերը բացեիբաց աղաղակում էին՝ աղաչելով. «Ճանաչում ենք Քեզ, Աստծո՛ւ սուրբ, ժամանակից շուտ մեզ մի՛ տանջիր» (Մատթ., Ը 29). դևերի այս ակամա խոստովանությունը Որդու Աստվածությունն էր հայտնում: Իսկ երբ ձեռքը դնում էր հիվանդների վրա, բժշկում էր՝ իբրև մարդ աղաչելով Աստծուն: Երբ լուսնոտներին, լուսնահարներին և պիղծ այսերին էր սրբում, այնժամ իբրև մարդ և Աստված էր, քանզի դևերը մարդու միջոցով են լսում Աստծուն և դուրս ելնում մարդուց: Մինչդեռ ջերմը, հիվանդությունները, լուսնոտներն ու լուսնահարները մարդուն առանց դեղի չեն լսում, իսկ Աստծուն լսում ու բժշկվում են բոլոր ցավերը, ինչպես որ [երբ Գալիլիայի Կանա քաղաքում] ջերմին սաստեց, Կափառնայումում այն հեռացավ [պալատական պաշտոնյայի] որդուց (տե՛ս Հովհ., Դ 52): Հայտնի է, որ կան դիվահարներ. ոմանք՝ ծածուկ են, ոմանք՝ հայտնի: Դևի՝ մարդու մեջ մտնելու պատճառը մեղքերն են. և մեղքերը մարդու մեջ գործում են բազում մասերով՝ բարկացական, ցանկական, ուրացական, ամբարտավանական: Բարկացականի պտուղը սպանությունն է, ցանկականինը՝ պոռնկությունը, ուրացականինը՝ ստությունը, ամբարտավանականինը՝ ագահությունը. այս չորսը միաբանվում են, շրջապատում են մարդուն և բնակության տեղ պատրաստում սատանայի համար: Սրանք անվանվում են նաև բազմագլուխ գազաններ: Նրանք բոլորը նույն բանն են կամենում: Ովքեր գնում են ցանկության ետևից, պեսպես խորտիկներով ու զանազան ըմպելիքներով պարարտացնում են իրենց մարմինները, խոզի պես ննջում փափուկ անկողիններում, այդպիսիները կատարում են ոչ թե մեկ կամ երկու, այլ բոլոր դևերի կամքը. այդ ամենով նրանք ծածկաբար կամ հայտնապես հեռացնում են նրան Աստծուց: Իսկ նա, ով հետևում է բարկացականին, հեռանում է իր մարդկային նկարագրից և մռնչալով ու հափշտակելով, իր նմաններին բզկտելով և Աստծու պատկերը ամբողջովին ապականելով՝ նմանվում է չար գազանի: Ուրացականին [հետևողը] ստում է, անաստված դառնում, առանց պատկառելու գործում բոլոր չարիքները. նա ոչ միայն դևերի դարան է, այլ նաև նրանց չար կամքի կամակից: Իսկ նա, ով ամբարտավանանում է, կատարում է կամքը մեր առաջին թշնամու, որով մահը աշխարհ մտավ և տարածվեց բոլոր մարդկանց մեջ: Եվ դրանցով բռնված՝ մարդիկ չեն շտապում բժշկել իրենց անձերը, որովհետև դևերը նրանց հայտնապես չեն չարչարում, այլ ներքուստ հալում ու մաշում են անմահ հոգու նուրբ բնությունը[66], որ կապված լինելով մարմնին՝ վախճանին այրվելու են անշեջ հրի մեջ[67]:

Իսկ երբ մարդիկ հայտնի կերպով են լլկվում պիղծ այսի կողմից՝ լինեն չմկրտված կամ մկրտված, արդար կամ մեղավոր, ծեր կամ երիտասարդ, և դևը չի ելնում նրանց միջից, այստեղ երկու պատճառ կա՝ դևի բռնությունը և մարդու տկարությունը. այստեղ ես նկատի ունեմ հոգու, այլ ոչ թե մարմնի տկարությունը: Սակայն դևի բռնությունը անպարտելի զորություն չէ, այլ լրբություն: Նրան զորացնում է մարդու անժուժկալությունը. քանի որ նա ցանկանում է պես-պես կերակուրներ ու ըմպելիք, մարդն իր հոգում գծագրում է աղտեղություն և անհավատություն: Բայց ես ասում եմ, որ դևը բնությամբ ու բարքով [այնպիսին է], որ մշտապես ցանկանում է համեղ կերակուրներ ու ըմպելիք, և որովհետև ինքը բերան և որովայն չունի, նրբանում, սպրդում է մարդու սրտի մեջ, այն քաշում է դեպի իրեն, նրա մեջ գրգռում համեղության [ցանկություն] ու մարդուն դարձնում է անհագ, որկրամոլ ու հարբեցող, որպեսզի նրա մարմնի միջոցով ինքը կերակրվի և խմի: Եվ իր համար բնակարան դարձնելով ոչ միայն թանձր մարմինը, այլ նաև նուրբ հոգին՝ սովորեցնում է գործել բոլոր չարիքները: Սա է, որ չի լքում մարդուն, մինչև նրա վախճանի օրը:

Եվ որովհետև մարդիկ [միայն] արտաքինն են տեսնում, երբեմն պատահում է, որ կարծում են, թե մարդն առաքինի է, հեռու ամեն տեսակի չարությունից՝ ամենևին չիմանալով, որ այնպիսին չարչարվում է դևից և բազում ջանքերով անգամ չի կարողանում իրենից հալածել նրան: Կարծում եմ՝ դևը, ավելի լավ տեղյակ լինելով նրա ներքին գործերին, քան մեզ, բռնում է նրան, կամ էլ դատապարտելի [համարելով]՝ վախեցնում է նրան, և կամ էլ վատթար խորհուրդների պահին ձեռք ձգելով՝ սկսում է չարչարել՝ մարդուն դարձնելով անհոգ ու հանգիստ: Իսկ եթե մարդը սկզբում՝ [դևի մտնելուց առաջ], մաքուր էր և մաքուր խորհուրդներ ուներ, ահա հայտնի է դառնում դևի լրբությունը և անճանաչելի համբերությունը: Այստեղ ոչ միայն պետք է [մարմինը] ճնշել պահքով, այլ նաև Աստծուն ուղղված սուրբ աղոթքներով, խնդրվածքներով և ուխտագնացություններով դեպի այն բազում վայրերը, ուր կան սուրբերի նշխարներ, որպեսզի չարը հեռանա մարդուց: Եվ եթե այս ամենը կատարվելուց հետո էլ դևը չի ելնում մարդու միջից, իսկ մարդը չի դադարում և չի տկարանում առաքինության մեջ մինչև իր վախճանի օրը, այնպիսի մարդու մասին ասեմ, որ եթե մկրտված չէ, հարկ է կնիքը տալ, իսկ եթե կնքված է՝ օրենքը: Քանի որ այսպիսի առաքինի մարդուն դևը չի կարող հեռացնել Աստծուց, ինչպես այն կատարյալ նահատակին, որի առաքինության մասին մինչ օրս պատմվում է Եկեղեցում, այլ ինքը կհաղթվի, կպարտվի և կամաչի: Բայց ուրիշ դիվահարների, որոնք պորտաբույծ են, որոնք իրենց հետ միասին պարարտացնում են դևերին և անհագորեն անառակություն են գործում, եթե մկրտված չեն, արժան չէ կնիք տալ, իսկ եթե կնքված են՝ օրենք: Այդ մասին է վկայում տերունական այն հրամանը, թե՝ «Մի՛ տվեք սրբությունը շներին և մարգարիտներ չաղ մի՛ տվեք խոզերի առաջ» (Մատթ., Է 6):

Իսկ եթե մեկն ասի, թե ի՞նչ մեղք ունեն մանուկները, որ սկզբից իսկ սկսում է չարչարել նրանց, ասեմ, որ պատահում է՝ Աստված իբրև մարդ է դատում աշխարհը, պատահում է՝ իբրև Աստված. երբ իբրև մարդ է [դատում], հատուցում է ըստ գործերի, չի իշխում դատել, իսկ երբ [մարդը] դեռ չի մեղանչել, [դատում է] իբրև կանխագետ, որպեսզի նրան ետ պահի չարից: Տե՛ս, թե ինչպես են թագավորների աշխարհիկ օրենքով հանցավորներից վրեժ լուծում, իսկ Աստված [վրեժ է լուծում] թե՛ հանցավորից և

թե՛ ազգից. հանցավորից՝ որպես օրենսդիր, իսկ ազգից՝ որպես կանխագետ: Պատասխան չկա անորոշ և առանց զատելու հարցումներին, թե՝ ախտի՞ց է, թե՞ աշխարհից, եթե ախտից է, ապա ո՞ր հասակից է եղել, և որո՞նք են հանցանքի պատճառները, եթե ուրացող է, եթե արյուն է թափել, եթե պոռնիկ է, չի կարող [ձեռնադրվել], եթե սխալմունքով [է մեղանչել], անչափահաս է, և եթե զղջացել է, ապա դրանից հետո առաքինի գործեր արել, որոնց մասին վկայում են եղբայրներն ու գլխավորը, մոտեցել է ծերության ժամանակը, արժան չէ համաձայնել, որ այդպիսի մարդը ձեռնադրվի:

Իսկ անհրաժեշտության և բազմությունների օգուտի համար խոսքը լավ իմացողներին արժան է ձեռնադրել երեց, որովհետև առաքինության ծնունդ են, շատերի բարիքի պատճառ կլինեն:

Իսկ եթե մեկը չափահաս է, նրա միտքը հասու է ճանաչելու չարն ու բարին, և ընտրել է չարը, անարգել բարին և առանց խտրություն դնելու պոռնկացել, [իսկ] հետո կա՛մ մարդկանցից ամաչելով, կա՛մ բռնակալից վախենալով ապաշխարել է, հեռացել անառակ ընթացքից, մարդասիրությամբ արժանի՞ է մերձենալու սրբությանը և իր կյանքի բոլոր օրերին կատարել երիցություն:

Ո՛չ իր և ո՛չ ուրիշի հորդորելով օրենք չէ նրան ընդունելը. պետք է նայեն մեղքին և այն բանին, թե իր կյանքի ո՞ր ժամանակում է գործել. եթե մինչև մկրտվելն է գործել, կարող է, եթե մկրտվելուց հետո, կզատեն կբաժանեն և ընտրելով առաքինիին՝ կփորձեն և արժանավորին առաջ կբերեն. քանզի մարդիկ են, և Աստծու հոգին կա բոլորի մեջ:

Իսկ եթե մեկը իր հպարտության պատճառով մարմնավոր սեր ունենա մեկ ուրիշի հանդեպ, հանդգնի և արհամարհի աստվածային կանոնական հրամանները և անարժանին առաջ մատուցի, գողանա մարդկային միտքը և պատճառ բերի, թե [կանոնը] թույլ է տալիս ապաշխարողներին ձեռնադրել, պետք է իմանա, որ Աստված, որ քննում է գաղտնիքները, ըստ ներքին գիտության է անում դատաստանը, որովհետև ոչ միայն ապաշխարողներից պետք է ընտրել և անել արժանին, այլ նաև չապաշխարողներից: Քանզի շատերն են, որ մարդկանց աչքում անմեղ են երևում, բայց Աստծու գործի համար անպիտան են՝ փափկակյաց են, հիմար, ցնորված, անսեր, ապուշ. [այդպիսիներին] եթե անասունների հովիվ էլ դարձնես, երբեք առաջ անցնելով՝ չեն հանգստացնի հովվապետի միտքը: Ինչպե՞ս է արժան այդպիսիներին [վստահել] մարդկանց առաջնորդությունը՝ կեղծավորաբար ասելով, թե՝ «Զգիտեմ դրա մեղքերը»: Այդ պատճառով էլ և՛ նա, ով անել տվեց, և՛ նա, ով արեց, հավասարապես դատապարտության ենթակա են Աստծու ամենագետ ատյանի առջև:

Կանոն

Եթե մեկը սերմնահոսություն ունեցած լինի ցերեկով՝ արթուն ժամանակ, և կամ գիշերով՝ քնած ժամանակ, և կամ էլ իր կնոջ հետ եղած լինի, իսկ նրա կինը բարեպաշտ լինի, ինչպե՞ս պետք է հաղորդվի սրբությանը:

Արդ, եղբայրնե՛ր, մեր խոսքերը քաջերին են ուղղված, և այս կանոնն առաքինիների մեջ է. մեր և աշխարհի միջև ոչինչ չկա, քանզի հրեշտակակրոն ենք բոլորս և պատվական մարգարիտներ, որովհետև գնվել ենք մեծ գնով՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի արյունով: Հոգով և մարմնով պետք է այնպես լինենք, որ չբաժանվենք Քրիստոսի գնդից: Իսկ եթե մեկն ասի, թե՝ «Ես ցերեկով հոգևոր գեղեցիկ խորհուրդների մեջ էի, առաքինի գործեր արեցի, երբեք չզեխացա կերակուրների մեջ և չխմեցի, այլ խիստ պնդությամբ, պահքով և սուրբ մտածությամբ, [մաքուր] խորհուրդներով պարկեշտ անկողին մտա, Աստծուն աղաչելով ու ինձ խաչակնքելով տերունական կնիքով՝ քնեցի և խաբվեցի աղտեղի անուրջների մեջ»: Ասեմ, որ բոլոր նրանք, ովքեր այդպիսին են, եթե քահանա են, թող այդ օրը պատարագ չմատուցեն և հաղորդություն չառնեն, որովհետև նրանց մեջ գիջության մրուր կա, հաջորդ օրը թող չմոտենան և [հաղորդություն] թող չստանան: Թե՛ այր, և թե՛ կին, եթե ուխտավոր են, թող այդպես անեն: Իսկ եթե մեկն այս կանոնը ծանր համարի, ես միջնորդ ունեմ մեծ Մովսեսին, որ երկու մասի բաժանեց նրանց. մեկը՝ ծանր բժշկելի, մյուսը՝ ոչ առանց բժշկության, բայց երկրորդից ավելի դյուրին [բժշկելի]: Դարձյալ՝ եթե դաշտանի մեջ գտնվողների մասին մեկը հարցնի, թե ի՞նչ վնաս կա, ինչո՞ւ նրանք չմերձենան սրբությանը, չէ՞ որ ցավը բնական է և ոչ կամավոր մեղք: Ո՛վ իմաստուն, եթե արդար է, և եթե դու այդ ամենը մտքովդ քննես, լա՛վ խորհիր, որպեսզի հասկանաս այդ ախտի պատճառը:

Մի՞թե գարնանային գետերը հորդառատ չեն լինում: Իսկ եթե մեկը, առնելով ցորեն, գարի կամ այլ հունդ, սերմանի լճի կամ ծովի մեջ, նրան խենթ կանվանենք և ոչ թե զգաստ: Մեր մարմինը կբնակվի գոյակից հողի մեջ: Կանանց [արյունահոսությունը] ամսվա մեջ յոթ օր է տևում, մինչև որ կենդանի երկիրը սրբվում է ապականության ախտից, որից հետո երբ իր զուգակցից ընդունում է իր մեջ սերմանվածը ողջ և անարատ, կենդանի բույս է բուսցնում: Իսկ եթե առանց իմաստության այրերն ու կանայք, հանդգնաբար լրբանալով, անարժան խառնակություն են գործում, այդպիսիները որդեծնության [նպատակից] չեն գոյացել, այլ պիղծ և անառակ ցանկությունից: Քանզի հայտնի է բոլոր նրանց, ովքեր իմաստնաբար քննել գիտեն, թե որդեծնության ժամանակ չէ այն, իսկ եթե լինի, և անսուրբ երկրից բույսեր ծնվեն, [կլինեն] խեղանդամ, ծուռումուռ, ցավագար, ժանտ, հիվանդոտ. պատահում է՝ մանկությունից սկսած, պատահում է՝ միջին տարիքից կամ ավելի առաջ հայտնվում է այս նախկին ախտը, որին ուրկություն են ասում: Արդ, որ անարժան մերձավորության մեջ այդքան ծածկված բաներ կան, մի՞թե մեր օրենսդիրը մեզ չի պատվիրում զգուշանալ՝ չմոտենալ սրբությանը, իսկ մյուս մեծ մարգարեն արդարություն է համարում արյունահոսող կնոջը չմոտենալը (տե՛ս Եզեկ., ԺԸ 6): Հեթանոսների օրենսդիրները նույնպես, յուրաքանչյուրն իր երկրում, թեև ոչ հոգիների սրբության, սակայն մարմինների պարկեշտության համար պատվիրեցին նույն զգուշությունն ունենալ: Արդ, որովհետև Մովսես և Եզեկիել մարգարեները Աստծու

Հոգով զգուշացրեցին այսպիսի բաներից, բժիշկները մեզ ասացին այն վնասների մասին, որ լինում են դրանցից, իսկ արտաքիններն ըստ բնության խորշեցին այդ ամենից: Առավել ևս պետք է պատվեր ու հրաման տալ կանանց, ովքեր այսպիսի վիճակում են, եթե կույս են, չմտնե՛ն եկեղեցի, քահանայի ձեռքը [չհամբուրեն], այլ թող խոնարհությամբ նստեն իրենց տանը ու պարկեշտությամբ պահեն իրենց անձերը: Իսկ եթե ամուսնացած կանայք են, թող նույն կարգը նրանց վրա լինի, և թող չմտնե՛ն իրենց այրերի անկողինը, մինչև մաքրվեն, ջրով լվացվեն, արժանի լինեն եկեղեցի մտնելու և օրենքին հաղորդվելու: Այն, որ կարգեցին հայրերը, թող չարհամարհե՛ն որդիները, որպեսզի հատուցման Օրը առանց ամոթի լինենք:

Ապա եթե սրբությամբ ամուսնացած մեկը առողջությամբ անկողնակից լինի իր զուգակցին և ըստ խառը մերձավորության սովորական բնության՝ այն օրը՝ գիշեր ժամանակ, գործած լինեն, իսկ հաջորդ օրը կա՛մ երևելի տոն, և կա՛մ կիրակի լինի, երբ պիտի կատարվի աստվածային Խորհուրդը, և՛ այրը, և՛ կինը, որ մաքուր էին, Եկեղեցուց ընտրված, հաղորդ և կցորդ Քրիստոսի մարմնին ու արյանը, բայց երեկոյից չէին զգուշացել և իրենց անձերը չէին պահել, ո՛չ միայն այդ օրը չպետք է օրենքն առնեն, որովհետև արհամարհեցին մեծ կիրակին և կամ երևելի տոնը, այլև յոթ օր պիտի զղջան՝ արտասուքներով հայցելով և հառաչելով, իսկ մյուս կիրակի օրը արժանի կլինեն հաղորդվելու սրբությանը. քանզի ահագին է Խորհուրդը և ցանկալի բոլորին: Ապա եթե քահանան ջերմեռանդ է, ամեն օր ծառայություն է մատուցում և հաճախ՝ երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերին պատարագ է մատուցում, և եթե ամուսնացածները ցանկանում են ամեն անգամ հաղորդվել սրբությանը, բայց մերձեցել են իրենց

ամուսնուն, թող չհամարձակվե՛ն մոտենալ օրենքին: Քանզի եթե նույն օրը կերակուր ուտելն է մեզ արգելում սրբությանը հաղորդվել, և գիշերն անջրպետ ենք դարձնում՝ նրանից ճաշակելու իշխանություն ունենալու համար, ապա որքան ավելի է [արգելում] ամուսնությունը. որ թեպետ մեղք չէ, բայց հույժ անհրաժեշտ է զգուշանալ ու պատկառել՝ չհագեցող անասունների օրենքով աղտեղությամբ չշարժվելու համար, և կարգավորներն էլ թող չամաչեն հանդիմանել [նրանց]: Սուրբ Պողոսը գեղեցիկ կարգադրությամբ ամուսնացածներին պատվիրում է. «Թող ձեզնից յուրաքանչյուրն իմանա իր մարմինը շուքով ու պատվով պահել» (Հմմտ. Ա Կորնթ., Զ 19-20): Արդ, եթե այնպիսի գեղեցիկ վարքով վախճանվեցին մեր ընկերակից մեկ հոր որդիները, որոնք ոչ միայն մարդկանց, այլ նաև հրեշտակների պարծանքն են, մենք չե՞նք կարող ամուսնության մեջ սակավիկ սրբությամբ լինել. ո՞վ է, և շատ համարձակ է, [որ] արդարությամբ է ուտում և խմում, առանց մեղքերի փափկանում սուրբ անկողիններում: Սրանք նույնպես բարձրացնում են իրենց անձերը կորստյան տանող աղտերից, գնում են՝ տեսնելու ժողովված սքանչելի ազգը, մարդկանց զանազան կարգերը, հպվում են Եկեղեցու մեծասքանչ սուրբ սպասքներին, լսում են սաղմոսերգուների բարձր ձայները, ունկնդրում են մարգարեական ընթերցվածքները, իմանում են Ավետարանի ավետիսը, լսում են մեկնիչների քաջ խրատները, և հիմարացածների մտքից թոթափվում է սակավ թմբիրը, զվարթանում են, ուրախանում և կարծում են, թե այդ օրն էլ սրբվեցին: Որովհետև ծույլ քահանաները առաքինիների ու վատերի միջև ընտրություն չեն անում, որպեսզի նրանք չհանդիմանվեն ու չամաչեն, պիղծերի պիղծերն են համարձակվում [մոտենալ սրբությանը], այնուհետև նաև սրանք են անխտրաբար

հանդգնում մտնել և առնել մեր Տիրոջ մարմինն ու արյունը: Ներսում իբրև բարեպաշտ հորդ արտասուքներով, մեծ լացով աղոթքներ են մատուցում, իսկ եկեղեցուց դուրս ելնելով՝ բարձրաձայն ծիծաղում ու հռհռում են, շրջում քաղաքի լայն փողոցներով և դառնալով նույն սովորությանը՝ գործում են բոլոր պղծությունները: Ո՛չ, երբե՛ք, այդպիսիների հիշատակը թող չլինի՛ սուրբերի մեջ: Լա՛վ, թող մեզ ցույց տան՝ ի՞նչ երևելի պատարագ մատուցեցին Զատկին կամ ի՞նչ՝ մյուս օրերին, որ ծածուկ են ասում. մի՞թե Մեկը չէ Տերը, մեկ հավատ, մեկ մկրտություն և մահ մեր Տեր Հիսուսի Քրիստոսի, մեկ սեղան, մեկ մարմին և արյուն է՝ Զատկին ես մատուցում այն, այլ կիրակի, թե սուրբ մարտիրոսների հիշատակին, նույնն է: Նրանից բացի ուրիշ Աստված չկա, և չկա այլ պատվիրան Նրա դրածից բացի. եթե մկրտվեցիր ու հաղորդվեցիր Քրիստոսի մարմնին ու արյանը, այլևս մի՛ մեղանչիր, իսկ եթե տկարացար, թուլացար ու մեղանչեցիր, անարժանաբար մի՛ մոտենա կենդանի Հրին: Քանզի եթե ասես, թե՝ «[Տերը] քաղցր ու բարերար, գթած ու մարդասեր է մեղավորների հանդեպ», այո՛, ես էլ եմ [նույնն] ասում. նախ՝ քեզ ձրիաբար թողեց մկրտությունից առաջ գործած բոլոր մեղքերդ. այսուհետև քոնն է Նա: Այժմ քեզ չի սովորեցնում. Իրենը վաղ կատարեց. այժմ քո ձեռքն է: Թո՛ղ, հեռացի՛ր [այն ամենից], ինչ որ գործեցիր, ապաշխարությա՛ն դարձիր, լա՛ց եղիր, զղջա՛, ճնշի՛ր մարմինդ պահքով, թառամեցրո՛ւ աչքերդ արտասուքներով, ծախի՛ր ինչքերդ և տո՛ւր աղքատներին, թող ոտքերդ ցավեն [կանգնած] աղոթելուց, թող քո ձեռքերը վեր բարձրանան պաղատանքներով, և ձեռքերիդ մատները աղաչանքներով տատանվեն, մինչև որ ջնջվեն հոգուդ ու մարմնիդ նախկին դատապարտելի գործերը՝ և՛ օրերով, և՛ ամիսներով, և՛ տարիներով [գործված]: Մինչև վերստին

քեզ վրա կերպավորվի Քրիստոս, քեզ ծնի ապաշխարությամբ և կյանքի նորոգման համար, և արժանի լինես մերձենալու Քրիստոսի նույն մարմնին ու արյանը, որպեսզի նույն սրբությամբ ավարտես քո կյանքի ժամանակը:

Իսկ նրանց մասին, ովքեր տոնական օրերին մերձեցել են [իրենց] արյունահոսող կնոջը և չեն ապաշխարել, նրանք ոչ միայն թողություն չեն գտնի, այլև բազում անգամ ավելի մեծ դատապարտության տակ կընկնեն և բարեխոս չունենալով՝ իրենց հոր՝ սատանայի հետ դժոխք կառաքվեն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1 Հմմտ. Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխատ. Կիմ Մուրադյանի, Երևան, 1984, էջ 172:

2 «Անխառնելի Աստվածությունդ նոր խառնմամբ խառնեցիր մեր բնությանը». միտքը քաղված է Ս. Գրիգոր Աստվածաբանի († 389) «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառից. «Ով նոր խառնմանն, ով սքանչելի խառնուածոյն, որ էրն լինի և ստացիչն ստացանի». Մաշտոցի անվ. Մատենադարան. ձեռ. 1500, թ. 726ա, ձեռ. 948, թ. 183բ-184ա:

3 «Անշոշափելի էությունդ մարմնի մեջ թանձրացրեցիր». միտքը համաձայնում է Ս. Գրիգոր Աստվածաբանի «Ի յայտնութիւն Տեառն» ճառի «Անմարմինն մարմնանայ, բանն թանձրանայ, անտեսանելին տեսանի, անշաւշափելին շաւշափի» արտահայտության հետ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 948, թ. 177աբ:

4 Քրիստոսաբանական մասնավոր նշանակություն ունեցող «Աստվածախառն մարմին» արտահայտությունը գալիս է Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի «Յաճախապատումից» (Մատենագիրք հայոց, Ա, էջ 55 [68]), «Վարդապետութիւն»-ից: Այն կիրառված է նաև Ս. Եպիփան Կիպրացու († 415)՝ Տիրոջ թաղմանը նվիրված ճառում. տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Ա, էջ 323 (Աստուածախառն):

5 Միտքը որոշակի արձագանք է Փիլոն Եբրայեցու և Ս. Հովհան Ոսկեբերանի երկերում հանդիպող համաբնույթ մտածումի. «Մարդկանս կեանք նման են թոնդրոյ ծխելոյ՝ հուր պարզ եւ վճիտ, մաքուր լոյս ոչ ունելով, բայց ծուխ բազմապատիկ ի ձեռն ծխելոյ եւ շրջուցելոյ բոցոյ, որ շամանդաղ եւ խաւար գործէ...» (Մնացորդք ի Հայս, էջ 187), «Նոյնպէս եւ մտացն ակն եթէ յեղտիւրս հոգեւոր բանիցն ճարակիցի, սուրբ, յստակ եւ քաջատես լինի, իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ, բժաբեր արտաւսրալից լինիցի... Քանզի ծխոյ իսկ նման են ամենայն հոք մարդկաւրենք...». տե՛ս Յովհաննու Ոսկեբերանի... յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին, Վենետիկ, 1826, էջ 26-27:

** Ծանոթագրությունները՝ Հակոբ Քյոսեյանի:*

6 Ընտրյալ բնագրում, սակայն, «վեց» օր (Մարկ. Թ 1):

7 Անվան «Կիշոն» ձևը (ի տարբերություն Յոթանասնից թարգմանությունից եկող «Կիսոն» ձևի) վկայում է այն մասին, որ Եղիշեն ամենայն հավանականությամբ օգտագործել է Աստվածաշնչի, մասնավորաբար Դատավորաց գրքի՝ ասորերենից կատարված թարգմանությունը:

8 «Քաղցր արմատ» ասելով նկատի ունի Հեսեի արմատը, այսինքն՝ Դավթի ցեղը:

9 Ակնարկում է Աստվածությունը տեսնելուց հետո Մովսեսի դեմքի ճառագումը. Ելք, ԼԴ 29-30:

10 Ակնարկում է փարավոնի կողմից Մովսեսին տրված «աստված» որակումը. հմմտ. Ելք, Է 1:

11 Մեկնաբանական ավանդույթը «Եգիպտոսը» նշանակն է համարում մեղքի ու խավարի (Ս. Եպիփան Կիպրացի, «Մեկնութիւն Արարածոց եւ Աւետարանի»):

12 Ակնարկում է արքայությունը, որ անմասն էր մեղքի համար սահմանված գրավոր օրենքից:

13 «Գիր-անգիր» հակադրության աստվածաբանական ակունքը պողոսյան թղթերի հետևյալ տեղիներն են. «հոգւով եւ ոչ գրով» (Հռոմ., Բ 29), «Ոչ հնութեամբ գրոյն», «Ոչ գրով, այլ հոգւով» (Բ Կորնթ., Գ 6):

14 Որովայնամոլության այսօրինակ բնութագրումը ամենայն հավանականությամբ բերված է Փիլոն Եբրայեցու Ելից գրքի մեկնությունից, որ կարդում ենք. «Տեղին այն ի մսուր համարեալ է բազմագլուխ տաճարին՝ ի մեզն ցանկութեան»: «Վասն բազմագլուխ գազանին՝ ցանկութեան...» տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Ա, էջ 402 (բազմագլուխ):

15 Ծոթրին:

16 Հովհ., Ա 1:

17 Ելք, ԺԲ 2:

18 Տե՛ս Ծննդ., Ա 11:

19 Ելք, ԺԲ 2:

20 Տե՛ս Մատթ., Ե 18:

21 Տե՛ս Ելք, ԺԲ 3:

22 Տե՛ս Ելք, ԺԲ 8-9:

23 Ելք, ԺԲ 11:

24 Ելք, ԺԲ 10:

25 Տե՛ս Հովհ., ԺԳ 2:

26 Եսայի, ԾԳ 9:

27 Հմմտ. Հովհ., Ը 46:

28 Պեննադա կամ Պաննեաս քաղաքի պղնձաձույլ արձանախմբի մասին վիպող այս զրույցը քաղված է Եվսեբիոս Կեսարացու († 339) «Պատմութիւն եկեղեցական» երկից (Վենետիկ, 1877, էջ 557-558):

29 Տե՛ս Զաք., ԺԱ 12:

30 Տե՛ս Զաք., ԺԱ 13:

31 Մարկ., ԺԴ 44:

32 Տե՛ս Հովհ., ԺԳ 26:

33 Արտահայտությունս (կթաթախեմ, այսինքն՝ կլվանամ օրհնությունները) աստվածաբանական, բնագրային հարաբերության մեջ է հայրախոսական ավանդույթի հետ: Այսպես, Ս. Եփրեմ Ասորու Համաբարբառ Ավետարանի մեկնության մեջ կարդում ենք. «Ի ձեռն ջրոյ որոշեաց նա զՅուդա յառաքելոց անտի, իբրև եթաց զհացն ջուրբ եւ ետ նմա» («Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Բ, Վենետիկ, 1836 էջ 202): Առավել ակներև է նրա հարաբերությունը Զենոբ Եղեսացու երկերից մեկի հետևյալ արտահայտության հետ. «Թացեալ զպատառն Քրիստոս... լուաց զհացն ջրով յաւրհնութենէն եւ ետ Յուդայի» (Երուսաղեմ, ձեռ. 1272 թ. 278 աբ): Ավետարանական մեկնություններից մեկում դարձյալ ասվում է. «Քանզի թացեալ զպատառն ի ջուրն՝ լուաց յաւրհնութենէն եւ մերկացոյց զնա ի պահպանող աւգնութեանց». տե՛ս Սարգիս Կունդ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 508):

34 Տե՛ս Ղուկ., ԻԲ 36:

35 Հմմտ. Մատթ., Ժ 34:

36 Տե՛ս Հովել, Գ 2:

37 Տե՛ս Հովհ., ԺԲ 47:

38 Ղուկ., ԻԲ 42:

39 Տե՛ս Զաք., ԺԲ 10, 12:

40 Մարկ., ԺԴ 37, Մատթ., ԻԶ 40:

41 Նկատի ունի Ս. Հովհան Ոսկեբերանի «Ի խաչելութիւն Տեառն» ճառի ու Ս. Եփրեմ Ասորու Համաբարբառ Աւետարանի մեկնության համապատասխան տեղիները («Խոստովան լինէր և զդրախտն բանայր». Յովհաննու Ոսկեբերանի ճառք, Վենետիկ, 1861, էջ 208, «Արդ, ի ձեռն աւազակին բացաւ դրախտն, ոչ ի ձեռն միոյ ուրուք արդարոյ անտի». «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Բ, Վենետիկ, 1836, էջ 223:

42 «Փիլիսոփաներ» ասելով՝ Եղիշեն նկատի ունի Փիլոն Եբրայեցուն կամ Ալեքսանդրացուն (20 թ. ն. Ք.-50 թ. Ք. հ): Եղիշեն օգտվում է Փիլոնի Արարածոց մեկնությունից. «Դէպ է ճշմարիտ ասել, եթէ իմաստնագոյն արդարեւ քան զամենայն գազանս լինել օձին... քանզի խորամանկագոյն են ցանկասէրքն», «Բայանան սոքա ընդ հողով եւ որջքն իւրեանց են ի սորս եւ ի սոյզս երկրի...», «Օձ նշանակ ցանկութեան է», «Վասն զի նշանակ ցանկութեան է օձն եւ ձեւացուցանէ զցանկասէրն...». տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոց Մնացորդք ի Հայս, որ են Մեկնութիւնք Ծննդոց եւ Ելից...», աշխատ. Հ. Սկրտիչ վրդ. Աւգերեան, Վենետիկ, 1826, էջ 22, 25-26, 31):

43 «Անիծեալ օձիւ բժշկեսցին հաւատացեալք». տե՛ս Ս. Եփրեմի Մեկնութիւն Համաբարբառ Աւետարանի. (Մատենագրութիւնք, հտ. Բ, էջ 229):

44 Բնություն – իսկություն, գոյացություն:

45 Բարոյական- բարքին, վարքին վերաբերող՝ վարդապետություն, գիրք, մեկնություն, առաքինություն, բարոյախոսություն:

46 Խոհականություն – խոհեմություն, հանճար, բանականություն, խորհուրդ, մտածություն, իմաստ:

47 Տնկագործել – մշակել:

48 Ակնարկում է չարն անձնավորող օձի հատկությունը, տե՛ս Փիլոն, Մեկնութիւն Ծննդոց..., էջ 25-26:

49 Դավանական նկատառումներից ելնելով՝ հրատարակության մեջ զանց է առնվել (տպ. Վենետիկ, 1859, էջ 309, Մատենագիրք Հայոց, Ա, Անթիլիաս, 2003, էջ 1024 [74] ձեռագրերում (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 975, թ. 288բ-350բ, 6737, թ. 27ա-104բ) առկա հետևյալ հատվածը. «Յորժամ Ինքն՝ Որդին ի Խաչին տեսանիւր միայն՝ խաչակից լինէր եւ Հայր, եւ եթէ Հայրն խաչակից Որդւոյն էր՝ խաչակից էր եւ Սուրբ Հոգին: Եւ որպէս չարչարակից էին Հայր եւ Հոգի Որդւոյ՝ հաղորդակից էին մեծի յարութեան»:

50 Յոթ թվի այս խորհրդաբանությունն ակներևորեն քաղված է Փիլոն Եբրայեցու Ծննդոց մեկնությունից. «Եօթն աւուրց թիւ, – կարդում ենք այս երկում, – յիշատակ է աշխարհիս լինելութեան, որոյ ծննդականն տօն արարեալ լինի եօթներեակն... Եւ արդարեւ, զեօթն աւուրսն, զի ի միտ առցեն թերահաւատքն եւ անհաստատքն զաշխարհիս լինելութիւն...» տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս», էջ 94-95:

51 Երկնքի յոթ պարունակների վերաբերյալ այս միտքը հարաբերվում է Ս. Իրինեոսի († 202) «Յոյցք առաքելական քարոզութեանց» երկի համաբնույթ խորհրդածության հետ, տե՛ս R. W. Thomson, Number symbolism and Patristic exegesis in some Early Armenian writers, «Հանդէս ամսօրեայ». 1976, էջ 127:

52 Միտքը արձագանքն է Փիլոնի հետևյալ տողերի. «Ի բնութեան, արդարեւ, մաքուր է եօթներեակ թիւն, իբրու զի կոյս է եւ անխառն եւ անմայր, ոչ ծնանի եւ ոչ ծնեալ լինի... քանզի անեղ է եւ անծին եւ ոչ ինչ ի նմանէ ծնանի, եւ զի թէպէտ եւ լինելութեան եւ ծննդոց պատճառ է, քանզի շարժէ զամենայնին զաւրութիւնս, որ բնաւորեցան բարիոք առ ի լինելութեան ծննդոց...». Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս...», էջ 91 տե՛ս Հ. Հ. Քյոսեյան, Եղիշեի ճառագրական երկերի աղբյուրներից. «Պատմաբանասիրական հանդես», 1988, թիվ 4 (123), էջ 109:

53 Տիտանյանների մասին այս առասպելը, որ պատմվում է Հեսիոդոսի «Թեոգոնիա» երկում (132-138. տե՛ս **Мифы народов мира, т. 2. М.,1992, с. 514**), Եղիշեն ամենայն հավանականությամբ քաղել է Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից (Ա) և Փիլոնի Ծննդոց մեկնությունից («Մնացորդք ի Հայս», էջ 82):

54 Աջ և ձախ կողմերի արժեքաբանական այսօրինակ բացատրության ակունքը ամենայն հավանականությամբ Փիլոն Եբրայեցու Ծննդոց մեկնության հետևյալ տողերն են. «Այն, որ յարեւելից կողմանէն, աջ գոլ ասի աշխարհիս մասունք, իսկ որ յարեւմուտս կոյս՝ ահեակ: ... Յորժամ ասէ, զի թէ յաջ կողմն գնասցեն՝ ի տիւ եւ յարեգակնդ, իսկ եթէ յահեակ, յերեկս կոյս եւ խրթին...» (Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, էջ 5):

55 «Հների մեջ ոմանք» ասելով՝ նկատի ունի Փիլոնին, որ վկայաբերելով Հոմերոսին՝ գրում է. «Երեքկին ամենայն ինչ բաժանեալ է...» (Մնացորդք ի Հայս, էջ 250):

56 Առաքելական ժամանակներում մկրտվողների վրա ձեռք էին դնում՝ Սուրբ Հոգին փոխանցելու համար:

57 Եղիշեն նկատի ունի «Յաղագս Անդրէի առաքելոյ եւ նորին սքանչելեացն, զոր Տէր արար ի ձեռն նորա եւ Մատթէի ի մարդակերաց աշխարհն», «Պատմութիւն սուրբ առաքելոցն Անդրէի եւ Մատթէոսի, թէ որպէս գնացին յաշխարհն մարդակերացն» նորկտակարանային զրույցները: Սակայն ի տարբերություն առկա զրույցի, ուր պատմվում է, թե Անդրեաս առաքյալն է փրկում Մատթեոս Ավետարանչին մարդակերներից, Եղիշեի ձեռքին, ըստ երևույթին, եղել է զրույցի մեկ այլ տարբերակ, ըստ որի՝ Անդրեասը փրկվում է Մատթեոսի ձեռքով. տե՛ս Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց. Գ. Անկանոն գիրք առաքելականք. հրատ. Հ. Ք. Չրաքեան, Վենետիկ, 1904, էջ 124-145, 168-173:

58 Սիմոն մոգի մասին այս զրույցը քաղված է «Գործք Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոց» սուրբգրային անվավերից, տե՛ս Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց. Գ Անկանոն գիրք առաքելականք, աշխատ., Հ. Ք. Չրաքեան, Վենետիկ, 1904, էջ 10-22, 46-47:

59 Մովսես մարգարեն:

60 «Ինչպես ոմանք են ասում» խոսքով Եղիշեն նկատի ունի հավանաբար Որոգինեսին († 253) և նրա վարդապետությունը, ըստ որի՝ նախ ստեղծվել է ազատ, ինքնիշխան կամք ունեցող էակների աշխարհը: Սրանք շարունակում են ապրել նաև հաջորդ աշխարհներում: Տարբերակելով բարիքը և ոչ բարիքը՝ այս էակները նախընտրում են ոչ բարիքը, որի հետևանքով ստեղծվում է զգայական աշխարհը, իսկ նախկին էակները փոխվում են հրեշտակների, դևերի և հոգիների. տե՛ս Եզնիկ Ծ. վրդ. (այժմ՝ արքեպիսկոպոս) Պետրոսյան, Հայրաբանություն, Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 154-155:

61 «Գովվում է քնարը, բայց քնարահարի ձեռքում... Իսկ եթե քնարը չլինի, չի երևա քնարահարը» այլաբանական պատկերի ակունքը Ս. Հովհան Ոսկեբերանի հետևյալ արտահայտությունն է. «Զի՞նչ աւգուտ իցէ ի քնարէն, եթէ քնարահարն եղծանիցի...». տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Բ, էջ 1008:

62 Այսօր հայտնի սուրբգրային անվավերում հրեշտակների կայանները նկարագրվում են ոչ թե Պետրոսի, այլ Պողոս առաքյալի անվամբ հայտնի Տեսիլքի երեք տարբերակներում («Տեսիլ առաքելոյն Պօղոսի, որ տարան հրեշտակք զհոգի նորա», «Տեսիլ առաքելոյն Պօղոսի, զոր երևայ ի վերանալ յերկինս», «Տեառն Պօղոսի, յորժամ տարան զհոգին». տե՛ս Անկանոն գիրք առաքելականք, էջ 62-109:

63 Նկատի ունի Միքիա Գ 7. «Ամաչեսցին երազատեսքն, եւ ծաղր կայցեն իղձքն, եւ բամբասեսցեն զնոսա ամենեքեան» բառերը:

64 Այստեղ նկատի ունի անկնունք, դեռ չմկրտված մեծահասակներին:

65 Պակասում են որոշ բառեր:

66 Տպագրում «զանուրս» (էջ 365)= օղակները, որ թվում է անիմաստ. առավել նախընտրելի է ձեռագրի (ՄՄ ձեռ. 209, թ. 156 բ-8 բ) «զանաւսր բնութիւն» = նուրբ բնություն ձևը:

67 Տպագրում բացակայում է. «որ կապված լինելով... հրի մեջ» հատվածը, որ բերում ենք, ըստ ՄՄ թիվ 209 ձեռագրի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Եղիշե վարդապետ *5*
Քրիստոսի մկրտության տոնի առթիվ *9*
Այլակերպության տոնի առթիվ *16*
*Վարդավառի մեծ օրվա առթիվ** *25*
Խրատի խոսք միայնակյացների մասին *62*

«Հայր մեր» աղոթքի մասին *71*
Վարդապետություն Տիրոջ չարչարանքների մասին *81*

Մարդկանց հոգիների մասին *221*
Դատաստանի և երկրորդ գալստյան մասին *231*
Մեռյալների հիշատակության մասին *234*
Կանոններ դիվահարների համար *241*

Կանոն *248*
Ծանոթագրություններ *255*

** Թարգմ.՝ Պետրոս Բեդիրյանի:*

Խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան

134